



**GOOD
GOVERNANCE
FUND**



*Reform assistance
to Armenia*

*Բարեփոխումների
աջակցություն Հայաստանին*



ՀՀ ՄԱԳՆԿՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Նյութը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	5
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	7
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	13
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, www.e-bankruptcy.am ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ	13
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	13
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	19
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ	25
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	25
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	29
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	42
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	42
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	51
ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԸ	55
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	55
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	57
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	59
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	59
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	64
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	70
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	70
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	72
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	74
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	74
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	75
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿՈՌՈՒՊՏԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ.....	76
ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	76
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	78
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	80

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ.....	80
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	83
ԱՃՈՒՐԴ. ԽՆԴԻՐՆԵՐԸ	87
ԸՍՏ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ.....	87
ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ.....	88
ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	89
ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ.....	93
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ.....	95
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԸՆՏՐԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ	131
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՐՅՎՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....	139
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	145
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՐԱԿԱԿԱՆ և ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅԱԹԵՐԹԵՐԸ.....	147

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սնանկության ոլորտի հիմնախնդիրների հետազոտությունը մշակվել է «Աջակցություն սնանկության համակարգի բարելավմանը» ծրագրի շրջանակում՝ Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» ֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակում՝ 2019 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում իրականացվել է հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել Հայաստանում սնանկության գործընթացի տարբեր փուլերում առաջացող հիմնախնդիրները, ինչպես նաև ոլորտի քաղաքականություն մշակողների և առանցքային դերակատարների ակնկալիքներն ու դիրքորոշումները ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Սնանկացման գործընթացի կարգավորումը տնտեսության կառավարման կարևորագույն գործիքներից մեկն է: ՀՀ-ում շուկայական առևտրային հարաբերությունների զարգացմանը համընթաց, բազմակի փուլեր անցնելով, ձևավորվել է նաև սնանկացման կարգավորման համակարգը: Խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանը սնանկության կարգավորման իրավական տարբերակ չի ունեցել, քանի որ ամբողջատիրական պլանային համակարգում ձեռնարկությունների սնանկացումը բովանդակային առումով բացառված էր: ԽՍՀՄ փլուզումից հետո 1995 թ. ընդունվեց «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքը: Մեկ տարի անց ընդունվեց «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը: Այնուհետև, խնդրի առավել համապարփակ կարգավորման նպատակով 2003 թ. ընդունվեց «Անվճարունակության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2006 թ.՝ «Սնանկության մասին» ՀՀ նոր օրենքը, որը կարգավորում էր սնանկության իրավահարաբերությունները և իրավական նորմերը¹: Այս օրենքում վերջին անգամ լրացումներ կատարվել են 2018 թվականի մարտի 23-ին:

Կայուն տնտեսական աճի ապահովման առաջնահերթության համատեքստում տնտեսվարող կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացմանն ու կարգապահության բարձրացմանն ուղղված միջոցառումներն առանցքային խնդիրներ են: Այդ իսկ պատճառով հասունացել է սնանկության համակարգի օրենսդրական բացերի ուսումնասիրման և կարգավորման անհրաժեշտությունը:

¹ Սարգսյան Վ., Սնանկություն. տնտեսաիրավական կարգավորման և կառավարման որոշ

հիմնախնդիրներ, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2017 № 3 (24), էջ 42-43:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը

Սնանկության ոլորտում առկա կարիքների ու ակնկալիքների վերաբերյալ ամբողջական և ծավալուն քանակական և որակական տվյալների հավաքագրումն իրականացվել է՝ նպատակ ունենալով բացահայտել, թե սնանկության գործընթացի տարբեր փուլերում ինչ խնդիրներ, ակնկալիքներ և կարիքներ կան:

Իրականացված հետազոտության շրջանակում հավաքագրվել են գործարարների ընկալումները՝ սնանկության ընթացակարգի ու գործընթացի վերաբերյալ, միևնույն ժամանակ, նշված ոլորտի տարբեր կողմերի, մասնակիցների ու դերակատարների տեսակետները, ինչպես նաև ոլորտի քաղաքականություն մշակողների ակնկալիքներն ու դիրքորոշումները՝ ոլորտում առկա խնդիրների և դրանց լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Հետազոտության խնդիրներն են՝

- Պարզել սնանկության գործընթացի վերաբերյալ առկա տեղեկատվության աղբյուրները և գնահատել դրանց արդյունավետությունը,
- Վերհանել սնանկության վարույթների հարուցման հիմնական պատճառները,
- Պարզել պարտապանների սոցիալական և տնտեսական կարգավիճակի փոփոխությունը սնանկության գործընթացի արդյունքում,
- Վերհանել ֆիզիկական և իրավաբանական անձանց սնանկության գործընթացի առանձնահատկությունները,
- Վերլուծել սնանկության գործընթացի գենդերային առանձնահատկությունները,
- Պարզել սնանկության գործերով կառավարիչների աշխատանքի վերաբերյալ պարտապանների և գործընթացի այլ մասնակիցների կարծիքը,
- Պարզել սնանկության գործերով փաստաբանների աշխատանքի վերաբերյալ պարտապանների և գործընթացի այլ մասնակիցների կարծիքը,
- Պարզել սնանկության գործերով դատավորների աշխատանքի վերաբերյալ պարտապանների և գործընթացի այլ մասնակիցների կարծիքը,
- Պարզել պարտապանի դիրքորոշումը սնանկության վարույթի ընթացքում սնանկության մասին դիմում ներկայացնելիս, պարտքը վերակառուցելիս, ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելիս, ինչպես նաև սնանկության գործընթացի փորձից հետո,
- Բացահայտել սնանկության վարույթի ընթացակարգային բացերը,
- Բացահայտել սնանկության գործընթացի կոռուպցիոն ռիսկերը,
- Պարզել սնանկության կառավարիչների ընտրության ընթացակարգերը և դրանց թափանցիկությունը,
- Պարզել ֆինանսական առողջացման ծրագրերի ներկայացման, հաստատման և իրագործման օրինաչափությունները,
- Ուսումնասիրել սնանկության վարույթների շրջանակներում իրականացվող անուրդների գործընթացը:

Մեթոդաբանություն

Հետազոտությունը բաղկացած է երկու հիմնական փուլերից՝ քանակական տվյալների և որակական (խորքային) տվյալների հավաքագրում: Այն ներառում է՝

- ձեռնարկատերերի պատկերացումները սնակության վարույթի ու գործընթացի վերաբերյալ
- ռազմավարություն մշակողների տեսակետները, սպասելիքներն ու հնարավոր լուծումները

Քանակական տվյալների հավաքագրման համար հարցազրույցներ են իրականացվել ընտրված արդեն իսկ սնանկ ճանաչված (այդ թվում՝ ավարտված սնանկության գործերով) կամ սնանկության գործընթացում գտնվող սուբյեկտների հետ՝ նախապես մշակված փակ հարցաթերթի միջոցով:

Դեմ առ դեմ կիսաստանդարտացված հարցումներ իրականացվել են Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի ընդհանուր առմամբ 200 պարտապանների հետ (ֆիզիկական և իրավաբանական անձիք), որոնք 2016-2018թթ. ներգրավված են եղել սնանկության գործընթացների մեջ:

- 200-ից 123 հարցվածները ֆիզիկական անձիք են, որի 28.5% իգական, իսկ 71.5%՝ արական սեռի ներկայացուցիչներ են: Հարցվածների 58.5% Երևանից են, իսկ 41.5%՝ մարզերից:
- 200-ից 77 հարցվածները իրավաբանական անձիք են, որի 14.3% իգական, իսկ 85.7%՝ արական սեռի ներկայացուցիչներ են: Հարցվածների 68.8% գործում են Երևանում, իսկ 31.2%՝ մարզերում:

Որակական փուլում հավաքագրված քանակական տվյալների հիման վրա խնդիրները մասնագիտական մեկնաբանությամբ և պատճառահետևանքային կապի շրջանակներում ներկայացնելու համար կիրառվել է Դելֆի մեթոդը: Այս մեթոդի միջոցով խնդիրը քննարկվել է մասնագիտական մեկ խմբում, այնուհետև, այս խմբի գնահատականներն ու մեկնաբանությունները ներկայացվել են հաջորդ մասնագիտական խմբին: Այն դեպքում, երբ ներկայացված խնդիրը, դրան տրված մեկնաբանություններն ու բացատրությունները հաստատվել են մի քանի մասնագիտական խմբերի կողմից, արդյունքը ներկայացվել է որպես իրավիճակը բնութագրող տարբերակ: Այն դեպքում, երբ ներկայացված գնահատականը հանդիսացել է եզակի և այլ մասնագիտական խմբերում չի հաստատվել, դա ներկայացվել է որպես կարծիք:

Այսպիսով, քանակական տվյալների հավաքագրման ընթացքում ստացված արդյունքները հետազայում կոմունիկացնելով մասնագիտական խմբերին, ստացվել են դրանց վերաբերյալ մասնագետների դիտարկումներն առ այն, թե ինչը կարող էր պատճառ հանդիսանալ հասարակության շրջանում յուրաքանչյուր առանձին վերցրած խնդրի վերաբերյալ ստացված տպավորության ձևավորման համար, դուրս են բերվել այն խնդիրները, որոնք առկա են սնանկության ոլորտում, դրանց պատճառներն ու առաջարկվել են լուծումներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ամփոփելով իրականացված հետազոտության արդյունքները՝ նշենք հետևյալ հիմնական բացահայտումները՝

Նպատակ. բացահայտել սնանկացման գործընթացում առկա տեղեկատվության աղբյուրները եւ գնահատել դրանց արդյունավետությունը

- Հարցված պարտապանների 70.5% մինչ սնանկության գործի սկիզբը բացարձակ տեղեկացված չեն եղել սնանկության գործընթացի մասին, և միայն 5%՝ լիովին տեղեկացված էին: Բնականաբար, տեղեկացվածության մակարդակն էապես բարձրացել էր հարցման պահին, երբ սնանկության գործընթացն ավարտված էր կամ ընթացքում էր:
- Սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը հարցվածները հիմնականում ստացել են անձնական փորձի շնորհիվ, իրավաբան գործընկերներից, ընկերների, բարեկամների, ծանոթների փորձից, սեփական նախաձեռնությամբ օրենքը կարդալուց, գրքերից, ընկերների, բարեկամների, ծանոթների խոսակցություններից, ասեկոսեներից, էլեկտրոնային օրենսդրական շտեմարաններից, էլեկտրոնային տեղեկատվական կայքերից և հեռուստատեսությունից:
- Սեփական գործով սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը պարտապանների 26.4% ստացել են անձամբ սնանկության գործով կառավարիչներից բանավոր, 23.6%՝ սնանկության գործերով կառավարիչներից՝ թղթային տարբերակով, 20.8%՝ դատական մարմնից՝ թղթային տարբերակով: Տեղեկատվության մնացած աղբյուրներն էապես ավելի հազվադեպ են օգտագործվել:
- Էլեկտրոնային ռեսուրսներից օգտվողների տոկոսը բավական ցածր է՝ datalex.am կայքից օգտվել են հարցվածների 20.5%, azdarar.am կայքից՝ 8.5%, snank.am կայքից՝ 4%, court.am կայքից՝ միայն 3%:
- Սնանկության գործընթացով անցնելու փորձ ունեցող պարտապանները, եթե նախապես իմանային, որ սնանկության վարույթի ավարտից հետո նրանց համար օրենքով վրա են հասնելու որոշակի բացասական հետևանքներ, կվերանայեին իրենց բիզնես ռազմավարությունը, կբարձրացնեին իրազեկվածության մակարդակը օրենքի և սնանկության ընթացակարգերի վերաբերյալ, կառաջարկեին վերանայել սնանկության օրենքներն ու ընթացակարգերը:
- Պարտապանների 23% տեղյակ չեն եղել կետանցած պարտավորությունների մասին տարբեր պատճառներով: Ամենահաճախ նշված պատճառն այն է, որ պարտապանն անձամբ չի վերահսկել գործերն ու տեղեկացված չի եղել դրանց ընթացքի մասին՝ 15%:

Նպատակ. բացահայտել սնանկության վարույթի հիմնական պատճառները

- Պարտապանների 12% երաշխավոր են հանդիսացել մեկ այլ անձի համար՝ չպատկերացնելով, որ այդ պատճառով կարող են ներգրավվել սնանկության գործընթացի մեջ:
- Սնանկ ճանաչելու պարտավորությունը, որպես կանոն, ծագել է պայմանագրի հիմքի վրա՝ 60%, որից 49.5%՝ վարկային պայմանագիր, 6%՝ երաշխավորության

պայմանագիր, 2.5%` առուվաճառքի/մատակարարման պայմանագիր, 1%` ծառայությունների մատուցման պայմանագիր և 1%` փոխառության:

Նպատակ. բացահայտել սնանկության գործընթացի արդյունքում պարտապանի սոցիալական եւ տնտեսական կարգավիճակի փոփոխությունը

- Սնանկության գործընթացը ակնհայտ բացասական հետևանքներ է թողնում պարտապանների սոցիալական կարգավիճակի վրա. կրճատվում է զբաղվածների տոկոսը, միաժամանակ աճում է գործազուրկների տոկոսը: Այս պատկերը վկայում է ոչ միայն առանձին անհատների կյանքում բացասական փոփոխությունների մասին, այլև տնտեսական դաշտում սնանկության գործընթացի արդյունքում զբաղված աշխատուժի և տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատման մասին:

Նպատակ. բացահայտել սնանկության գործընթացի առանձնահատկությունները, տարբերակելով իրավաբանական անձանց եւ անհատներին

- Սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորության վերաբերյալ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց պատասխաններն էապես տարբերվում են: Ֆիզիկական անձանց դեպքում պայմանագիրը շատ ավելի հաճախ է դրված եղել սնանկ ճանաչելու հիմքում, քան իրավաբանական անձանց պարագայում: Եվ ընդհակառակը` պետական մարմնի (ՊԵԿ) կողմից կայացված վարչական ակտ ավելի հաճախ դրված էր իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու հիմքում:
- Ֆիզիկական անձիք ավելի հաճախ են սնանկ ճանաչվում ոչ թե կոնկրետ պարտավորության հիման վրա, այլ` սեփական դիմումի համաձայն:
- Հարցված ֆիզիկական անձանց միայն 4.9% ունեն էլեկտրոնային ստորագրություն, իսկ իրավաբանական անձանց` 24.7%, ԷԿԵՆԳ կազմակերպության կողմից տրամադրված նույնականացման քարտ ունեն ֆիզիկական անձանց 52%, իսկ իրավաբանական անձանց` 90.9%:

Նպատակ. վերլուծել սնանկության գործընթացի գենդերային առանձնահատկությունները

- Տարբեր սեռերի հարցվողների պատասխանների համեմատությունը թույլ է տալիս դիտարկել սնանկության գործընթացում կանանց և տղամարդկանց վարքի որոշակի տարբերություններ: Մասնավորապես` սնանկության վարույթի ընթացքում կանայք ավելի հաճախ են օգտվել փաստաբանի ծառայություններից` 36.2%, քան տղամարդիկ` 26.8%: Կանանց ավելի փոքր տոկոսը տեղյակ չեն եղել կետանցած պարտավորությունների առկայության մասին` 14.9%, համեմատած տղամարդկանց 30.1% հետ: Համապատասխանաբար ավելի բարձր էր այն կանանց տոկոսը, ում համար սնանկությունը կանխատեսելի էր` 40.4%, համեմատած տղամարդկանց 25.5%:
- Կանանց համեմատաբար ավելի բարձր տոկոսն են ճանաչվել սնանկ ոչ թե կոնկրետ պարտավորության հիման վրա, այլ` սեփական դիմումի համաձայն` 23.4%, համեմատած նույն հիմքով սնանկ ճանաչված տղամարդկանց 3.9% հետ:

Նպատակ. բացահայտել պարտապանների եւ այլ մասնակիցների կարծիքները սնանկության կառավարիչների աշխատանքների մասին

- Հարցվածները հիմնականում բավարարված են ինչպես սնանկության գործերով կառավարիչների մասնագիտական հմտություններով, այնպես էլ՝ իրենց գործի նկատմամբ վերաբերմունքով:
- Սնանկության գործերով կառավարիչների մասնագիտական հմտություններով չբավարարված հարցվածները բացատրեցին իրենց դժգոհությունը հիմնականում սնանկության կառավարչի շահադիտական գործողություններով, կոռումպացվածությամբ, տգիտությամբ, գործը ձգձգելով, պարտապանի գույքը պահպանելու հարցում անտարբերությամբ:
- Հարցվածների հիմնական զանգվածը համարում են, որ աճուրդից սնանկության կառավարիչները չեն շահել: Հարցվածների միայն 10.7% են նշել, որ սնանկության կառավարիչները միանշանակ շահել են աճուրդային գործընթացներից, իսկ 1.3%՝ որ ավելի շուտ շահել են:

Նպատակ. բացահայտել պարտապանների եւ գործընթացի մյուս մասնակիցների կարծիքները սնանկության փաստաբանների աշխատանքի վերաբերյալ

- Փաստաբանի ծառայություններից օգտվել են հարցված պարտապանների միայն 29:

Նպատակ. բացահայտել պարտապանների եւ գործընթացի մյուս մասնակիցների կարծիքները սնանկության դատավորների աշխատանքների վերաբերյալ

- Դատավորների մասնագիտական հմտություններից հարցված պարտապանների բավարարվածության աստիճանը էապես ավելի ցածր է, քան սնանկության կառավարիչների՝ մասնագիտական հմտություններից:
- Հարցվածների այն մասը, ովքեր բացասական են գնահատել դատավորների մասնագիտական հմտությունները, իրենց պատասխանները հիմնականում բացատրել են դատավորների կոռումպացվածությամբ:

Նպատակ. բացահայտել սնանկության վարույթի պարտապանի տեսակետը՝ սնանկության դիմում ներկայացնելիս, պարտքի վերաձեւակերպման եւ ֆինանսական առողջացման ծրագրի, ինչպես նաեւ սնանկացման գործընթացից հետո

- Սնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում 35% փորձել են դատական կամ արտադատական կարգով համաձայնության գալ պարտատիրոջ հետ (հաշտության համաձայնություն, պարտատիրոջ կողմից սնանկ ճանաչվելու մասին դիմումը ետ վերցնել և այլն): 64% չեն փորձել, 1% դժվարացան պատասխանել:
- Որպես կանոն, պարտատիրոջ հետ դատական կամ արտադատական կարգով համաձայնության գալու պարտապանների ջանքերը անհաջող են եղել:
- Հարցված պարտապանների 8.5% նշեցին, որ ցանկացած մեխանիզմով պատրաստ կլինեին աշխատել պարտատիրոջ հսկողության տակ՝ մինչև պարտքի մարումը սնանկության վարույթից խուսափելու նպատակով և պարտատիրոջ պահանջը

բավարարելու համար, 28%` պատրաստ կլինեին, եթե դա լիներ ողջամիտ մեխանիզմ, 8%` դժվարացան պատասխանել, իսկ 55.5% միանշանակ չէին գնա նման քայլի:

Նպատակ. բացահայտել սնանկության վարույթի դատավարական բացերը

- Հետազոտության արդյունքները վկայում են մի կողմից սնանկության գործընթացի ոչ թափանցիկ լինելու մասին, իսկ մյուս կողմից` գործընթացի անարդյունավետության մասին: Մի կողմից պարտապաններից շատերը տեղեկացված չեն, թե ինչպես են գնահատվում և օգտագործվում իրենց ակտիվները, իսկ մյուս կողմից` պարտատիրոջ պահանջները չեն բավարարվում:

Նպատակ. բացահայտել սնանկության գործընթացում կոռուպցիոն ռիսկերը

- Տարբեր հարցվողներ տարբեր օղակների միջև կոռուպցիոն կապերի մասին տեղեկություն են ունեցել, սակայն կարելի է առանձնացնել սնանկության գործերով կոռուպցիոն ռիսկերի շղթայի հիմնական օղակները`
 - Դատարան
 - Սնանկի կառավարիչ
 - Պարտատեր, այդ թվում` բանկ, վարկային կազմակերպություն, ՊԵԿ, ֆիզիկական անձ
 - Պաշտոնյա անձիք, ովքեր սնանկության տվյալ գործի հետ կապված որոշակի շահեր ունեն

Նպատակ. բացահայտել սնանկության կառավարիչների ընտրության ընթացակարգերը և դրանց թափանցիկությունը

- Ուսումնասիրված գործերի 72%-ում սնանկության կառավարիչը նշանակվել է դատարանի կողմից` իր հայեցողությամբ, 3.5%-ում` պարտատիրոջ միջնորդության հիման վրա, 2.5% պատահականության սկզբունքով, 0.5%` պարտապանի միջնորդության հիման վրա:

Նպատակ. հաշվի առնել ֆինանսական առողջացման պլանների ներկայացումը, հաստատումը և իրականացումը

- Սնանկության վարույթի ընթացքում պարտապանների 10% ցանկացել են ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր (այսուհետ` ՓԱԾ) և ներկայացրել են, 18% ցանկացել են, սակայն չեն ներկայացրել, 72%` չեն ցանկացել ներկայացնել ՓԱԾ:
- Հարցվածների այն մասը, ովքեր չեն ցանկացել ՓԱԾ ներկայացնել, հիմնականում տեղյակ չեն եղել նման իրավունքի մասին` 43.8%:
- Ներկայացված առողջացման ծրագրերի 35% է հաստատվել:
- ՓԱԾ-երի չհաստատելու պատճառը հիմնականում դատարանի կողմից այն ոչ իրատեսական համարելն է:
- Հարցվածների 40.5% փորձել են «վերակառուցել» պարտքը` դիմել են վարկի վերավարկավորման համար (25%), բանակցել են գումարային պարտավորությունների կատարման ժամանակացույցի վերանայման համար (11%),

բանակցել են պայմանագրային պարտավորությունների չափի վերանայման նպատակով (4.5%):

Նպատակ. ուսումնասիրել սնանկության վարույթի շրջանակներում կատարված աճուրդների գործընթացը

- Աճուրդ իրականացվել է ուսումնասիրված գործերի 37.5%-ում:

Նպատակ. որոշ ֆինանսական տեսակետներ

- Սնանկ ճանաչվելու պահին ակտիվներ ունեցող պարտապանների 56.3% ակտիվները սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափից պակաս են եղել: Եվս 5.9% ակտիվները հավասար էին սնանկ ճանաչվելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափին: Իսկ 33.3% ակտիվները գերազանցում էին սնանկ ճանաչվելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափը:
- Սնանկ ճանաչվելու պահին պարտապանների 32.5% եկամուտ ապահովող որևէ ակտիվ չեն ունեցել:
- Հարցվածների 67.5% ունեցել են եկամուտ ապահովող ակտիվ, նրանցից 56% օգտագործել են այն, ինչը, սակայն, բավարար չէր, 10%՝ չեն օգտագործել:
- Պարտավորությունների չափը բոլոր պարտատերերի նկատմամբ սնանկության գործընթացի սկզբին տատանվել է 150 հազ. ՀՀԴ-ից մինչև 5 մլրդ. 880 մլն. ՀՀԴ: Սակայն հիմնական կուտակումը 1 մլն. 200 հազ. ՀՀԴ մինչև 50 մլն. պարտավորությունների միջակայքում է՝ 68.5%:
- Հարցվածների 30% ակտիվները գնահատվել են 0 ՀՀԴ:
- Պարտապանների 33% ակտիվները պարտավորություններից քիչ էին գնահատվել, 16% ակտիվները գերազանցում էին պարտավորությունները, 1.5% դեպքերում ակտիվները հավասար են եղել պարտավորություններին, մնացած հարցվածները (49.5%) պատասխան չեն տվել:
- Հետազոտության արդյունքների համաձայն՝ սնանկ ճանաչվելու մասին վճռի հիմքում դրված է եղել ըստ մեղիանային բաշխման 5.000.001 – 10.000.000 ՀՀԴ պարտավորություն: Սակայն առավել հաճախ նշվել է 1.000.001 – 3.000.000 ՀՀԴ պարտավորության չափը՝ 26.5% և 20.000.001 դրամ և ավելի՝ 28.5%:

Նպատակ. այլ պնդումներ

- Պարտապանների բացարձակ մեծամասնությունը տեսնում են սնանկության ոլորտի օրենսդրության բարելավման անհրաժեշտություն (69.5%)՝ համարելով, որ դա անհրաժեշտ է և հնարավոր:
- Պարտապանների 4.5% չեն ստացել սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը:
- Պարտապանների 65.5% համար սնանկությունը լիովին անսպասելի է եղել, 29% համար այն եղել է սպասելի, իսկ 5.5% չեն բացառել սնանկությունը՝ որոշակի ռիսկերով պայմանավորված:

- Սեփական դիմումի համաձայն սնանկ ճանաչված 17 հարցվողներից (8.5%) մեծամասնությունը՝ 15 հոգի (7.5%), հետադարձ հայացք նետելով, համարում են, որ դա ճիշտ որոշում էր:
- Որպես կանոն, պարտավորությունների կետանցը՝ նախքան պարտատիրոջ կողմից սնանկության մասին դիմում ներկայացվելու պահը, տևել է 181 օրից ավելի՝ 44% դեպքերում, 91-180 օր՝ 18% դեպքերում: 60 օր է տևել մեկ դեպքում՝ 0.5%, իսկ 2.5% դեպքերում՝ ավելի պակաս:


ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, www.e-bankruptcy.am ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ


ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ

Հարցված պարտապանների 70.5% մինչ սնանկության գործի սկիզբը բացարձակ տեղեկացված չեն եղել սնանկության գործընթացի մասին, և միայն 5%՝ լիովին տեղեկացված էին: Բնականաբար, տեղեկացվածության մակարդակը էապես բարձրացել էր հարցման պահին, երբ սնանկության գործընթացն ավարտված էր կամ ընթացքում էր: Այդպես, հարցման դրությամբ իրենց տեղեկացվածության մակարդակը գնահատեցին որպես «*լիովին տեղեկացված եմ*» հարցվածների 37%, ևս 41%՝ «ավելի շուտ տեղեկացված եմ»: Հարցման պահին պարտապանների միայն 3.5% նշեցին, որ բացարձակ տեղեկացված չեն սնանկության գործընթացի մասին (Տե՛ս **Գծապատկեր 1.**):

Գծապատկեր 1. Սնանկության գործընթացի մասին պարտապանների տեղեկացվածության աստիճանը մինչ սնանկության գործի սկիզբը և այսօր




Գծապատկեր 2. Սնանկության գործընթացի մասին պարտապանների տեղեկատվության հիմնական աղբյուրները մինչ սնանկության վարույթի սկիզբը



Հարցվածների մեծամասնությունը մինչև սնանկության վարույթի սկիզբը սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվություն չեն ունեցել, իսկ այն հատվածը, ովքեր այնուամենայնիվ որոշակի տեղեկատվություն ունեցել են (28%), այն ստացել են հիմնականում անձնական փորձի շնորհիվ, իրավաբան գործընկերներից, ընկերների, բարեկամների, ծանոթների փորձից, սեփական նախաձեռնությամբ օրենքը կարդալուց, գրքերից, ընկերների, բարեկամների, ծանոթների խոսակցություններից, ասեկոսեներից, էլեկտրոնային օրենսդրական շտեմարաններից, էլեկտրոնային տեղեկատվական կայքերից և հեռուստատեսությունից (Տե՛ս **Գծապատկեր 2.**):


Գծապատկեր 3. Պարտապանների սնանկության գործով վարույթին վերաբերող տեղեկատվության աղբյուրները՝ ըստ կարևորության



Իսկ արդեն սեփական գործով սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը պարտապանների 26.4% ստացել են անձամբ սնանկության գործերով կառավարիչներից բանավոր, 23.6%՝ սնանկության գործերով կառավարիչներից՝ թղթային տարբերակով, 20.8%՝ դատական մարմնից՝ թղթային տարբերակով: Տեղեկատվության մնացած աղբյուրներն էապես ավելի հազվադեպ են օգտագործվել (Տե՛ս **Գծապատկեր 3.**):


Էլեկտրոնային ռեսուրսներից օգտվողների տոկոսը բավական ցածր է՝ datalex.am կայքից օգտվել են հարցվածների 20.5%, azdarar.am կայքից՝ 8.5%, snank.am կայքից՝ 4%, court.am կայքից՝ միայն 3% (Տե՛ս **Գծապատկեր 4.**):

Գծապատկեր 4. Սնանկության գործով վարույթի վերաբերյալ էլեկտրոնային ռեսուրսներից պարտապանների օգտվելու հաճախականությունը



Սնանկության գործերի վերաբերյալ հատուկ էլեկտրոնային հարթակի ստեղծման գաղափարին հարցվողները արձագանքեցին որոշակի վերապահումներով: Հիմնականում համաձայնելով ակնկալվող առավելությունների հետ՝ ժամանակի խնայում, գործընթացի դյուրինացում, որոշակի դժվարություններից խուսափելու հնարավորություն, հարցվածների 12% այնուամենայնիվ կարծում են, որ նման կայքը կբարդացնի ամեն բան, քանի որ նրանք չունեն էլեկտրոնային հարթակներից օգտվելու փորձ: Եվս մեկ կարևոր առաջարկություն հնչեց հարցված պարտապանների կողմից հետազոտության ընթացքում. անձնական տվյալների պահպանության նկատառումներից ելնելով՝ պարտապանները նշեցին, որ նման կայքը, որտեղ հասանելի կլինեն սնանկության գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և որոշումները, պետք է հասանելի լինի անհատական մուտքային անվան և գատնաբառի միջոցով (Տե՛ս Գծապատկեր 5.):

Գծապատկեր 5. Պարտապանների դիրքորոշումները հատուկ էլեկտրոնային հարթակի (օրինակ՝ e-Bankruptcy.am) վերաբերյալ, որտեղ հասանելի կլինեն սնանկության գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և որոշումները




Կա նաև հարցվողների մի ստվար զանգված, որոնք սկզբունքորեն չեն օգտագործում տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրները. 9.5% միանշանակ չեն օգտվում, 5.5%՝ ավելի շուտ չեն օգտվում:

Գնահատելով սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության որակը՝ հարցված պարտապանները հիմնականում այն բարձր են գնահատել՝ դասավորելով տեղեկատվության որակի չափորոշիչները հետևյալ հաջորդականությամբ՝ հավաստիություն,

հասանելիություն, օպերատիվություն, մատչելիություն, մանրամասնություն և պիտանիություն (Տե՛ս **Գծապատկեր 6.**):


Գծապատկեր 6. Մնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության որակը




Ինչ վերաբերում է յուրաքանչյուր աղբյուրից ստացված տեղեկատվության որակին, ապա օգտվելու պարագայում բոլոր աղբյուրներից ստացվող տեղեկատվությունը բարձր է գնահատվել: Դասավորելով տեղեկատվության աղբյուրներն ըստ ստացված տեղեկատվության որակի (ըստ վերոնշյալ չափանիշների՝ հավաստիություն, հասանելիություն, օպերատիվություն, մատչելիություն, մանրամասնություն, պիտանիություն), կարելի է դրանք դասավորել հետևյալ հաջորդականությամբ, սկսած ամենաորակյալից՝

1. Մնանկության գործով կառավարիչ,
2. Մնանկության գործով փաստաբան,
3. www.azdarar.am կայք,
4. ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքեր (datalex.am, acts.court.am),
5. Մնանկության գործով դատավոր/ աշխատակազմ (Տե՛ս **Գծապատկեր 7.**):

Գծապատկեր 7. Տեղեկատվության տարբեր աղբյուրների կողմից տրամադրված տեղեկատվության որակն՝ ըստ 5 բալանոց սանդղակի (որտեղ 5-ն ամենաբարձրն է)




Գծապատկեր 8. Սնանկության գործով վարույթի վերաբերյալ տեղակատվության տարբեր աղբյուրներից պարտապանների օգտվելու հաճախականությունը



Սակայն տվյալ աղբյուրներից օգտվողների տոկոսը շատ տարբեր է: Եթե սնանկության գործերով կառավարիչները հանդիսացել են տեղեկատվության աղբյուր հարցվածների 98% համար, ապա սնանկության գործերով դատավորները՝ 69% համար, սնանկության գործով փաստաթան ունեցել են հարցվածների միայն 29%: Էապես ավելի ցածր է կայքերից օգտվողների տոկոսը. datalex.am և acts.courts.am կայքերից օգտվել են հարցվածների 18.5%, իսկ azdarar.am կայքից՝ 11% (Տե՛ս **Գծապատկեր 8.**):

Փաստաթանի ծառայություններից օգտվել են հարցված պարտապանների միայն 29%, բայց հենց փաստաթանի հետ համագործակցությունը փաստաթղթերի հասանելիությունն ապահովելու առումով համեմատաբար ավելի բարձր է գնահատվել, քան սնանկության գործերով կառավարիչների և դատավորների հետ համագործակցությունը (Տե՛ս **Գծապատկեր 9.**):


Գծապատկեր 9. Փաստաթղթերի հասանելիությունն ապահովելու առումով տարբեր օղակների համագործակցության արդյունավետությունը




Հարցված ֆիզիկական անձանց միայն 4.9% ունեն էլեկտրոնային ստորագրություն, իսկ իրավաբանական անձանց՝ 24.7%, ԷԿԵՆԳ կազմակերպության կողմից տրամադրված նույնականացման քարտ ունեն ֆիզիկական անձանց 52%, իսկ իրավաբանական անձանց՝ 90.9% (Տե՛ս **Գծապատկեր 10.**):

Գծապատկեր 10. Իրավաբանական և ֆիզիկական անձանց մոտ գործող՝

Էլեկտրոնային ստորագրություն կա




ԷԿԵՆԳ նույնականացման քարտ կա



Հարցվածների ցանկությունները գործի ընթացքի մասին տեղեկանալու եղանակի վերաբերյալ դասավորվել են հետևյալ կերպ: Հարցվածների մեծամասնությունը գերադասում է ստանալ թղթային ծանուցումներ. 53.5% գերադասում է ստանալ էլեկտրոնային ծանուցումները թղթային ծանուցումների հետ միասին, 32%՝ թղթային ծանուցումները Հայփոստի կողմից պատվիրված նամակով: Հարցվածների միայն 6% գերադասում է ստանալ ծանուցումները էլ.փոստով, 2%՝ էլեկտրոնային փոստով, և՛ E-citizen պաշտոնական ծանուցման համակարգով և 0.5%՝ E-citizen պաշտոնական ծանուցման համակարգով (Տե՛ս Գծապատկեր 11.):

Գծապատկեր 11. Էլեկտրոնային փոստով (e-mail) կամ E-citizen պաշտոնական ծանուցման համակարգով էլեկտրոնային հաղորդումներին պարտապանների պատրաստակամությունը



ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Քանակական հարցումները ցույց տվեցին, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող թե՛ իրավաբանական, թե՛ ֆիզիկական անձանց մոտ տեղեկացվածության աստիճանը սնանկության գործընթացի վերաբերյալ շատ ցածր է, այսինքն՝ անձինք բիզնես սկսելիս հիմնականում չեն իրականացնում ռիսկերի գնահատում՝ մասնավորապես սնանկացման ռիսկի գնահատում:

Այս տեղեկատվությունը բնականաբար հաստատվեց բոլոր մասնագիտական խմբերում, որոնք որպես հիմնական խնդիր մատնանշում էին նման մշակույթի բացակայությունը, այսինքն՝ գործարարը գերադասում է խնդիրները լուծել դրանց առաջացումից հետո, այլ ոչ թե կանխարգելել դրանք:

«... հիմքերը, պատճառները և հետևանքները... հիմնականում նույնիսկ տնտեսվարողների մոտ չկա այդ պատկերացումը, մարդիկ երկար տարիներ զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, բայց չգիտեն, որ ինչ-որ մի իրավիճակ կարող է գալ, երբ իրենք կանգնում են այդ հարցի առաջ ու այդ փուլից սկսած նոր իրենք սկսում են առնչվել, շփվել, իսկ մինչև այդ ոչինչ չեն անում, որ իրենց գործերը ավելի լիարժեք կազմակերպեն, որ այդ խնդիրները չառաջանան:»

Սակայն այստեղ հատկանշական է, որ որոշ մասնագիտական խմբեր մտահոգություն հայտնեցին նաև այն մասին, որ շատ են նաև այն քաղաքացիները, ովքեր արդեն իսկ գտնվելով սնանկության գործընթացում միևնույն է առանձնապես տեղեկատվություն ստանալու և տեղեկացվելու ցանկություն չեն էլ ունենում, այնինչ անձի տեղեկացվածությունը մի կողմից կարող էր բարձրացնել վերջինիս բավարարվածությունը գործընթացից, քանի որ նա կգիտակցեր թե որ գործողությունն ինչի համար է կատարվում, մյուս կողմից էլ դա կհանդիսանար գործընթացն առավել արդյունավետ դարձնող հանգամանք:

Մասնագիտական խմբերում նաև քննարկվեց այն հարցը, թե ըստ մասնագետների, երբ պարտապանները պնդում են, որ առկա է տեղեկատվության պակաս, որպես կանոն, այդ ինչ տեղեկատվության մասին է խոսքը: Պատասխանները հիմնականում միանշանակ էին առ այն, որ պարտապանները հիմնականում տեղեկացված չեն ընթացակարգերի և սնանկության գործընթացի մասին:

Եթե մարդ պրոցեսի մեջ ներգրավվում է, ինքն արդեն դատական ակտերով տեղեկացվում է, ուստի՝ տեղեկատվության պակասն ավելի շատ վերաբերում է սնանկության վարույթի վերաբերյալ իրենց պատկերացումներին և ողորտը կարգավորող օրենսդրական ակտերին:

Կան նաև կարծիքներ, որ անգամ մասնագիտական որոշակի խմբեր թերի են տեղեկացված այս ընթացակարգի մասին:

Անգամ փաստաբաններին մի փոքր անժամոթ ինստիտուտ է, չնայած, վերջին տասնամյակում քայլեր են կատարվում հասարակության շրջանում տեղեկատվության բարձրացման առումով: Մինչ օրս մենք չունենք աշխատություններ այս ոլորտում գրված՝ ատենախոսություններ, դասախոսություններ, դասագրքեր:

Փաստաբաններին պետք է այս առումով ուժեղացնել: Երբ պարտապանները դիմում են փաստաբանին, լավ կլինի, որ այդ փաստաբանը ասի՝ գոյություն ունի փոստալի ինստիտուտ, եկեք աշխատենք այս կամ այն ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, հետաքրքրական է, որ կարծիք հնչեց առ այն, որ մասնագիտացված դատարանի ստեղծումը արտակարգ լուծում էր, որը ինքնաբերաբար կբարձրացնի սնանկության մասին տեղեկատվությունը, և՛ դերը, և՛ իմացությունը նույնիսկ փաստաբանների մոտ:

Սակայն մասնագիտական որոշ խմբեր էլ կարծիք հայտնեցին, որ երբ հարցվողը հայտնում է, որ ինքն ունի տեղեկության պակաս, դա հաճախ վերաբերում է սնանկության կառավարչի գործողություններին, մասնավորապես՝ ինչ գործողություններ են իրականացվում, որ փուլում են դրանք և այլն, ինչպես նաև վերջինիս ծախսերի ձևավորմանը: Անձի համար թափանցիկ ու հասկանալի չէ, թե այդ գումարներն ինչպես են ձևավորվել և ինչու հենց այդքան:

Գնահատելով տեղեկատվության աղբյուրները, մասնագիտական խմբերը հիմնականում ընդհանուր առմամբ բավարար են գնահատում www.datalex.am կայքի գործունեությունը, սակայն ընդգծում են որոշ թերություններ: Առաջինը. սնանկության գործերով այս կայքում առանձնապես տեղեկատվություն չի լինում, այնուհետև, այն օպերատիվ չի թարմացվում, երբեմն գործողություններ կամ դատական գործընթացներ են տեղի ունենում, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն ավելի ուշ է արտացոլվում այնտեղ, ինչպես նաև դա հիմնականում մասնագիտական կայք է, և շարքային քաղաքացիներն այդ կայքերում տեղակայված տեղեկատվությունից չեն օգտվում:

Այսպիսով, ամփոփելով քաղաքացիների տեղեկացվածության մակարդակի մասին դիտարկումները, հարկ է նկատել, որ մասնագետները վերահաստատեցին հանրության լայն հատվածի դիրքորոշումն այն մասին, որ ոլորտի վերաբերյալ առկա է տեղեկատվական բաց՝ ինչպես ամբողջական վերցրած համակարգի գործունեության, այնպես էլ, օրինակ, սնանկության կառավարիչների գործունեության վերաբերյալ:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրավիճակի բարելավման համար նախ պետք է սկսել քաղաքացիների իրավագիտակցության բարձրացումից: Յուրաքանչյուր անձ պետք է իմանա՞նա իր իրավունքների ու պարտականությունների ծավալը: Օրինակ, հանրային ալիքով, որը վճարումներ չի պահանջում, կարելի է հոլովակներ պատրաստել և ցուցադրել ներկայացնելով օրինակ սնանկության վարույթը:
- Կարելի է բանկերի միջոցով որոշակի ուշացում ունեցողների սնանկության վարույթի մասին տեղեկացնել:

- Հարկավոր է օրենսդրական մակարդակում ներ դնել այնպիսի մեխանիզմներ, որոնք թափանցիկ կդարձնեն սնանկության կառավարչի ծախսերը:

ՆՈՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Բոլոր մասնագիտական խմբերում քննարկվել է նոր էլեկտրոնային հարթակի ստեղծման գաղափարը, որը ստացել է դրական արձագանք: Հատկանշական է, որ մասնագետներն այդ կայքի ստեղծումը դիտարկում են որպես իրենց մասնագիտական պարտականությունների կատարումն առավել արդյունավետ և արագ դարձնող գործիք:

Դա նաև մեզ համար պետք է գործիք լինի...

Մասնագետները նաև պնդում էին, որ էլեկտրոնային դարում թղթային տարբերակների կիրառումն ինչնին ոչ միայն դանդաղեցնում է ընդհանուր ընթացքը, այլ նաև բազմաթիվ անհարմարություններ է ստեղծում փաստաթղթերի պահման, դրանց ամբողջականության ու անվնասության ապահովման, ինչպես նաև հետազոտման հարմարավետության տեսանկյուններից:

Նաև հատորներով գործերը հեշտ կլինի ուսումնասիրել: Լինում է, որ Դատարանը գործ է ստանում, որն ունի 50 հատոր, ընդ որում ամեն հատորը 200 էջ: Իսկ յուրաքանչյուր դատավոր իր վարույթում միջինն ունի 700 և ավելի գործ:

Գրեթե բոլոր խմբերում կարծիք հնչեց, որ այդ հարթակը հիմնականում պետք է միտված լինի սնանկության գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու թափանցիկության ապահովմանը: Եզակի դեպքում տեսակետներ հնչեցին, որ էլեկտրոնային կայքի ստեղծումը կարող է հավելյալ ծանրաբեռնվածություն առաջացնել որոշակի մասնագիտական խմբի համար, իսկ կայքն էլ արդյունավետ չի կարող լինել, քանի որ շատ են մարդիկ, ովքեր համացանցից չեն օգտվում և իրենք միևնույնն է միայն թղթային տարբերակով են կարդում: Մասնագիտական այն կարծիքները, որոնց համաձայն անհրաժեշտ է նման հարթակի ստեղծումը, պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբերի.

1. Հարթակը պետք է իր մեջ ներառի սնանկության ողջ գործընթացը,
2. Հարթակը պետք է համատեղի այժմյան առկա բոլոր նմանատիպ հարթակները մեկում,
3. Հարթակը պետք է լինի տեղեկատվական ամբողջական ռեսուրս բազա:

Առաջին խմբի ներկայացուցիչները նշված հարթակը ներկայացնում են որպես սնանկության բոլոր փուլերն ու գործառնություններն իր մեջ ներառող օնլայն տիրույթ, որի միջոցով հնարավոր է ներկայացնել դիմումներ, միջնորդություններ, ուղարկել ծանուցումներ, կազմակերպել օնլայն ժողովներ և աճուրդներ, իրականացնել փաստաթղթաշրջանառություն, կատարել հարցումներ, տեղադրել հարցումներ և այլն: Այս տեսակետի ջատագովները վստահ են, որ այս կերպ հնարավոր կլինի բարձրացնել գործընթացի թափանցիկությունը, նվազեցնել վարույթի տևողությունը, բացառել տեղեկատվության հարցումների և այլ կազմակերպչական խնդիրների հետ կապված լրացուցիչ ծախսերը:

Երկրորդ խմբի ներկայացուցիչները կարծում են, որ առավել օգտակար կլինի, եթե www.datalex.am, www.snank.am, www.azdarar.am և www.arlis.am կայքերում տեղադրվող սնանկության վարույթին վերաբերող ամբողջական կամ մասնակի տեղեկատվությունը համատեղվի մեկ կայքում, որպեսզի անձը մեկ վարույթի մասին տեղեկատվություն փնտրելիս ստիպված չլինի այցելել մի քանի կայքեր:

Երրորդ խմբի մասնագետները պնդում են, որ այդ էլեկտրոնային հարթակում անհրաժեշտ է տեղադրել սնանկության գործընթացի վերաբերյալ բոլոր հնարավոր փաստաթղթերը՝ դրանք ներբեռնելու (upload) և բեռնելու (download) հնարավորությամբ: Մասնավորապես ակնկալվում է, որ այդ հարթակում պետք է տեղադրվեն ոչ միայն դատարանի կայացված որոշումները, այլ նաև սնանկության կառավարիչների կողմից կայացված ցանկացած որոշում, միջնորդություն, փորձագիտական եզրակացությունները, տեղեկատվության հարցումներն ու դրանց պատասխանները, բողոքարկումները և այլն: Այս հարթակում պետք է նաև տեղադրվեն վերջին մի քանի տարիների ընթացքում սնանկ ճանաչված իրավաբանական և ֆիզիկական անձանց ցուցակները: Այս տեսակի հարթակի գոյությունն առաջարկող մասնագետները գտնում են, որ այն, հանդիսանալով մեկ ամբողջական միասնական տեղեկատվական բազա, կբացառի փաստաթղթերի կորուստը կամ անհասանելիությունը կողմերից ցանկացածի համար, կնպաստի գործընթացի արագացմանը, քանի որ փաստաթղթաշրջանառությունը կլինի մեկ «click»-ի խնդիր և արդյունքում կբարձրանա նաև քաղաքացիների տեղեկացվածության մակարդակը:

Եթե լինի մեկ միասնական հարթակ, որում տեղադրված կլինեն դատարանի ակտերը, ՄԿ գործողությունների արդյունքում կայացված արձանագրությունները, դատակարգված թղթապանակների մեջ, ապա անհրաժեշտության դեպքում բոլոր կողմերը կկարողանան ծանոթանալ, եթե download անելու հնարավորություն էլ կունենա, ավելի լավ կլինի:

Քննարկման ժամանակ գրեթե բոլոր խմբերում հարց էր բարձրացվում, թե այնուամենայնիվ այդ հարթակի թարմացումն ում պարտականությունը պետք է լինի և հիմնականում պատասխանը միանշանակ էր, որ յուրաքանչյուր կողմ պետք է օրենսդրական պարտավորություն ունենա իր իրականացրած գործողությունների հիմքը կամ արդյունքը հանդիսացող փաստաթղթերի տեղադրումն իրականացնելու այդ հարթակում, ինչի արդյունքում սնանկության գործընթացի ցանկացած փուլ տեսանելի և հասանելի կլինի վարույթի ցանկացած փուլում ներգրավված անձի համար:

Ինչ վերաբերում է այդ հարթակի աշխատանքին, ապա կարող եմ նշել, որ պետք է պատասխանատու մարմին լինի և պարտավորություն դրվի բոլոր կողմերի՝ դատարանի, ՄԿ-ի վրա, որ իրենց գործողությունների վերաբերյալ պարբերաբար ու մանրամասն տեղեկատվություն տրամադրեն, որը կտեղադրվի այդ համակարգում: Դա նաև հնարավորություն կտա, որ վարույթի տարբեր փուլերի ընթացքում միացած մարդիկ տեղեկացված լինեն ողջ գործընթացի մասին:

Քննարկման մեկ այլ կարևորագույն հարց էր, թե նմանատիպ էլեկտրոնային հարթակում տեղակայված տվյալների որ և որքան հատվածը պետք է լինի հանրայնորեն հասանելի և

որքան մասը պետք է ունենա հասանելիության սահմանափակումներ: Գրեթե բոլոր խմբերը համակարծիք էին, որ որոշակի տեսակի տեղեկություններ պետք է հասանելի լինեն բացառապես որոշակի խմբերին, իսկ ընդհանուր տվյալները միայն հանրային լայն շրջանակի համար հասանելի լինեն:

Կարող ենք ունենալ ընդհանուր կայք, որտեղ կառավարիչները կարող են գործախարություն ունենալ, այդ գործախարությանը որոշակի աստիճաններով հասանելիություն ունենան պարտատերեր, պարտապանը, դատարանը, արդարադատության նախարարությունը՝ իրենց login-ով, password-ով:

Որպես խնդրի լուծում առաջարկվել էր, որ յուրաքանչյուր անձ, ով ցանկացած կարգավիճակով ներգրավված կլինի սնանակության վարույթում, կարող է դիմել ԻԿԿ կամ դատարան, ստանալ տվյալ գործի հասանելիությունն ապահովող ծածկանունն ու գաղտնաբառը, դրանով հասանելիություն ստանալով գործին վերաբերելի նյութերին:

Նյութերի հասանելիության խնդրի վերաբերյալ խմբերից մեկում քննարկվել էր ԱՄՆ փորձը, որն ընդունելի և արդյունավետ էր համարվել, մասնավորապես.

ԱՄՆ-ում ... սնակության գործը հանձնվում է գրասենյակ թղթային տարբերակով, գրասենյակը ամբողջը սկանավորում է, ստեղծում է էլեկտրոնային սնանկության գործ, որն անմիջապես փոխանցվում է դատավորին: Այդ փուլը այնպես է արված, որ ծրագիրը առանձնացնում է հանրությանը վերաբերող փաստաթղթերի ցանկը, որոնք բոլորը կարող են տեսնել: Այս սնանկության վարույթի ընդունման մեխանիզմը առկա է բոլորի էլ. հասցեների նշման պարտադիր պայմանում: Այդ էլ. հասցեի ներդրմամբ բոլորին հասանելի է դառնում՝ այդ համակարգ ներգործելով: Այսինքն՝ սնանկության վարույթի մասնակիցները օնլայն ռեժիմով կարողանում են հետևել, թե սնանկության վարույթը որ փուլում է:

Մասնագիտական բոլոր խմբերում քննարկման ժամանակ առանձնակի շեշտադրվում և ընդգծվում էր մի քանի պետական մարմինների հետ սնանկության կառավարիչների համագործակցության բացերը, ինչը հանգեցնում է սնանկության վարույթի երկարացմանն ու արդյունավետության նվազմանը, մասնավորապես հիշատակվեցին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը (ՅԱԴԿ), ՀՀ Ճանապարհային ոստիկանությունը, Անձնագրային և վիզաների վարչությունը, Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը, որոնց հարցումներ ուղարկելու համար սնանկության կառավարիչները կատարում են պետական տուրքի վճարում, իսկ հարցումների պատասխանները ստացվում են բավականին ուշ: Հետևաբար, գրեթե բոլոր մասնագիտական խմբերում որպես առաջնային խնդիր մատնանշվում էր վերոհիշյալ մարմիններին օնլայն և առանց վճարումների տեղեկատվության հարցումներ անելու և ստանալու հնարավորության ապահովումը:

... Չազսի թղթի պատճառով պատահում է, որ 2 ամիս ձգվում է գործը, քանի որ մի հատ կենտրոնական մարմին է հարցում արվում, պատասխանում են, որ մենք ուղարկել ենք այսինչ բաժին, հետո այսինչ բաժինը պատասխանում է, որ չենք կարող ձեզ տեղեկություն տրամադրել, քանի որ իրավունք չունենք, դրանից հետո մենք դատարան ենք դիմում միջնորդությամբ, ստանում ենք դատարանի որոշումը, նորից ուղարկում ենք Չազս, հետո նոր անհրաժեշտ պատասխանը ստանում ենք:

Քննարկման առարկա հանդիսացող մեկ այլ կարևորագույն հարց է վերաբերում էր այն խնդրին, թե հանրային հասանելի ինչ տեսակի նյութեր պետք է տեղադրված լինեն նշված հարթակում: Ի պատասխան այդ հարցին տեսակետներ հնչեցին, որ դրանք կարող են լինել ձևաթղթեր, վիճակագրություն, հոդվածներ, օրենքներ, նախադեպային որոշումներ, ցանկացած տեսակի ինֆորմացիա, որը կարող է նպաստավոր լինել սնանկության վարույթի համար:

Խոսելով ձևաթղթերի մասին, մի քանի խմբերում վերահաստատվել է այն միտքը, որ սույն վարույթի շրջանակներում մեծապես օգտակար կլինեն, եթե մշակվեին որոշակի ձևաթղթեր, օրինակ Ֆինանսական առողջացման ծրագրի և այլն, որոնք էլ հասանելի կլինեն ցանկացածին նշված հարթակի միջոցով և մեծապես կնպաստեն ընթացակարգային հստակեցմանն ու արագացմանը:

Ի վերջո, մասնագիտական խմբերում քննարկվել է նաև անձնական տվյալների պաշտպանության հարցը և ընդգծվել է, որ նման հարթակը պետք է ծրագրային այնպիսի լուծումներ գտնի, որպեսզի հնարավորություն ստեղծի ապահովել անձնական տվյալների լիարժեք պաշտպանությունը:


Ի մի բերելով էլեկտրոնային նոր հարթակի ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ հանրային և մասնագիտական քննարկումները, պետք է եզրահանգել, որ հանրային տեսակետը համընկնում է մասնագիտական մոտեցումների հետ և այս հարցում բոլոր կողմերը համակարծիք են առ այն, որ ստեղծվող հարթակը պետք է պարունակի սնանկության վարույթին վերաբերող ամբողջ տեղեկատվական բազան, լինի պետական մարմինների հետ հաղորդակցվելու միջոց, սակայն այդ տեղեկատվության հանրային հասանելիության մակարդակը պետք է ունենա որոշակի դասակարգումներ և որոշակի խմբերի ներկայացուցիչների համար սահմանափակումներ:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ

Հետազոտության արդյունքների համաձայն սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված է եղել ըստ մեղիանային բաշխման 5.000.001 – 10.000.000 ՀՀԴ պարտավորություն: Սակայն առավել հաճախ նշվել է 1.000.001 – 3.000.000 ՀՀԴ պարտավորության չափը՝ 26.5% և 20.000.001 դրամ և ավելի՝ 28.5% (Տե՛ս **Գծապատկեր 12.**):

Գծապատկեր 12. Սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափը:



Որպես կանոն, պարտավորությունների կետանցը՝ նախքան պարտատիրոջ կողմից սնանկության մասին դիմում ներկայացվելու պահը, տևել է 181 օրից ավելի՝ 44% դեպքերում, 91-180 օր՝ 18% դեպքերում: 60 օր է տևել մեկ դեպքում՝ 0.5%, իսկ 2.5% դեպքերում՝ ավելի պակաս: Հարցվածների 25% դժվարացան պատասխանել կետանցի վերաբերյալ հարցին (Տե՛ս **Աղյուսակ 1.**):

Աղյուսակ 1. Պարտավորությունների կետանցը՝ նախքան պարտատիրոջ կողմից սնանկության մասին դիմում ներկայացվելը

	Տոկոս
Ոչ մի օր	2.0 %
5 օր	0.5 %
60 օր	0.5 %
61-90 օր	10.0 %
91-180 օր	18.0 %
181 օրից ավելի	44.0 %
Դժ. պատ.	25.0 %
Ընդամենը	100.0 %

Հարցվածների մեծամասնությունը տեղյակ են եղել կետանցած պարտավորությունների մասին՝ 73.5%: Այնուամենայնիվ, անհանգստացնող է, որ


պարտապանների 23% տեղյակ չեն եղել կետանցաձև պարտավորությունների մասին (Տե՛ս **Գծապատկեր 14.**):

Կետանցաձև պարտավորությունների առկայության մասին տեղյակ չեն եղել հարցվածների 23% տարբեր պատճառներով: Ամենահաճախ նշված պատճառն այն է, որ պարտապանն անձամբ չի վերահսկել գործերն ու տեղեկացված չի եղել դրանց ընթացքի մասին՝ 15%: Մնացած պատճառները շատ ավելի հազվադեպ են հանդիպել, խիստ բազմազան են և յուրաքանչյուրը շատ կարևոր: Դրանցից մի մասը կապված է տեղեկացվածության, գիտելիքի և փորձի պակասի հետ, իսկ մյուս մասը՝ կեղծիքների (Տե՛ս **Աղյուսակ 2.**):


Աղյուսակ 2. Կետանցված պարտավորությունների առկայության մասին տեղյակ չլինելու պատճառները:

Տեղյակ չլինելու պատճառները	Տոկոս
Անձամբ չեմ վերահսկել գործերն ու տեղեկացված չեմ եղել դրանց ընթացքի մասին	15.0%
Գիտելիքս ու փորձը չեն բավարարել հասկանալու համար	2.5%
Որոշումներ կայացնող մարմինը դա գաղտնի է պահել ինձնից	2.0%
Կազմակերպության փաստաթղթերում արտահայտված չի եղել իրական վիճակը	1.0%
Տեղյակ չեմ եղել, քանի որ մեքենան ՃՈ-ում չի անվանափոխվել և գույքահարկը «մնացել է իմ վրա»	0.5%
Անակնկալի է բերել ՊԵԿ-ի կողմից հայտը ներկայացնելը	0.5%
ՊԵԿ-ը վերացրել էր իմ Ա/Զ-ի պարտավորություններն իր նկատմամբ	0.5%
2011թ.-ին կասեցված է եղել կազմակերպության գործունեությունը	0.5%
Իմ անունով վարկը ստացել է պարտատերը «մի բանկից» կեղծ ստորագրությամբ	0.5%
Դժ. պատ.	3.5%

Գծապատկեր 13. Կետանցված պարտավորությունների առկայության մասին պարտապանների տեղեկացվածությունը



Գծապատկեր 14. Սնանկության կանխատեսելիությունը պարտապանների համար



Հարցված պարտապանների 65.5% համար սնանկությունը լիովին անսպասելի է եղել, 29% համար այն եղել է սպասելի, իսկ 5.5% չեն բացառել սնանկությունը՝ որոշակի ռիսկերով պայմանավորված (Տե՛ս **Գծապատկեր 13.**):

Այն դեպքերը, երբ սնանկությունը սպասելի է եղել, հարցվածների մեծամասնությունը բացատրել է եկամուտների անբավարար չափով և ժամկետանց պարտավորությունների առկայությամբ՝ 18%: 6.5% իրենք են դիմել սնանկության: Մնացած պարզաբանումները էապես ավելի հազվադեպ են հանդիպել: Հարցվածների 1.5% պատճառաբանել են, որ երկրում ճգնաժամ էր, 1%՝ նշել են, որ տեղյակ էին օրենքից և գիտեին իրենց «գլխի գալիքը», 1 %՝ իրենք են առաջարկել պարտատիրոջը դատարան դիմել, 0.5% նշել են, որ նախկին կառավարությունը նրանց դեմ ուղղված քաղաքականություն էր վարում:

Հարցվածների այն հատվածը, որոնք չէին բացառում սնանկության ռիսկը, տվել են հետևյալ բացատրությունները, որոնք հիմնականում կապված են ճգնաժամով պայմանավորված տնտեսվարման պայմանների փոփոխության հետ (2%), սնանկության տանելու բանկերի կանխատրամադրվածության հետ (1%), պարտատիրոջ հետ պայմանավորվածությունների խախտման (0.5%), և ավագակային հարձակման հետ, որի արդյունքում կազմակերպության գումարը, 300 հազար ԱՄՆ դոլար, առևանգել են (0.5%):

Այն դեպքերը, երբ սնանկությունն անսպասելի էր պարտապանի համար, հարցվածները հետևյալ կերպ բացատրեցին: Հարցվածների 14% կարծում էին, որ կկարողանան վճարել պարտավորությունները, բայց տարբեր պատճառներով չեն կարողացել: Հենց են, օրինակ, հետևյալ պատասխանները՝

- Չեմ մտածել, որ չեմ կարողանա վճարել, քանի որ ունեցել եմ աշխատանք – 10.5%
- ՌԴ-ի բիզնեսը սնանկ է ճանաչվել: ՌԴ-ում բիզնեսը տապալվեց – 0.5%
- Չէի սպասում, որ ինձ հետ չեն վերադարձնի պարտքս և կհայտնվեմ սնանկության գործընթացում – 0.5%
- Գործերը լավ էին, հետո մեքենաները վառվեցին, որոնցով բիզնեսն էինք անում – 0.5%
- Առողջական խնդիրներ առաջացան ու չկարողացա աշխատել ու մոծել – 0.5%
- Կարծում էի, որ գրավադրված տունը կվաճառեն, ու գումարը կմարվի – 0.5%
- Ներմուծող կազմակերպության սխալ ու անհիմն բողոքի համաձայն սնանկ եմ ճանաչել - 0.5%
- Պետությունն էլ ինձ էր գումար պարտք. գյուղապետարանների հետ համաձայնագիր ունեինք, որ ասֆալտապատում պիտի անենք -

Հարցվածների 12% երաշխավոր են հանդիսացել մեկ այլ անձի համար՝ չպատկերացնելով, որ այդ պատճառով կարող են ներգրավվել սնանկության գործընթացի մեջ:

Եվս 7% չգիտեին, որ հարկայինի տուգանքի արդյունքում սնանկության գործընթացում կներգրավվեն:

6% տեղյակ չեն եղել, որ բանկային ուշացումների արդյունքում սնանկության գործընթացում կներգրավվեն:

5% չէին պատկերացում, որ պարտատերը սնանկության կտա:

4.5% նշեցին, որ տեղյակ չեն եղել, պատահական թուղթ են ստացել, առանց զգուշացնելու՝ միանգամից սնանկ են ճանաչվել:

4.5% նշել են, որ նրանց «գլխին սարքել են», անօրինական ճանապարհով են ներգրավել սնանկության գործընթացում, պարտատիրոջ՝ բանկի կամ ապահովագրական ընկերության, բացթողման պատճառով են սնանկ ճանաչվել:


0.5% չգիտեին, որ կարող են դիմել, որպեսզի տույժերն ու տուգանքները չավելանան:

0.5% նշեցին, որ պարտքի չափը դատարանում մեկ այլ գործով վիճարկվել է:

0.5% նշեցին, որ իրականում պարտքով գումար չեն ստացել, բայց ստորագրել են պայմանագիրը:


Սնանկության համակարգում առկա խնդիրների ազդեցությունը հարցվողների գնահատականների հիման վրա դասակարգվել է հետևյալ կերպ: Առավել հաճախ նշվել է վատ օրենսդրությունը, այնուհետև՝ տեղեկատվության բացակայությունն ու սակավությունը, այնուհետև հեղինակազրկված և ոչ թափանցիկ սնանկության համակարգը, իսկ վերջում՝ օրենքի և պրակտիկայի միջև հակասությունը (Տե՛ս **Գծապատկեր 15.**):

Գծապատկեր 15. Սնանկության համակարգում առկա խնդիրների ազդեցությունը



Հարցվածների բացարձակ մեծամասնությունը տեսնում են սնանկության ոլորտի օրենսդրության բարելավման անհրաժեշտություն (69.5%)՝ համարելով, որ դա անհրաժեշտ է և հնարավոր: Իսկ 5.5% համարում են, որ սնանկության ոլորտի օրենսդրության բարելավումն անհրաժեշտ է, բայց հնարավոր չէ (Տե՛ս **Գծապատկեր 16.**):

Գծապատկեր 16. Սնանկության ոլորտի օրենսդրության բարելավման անհրաժեշտության վերաբերյալ պարտապանների կարծիքը



ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Հատկանշական է, որ բավականին մեծ թիվ են կազմել հարցվողների այն հատվածը, ովքեր պնդում էին, որ հարկավոր է փոփոխել սնանկության ոլորտը կարգավորող օրենսդրությունը: Այս դիրքորոշումը հաստատվեց մասնագիտական բոլոր խմբերում, սակայն քննարկումների ժամանակ կարևորվեց նաև մասնագետների մոտեցումն այն հարցին թե ինչի նկատի ունեին պարտապանները, երբ կարծիք էին հայտնում, որ օրենքը բարելավելու անհրաժեշտություն կա: Բավականին հետաքրքրական է, որ մասնագետները պարտապանների՝ օրենքի անկատար լինելու և վերջինիս փոփոխելու անհրաժեշտության մասին պնդումները փոխկապակցում էին վերջիններից ցածր իրավագիտակցության կամ տեղեկացվածության անբավարար մակարդակի հետ:

Մարդիկ սնանկության իրավական ռեժիմը, որը սկսում է տարածվել, այդքան էլ լավ չեն պատկերացնում: Օրինակ, նրանք կարող են գալ ու դատարան այնպիսի միջնորդություններ ներկայացնել, որ դատարանը դրա իրավունքը չունի, անգամ օրենսդրությունը թույլ չի տալիս, քանի որ դա սնանկության նպատակին չի էլ ծառայում, ու, քնականաբար, դատարանը չի քննարկում կամ մերժում է, ու իրենք ասում են՝ օրենսդրությունը վատն է: ... Մարդկանց թվում է, որ սնանկության ժամանակ ինչ ուզեն կարող են անել, բայց մենք ասում ենք, որ դու սնանկության դաշտում ես, և մենք քո նկատմամբ համաչափ ինչ-որ բան չենք կարող սահմանել, ու այդ հիմքով, որ իրենց պահաջները չեն բավարարվում, իրենք ասում են, որ մեր օրենսդրությունը լավը չի:

Սակայն բոլոր մասնագիտական խմբերում միակարծիք էին, որ իրականում կա թե՛ օրենսդրության և թե՛ պրակտիկայի փոփոխման կարիք:

Գրեթե բոլոր մասնագիտական խմբերում սնանկության պատճառների մասին քննարկման արդյունքում հաստատվում էր այն մոտեցումը, որ վերջին տարիներին ավելացել է սնանկության գնացող սուբյեկտների թիվը, որի հիմնական պատճառները ինչպես պայմանագրային պարտավորությունների չկատարումն ու պետական մարմինների կողմից կայացված ակտերն են, այնպես էլ՝ կամավոր սնանկության դիմումները: Վերջիններս հաճախ, ըստ մասնագիտական խմբերի, նպատակ են հետապնդում որոշակի ֆինանսական պարտավորություններից ազատվել, այնինչ հարկադիր սնանկությունը տարիներ շարունակ հանդիսացել է խոշոր բիզնեսների նկատմամբ ճնշումներ գործադրելու համար արդյունավետ և աշխատող գործիք:

Վերջերս ակտիվացել է ֆիզիկական անձանց կողմից կամավոր դիմում ներկայացնելու պրոցեսը, բայց եթե դիտարկենք, դրանք հիմնականում միտված են ոչ թե առողջացմանը, այլ իրենց աշխատանքային վարձատրության հետ կապված արգելանքը հանելուն: Իրենք այսպես են մտածում, քանի որ կար բռնազանձման վճիռ և գնում էր ԴԱՀԿ, վերջինս էլ գոնե 50%-ի չափով արգելանք էր դնում աշխատավարձի վրա, այսինքն՝ անձը կարող էր աշխատել ու տարիներով ինքը պարտք փակել:

... Մի միտում էլ կար նախկինում, որ անձին սնանկ ճանաչելը պատժելու քաղաքականություն էր դարձել: 15-16-ին ԴԵԿ-ը բիզնեսը թողափելու միտում ուներ,

բայց շատ գործերով որպես պատժիչ մեխանիզմ դիմում էին դատարան, որ սնանկ ճանաչեին ու պարտապաններից շատ քիչ տոկոսը գալիս էր պարտքերը մարում էր, որ սնանկ չճանաչվեին:

Սնանկության վարույթի պատճառների և հիմքերի մասին վերլուծության արդյունքում մասնագիտական խմբերից մեկում վեր հանվեց կարևորագույն խնդիր, որը վերաբերում է օրենքով սահմանված սնանկության վարույթ սկսելու հիմքերին, մասնավորապես մատնանշվել է, որ «...ինչ վերաբերում է միջոցներին, եթե մեծ կազմակերպություն է, որ ինչ-որ խնդրի հետ կապված չունեցավ կանխիկ կամ բանկային հաշվին միջոցներ, պարտքը վճարելու համար, բայց ունի մի քանի անգամ գերազանցող գույք, դա ոչ ոք հաշվի չի առնում: Ասում են՝ չես վճարել, ուրեմն սնանկության կարող ենք տանել, որովհետև սնանկության մասին օրենքը չի ասում, ունի հաշվի համարին գումար կամ չունի, օրենքը ասում է՝ ունի 60 օր կետանց, հետևաբար արդեն կարող է կամ պարտավոր է գնալ սնանկության: Այս պարագայում արդեն շահագրգիռ անձը կամ կազմակերպությունը չի նայում ունի, թե չունի միջոց, վճարելու հնարավորություն ունի, թե չունի, միանգամից իրավունք է ստանում մտնելու սնանկության: Կարող է կազմակերպությունը ունենալ որոշակի շրջանառող միջոցներ, որոնք իրեն հնարավորություն տան վճարելու, բայց ոչ այդ պահին, օրինակ, կարող է մեկ ամիս հետո, բայց արդեն խնդիր է առաջանում օրենքի այս դրույթում: Մանավանդ պետական լիազոր մարմինների հետ կապված, պարտավորություն է դրվում մարմինների վրա, որ պարտավոր է մտնի սնանկության 60 օրյա կետանցի դեպքում, եթե 1 մլն գերազանցում է: Այս պարագայում արդեն խնդիր է առաջանում տվյալ կազմակերպության համար»:

Ուշագրավ է, որ մասնագիտական խմբերից մի քանիսում մատնանշվել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձի գործողությունների որակումը կանխամտածված կամ կեղծ սնանկության տեսանկյունից միատեսակ չեն: Ֆիզիկական անձը քրեաիրավական առումով սուբյեկտ չէ:

Սա էլ է խնդիր, որովհետև որոշակի դեպքերում հնարավորություն կա, թեկուզ տեսականորեն, որ ֆիզ.անձը վերցնելով պարտք՝ բանկից կամ ֆիզիկական անձից, ուղղակի գնա սնանկության, սնանկ ճանաչվի, օրենքով սահմանված կարգով ու մաքրվի այդ պարտավորությունից՝ ստեղծելով կանխամտածված անվնասունակության հատկանիշները կամ կեղծ սնանկության հատկանիշները: Այդպիսի դեպքերը չեն գալիս մեր ուրրտ, դա մեր խնդիրը չէ: Առավելագույնը կարող է լինել խարդախություն, եթե ոչ, սպա քաղաքացիաիրավական է, քրեաիրավական չէ:

Բավականին մանրամասն ու ծավալուն քննարկումներ են եղել մասնագիտական խմբերում սնանկության համակարգում առկա խնդիրների վերաբերյալ, ինչի արդյունքում խմբերը մատնանշել են մի շարք առաջնային լուծման հիմնախնդիրներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Համակարգային,
2. Կարողությունների զարգացում,
3. Օրենսդրական,
4. Իրավակիրառ:

Համակարգային խնդիրներ

Վերջերս տնտեսագետներից մեկն ասել է, որ վերջին օրերը իրավաբաններն են գրել, դրա համար էլ վատն է: Եթե գրքալ ասեմ, ապա սնանկ ճանաչելու հատկանիշներից սկսած որոշակի խնդիրներ ունենք, քանի որ սնանկությունը ավելի շատ տնտեսական հետևանքներ է հետապնդում՝ գուտ անվճարունակության հատկանիշների հետ կապված:

Մասնագիտական խմբերում նաև կարևորվեց պետության դերը, որ պետք է միջամտի ոչ թե այս համակարգը դեկավարելու կամ վերահսկելու համար, այլ նպաստելու, որ այս ինստիտուտը օր առաջ կայանա և զարգանա: Սնանկության իրավահարաբերությունները լուրջ խթան կարող են հանդիսանալ, որպեսզի պետությունը լուրջ քայլերով առաջ գնա: Սնանկության շեմին բազմաթիվ ընկերություններ են հայտնվում և երբեմն այդ շեմը հաղթահարել չի լինում, քանի որ բոլորը՝ ՄԿ-ները, պահանջատերը, մտածում են՝ գույքը վաճառեն, պարտքը փակեն: Չի կարելի, սա սովետական իրավաբանության շարունակությունն է:

Այս մասին խոսելիս մասնագետները շեշտադրել են, որ նախ և առաջ անհրաժեշտ է բարելավել ընդհանուր սնանկության համակարգը՝ ընդունելով նոր օրենք կամ օրենսգիրք, հստակեցնել սնանկության օրենքի նպատակները, զարգացնել կառավարիչների ինստիտուտը, բարձրացնել քաղաքացիների իրավագիտակցությունը, ինչը կհանգեցնի սնանկության գործընթացների քանակի կրճատմանը, բացառել համակարգում կամայական մոտեցումները և սնանկության գործընթացը դարձնել առավել կանխատեսելի, թափանցիկ ու կրճատել դրա տևողությունը:

Նախևառաջ, խոսելով համակարգային խնդիրների մասին, առաջնային է սնանկության մասին օրենքի նպատակի անհստակությունը, քանի որ անգամ մասնագիտական հարցումների արդյունքում ակնհայտ դարձավ, որ հասկանալի չէ, թե ում շահերն են գերակա՝ պարտապանի, պարտատիրոջ, թե բիզնես միջավայրի առողջացման:

Բիզնես միջավայրի համար ծայրահեղ կարևոր է նվազագույնի հասցնել ակտիվների փոշիացումը: Մասնավորապես, երբ ընկերությունը գնում է սնանկության, այն, որպես կանոն, գնում է լուծարման, փակում է իր ձեռնարկությունը, այլ ոչ թե գնում է առողջացման:

Հանրային վստահության բարձրացման, ինչպես նաև իրավական որոշակիության տեսանկյունից, այս երևույթը կրիտիկական է: Նման իրավիճակում անհրաժեշտ է ապահովել դատարանների կողմից ոչ կանխատեսելի վարքագծի դրսևորման և ոչ իրավաչափ դատական ակտերի կայացման բացառումը: Այդ նպատակով պետք է վերանայվեն օրենքում առկա մի շարք ոչ հստակ ու ոչ միանշանակ կարգավորումները և իսպառ բացառվի այն հնարավորությունը, որ յուրաքանչյուր դատավորի կողմից կարող է յուրովի մոտեցում ցուցաբերվել ցանկացած առանձին վերցված գործով: Սա վերաբերում է ոչ միայն սնանկության օրենսդրությանը, այլ նաև այլ օրենքներում առկա հակասություններին և այնպիսի երկակի ստանդարտների բացառմանը, ինչպիսիք են, օրինակ այն, որ հարկադիրը գույքը չի դնում աճուրդի, եթե ծանուցում չկա, իսկ սնանկության դեպքում՝ առանց ծանուցելու գույքը դրվում է աճուրդի:

Մեկ այլ կարևորագույն հիմնախնդիրներ է, որ լուծարման վարույթում հնարավոր չէ կազմակերպության առողջ մասն առանձնացնել և վաճառել, ինչը հնարավոր է միայն առողջացման վարույթում: Իսկ դա իրականում բավականին եկամտաբեր կլինի կազմակերպության համար:

Ոչ պակաս կարևոր է այն հարցը, որ պարտատերերը գույքագրման գործընթացին խոչընդոտում են, այսինքն, ՄԿ-ին չեն թողնում մուտք գործի համապատասխան տարածք՝ գույքագրում կատարելու համար, օրինակ՝ գնահատողը գնում է տուն, և դուռը չեն բացում տվյալ տարածքի բնակիչները, ինչը բավականին լուրջ խնդիր է, քանի որ դա կարող է գործընթացի երկարացման պատճառ դառնալ:

Ոչ պակաս կարևորության հարց է սնանկացած կազմակերպությունների և անձանց նկատմամբ հետագա հսկողությունը, այսպես. դատարանի կայացրած որոշումներն ուղարկվում են բոլոր պետական մարմիններին, որոնք պետք է տեղեկացված լինեն տվյալ անձի սնանկության մասին: Բայց չկա մեխանիզմը՝ թե այդ պետական մարմինը տեղեկանալուց հետո ինչ պարտականություն ունի սնանկության գործի շրջանակներում:

Բացի դրանից խնդիրն այն է, թե ո՞ր մարմինը պետք է իրականացնի և ինչպես պետք է իրականացնի այդ հսկողությունը՝ անշարժ գույքի կադաստրով կամ շարժական գույքի կադաստրով կամ բանկային հաշիվներով:

Գրեթե բոլոր մասնագիտական խմբերում մտահոգությունների ցանկում առաջնային էր սնանկության ծախսերի օպտիմիզացիան, որովհետև երբեմն լինում են դեպքեր, որ գույքի օտարումից ստացված գումարի բավականին մեծ տոկոսը նախատեսվում է ՄԿ-ի ծախսերը հոգալու համար, ապահովված պարտատիրոջ գումարը վերադարձնելու համար, իսկ մնացած պարտապանների գումարների մարում որևէ կերպ չի իրականացվում:

Ենթադրենք, մարդու աշխատավարձը 60000 է, որից բռնագանձվում է 50%-ը՝ 30000 դրամը: Էս պարտապանի պարտքը 7 մլն դրամ է: Տեսնե՞ք, ինչ է ստացվում, այդ 30000 դրամից սնանկության կառավարիչը վերցնում է իր աշխատավարձը, վարչական ծախսերը և այլն, ու արդյունքում, մարդուն սարքում է իր ճորտ՝ ինքն աշխատում է, և վարձատրում է սնանկության կառավարչին:

Համապարփակ հետազոտության արդյունքում ակնհայտ դարձավ, որ սնանկության գործընթացի բոլոր մասնակիցներն էլ յուրաքանչյուր կողմի գործողությունների և գործառնությունների հստակության խնդիր են տեսնում: Ըստ մասնագետների, այսօր սնանկության վարույթում դատարանների, դատավորների կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև դիրքորոշումը էական նշանակություն ունեն ամբողջ վարույթում: Բավականին մեծ թվով սնանկության կառավարիչներ իրենց գործողությունները՝ հատկապես բարդ գործերով, համաձայնեցնում են դատավորների հետ: Այստեղ մեծապես վտանգվում է սնանկության ոլորտի անկախությունը:

Ցանկացած ՄԿ կհաստատի, որ դատավորի խոսքը մեծ կարևորություն ունի իրենց համար՝ «դատավորի ասածն օրենք է»: Դա պայմանավորված է նրանով, որ ՄԿ-ն առանց դատարանի որոշումների չի կարող իր գործողություններն արդյունավետ իրականացնել: Օրենսդրությունն այնպես է մշակված, որ ՄԿ-ի գործողությունները պետք է հաստատվեն դատարանի կողմից կամ կարող են բողոքարկվել: Եթե ՄԿ-ն դատարանի հետ վատ հարաբերություններ ունեցավ,

ապա կատացվի, որ իր բոլոր գործողությունները կձևափոխվեն, և կառավարիչը չի հասնի իր նպատակին, չի առանա իր վարձատրությունը...

Ըստ մասնագետների, սնանկության կառավարչի անկախության երաշխիքների և նրա նկատմամբ ցանկացած ազդեցության լծակի բացառումը կարևորագույն հարցերից է: Մասնավորապես, դատարանը պետք է լծակ չունենա, քանի որ դա կարող է շահերի բախման, կոռուպցիոն ռիսկերի պատճառ հանդիսանալ: Եթե կառավարիչը գիտի, որ դատարանն այնպիսի լծակ ունի իր վրա, որ ցանկացած պահի կարող է ասել. «Հաջողություն, դու ինձ համար ոչ պատշաճ ես», դա ազդում է կառավարչի ու իր անկախության վրա, իսկ կառավարիչները պետք է անկախ լինեն, որպեսզի կարողանան իրենց գործառնություններն իրականացնել:

Սնանկության վարույթի թե՛ տևողության, թե՛ արդյունավետության և երբեմն նաև արժեքի ձևավորման վրա ազդեցություն է ունենում որոշ պետական մարմինների հետ սնանկության կառավարիչների համագործակցության պակասը, մասնավորապես՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինը (ՅԱԴԿ), ՀՀ Ճանապարհային ոստիկանությունը, Անձնագրային և վիզաների վարչությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը երբեմն կամ մշտապես խնդիրներ են առաջացնում սնանկության կառավարիչների համար՝ մերժելով տրամադրել հարցված տեղեկատվությունը, պատասխանելով ուշ, ինչպես նաև հարցումների ուղարկման համար վճարումներ սահմանելով:

Ընդհանուր արդյունավետ և առողջ բիզնես միջավայրի ապահովման համար անհրաժեշտ է սնանկության ռիսկերի վաղաժամկետ հայտնաբերումը: Ցավոք, ներկայումս չկա ընթացիկ վերահսկողություն: Ուստի, սնանկության եզրին հայտնված կազմակերպությունների կամ անձանց առողջացման հավանականությունն էլ հասնում է նվազագույնի, քանի որ այդ պահին կազմակերպությունը կամ անձը սպառած է լինում իր հնարավորությունները:

Կառավարչի ինստիտուտը կարևոր նշանակություն ունի այս վարույթում: Այստեղ խնդիրներ կան, որ նախագծով այս ոլորտում ավականին լիազորություններ վերապահվել են Արդարադատության նախարարությանը՝ նրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու առումով, սակայն օրենսդիրը պետք է շատ նրբորեն այս հարցը կարգավորի, որպեսզի հակասություն չառաջանա նախարարության կողմից իրականացվող վերահսկողության և դատարանի կողմից ՄԿ-ի նկատմամբ իրականացվող վերահսկողության առումով: Օրինակ, եթե մի կողմից նախարարությունը ՄԿ-ի նկատմամբ կիրառի տույժի միջոց, բայց ՄԿ-ի նույն գործողությունը դատարանը իրավաչափ կամ ոչ իրավաչափ չճանաչի, այսինքն, պետք է հակասություն չառաջանա այստեղ: Դա դատական համակարգի նկատմամբ անվստահության տարրեր պարունակող դրսևորում կարող է լինել:

Ըստ մասնագետների, այս ոլորտում համակարգային խնդիրների լուծման համար ամենակարևոր պարտադիր պայմաններից է ՀՀ վերաքննիչ սնանկության դատարանի ստեղծումը:

Տեսնք, մեր մոտից գնում է բողոքարկում է Վերաքննիչ քաղաքացիական դատարան, որտեղ դատավորներից յուրաքանչյուրը օրյնկոխվորեն

առաջնայնությունը տալիս է քաղաքացիականին: Լինում են գործեր, որ սնանկության իրավունքը բախվում է քաղաքացիականին: Տեղի է ունենում իրավունքների բախում: Անշուշտ, սնանկության գործեր քննող դատավորը առաջնահերթությունը տալիս է սնանկության օրենքին, իսկ քաղի պարագայում՝ քաղին կոտա:

Կարևորագույն խնդիրներից է այն հանգամանքը, որ սնանկության վարույթի վերաբերելի բոլոր գործերը, պետք է քննվեն նույն վարույթի շրջանակներում, նույն դատավորի կողմից: Դա կնպաստի ժամկետների կրճատմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Օրինակ, ես կողմ կլինեի, որ 4-րդ հոդվածով քաղով քննվող գործերի շրջանակը ընդլայնվեր, քանի որ կան գործեր, որոնց քննումը քաղ դատավորների կողմից սնանկության վարույթի նպատակին չի ծառայում: Օրինակ, սնանկության դատարանները խնդիր են ունենում կապված ընդհատության հետ, քանի որ աճուրդի վիճարկում է տեղի ունենում: Տարակարծիք լինելու դեպքում ուղարկում են վճռաբեկ դատարան, սակայն վճռաբեկն էլ հետ է ուղարկում և ասում է՝ սա ենթակայություն է, իմը տարածքայինի խնդիր է, ես չեմ կարող լուծել՝ պատճառաբանելով, որ աճուրդի վիճարկումը իրենցը չի: Այսինքն՝ այստեղ այն աճուրդն են վիճարկում, որից կախված է սնանկության վարույթի պրոցեսը: Հետևաբար, եթե սնանկության մասնագիտացված դատարանի դատավորը չի քննում այդ գործը, ապա քաղի դատավորը ինչպես պետք է քննի՝ ելնելով սնանկության առանձնահատկություններից: Այսպիսով, նման հարցեր կան, որ 4-րդ հոդվածը ավելի կարճ և մակերեսորեն է կարգավորում: Նաև մինիստրի էլ կա 54-րդ հոդվածի հետ կապված, քանի որ շատ թույլ կարգավորում է իրականում այդտեղ: Այսինքն՝ կարգավորումներ չկան, թե ինչպիսի պայմանների դեպքում պետք է այդ հայցը բախարարվի: Կա նաև երաշխավորության հարցով խնդիր, որ ասում է՝ կարող է դիմել դատարան, սակայն ինչպես, եթե պայմանագրի կողմ չէ:

Ըստ մասնագետների, կարևոր է ՄԿ-ի անկախության խնդիրը, որ կառավարիչը՝ որպես սուբյեկտ, գտնվելով գործողությունների թեժ էպիկենտրոնում, պիտի որոշակի անկախության օբյեկտիվ երաշխիքներ ու հիմքեր ունենա, որպեսզի գործունեության տեսակում սուբյեկտների առաջ կաշկանդված չլինի, բացառությամբ այն լիազորությունների, որոնք օրենքի շրջանակներում պետք է իրականացվեն:

Ամենաբուռն քննարկման առարկա դարձած և քննարկված թեմաներից մեկն էլ սնանկության կառավարիչների նշանակման կարգն է, որը, ըստ մասնագետների, պետք է գերծ լինի որևէ պետական մարմնի ազդեցությունից՝ տվյալ ինստիտուտի անկախությունն ու ինքնուրույնությունը չվնասելու համար: Սակայն նշանակումներն էլ պետք է իրականացվեն հաշվի առնելով սնանկության կառավարիչների մասնագիտական հմտություններն ու կարողությունները:

Լրջագույն խնդիրների շարքին է դասվում նաև գույքի գնահատման ինստիտուտը, թե այն ինչպես է գնահատվում գույքը գրավադրվելիս և հետագայում աճուրդի դրվելիս:

Ֆիզիկական անձիք, անկախ իրենց կամքից, գալիս ընկնում են սնանկության դաշտ: Օրինակ, որպես երրորդ անձ գրավադնում են իրենց գույքը, կլինի դա թե՛ սնանկության և թե՛ բռնագանձման վարույթում, ապահովված պահանջատերերն այդ գույքն իրացնում են և գույքի վաճառքից առաջանում է հարկային պարտավորություն, որի կրողը ֆիզիկական անձն է՝ գույքի սկզբնական սեփականատերը, այլ ոչ թե վաճառողը: Այդ երրորդ անձն անգամ տեղյակ էլ չի լինում, որ իր վրա հարկային պարտավորություն կա²:

Երրորդ անձի իրավունքների հետ կապված խնդիրը մասնագետները դիտարկում են այն ժամանակ, երբ նրա գույքը իրացվում է, սակայն նա պարտապան չի հանդիսանում: Նրա իրավունքների մասին օրենքում ոչ մի բան չկա, նույնիսկ ես իրեն ծանուցելու պարտավորություն չունեմ, ինչը կա քաղաքացիական օրենսդրությունում: Իսկ ՄԿ-ների 90%-ը իրավաբան չէ և պարտավոր չէ իմանալ քաղաքացիական օրենսդրությունն ամբողջությամբ:

Կարողությունների զարգացում

Առանցքային է, որ խոսելով կարողությունների զարգացման մասին, բնականաբար, խոսվում է սնանկության կառավարիչների մասնագիտական հմտությունների զարգացման անհրաժեշտության մասին, սակայն պակաս չի կարևորվում որոշ դատավորների հմտությունների, ինչպես նաև սնանկության գործեր վարող փաստաբանների հմտությունների զարգացման հարցը:

Սնանկության կառավարիչների մասնագիտական կարողությունների և հմտությունների հարցը առավել քան ուշագրավ է, քանի որ վերջիններիս հմտությունների պակասի արդյունքում է, որ, ըստ մասնագետների, մեծապես տուժում է սնանկության համակարգը, քանի որ սնանկության կառավարիչները, հիմնականում հետապնդելով կոնկրետ շահ՝ պայմանավորված իրենց ձեռնարկատիրական գործունեության բնույթով և չտիրապետելով բազմապրոֆիլ գիտելիքներով, հաճախ ձեռնպահ են մնում բազմապիսի գործողությունների կատարումից, ինչն իրականում մեծապես կարող է ազդել տվյալ բիզնեսների հնարավոր հետագա ողջ ընթացքի վրա:

Ոչ պակաս ուշագրավ է, որ մասնագիտական հմտությունների պակասի հարց քննարկվեց նաև փաստաբանների և դատավորների հետ: Այսպես, հարցվածները նշեցին, որ այժմ սնանկության դատարանում կան և շատ արհեստավարժ դատավորներ և այնպիսիք, ովքեր չունեն նախկինում փորձ, իսկ հաշվի առնելով սնանկության վարույթի

² 39 հոդվածի համաձայն, սնանկության վճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո, դադարում է տույժի և տուգանքների հաշվարկը: Դա լրիվ ուրիշ բան է, տույժ-տուգանքը աշխատում է արդեն իսկ ձևավորված պարտավորության վրա: Այս գույքի վաճառքից, ոչ թե տույժեր-տուգանքներ, այլ ուղղակի գույքի վաճառքից առաջանում է հարկային պարտավորություն: Նույնը ֆիզիկական անձը, նա որևէ պարտավորություն չունի, եթե իր գույքով երաշխավորություն է արել կամ գրավ է դրել, ինքն այդ պահին պետության հետ որևէ պարտավորություն չունի: Ուղղակի իր գույքը, որպես ֆիզիկական անձ վաճառելիս սեփականատիրոջ մոտ (տվյալ դեպքում ֆիզիկական անձի մոտ) առաջանում է այդ վաճառքից հարկային պարտավորություն և այդ ֆիզիկական անձն է կրում հաշվարկելու և հաշվարկ ներկայացնելու պարտականությունը: Այս գույքը օտարվել էր սնանկության շրջանակներում, ապահովվածներն ասել էին, որ ես իմ գումարը վերցնում եմ և դուրս եմ գալիս: Այդ դեպքում իր վրա մնում է լրացուցիչ պարտավորություն, մենք էլ արդեն ստիպված, մեր սկզբնական գանձման որոշումներ և այլն տալիս ենք, և վերջին կետն արդեն սնանկությունն է: Այսինքն, մարդն իր կամքից անկախ տալիս է գույք, կարող է գույք էլ չունենա և հայտնվի ծանր վիճակում:

առանձնահատկություններն ու նրբությունները, առանց դրանց լավագույնս տիրապետելու, տվյալ դատավորների մոտ գործ ունենալը բավականին բարդացնում է ընթացքը:

Հետաքրքրական դիտարկում էր նաև այն, որ, ըստ գրեթե բոլոր խմբերի, սնանկության վարույթներով ներգրավվող փաստաբանների մեծամասնությունը ներգրավվում է պարզապես ժամանակ ձգձգելու համար և հիմնականում չի տիրապետում ոչ ոլորտին և ոչ էլ վարույթի առանձնահատկություններին: Այս իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայաստանյան բուհական համակարգում ներդրված է սնանկության վարույթի վերաբերյալ առանձին առարկա (բացառությամբ մագիստրատուրան):

Օրենսդրական խնդիրներ

Օրենքի տրամաբանությունն է պետք փոխել. Այսինքն, եթե մեկը մեկի հետ գործարք է կնքում, ապա պետք է որոշակիորեն երաշխավորված լինի պետության կողմից տրված գործիքներով, որ նա որոշակի պարտավորություն պետք է կատարի:

Դրա համար ինստիտուտը պետք է ունենա հենց իրենով կարգավորիչ, կանխարգելիչ գործառնություն, ունենա հնարավորություն առողջանալու, ապա առողջանալուց հետո մտնել քաղաքացիական շրջանառության մեջ առողջ վիճակում: Իսկ եթե մեզ այդ երկու գործիքը հնարավորություն չի տալիս, ապա լուծարում ենք և ավարտում ենք: Մենք չունենք կանխարգելիչ և առողջացման այս գործիքները, իսկ առողջացման ներկայիս գործիքակազմը չի աշխատում մի պարզ պատճառով, որովհետև մենք չունենք ի սկզբանե կանխարգելիչ գործիքակազմ:

Առանցքային է սնանկության օրենսդրության փիլիսոփայության փոփոխությունը: Այսպես, սնանկության վարույթ սկսելու համար նախապայման հանդիսացող մեկ միլիոնի անվճարունակությունը, որը վերագրվում է և՛ քաղաքացուն, և՛ մեծ իրավաբանական անձի, իրականում խնդրահարույց է, քանի որ իրաբավականական անձը միջինից բարձր միշտ էլ կարող է միլիոնից ավել պարտք ունենալ: Ավելին, որևէ կերպ օրենսդրությունը չի էլ դիտարկում տվյալ անձի կամ կազմակերպության ակտիվների առկայությունն ու չափը:

Ըստ մասնագետների, մեր սնանկության մասին օրենքը շատ կարկատած է, դրանք ըստ պատվերի կատարված փոփոխություններ են, որոնք էպիզոդալ խնդիրներ և ոլորտներ են կարգավորել: Օրինակ, բանկերին բան է պետք եղել, բերել մտցրել են, հարկայինին բան է պետք եղել, բերել մտցրել են:

Օրենսդրական խնդիրների շարքում են դասվում ինչպես այն ոլորտները, որոնք ունեն կարգավորման կարիք, սակայն օրենսդրական կարգավորում չեն ստացել, այնպես էլ օրենսդրական հակասություններն ու բացթողումները: Այսպես, օրինակ, սնանկության մասին գործող օրենքի համաձայն, սնանկության վարույթ սկսելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուց հետո, պարտապանին արգելվում է առանց դատարանի որոշման իր պարտավորությունների կատարումը: Մյուս կողմից, հարկային օրենսգրքի համաձայն, դիմումը վարույթ ընդունելուց տույժերը դեռևս չեն կիրառվում: Հարկ վճարողի կողմից միլիոնից ավելի պարտք կուտակելու դեպքում պետական մարմինների վրա որոշակի ժամկետում սնանկության դիմում ներկայացնելու պարտականություն է դրված: Անձը սնանկության որոշումը դատարանից ստանալուց անմիջապես հետո ցանկություն է հայտնում բանկի միջոցով կատարել գումարի վճարում, սակայն օրենքն ասում է, որ դա

կարող է իրականացվել դատարանի որոշմամբ: Գործնականում, սնանկության կառավարիչները նման վճարման կատարման մասին տեղեկանալուց անմիջապես հետո պահանջում են, որպեսզի տվյալ պետական մարմինն այդ գումարը հետ փոխանցի սնանկության հատուկ հաշվեհամարի վրա, այնինչ որոշ դեպքերում պետական մարմինը տեսնելով, որ անձը վճարել է ոչ միայն պարտքը, այլ նաև տույժերը՝ հետ է վերցնում սնանկության վարույթ սկսելու մասին դիմումը, ինչն իրականում միանշանակ չի կարող մեկնաբանվել իրավական տեսանկյունից: Հիմա օրենքը արգելում է ցանկացած վճարային պարտավորություն, բացառությամբ առողջացման ծրագրի: Առողջացման ծրագիրը տևում է 45 օր, հետո հրավիրվում է առաջին ժողով ու նոր հաստատվում է: Այսինքն, եթե անձն այս ընթացքում ցանկանում է թեկուզ իր ընթացիկ վճարումները կատարել, նա չի կարող անել դա, քանի որ օրենքն այդ բացը ունի:

Մասնագետները խնդիր են տեսնում սեփականության իրավունքի միջամտության հարցում, երբ երրորդ անձի գրավի սեփականատերը անմասն է: Օրենքը չունի կարգավորումներ:

Օրենքի տրամաբանության և կառուցվածքի առումով բազմիցս հիշատակումներ և դիտարկումներ են արվել առ այն, որ առկա են լուրջ խնդիրներ իրավաբանական անձի և ֆիզիկական անձի սնանկության հետևանքների առումով, քանի որ այս օրենքն, ըստ մասնագետների, մշակվել է իրավաբանական անձանց համար, իսկ հետագայում ավելացված ֆիզիկական անձի և ԱԶ-ի մասին գլուխը արհեստական ավելացված է ստացվել և ամբողջությամբ չի կարգավորում բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են տվյալ ոլորտին:

Ըստ մասնագետների, օրենքում բացակայում է ճգնաժամային և ճգնաժամերի հաղթահարման գործիքակազմը: Օրենսդիրը ժամանակին ներմուծել է սնանկության վտանգի ինստիտուտը, բայց դա պահանջում է, որ ճգնաժամային հարցերը ավելի վաղ փուլերում դիտարկվեն, այլ ոչ թե պետք է գան հասնեն դատարան և այլն:

Ըստ մասնագետների, առանձնապես մտահոգիչ է միակ կացարանի հետ կապված հարցերը: Օրինակ, անձը գրավ է դնում բնակարան, որը համատեղ սեփականության իրավունքով է իրեն պատկանում, հետագայում մի պարտապանը սնանկ է ճանաչվում, իսկ արդյունքում վաճառվում է գրավի առարկա բնակարանը և այն անձիք, ում բնակարանը համատեղ սեփականության իրավունքով է պատկանում, գրկվում են այդ բնակարանի նկատմամբ որևէ առաջնահերթության իրավունքից օգտվելու հնարավորությունից:

Օրենսդրության մեջ մեղքի ապահովագրության մեխանիզմներն էլ խոցելի են: Քանի որ այդ վնասի չափը գնահատելն էլ բարդ է:

Մասնագետները գտնում են, որ անհապաղ պետք է փոփոխության ենթարկել պարտապանին սնանկ ճանաչելուց հետո այն դատավարական ժամկետները, որոնք արդիական չեն և ուզած-չուզած բոլորը դրանք խախտում են: Դրանք կախվածության մեջ են դրված պահանջների վերջնական ցուցակը հաստատելուց, որն իր հերթին բողոքարկվում է և եռաստիճան դատական համակարգով անցնելուց հետո չի համապատասխանում ՄԿ-ի հետագա գործողություններին: Խնդիր է առաջանում նաև այնտեղ, որ ՄԿ-ն իր գործողությունները, ընդհուպ մինչև գույքի օտարման արդյունքով տանում է առաջ, մեկ էլ հանկարծ սնանկության գործով վճիռ է բեկանվում, ու անհասկանալի է, թե ինչ պետք է անել արդեն իսկ իրացված գույքի հետ:

Օրենքը նախատեսում է, որ կազմակերպությունը կամ անձը 3 օրվա ընթացքում սնանկ են ճանաչվում, եթե հատկանիշներն առկա են, բայց չի կարգավորում այն իրավիճակը, թե ինչ պետք է անի դատավորը³, երբ հատկանիշներն առկա չեն: Օրինակ, կամավոր սնանկության դեպքում 16 հոդվածն ասում է, որ դատավորը սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռ է կայացնում երեք օրվա ընթացքում: Իսկ եթե ոչ, ի՞նչ է անում՝ վճիռ է կայացնում մերժելու՝ մասին, դատական նիստ է նշանակում, թե՛ վերադարձնում է:

Իրավակիրառ խնդիրներ

Այսօրվա դրությամբ սնանկության վարույթը կա, բայց օգտվում են քաղաքացիական դատավարության օրենսգրքով, իսկ քաղ. դատով այնքան հսկաստություններ կան, որ խոչընդոտում են սնանկության վարույթը:

Կարևոր է քննարկել նաև մի շարք հարցեր, որոնք կապված են օրենսդրության կիրառման հետ, մասնավորապես օրինակ, սնանկության ժամանակավոր կառավարչի ինստիտուտը, ըստ մասնագետների, անիմաստ է, քանի որ կամավոր սնանկության դեպքում պարտապանը անգամ ՍԺԿ չի էլ նշանակում: Կամ թեկուզ հիմնական կառավարչի դեպքում դիտարկենք, ի՞նչ է անում ժամանակավոր կառավարիչը, անգամ ֆինանսական վերլուծություն չի հասցնում անել, քանի որ կառավարչին փաստաթղթեր տրամադրում են հիմնական կառավարիչ նշանակելուց հետո: Միայն մնում է միջնորդություն իրականացնելու հարցը սահմանափակում կիրառելու մասով, դա էլ օրենքի 30-րդ հոդվածով մորատորիում կա և, բացի այդ էլ, պարտատերը կարող է այդ նույն միջնորդությունը իրականացնել:

Գործնականում մասնագետները խնդրահարույց են համարում բողոքարկումների ընթացակարգն ու անհատականություններն այս բնագավառում, մասնավորապես, ըստ նրանց, այս ոլորտում բողոքարկում են ամեն ինչը և բոլորը, անգամ անկախ նրանից՝ դա տվյալ անձին վերաբերում է, թե ոչ: Օրինակ, մեկը առարկություն է բերում ինչ-որ պահանջի դեմ, օրենքը նախատեսում է, որ դատավորը պետք է բոլորին ծանուցի: Բոլորը մասնակցում են նիստին: Դատարանն այդ հարցը քննում է, ըստ էության այդ վեճը երկուսի մեջ է, մյուսներին չի վերաբերում, սակայն մյուսները ներկագտնվելով այդ նիստին կարող են որոշել բողոք բերել դրա դեմ կամ նիստի ժամանակ առարկել: Երբեմն, նրանք ժամանակ են բաց թողած լինում, որ առարկեն, հետո գալիս են առարկում են, եթե դատարանը չի քննում, ապա Վերաքննիչ դատարանը բեկանում է այդ որոշումը, կամ եթե մարդը չի առարկել, մեկ էլ հանկարծ վերաքննիչ բողոք է բերում, դա էլ արդեն լրիվ ուրիշ խնդիր է: Այս հարցերը կանոնակարգման կարիք ունեն:

Մենք պետք է ասենք՝ եթե դու չես առարկել, չես մասնակցել, տեղյակ ես եղել և դա քեզ չի հետաքրքրվել ու հանկարծ վերաքննիչ բողոք ես բերում, ապա դու դրա իրավունքը չունես: Նման կանոնակարգումները կլծելոնացնեն պրոցեսը:

³ Այդ դեպքում ես նիստ էի հրավիրում, կանչում էի պարտապանին և ասում էի, որ դու պետք է այս փաստը ապացուցես, որ օրինակ, քո ակտիվները պասիվներից մեկ միլիոն դրամի չափով պակաս են: Ասում էի՝ սա-սա-սա բերել ես, սա-սա-սա չես բերել: Քեզ այսքան ժամկետ, որ բերես: Հետո պարտատերին էի կանչում: Մի երկու դեպք կարող են լինել, բայց էնպես չի, որ օրենքին հակասող պրակտիկա ենք տարել:

Ըստ օրենքի, դատավորը կարող է ազատել ՄԿ-ին աշխատանքից: Այսինքն՝ եթե հաշվետվությունը չի հասցրել ուղարկել կամ գույքագրումն ուշացրել է, մոռացել է զեկուցագիր գրել, դատավորն ազատում է: Այստեղ խնդիր կա: Քանի որ, եթե դատավորը ազատում է գործից ՄԿ-ին, ապա նա ազատում է տվյալ ՄԿ-ին իր բոլոր գործերից, այնինչ վերաքննիչ դատարանը, այդ դիրքորոշումը չի կիսում, գտնելով, ՄԿ-ն պետք է ազատվի միայն մեկ գործից: Սակայն Վերաքննիչի նման վերլուծությունը ԻԿԿ կանոնադրության ու օրենքի տրամաբանության մեջ չէ:

Իրավակիրառ պրակտիկայում այս ոլորտում ամենախնդրահարույցը, զուցե, կայանում է քաղաքացիական դատավարության օրենսդրության և սնանկության մասին օրենքի հակասությունների ու անհստակությունների մեջ:

Քաղ. դատում պատասխան ներկայացնելու ինստիտուտ կա, այստեղ՝ չկա, պիտի առարկություն ներկայացվի, նաև քաղ դատում ժամկետներն են ուրիշ, քաղ դատում վճռի կայացման կարգ, պայման, դրանց ուժի մեջ մտնելու պայմանները ուրիշ են, սնանկության վարույթում՝ լրիվ ուրիշ են: Սնանկության վարույթը այն բացառիկներից է, որ մի գործի քննության ընթացքում առնվազն երկու վճիռ կա՝ սնանկ ճանաչել և ավարտել: Էլ չեմ ասում՝ դիմումի ձև և բովանդակություն: Այսօրվա դրությամբ դիմումի ձև հասկացություն չունենք, ով ինչպես ուզում, այնպես էլ գրում է: Նաև փոփոխություններ այստեղ՝ ՄԿ նշանակում, ՄԿ աշխատավարձ, դատարանի միջնորդություն սնանկության վարույթին, այսինքն, դատավորը պետք է վարույթի շրջանակներում առկա վեճի լուծում տա: Այսինքն, բոլոր գործողություններով պետք է ՄԿ-ն լինի, սակայն եթե կողմերից մեկի հետ եղավ վեճ, ապա պետք է դիմեն դատարան և դատարանը քննի այդ վեճը:

Մասնագետները կարծիք հայտնեցին, որ օրենսդրության մեջ առկա պարտավորությունների գուտաացում դրույթը չի կիրառվում, և ոչ ոք չգիտի վերջինիս էությունը, ավելին՝ չի կիրառում:

Իրավակիրառ պրակտիկայում բավականին հաճախ խնդիրներ են առաջանում երաշխավորությամբ ապահովված պարտատեր գրանցելիս, երբ անձը ցանկանում է, որպեսզի իրեն գրանցեն որպես ապահովված պարտատեր, սակայն երաշխավորը գույք ունի-չունի, դա ոչ մեկին չի հետաքրքրում:

Մասնագետները նաև մատնանշել են, որ սնանկության օրենքում մի դրույթ կա, համաձայն որի սնանկ ճանաչվելուց հետո անձի ձեռք բերած գույքերը չեն ներառվում սնանկության զանգվածի մեջ: Կարևորն այն է, որ այդ ձևակերպման մեջ նշվում է «իրացման ենթակա գույքեր» արտահայտությունը, ինչի հետևանքով տարակարծություն է առաջանում, երբ քննարկվում են սուբյեկտի դրամական միջոցները, այսինքն՝ անձի աշխատավարձն արդյոք իրացման ենթակա գույք է համարվում, որովհետև «իրացման ենթակա գույք» եզրույթով դիտարկելու դեպքում ստացվում է, որ գույքը պետք է դրվի անուրդի, իրացվի ու դրանք չներառվեն սնանկության զանգվածի մեջ:

Ծանուցումների մասով, մասնագետներն առանձնացրել են հետևյալ խնդիրը, երբ գործով ներգրավված են 30 պարտատեր, որոնցից մեկը պահանջների ցուցակի դեմ ներկայացրել է առարկություն: Այդ առարկությունը վերաբերում է իր պահանջին, հետևաբար շահագրգիռ

անձ միայն ինքն է՝ տվյալ պարտապանը, ՄԿ-ն: Հետևաբար, մյուս պարտատերերի շահերին դա որևէ կերպ չի առնչվում: Սակայն դատարանը պետք է դատական նիստի մասին ծանուցում ուղարկի բոլոր 30 անձանց:

Որպես խնդրահարույց հարց սնանկության կառավարիչների աշխատավարձի հաշվարկման խնդիրն է բարձրացվել: Այսպես, Օրինակ, գործը տևում է 6 ամիս կամ 1 տարի, սնանկության կառավարիչը բաշխումը կատարում է երրորդ ամսում լուծարումից կամ վճռից հետո, նա ինչպե՞ս կարող է կանխատեսել գործի քննության տևողությունը, որպեսզի բաշխվի աշխատավարձը:

Մասնագետների կողմից բուռն քննարկման և ոչ միանշանակ դիրքորոշման արժանացավ այն հարցը, թե արդյոք աշխատավարձը բռնագանձման ենթակա է, թե ոչ: Պրակտիկայում դատավոր կա, ով 50% է բռնագանձում, դատավոր կա ամբողջ 100%-ի վրա է բռնագանձում տարածում, դատավոր էլ կա, որ ասում է՝ չի տարածում⁴:

Այն իրավիճակներում, երբ իրավաբանական անձը գտնվում է սնանկության վարույթում և եթե կազմակերպության ղեկավարը ներկայացնում է առողջացման ծրագիր, ՄԿ-ն հրավիրում է ժողով: Սակայն վերջինս չի կարողանում հրավիրել ժողովը, քանի որ միակ պահանջատերը հարկայինն է, իսկ հարկայինը ձայնի իրավունք չունի: Իսկ եթե հարկայինը չունի ձայնի իրավունք, չի էլ կարող ժողովին մասնակցել, հետևաբար, ժողովը չի կայանում, և դատարանը չի հաստատում այդ ծրագիրը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՄԿ-ները պետք է մասնագիտական կոնկրետ հմտություններ ունենան, որ կարողանան իրենց գործառույթներից բխող գործողությունները կատարել՝ առանց լրացուցիչ վճարումների⁵:
- Օրենքը չի արգելում մի քանի ԻԿԿ ունենալ, գործնականում ստեղծված իրավիճակի բարելավումը հնարավոր է միայն այն պարագայում, եթե ստեղծվի մեկ այլ ինքնակառավարվող մարմին, որի արդյունքում մրցակցությունը կհանգեցնի որակի ապահովմանը: Երբ մրցակցություն լինի, ինստիտուտի գործունեությունն էլ կբարելավվի:
- Սնանկության վարույթը պետք է կառուցվի կառավարչի և պարտատերերի ժողովի մասնավոր հարաբերությունների վրա: Քանի որ իրենք բոլորը ունեն մի նպատակ՝ հնարավորինս առողջացնել կազմակերպությունը:

⁴ Նույնն էլ թոշակը: Կենսաթոշակի վրա բռնագանձում չի տարածվում, միանշանակ: Կենսաթոշակն ու հաշմանդամության թոշակը իրավունք չունեն: Հա, բայց ես դեպքեր գիտեմ, որ 30%-ը տարել են: ՈՒ՝ տարել է հարկադիրը:

⁵ Դեպք է եղել, որ ՄԿ-ն պետք է պարտապանի համար երաշխավորությամբ ստանձնած երաշխավորի դեմ հայց ներկայացներ, համապատասխան միջոցներ ձեռնարկեր և գույքի հավաքագրում կատարեր, բայց ՄԿ-ներն այդ աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ նախաձեռնություն չեն դրսևորել: Նման խնդիր ենք ունեցել ու դիմել ենք ՄԿ-ին, սակայն նրանք լրացուցիչ գումար են պահանջել, իսկ մենք չենք վճարել՝ հիմնավորելով, որ այդ աշխատանքի կատարումը մտնում է ՄԿ-ների գործառույթների մեջ: ՄԿ-ի հիմնավորմամբ, համապատասխան ֆինանսական միջոցներ են հարկավոր այդ գործողությունները կատարելու համար, այսինքն՝ անհրաժեշտ է փաստաբան կամ այլ մասնագետ վարձել, քանի որ ՄԿ-ներն իրավաբաններ չեն:


- Որպես «խաղացողներ», կառավարչները պետք է ուշադրություն դարձնեն նաև պարտատերերին: Մարդկանց ուղեղում դա մնացել է, որպես վարչական վարույթ: Ինչ-որ մեկը գալիս է և ստիպում է ինչ-որ բաներ անել: Իրականում պետք է լինի լրիվ մասնավոր հարաբերություն:
- Դատարանի միակ ֆունկցիան է հետևել, որ կողմերը պահեն իրենց պայմանավորվածությունները, այսինքն՝ տնտեսական կամ ինչ-որ էական որոշումներ դատարանի որոշման վրա չպետք է թողնել:
- Ծախսերի համամասնեցման նպատակով հնարավոր է սահմանել որոշակի սանդղակներ՝ վարչական, պահպանման, որոնք չեն կարող գերազանցել իրացված գույքի ենթադրենք 0.5 տոկոսը:
- Անհրաժեշտ է ՄԿ-ների կազմի փոփոխություն կամ բարելավում կատարել, այսինքն՝ պետք է ավելի պրոֆեսիոնալ մասնագետներ գործունեություն ծավալեն այդ ոլորտում: ՄԿ-ներն իրենց գործունեությունը չեն դիտարկում՝ որպես մասնագիտական գործունեություն՝ ուղղված շահերի պաշտպանությանը, այլ հիմնականում զբաղված են գույքի վաճառքով: ՄԿ-ն պետք է հասկանա, որ պետք է պարտապանի ողջ գույքը հավաքագրի, վաճառի՝ կատարելով բոլոր ընթացակարգային գործողությունները:
- ՄԿ-ները պետք է լուրջ ուսուցում ստանան, քանի որ իրենց առաքելությունն է հանդիսանում լինել կրիզիս մենեջերներ և դատարանին ներկայացնել բացառապես հիմնավորված և հստակ որոշումներ, որոնք կբալանսավորեն և՛ պարտապանի, և՛ պարտատիրոջ շահերը: Դա կոնցեպտուալ, ընդհանուր օրենքի գաղափարն է, որը պետք է օրենսդիրը և ամբողջ հասարակությունը հասկանա, այսինքն, ում շահերն է պաշտպանում կառավարիչը, ում շահերն է պաշտպանում դատարանը, և բացառվի շահերի բախումը:
- Պետք է կառավարիչ-դատարան համագործակցության մեջ շահերի բախման նվազեցման ուղղությամբ կոնկրետ գործողություններ նախատեսվեն և իրականացվեն:
- Պետական մարմիններին անհրաժեշտ է տալ վերահսկողական գործառույթներ՝ սնանկության հատկանիշների վաղաժամկետ բացահայտման նպատակով:
- ՄԿ-ներին վերապատրաստել հատուկ ուղղություններով, վերապատրաստումներ արվեն առողջացման ծրագրեր կազմելու ուղղությամբ: Այսինքն՝ բիզնես կառավարում անել: Այսինքն, ՄԿ-ն մտածի, որ ոչ թե դեպի պարտատեր գնա՝ գույքը վաճառի, պարտքը փակի, այլ ավելի շատ մտածի, որ տրված բիզնեսը կառավարի և առողջացնի:
- Սնանկության ինստիտուտը պետք է հստակեցնել և ոչ թե օրենքում փոփոխություն մտցնել, կարևոր պայման է, որ պետք է ընդունվի նոր սնանկության մասին օրենք, նաև օրենսգիրք, դրանով կարգավորվի նաև և վարույթը, և դատարանի գործողությունները, և ՄԿ-ների աշխատանքը, պարտապանների և պարտատերերի գործողությունները:
- Առողջացման ծրագրի ժամկետների փոփոխություն է պետք անել:
- ՄԿ անկախությունը կարելի է ապահովել օրենսդրորեն ՄԿ-ի պարտավորությունները և պատասխանատվությունները հստակ սահմանելով, որ ՄԿ-ն ունի այսքան պարտավորություն և ունի դրանց դիմաց այսքան պատասխանատվություն:

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ


Հետազոտության արդյունքների համաձայն, սնանկության գործերի 17% հարցման պահին հանդիսանում էին ընթացիկ, 48% տևել են մինչև մեկ տարի, 17.5%՝ 1-2 տարի, 8%՝ 3-4 տարի, 5.5%՝ 5-7 տարի և 4%՝ 8-13 տարի (այս խմբում են ֆիզիկական անձ հանդիսացող 8 պարտապան, իրավաբանական անձիք չկան այս թվում):

Գծապատկեր 17. Սնանկության վարույթների տևողությունը



Հարցվածների 91.5% փաստացի ստացել են սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը, 4.5%՝ չեն ստացել, իսկ 4% դժվարացան պատասխանել (Տե՛ս Գծապատկեր 18.):

Գծապատկեր 18. Սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստացած պարտապաններ



Սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորության վերաբերյալ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց պատասխաններն էապես տարբերվում են, այդ իսկ պատճառով ներկայացված են առանձին-առանձին: Ֆիզիկական անձանց դեպքում պայմանագիրը շատ ավելի հաճախ է դրված եղել սնանկ ճանաչելու հիմքում, քան իրավաբանական անձանց պարագայում: Եվ ընդհակառակը՝ պետական մարմնի (ՊԵԿ)


կողմից կայացված վարչական ակտերն ավելի հաճախ դրված էին իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու հիմքում: Բացի այդ, ֆիզիկական անձիք ավելի հաճախ են սնանկ ճանաչվում ոչ թե կոնկրետ պարտավորության հիման վրա, այլ՝ սեփական դիմումի համաձայն: Ավելի հազվադեպ որպես սնանկ ճանաչելու հիմքում ընկած պարտավորություն նշվել են նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը, պետական մարմնի կողմից կայացված վարչական ակտերը (գույքահարկ, մեքենայի պետ. տուրք, տուգանք, աղբահանության վճարի պարտք, ՀԾԿՀ ակտ) (Տե՛ս Աղյուսակ 3.):

Աղյուսակ 3. Սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորությունը՝ բաշխումն ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց

Պատասխան	Ֆիզիկական անձ	Իրավաբանական անձ	Ընդամենը
Պայմանագիր	74.0%	37.7%	60.0%
Պետական մարմնի կողմից կայացված վարչական ակտ՝ հարկային	7.3%	46.8%	22.5%
Ճանաչվել են սնանկ ոչ թե կոնկրետ պարտավորության հիման վրա, այլ՝ սեփական դիմումի համաձայն	11.4%	3.9%	8.5%
Օրինական ուժի մեջ մտած դատական ակտ	4.1%	6.5%	5.0%
Պետական մարմնի կողմից կայացված վարչական ակտ՝ գույքահարկ, մեքենայի պետ. Տուրք	3.2%	5.2%	4.0%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Սնանկ ճանաչելու պարտավորությունը, որպես կանոն, ծագել է պայմանագրի հիմքով՝ 60%, որից 49.5%՝ վարկային պայմանագիր, 6%՝ երաշխավորության պայմանագիր, 2.5%՝ առուվաճառքի/մատակարարման պայմանագիր, 1%՝ ծառայությունների մատուցման պայմանագիր և 1%՝ փոխառության (Տե՛ս Գծապատկեր 19.):

Գծապատկեր 19. Սնանկ ճանաչելու պարտավորության հիմքում ընկած պայմանագրի տեսակը



Պետական մարմնի (ՊԵԿ) կողմից կայացրած վարչական ակտերն են սնանկ ճանաչելու հիմք հանդիսացել 22.5% դեպքերում:


Սեփական դիմումի համաձայն սնանկ ճանաչված 17 հարցվողներից (8.5%) մեծամասնությունը՝ 14 հոգի (7%), պարտավորություններից ազատվելու նպատակ էին հետապնդում: 2 հոգին (1%) սնանկ ճանաչվելու գործընթացը սկսել են անօրինական բռնազանձումը կասեցնելու նպատակով (կեղծիքի դեմն առնել, հանցագործ ճանապարհով կայացված դատական ակտի դեմ պայքարել, տան անօրինական վաճառքը կասեցնել), ևս մեկ հարցվող դիմել է սնանկության ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու և ներկայացնելու հնարավորություն ստանալու նպատակով:

Սեփական դիմումի համաձայն սնանկ ճանաչված 17 հարցվողներից (8.5%) մեծամասնությունը՝ 15 հոգի (7.5%), հետադարձ հայացք նետելով, համարում են, որ դա ճիշտ որոշում էր: Մեկը (0.5%) նշեց, որ դա պարտադրված որոշում էր՝ հանցագործ ճանապարհով կայացված դատական ակտի դեմ պայքարելու համար: Եվս մեկը (0.5%) դժվարացավ պատասխանել:

Սնանկ ճանաչվելու պահին պարտապանների 32.5% եկամուտ ապահովող որևէ ակտիվ չեն ունեցել:

Մնացած հարցվածներն ունեցել են եկամուտ ապահովող ակտիվ, նրանցից 56% օգտագործել են այն, ինչը սակայն բավարար չէր, 10%՝ չեն օգտագործել (Տե՛ս **Գծապատկեր 20.**):

Գծապատկեր 20. Սնանկ ճանաչվելու պահին ունեցած ակտիվների օգտագործումը



Հարցվածների այն 10%, որոնք չեն օգտագործել եկամուտ ապահովող իրենց ակտիվները կազմում են 20 հոգի: Վերջիններս ակտիվները չօգտագործելու հետևյալ պատճառները նշեցին.


- Գույքը գրավադրված է եղել – 5 հոգի (2.5%)
- Գույքը դեռ չէր վաճառվել – 5 հոգի (2.5%)
- Ակտիվի վրա արգելանք էր դրված – 3 հոգի (1.5%)
- Նպատակահարմար չեմ գտել – 2 հոգի (1%)
- Պայմանավորվել էինք, որ մեկ տարուց տունը պետք է վերադարձնեի հորս – 1 հոգի (0.5%)

- Իմ պարտքը չէր, գումարն իմ համար չէր – 1 հոգի (0.5%)
- Համապատասխան որոշում չկար – 1 հոգի (0.5%)

Եվս երկու հոգի (1%) դժվարացան նշել պատճառը:


Սնանկ ճանաչվելու պահին ակտիվներ ունեցող պարտապանների 56.3% ակտիվները սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափից պակաս են եղել: Եվս 5.9% ակտիվները հավասար էին սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափին: Իսկ 33.3% ակտիվները գերազանցում էին սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափը (Տե՛ս **Գծապատկեր 21.**):

Գծապատկեր 21. Սնանկ ճանաչվելու պահին առկա ակտիվների և պարտավորության չափի հարաբերակցությունը



Հարցվածների 59% չեն փորձել «վերակառուցել» պարտքը, 40.5% փորձել են «վերակառուցել» պարտքը՝ դիմել են վարկի վերավարկավորման համար (25%), բանակցել են գումարային պարտավորությունների կատարման ժամանակացույցի վերանայման համար (11%), բանակցել են պայմանագրային պարտավորությունների չափի վերանայման նպատակով (4.5%) (Տե՛ս **Գծապատկեր 22.**):

Գծապատկեր 22. Պարտքը «վերակառուցելու» փորձերը



Հարցվածների միայն 3.5% (բոլորն իրավաբանական անձիք) են կարողացել սնանկության գործընթացի ընթացքում պահպանել և/կամ շարունակել ընկերության կենսունակության համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ընթացիկ պայմանագրերը: Չեն կարողացել՝ 16.5%: Հարկ է նշել, որ հարցվածների 79.5% (բոլոր ֆիզիկական անձանց ներառյալ) համար այս իրավիճակը վերաբերելի չէ (Տե՛ս Աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Սնանկության գործընթացի ընթացքում ընկերության կենսունակության համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ընթացիկ պայմանագրերը պահպանելու/շարունակելու հնարավորությունը

Պատասխան	Ֆիզիկական անձ	Իրավաբանական անձ	Ընդամենը
Այո	-	9.1%	3.5%
Ոչ	-	42.9%	16.5%
Վերաբերելի չէ	100.0%	46.8%	79.5%
Դժ. պատ.	-	1.3%	0.5%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%


Սնանկության գործընթացում հարցվածների միայն 0.5% հնարավորություն են ունեցել դադարեցնել այն ընթացիկ գործարքները, որոնց կատարումը պահանջել է ավելի մեծ ծախս, քան դրա դիմաց ստացված օգուտը, երբ կողմերը ամբողջությամբ չեն կատարել իրենց պարտականությունները: 10.5% նման հնարավորություն չեն ունեցել, իսկ մնացած 87.5% համար այս իրավիճակը վերաբերելի չէ (բոլոր ֆիզիկական անձանց ներառյալ) (Տե՛ս Աղյուսակ 5.):

Աղյուսակ 5. Սնանկության գործընթացում ընթացիկ գործարքները դադարեցնելու հնարավորությունը

Պատասխան	Ֆիզիկական անձ	Իրավաբանական անձ	Ընդամենը
Այո	-	1.3%	0.5%
Ոչ	-	27.3%	10.5%
Վերաբերելի չէ	100.0%	67.5%	87.5%
Դժ. պատ.	-	3.9%	1.5%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

Սնանկության գործընթացում բիզնեսի ընթացիկ կարիքները հոգալու համար ֆինանսական առողջացման պլանի մաս չհանդիսացող նոր վարկ ստանալու համար դիմել են հարցվածների 34.5%, նրանցից 2% ստացել են վարկ, 32.5%՝ ոչ: 64% չեն դիմել, ևս 1.5% դժվարացան պատասխանել (Տե՛ս Գծապատկեր 23.):


Գծապատկեր 23. Ֆինանսական առողջացման պլանի մաս չհանդիսացող նոր վարկ ստանալու հնարավորությունները



Սնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում 35% փորձել են դատական կամ արտադատական կարգով համաձայնության գալ պարտատիրոջ հետ (հաշտության համաձայնություն, պարտատիրոջ կողմից սնանկ ճանաչելու մասին դիմումը ետ վերցնել և այլն): 64% չեն փորձել, 1% դժվարացան պատասխանել:


Որպես կանոն, պարտատիրոջ հետ դատական կամ արտադատական կարգով համաձայնության գալու պարտապանների ջանքերը անհաջող են եղել: 17% դիմել են դատական փուլում, բայց պարտատերը մերժել է, 15% դիմել են պարտատիրոջը մինչև սնանկության վարույթի սկիզբը, բայց պարտատերը մերժել է, 1.5% եկել են նախնական համաձայնության պարտատիրոջ հետ, որը սակայն հետագայում խախտվել է: Երկու հոգի (1%) դիմել է պարտատիրոջը մինչև սնանկության վարույթը, պարտատերն ընդունել է և գործը կասեցվել է (Տե՛ս Գծապատկեր 24.):

Գծապատկեր 24. Սնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում դատական կամ արտադատական կարգով պարտատիրոջ հետ համաձայնության գալու փորձերը




Հարցված պարտապանների 8.5% նշեցին, որ ցանկացած մեխանիզմով պատրաստ կլինեին աշխատել պարտատիրոջ հսկողության տակ՝ մինչև պարտքի մարումը սնանկության վարույթից խուսափելու նպատակով և պարտատիրոջ պահանջը բավարարելու համար, 28%՝ պատրաստ կլինեին, եթե դա լիներ ողջամիտ մեխանիզմ, 8%՝ դժվարացան պատասխանել, իսկ 55.5% միանշանակ չէին գնա նման քայլի (Տե՛ս Գծապատկեր 25.):

Գծապատկեր 25. Պարտապանների պատրաստակամությունը սնանկության վարույթից խուսափելու նպատակով և պարտատիրոջ պահանջը բավարարելու համար որևէ մեխանիզմով աշխատել տվյալ պարտատիրոջ հսկողության տակ՝ մինչև պարտքի մարումը



Հարցվածների 4.5% նշել են, որ պարտատերը պահանջել է տրամադրել անօրինական վճարում կամ ձեռք բերել սնանկության վարույթի մասով անօրինական պայմանավորվածություն: Այդ գումարը տատանվել է 1.000.000-100.000.000 ՀՀԴ՝ միջինում կազմելով 23 մլն. ՀՀԴ: Հարցվածներից 2-ին առաջարկվել է անօրինական պայմանավորվածության գալ ֆիզիկական անձի՝ փոխառության պայմանագրով գումարը տվողի հետ, 3 հոգուն՝ հարկայինի աշխատակցի հետ, 4 հոգուն՝ բանկի հետ:

Գծապատկեր 26. Պարտապանների հետ որևէ այլ հաստատությունից (բացի դատարանն ու սնանկության կառավարիչը) կապ հաստատելու դեպքերը



Հարցվածների 1.5% նշել են, որ սնանկության գործընթացի ընթացքում նրանց հետ կապ են հաստատել որևէ այլ հաստատությունից (բացի դատարանն ու սնանկության կառավարիչը) և սնանկության գործընթացի վերաբերյալ տեսակետներ ու գնահատականներ են հարցրել: 97% նշեցին, որ նման բան չի եղել, ևս 1.5% դժվարացան պատասխանել:

Երկու հարցվողներ նշել են, որ նրանց հետ կապ են հաստատել Կենտրոնական բանկից, մեկ հոգի նշել է ՉԼՄ-ը, ևս մեկ հոգի՝ ուժային կառույցները (Տե՛ս **Գծապատկեր 26.**):


Սնանկության վարույթի կասեցման համար դատարան դիմել են հարցված պարտապանների 8% (16 հոգի) հետևյալ հիմքերով (Տե՛ս **Աղյուսակ 7.**).

Աղյուսակ 7. Սնանկության վարույթի կասեցման համար դատարան դիմելու հիմքը

Հիմքը	Ընդամենը	
	Քանակ	Տոկոս
Երեք տարի չէի աշխատում և եկամուտ չունեի, անվճարունակ էի	3	1.5%
Անհիմն մեղադրանքով սնանկ են ճանաչել	3	1.5%
Հարկային անօրինական գործողությունների հիմքով	2	1.0%
Որպեսզի ժամանակ տային տունը վաճառելու	2	1.0%
Դիմում նոր վարկավորման՝ գործունեությունը շարունակելու համար	1	0.5%
Վարկային արձակուրդ եմ ուզել	1	0.5%
Ցանկանում էի ժամանակացույց կազմել	1	0.5%
Գործընթացի կեսից պարտատիրոջ հետ համաձայնության ենք եկել	1	0.5%
Առողջացման նպատակով տնայնագործությամբ զբաղվելու համար	1	0.5%
Գումար չեմ ստացել, բայց ստորագրել եմ	1	0.5%
Ընդամենը	16	8.0%

Դատարանը մերժել է սնանկության վարույթը կասեցնելու դիմումը 15 դեպքում 16-ից՝ դիմումների 93.8% մերժվել են (Տե՛ս **Գծապատկեր 27.**): Միայն մեկ (6.2%) դեպքում դատարանը մասամբ բավարարել է դիմումը և սնանկության վարույթը կասեցվել է որոշակի մասով: Տվյալ իրավաբանական անձը դիմել էր սնանկության վարույթը կասեցնելու համար հարկային անօրինական գործողությունների հիմքով:


Գծապատկեր 27. Սնանկության վարույթը կասեցնելու վերաբերյալ դատարանի որոշումը



Հարցվածների 76.4%-ին հայտնի չէին այլ մարմիններ, որտեղ կարելի էր դիմել սնանկության գործով աջակցություն ստանալու կամ բողոքներ ներկայացնելու համար, 3% դժվարացան պատասխանել այս հարցին (Տե՛ս **Գծապատկեր 28.**): Մնացած 20.5%-ին հայտնի էին նման մարմիններ, նրանցից.

- 11.5% չեն դիմել այդ մարմիններին,
- 6.5% դիմել են, սակայն աջակցություն չեն ստացել,
- 2.5% դիմել են և ստացել են աջակցություն:

Գծապատկեր 28. Այլ մարմիններ, որտեղ պարտապանը կարող էր դիմել սնանկության գործով՝ աջակցություն ստանալու կամ բողոքներ ներկայացնելու համար



Այն մարմինների շարքում, որտեղ հարցված պարտապանները կարող էին դիմել իրենց գործով՝ աջակցություն ստանալու կամ բողոքներ ներկայացնելու համար նշվել են հետևյալ մարմինները (Տե՛ս Աղյուսակ 8.).

Աղյուսակ 8. Պարտապանների կողմից նշված այն մարմինները, որտեղ նրանց կարծիքով կարելի էր դիմել սնանկության գործով աջակցություն ստանալու կամ բողոքներ ներկայացնելու համար

Նշված մարմինը	Ընդամենը	
	Քանակ	Տոկոս
ՀՀ վարչապետ	20	10%
Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ	14	7%
Մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսմեն)	13	6.5%
ՀՀ գլխավոր դատախազ/դատախազ	8	4%
ՀՀ նախագահ	7	3.5%
ՀՀ ԱԺ պատգամավոր	6	3%
Արդարադատության նախարարություն	5	2.5%
Ֆինանսական հաշտարարի գրասենյակ	5	2.5%
ԻԿԿ	4	2%
Վերաքննիչ դատարան	3	1.5%
ԱԿԾ	2	1%
Ոստիկանություն	2	1%

ՊԵԿ/հարկային	1	0.5%
Վճարելի դատարան	1	0.5%
Փաստաբանների պալատ	1	0.5%
Ընդամենը	92	46%

Առավել հաճախ նշվել են ՀՀ վարչապետը, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները և Մարդու իրավունքների պաշտպանը:

ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

...Սնանկության վարույթին չի կարող վերաբերելի լինել ողջամիտ ժամկետ սափածո, քանի որ սնանկության վարույթում մենք դա դիտարկում ենք բիզնես մտածելակերպի տեսանկյունից՝ պարտատերերի իրավունքների ծախսային բեռը ավելացնում է, թե՛ պակասացնում է: Եթե ավելացնում է, ապա պետք է արագ լուծարել, որով պետությունն ավելի նվազ միջամտություն կունենա անձանց իրավունքների դաշտում:

Խոսելով սնանկության վարույթի մասին, մասնագետները նախ և առաջ անդրադառնում են վերջինիս տևողությանը՝ մտահոգվելով, որ այն իրապես շատ երկար է տևում: Սակայն, ըստ մասնագետների, այդ տևողությունն ունի ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ պատճառներ: Այսպես, օբյեկտիվ պատճառների շարքին է դասվում դատարանների ծանրաբեռնվածությունը, տարաբնույթ հարցումների և դրանց պատասխանների, ծանուցումների ուղարկման (հատկապես ՔԿԱԳ մարմին, ՃՈ և այլն) և ստացման, փորձաքննությունների իրականացման ժամկետները, սնանկության գործընթացին առնչվող դատական այլ գործերի քննությունը (գույքից բաժնեմաս առանձնացնելը, ինչն էլ իրականացնելու համար հարկ է իրականացնել փորձաքննություններ և այլն), անուրդ իրականացնելը (երբեմն անհրաժեշտություն է լինում մի քանի անգամ կազմակերպել անուրդներ՝ գույքն իրացնելու համար) և այլն, իսկ սուբյեկտիվ գործոնների շարքին դասվում է կողմի շահադիտական միտումը՝ երկարաձգել գործը: Մի դեպքում պարտապանն է հաճախ փորձում ձգել ընթացքը, որպեսզի կարգավորի իր որոշակի խնդիրները կամ հնարավորինս հետաձգի, օրինակ՝ գույքի օտարումը, մյուս կողմից սնանկության կառավարիչն է երկարացնում գործընթացը՝ կոռուպցիոն հնարավորություններ ստեղծելով: Ձգձգումների երրորդ դերակատարն, ըստ մասնագիտական խմբերի, դատարաններն են, ինչի պատճառն այն է, որ օրենսդրության մեջ սահմանված չեն որոշակի ժամկետներ որոշ գործողությունների համար, կամ սահմանված ժամկետները չեն պահպանվում:

Հատկանշական էր, որ որոշ խմբերում հիշատակվեց նաև այն հանգամանքը, որ երբեմն դատական նիստերը հետաձգվում են, քանի որ սնանկության կառավարիչները չունեն մասնավորապես բավարար իրավական կամ տնտեսագիտական հմտություններ կամ հաճախ

կախվածության մեջ են գտնվում դատավորներից և ինքնուրույն չեն գործում՝ յուրաքանչյուր գործողություն ու քայլ համաձայնեցնելով դատարանի հետ:

Սնանկության գործերի քննության երկարատևության պատճառներից մեկն էլ ընթացակարգերի թերի լինելն է, մասնավորապես, քննարկման առարկա դարձավ այն իրավիճակը, երբ մեկ սնանկության վարույթում կան մի քանի տասնյակ պարտատերեր ու նրանցից մեկը պահանջների ցուցակի դեմ ներկայացրել է առարկություն, որը, բնականաբար, վերաբերում է իր պահանջին, հետևաբար շահագրգիռ անձ միայն ինքն է, տվյալ պարտապանը, ՍԿ-ն, և հետևաբար մյուս պարտատերերի շահերին դա որևէ կերպ չի առնչվում, սակայն դատարանը պարտավոր է ծանուցել և նիստին հրավիրել բոլոր 30 անձանց, ովքեր կարող են նիստին դիրքորոշում հայտնել և այլն, ինչի արդյունքում դատարանի ծանրաբեռնվածությունն ու նիստի տևողությունն ավելանում է:

Առանձնակի ուշադրության արժանացավ մասնագետների կողմից նաև գույքի հայտնաբերման և գույքագրման գործընթացի տևողությունը, ինչը հանգեցնում է սնանկության ընդհանուր գործընթացի երկարաձգմանը: Գույքագրման երկարատևությունը մասնագետների կողմից պայմանավորված է թե՛ որոշակի ընթացակարգերի դժվարությամբ (երբ անհնարին է լինում որոշ պետական միարմիններից ստանալ ճգրիտ տեղեկատվություն գույքի առկայության, գտնվելու վայրի և այլնի վերաբերյալ), այնպես էլ երբեմն սնանկության կառավարիչների մասնագիտական հմտությունների պակասով:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Այն դեպքերում, երբ ակնհայտորեն բացակայում են կեղծ սնանկության հատկանիշներ, իսկ անձը նպատակահարման չի գտնում դիմելու առողջացման ծրագրի համար՝ նախատեսել իրավական ընթացակարգ արտադատական կարգով կազմակերպությանը սնանկ ճանաչելու համար:
- Նպաստել սնանկության կառավարիչների անկախությանը և մասնագիտական հմտությունների բարձրացմանը, ինչը կրերի վերջիններիս անկախ գործունեության ապահովմանը և դատարանների ազդեցության բացառմանը:
- Սնանկության գործընթացին վերաբերելի ցանկացած հայցի քննությունը նույն սնանկության գործի շրջանակներում քննելու օրենսդրական հնարավորություն ստեղծել:
- Հարցումների ուղարկման, ստացման, ծանուցումների ուղարկման համար ներ դնել առավել արդյունավետ, ցանկալի է, էլեկտրոնային համակարգ:
- Սնանկության դատարանի դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակն ավելացնել, վերջիններս կնպաստեն գործերի ուսումնասիրության և մի շարք թղթաբանությունների արագացմանը:
- Սնանկության կառավարիչների գնահատման, պատասխանատվության կանչելու և խրախուսման մեխանիզմներ ներ դնել, որոնց չափման ստանդարտները կարող են լինել ոչ միայն իրականացված գործողությունների որակը, այլ նաև ժամկետը, թե մասնավորապես տվյալ գործողություններն ինչ ժամկետում են կատարվել և արդյոք դրանք համապատասխանում են օրենքի պահանջներին և ողջամիտ են:

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴՅՈՒԲԵՆՈՒԹՅՈՒՆ

... ի տարբերություն այլ երկրների, որտեղ սնանկության վարույթի գնում են, որպեսզի առողջանան, թեկուզ վարկերի մեխանիզմով կամ պետության կողմից սուբսիդավորման միջոցով, մեր մոտ գնում են սնանկության, որպեսզի պարտքերից մաքրվեն:

Մասնագիտական տարբեր խմբերում քննարկելով սնանկության ընթացակարգն ու դրա առանձին մասերը, մասնագետների մեծամասնության կողմից ընդգծվեց, որ իրականում սնանկության գործընթացը բավականին դյուրայնացված է և օրենսդրական մակարդակում ամրագրված չեն անհրաժեշտ երաշխիքներ, ինչի արդյունքում սնանկությունը մերօրյա իրականության մեջ հաճախ օգտագործվում է որպես անցանկալի ֆինանսական պարտավորություններից ազատվելու գործիք:

Այստեղ ուշագրավ է, որ, ըստ մասնագետների, ՀՀ Սնանկության մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն «Պարտապանը՝ դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել հարկադրված սնանկության դիմումի հիման վրա՝ եթե թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, ...», ինչն ինքնին խնդրահարույց է, քանի որ այս պարագայում չի դիտարկվում, թե արդյոք տվյալ անձը կամ կազմակերպությունն ունի, թե չունի միջոց կամ վճարելու հնարավորություն, այլ առանց հավելյալ նախապայմանի հնարավորություն է ընձեռված ցանկացած շահագրգիռ անձին միանգամից սկսելու սնանկության գործընթաց:

Միևնույն ժամանակ, կարևոր է նկատել, սնանկության գործընթացը ոչ միայն գործարար շրջանակի համար է որոշակի գործիք ծառայում, այլ նաև արդյունավետ մեխանիզմ է դարձել, օրինակ, բանկերի համար՝ գումարների վերադարձն առավել արագ ու արդյունավետ դարձնելու նպատակով: Այսպես, ըստ մասնագիտական մի քանի խմբերի, վերջին ժամանակաշրջանում բանկերը, որպես կանոն, սնանկության ավելի շատ են դիմում: Դա գալիս է մյուս հայցային վարույթների կամ հարկադիր կատարման փուլում դժվարություններից, որովհետև երբ բանկերը գնում են դատական գործընթացի, ռեսուրսներ են ծախսում՝ ակնկալելով հնարավորինս օպտիմալ, ավելի արագ ժամկետներում ունենալ վճիռ: Այլ հարց է այդ վճիռը կլինի բանկին հօգուտ, թե ի վնաս, բայց դա խնդրի հնարավորինս արդյունավետ կարգավորում է դիտարկվում: Նախկինում, քաղաքացիական գործերով դատավարական գործընթացն այնքան էր ձգձգվում, որ ինչ-որ պահից սնանկությունը դրա այլընտրանքն էր դարձել: Վերոհիշյալ խմբերի ներկայացուցիչները նաև կարծիք են հայտնել, որ համեմատած սովորական հայցային վարույթների՝ սնանկությունը, միանշանակ, օպտիմալ է, ժամանակն ավելի խնայող է: Դեռ ավելին, նաև մասնավորեցվեց, որ մի ժամանակ, մեկ այլ հանգամանք կար, որով պայմանավորված էր բանկերի սնանկության դիմելու պրակտիկան: Այսպես, գործն արդեն քաղաքացիական հայցով քննվում էր, գնում էր հասնում էր հարկադիր կատարման փուլ և այդ փուլում բանկը պիտի ստանար իր վճիռից բավարարումը, ու բավարարման փուլում գրավների առկայության պարագայում չէին իրացնում գույքը՝ պատճառաբանելով, որ պարտապանը կամ գործող պարտապան հանդիսացող անձանցից գոնե մեկը չի ծանուցվել: Եթե չէր ծանուցվում, ապա այդտեղ արդեն վճիռը մնում էր անկատար, իսկ սնանկությունն այդ հարցերի պատասխանն ուներ, սնանկությամբ կարողանում էին լուծել այդ հարցերը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Սահմանել լրացուցիչ օրենսդրական պահանջներ, որոնց առկայությունը պարտադիր նախապայման է սնանկության գործընթաց սկսելու համար, ինչը կբացառի այնպիսի իրավիճակներ, երբ սնանկության գնալը դարձել է ձևավորված պարտքերից՝ օրինակ պետության առջև կամ պայմանագրերի չկատարման արդյունքում առաջացած պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց:
- Անհրաժեշտ է օրենքով սահմանել սնանկության գործընթացի երկու տեսակ՝ առաջինն այն դեպքերի համար, երբ իրավաբանական կամ ֆիզիկական անձը չունի ցանկություն առողջանալու և միակ ցանկությունը տվյալ անձի գործունեության դադարեցումն է սնանկ ճանաչվելու միջոցով և երկրորդը՝ երբ անձը դիմում է սնանկություն սկսելու համար՝ առողջացման ծրագիր ունենալու նպատակով:

ՊԱՐՏՔԸ «ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ» ԿԱՄ ՆՈՐ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Վերջին շրջանում վարկի վերակառուցումը դուրացված է, բայց դա խոշոր վարկերին կամ բիզնես վարկերին չի կարող վերաբերել, որովհետև պետք է բիզնեսի առողջանալու հնարավորությունները տեսանելի լինեն՝ հակառակ դեպքում, հնարավոր չէ:

Այս հարցը քննարկվել է որոշակի խումբ մասնագետների հետ, ովքեր ուղղակի առնչություն են ունենում այս հարցի հետ: Ըստ վերջիններիս, ամենևին էլ զարմանալի չէ, թե ինչու են բավականին քիչ թվով անձիք դիմում պարտքի վերակառուցման կամ նոր վարկ ստանալու համար և, առավել ևս, ինչու է այդքան փոքր բավարարումների տոկոսը, քանի որ առաջին հերթին դրանք այն բիզնեսներն ու անհատներն են, ովքեր սնանկության գործընթացի մեջ հայտնվելով միայն մեկ շահ են հետապնդում՝ ազատվել արդեն իսկ ստանձած պարտավորություններից, իսկ բավարարման տոկոսն էլ ցածր է, քանի որ բանկերը գնահատում են, թե տվյալ սուբյեկտը (իրավաբանական անձի դեպքում) շուկայում ինչ հնարավորություններ ունի, վերլուծել գործընկերների հնարավորությունները, տեղեկություններն մասնակցելու և շահելու հնարավորությունը, նախկին պատմությունը նոր ներդրողի ի հայտ գալու հավանականությունը: Այսինքն, հիմնական չափանիշը վճարունակության գնահատումն է:


Համաձայն մասնագիտական որոշ կարծիքների, վերջին շրջանում դուրացված են պարտքի վերակառուցման հնարավորությունները, բայց դա խոշոր վարկերին կամ բիզնես վարկերին չի կարող վերաբերել, որովհետև խոշոր վարկերի պարագայում պետք են հստակ հնարավորություններ: Մասնավորապես բիզնեսի առողջանալու հնարավորությունները պետք է տեսանելի լինեն՝ հակառակ դեպքում, հնարավոր չէ: Միևնույն ժամանակ, կարծիք հնչեց, որ մանր վարկերի դեպքում, այսինքն՝ մի քանի մլն. դրամի դեպքում, կարող է հաշվի առնվել ցանկացած հնարավորություն: Գյուղատնտեսությամբ զբաղվողների նկատմամբ վերաբերմունքն այլ է, այսինքն, բանկը փորձում է հնարավորինս բոլոր միջոցներով օժանդակել, խրախուսել հաճախորդին և եթե հաճախորդն ունի տնտեսություն, այսինքն՝ հող, որը կարող է օգտագործել գյուղատնտեսական նպատակներով և ստանալ եկամուտներ, ապա վերավարկավորման հնարավորությունը մեծ է, իսկ տուգանքներն էլ կարող են ներվել: Սակայն այստեղ ամենակարևորը անձանց կամահայտնությունն է վարկերի վերակառուցման և նոր վարկերի ստացման գործում:

ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ


Մնանկության գործընթացի սկզբին բոլոր պարտատերերի հանդեպ ունեցած ընդհանուր պարտավորության մասին հարցին դժվարացան պատասխանել հարցվածների 13%, հրաժարվեցին պատասխանել՝ 1%: Հետազոտության արդյունքների համաձայն պարտավորությունների չափը բոլոր պարտատերերի նկատմամբ սնանկության գործընթացի սկզբին տատանվել է 150 հազ. ՀՀԴ-ից մինչև 5 մլրդ. 880 մլն. ՀՀԴ: Սակայն հիմնական կուտակումը, ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից, 1 մլն. 200 հազ. ՀՀԴ մինչև 50 մլն. պարտավորությունների միջակայքում է՝ 68.5% (Տե՛ս **Գծապատկեր 29**):

Գծապատկեր 29. Մնանկության գործընթացի սկզբին պարտապանի ընդհանուր պարտավորությունը բոլոր պարտատերերի հանդեպ (ՀՀ դրամ)




Ինչ վերաբերում է ակտիվներին, ապա հարցվածների 42% դժվարացան պատասխանել՝ որքան էին գնահատվել իրենց ակտիվները, ևս 0.5%՝ հրաժարվեցին պատասխանել: Հարցվածների 30% նշեցին, որ ակտիվները գնահատվել են 0 ՀՀԴ: Հարցման արդյունքների համաձայն, գնահատված ակտիվները տատանվել են 200 հազ. ՀՀԴ-ից մինչև 17 մլրդ. 150 մլն. ՀՀԴ (Տե՛ս **Գծապատկեր 30**):

Գծապատկեր 30. Պարտապանի ակտիվները (ՀՀ դրամ)




Յուրաքանչյուր պարտապանի պարտավորությունների և ակտիվների համեմատությունը ցույց է տալիս, որ պարտապանների 33% ակտիվները պարտավորություններից քիչ էին գնահատվել, 16% ակտիվները գերազանցում էին պարտավորությունները, 1.5% դեպքերում ակտիվները հավասար են եղել պարտավորություններին, մնացած հարցվածները (49.5%) պատասխան չեն տվել (Տե՛ս **Գծապատկեր 31.**):

Գծապատկեր 31. Պարտապանների պարտավորությունների և ակտիվների համեմատությունը



Պարտավորությունների մարման վերաբերյալ հարցին դժվարացան պատասխանել հարցվածների 37.5%, հրաժարվեցին պատասխանել՝ 0.5%: Հարցվածների 37% նշեցին, որ ընդհանուր պարտավորությունների մարմանը ուղղվել է 0 ՀՀԴ: Հետազոտության արդյունքների համաձայն ընդհանուր պարտավորությունների մարմանն ուղղված գումարը սնանկության ամբողջ գործընթացում տատանվել է 10 հազ. ՀՀԴ-ից մինչև 1 մլրդ. 500 մլն. ՀՀԴ (Տե՛ս **Գծապատկեր 32.**):

Գծապատկեր 32. Սնանկության գործընթացում ընդհանուր պարտավորությունների մարմանն ուղղված գումարը (ՀՀ դրամ)



Սնանկության գործընթացի ավարտին բաժնետերերի միջև բաշխելու համար գումար էր մնացել միայն մեկ հարցվածի (0.5%) մոտ՝ 1,5 մլրդ. ՀՀԴ: 38.5% հարցվածների մոտ ընդհանրապես գումար չէր մնացել: 60.5% դժվարացան պատասխանել այս հարցին, իսկ 0.5%՝ հրաժարվեցին:

Այսպիսի պատկերը վկայում է մի կողմից գործընթացի ոչ թափանցիկ լինելու մասին, իսկ մյուս կողմից՝ գործընթացի անարդյունավետության մասին: Մի կողմից պարտապաններից շատերը տեղեկացված չեն՝ ինչպես են գնահատվում և օգտագործվում իրենց ակտիվները, իսկ մյուս կողմից պարտատիրոջ պահանջները չեն բավարարվում:

ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

*Բանկը գույքը գնահատում է գրավ վերցնելիս 250մլն. դրամ:
Հետագայում, երբ գալիս է իրացման պահը, նույն բանկը նույն գույքը
ընդամենը երեք տարի հետո գնահատում է 115մլն դրամ:
Ներողություն, Հայաստանում այդ ի՞նչ կատակիլիզմ եղավ, որ այդպես
գինը իջավ. ո՞վ ինձ կբացատրի:*

Մասնագիտական խմբերում այս հարցի քննարկման արդյունքում դիտարկվեցին շատ կարևոր հիմնախնդիրներ, մասնավորապես, ըստ մասնագետների, ֆինանսական պարտավորությունների չափի ձևավորումը, որպես կանոն, հաճախ պայմանավորված է լինում նրանով, թե ով է հարկադիր սնանկության համար դիմողը, այսպես մի քանի մասնագիտական խմբերում կրկնվեց այն միտքը, որ, որպես կանոն, Երևանի համայնքապետարանը նախքան հարկադիր սնանկության դիմում ներկայացնելը բավականին երկար ժամանակ սպասում է, որպեսզի պարտքերը և համապատասխան տույժերն ու տուգանքները հասնեն առավելագույն չափին, որից հետո նոր ներկայացնում են դիմում: Մասնագետներին հատկապես մտահոգում է, որ սնանկության գնացող կազմակերպությունները, որպես կանոն, ամբողջությամբ սպառված են լինում և գրկված են լինում հետագայում առողջանալու կամ պարտքը վերակառուցելու որևէ հնարավորությունից, քանի որ, օրինակ, բանկերի դեպքում նրանք այն աստիճան «քամված են» լինում կամ որոշ պետական մարմինների պարագայում այնքան մեծ պարտքով, տույժ ու տուգանքներով ծանրաբեռնված են լինում, որ արդյունքում դառնում են զուտ լուծարվող:

Այսինքն՝ ոչ թե հիվանդին են բերում սնանկության, այլ մեռելին, իսկ մեռելից դժվար է ինչ-որ բան ուզելը:

Մասնագետների կարծիքով, մտահոգիչ է այն հանգամանքը, որ հարցվածների մեջ բավականին մեծ տոկոս են կազմել այն անձիք, ովքեր սնանկության գործընթացում գտնվելու պահին անգամ ունեցել են բավարար ակտիվներ՝ պարտավորությունների մարման համար, սակայն չեն էլ օգտագործել: Մա, ըստ մասնագետների, ևս մեկ ապացույց է, որ անձը, հայտնվելով սնանկության գործընթացում, հիմնականում հետապնդում է մեկ նպատակ՝ գնալ լուծարման, այլ ոչ առողջանալ կամ վերակազմակերպել բիզնեսը:

Մի քանի մասնագիտական խմբեր էլ անդրադարձան, ըստ իրենց շատ ցավոտ մի խնդրի, ինչն է օրինակ բանկերի կողմից գրավադրվող գույքի գնահատմանը: Այսպես, ըստ մասնագետների, բանկը գրավ տալիս գույքը գնահատում է որոշակի արժեքով, սակայն մի քանի տարի հետո, այն դեպքում երբ երկրում գլոբալ առումով անշարժ գույքի շուկայի փոփոխություններ չեն եղել, նույն գույքը, նույն անշարժ գույքը գնահատում է շատ ավելի ցածր:

Բանկը գույքը գնահատել է 8 տարի առաջ 15000 դրամով, եկել է սնանկության, դու ես գնահատում, շուկայական հարստությունների արդյունքում գույքի գինը իջել է 500 դրամ: Պահանջը մնացել է նույնը, բայց գույքի արժեքը իջել է:

Բավականին ծավալուն ու բուռն քննարկում էլ ծավալվեց կապված այն հարցի հետ, թե արդյոք հարկավոր է օրենսդրական մակարդակում ամրագրել ավելի բարձր շեմ հիմնադիր կապիտալի համար, այն սահմանելով, օրինակ, մեկ միլիոն դրամ, ինչը հետագայում կնվազեցնի սնանկության գնացողների թիվը: Սակայն մասնագետների գերակշիռ մասը մերժեց այս տեսակետը, պնդելով, որ դա կխոչընդոտի բիզնեսի զարգացմանը:

Մասնագիտական խմբերին նաև չզարմացրեց այն հանգամանքը, որ սնանկության գործընթացի ավարտին բաժնետերերի միջև բաշխելու համար գումար էր մնացել միայն մեկ հարցվածի մոտ: Ըստ մասնագետների, դա սովորական պրակտիկա է դարձել, քանի որ, որպես կանոն, գույքի օտարումից ստացված գումարից փակվում են սնանկության կառավարչի ծախսերը, իսկ մնացած պարտատերերը մնում են առանց որևէ բավարարման:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


- Սահմանել առավելագույն ժամկետ, որը կսահմանափակի այն կետանցի ժամկետը, երբ կարելի է դիմել հարկադիր սնանկության գործընթաց սկսելու համար, ինչը կկանխի կամայական մոտեցումները որոշ մարմինների կողմից՝ պարքի արհեստական ուռնացման համար:
- Իրավական ակտի մակարդակում նախատեսել գույքի գնահատման միասնական սանդղակ, որը կարտահայտի ընթացիկ շուկայական արժեքը և կբացառի գնահատողների կամայական մոտեցումների ցուցաբերումը:
- Իրավական մեխանիզմ ներդնել, որով հնարավոր կլինի թեկուզ որոշակի տոկոսային բավարարում հատկացնել բոլոր պարտատերերին:

ՄԱՆԿԱԴԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ


Ուսումնասիրված գործերի 72%-ում սնանկության կառավարիչը նշանակվել է դատարանի կողմից՝ իր հայեցողությամբ, 3.5%-ում՝ պարտատիրոջ միջնորդության հիման վրա, 2.5% պատահականության սկզբունքով, 0.5%՝ պարտապանի միջնորդության հիման վրա: Հարցվածների 21.5% դժվարացան պատասխանել այս հարցին: «Կողմերի միջև բանակցությունների արդյունքում» և «ԻԿԿ կողմից՝ իր հայեցողությամբ» պատասխանի տարբերակները չի նշել և ոչ ոք (Տե՛ս **Գծապատկեր 33.**):

Գծապատկեր 33. Սնանկության կառավարչի նշանակման ընթացակարգը




Սնանկության կառավարչի անկախության և գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից սնանկության կառավարիչ նշանակելու առավել նպատակահարմար ընթացակարգը, հարցվածների 42% կարծիքով, դարձյալ համարվեց դատարանի կողմից՝ իր հայեցողությամբ սնանկության կառավարչի նշանակման գործընթացը: 15% կզերադասեին, եթե սնանկության կառավարիչն ընտրվեր կողմերի միջև բանակցությունների արդյունքում, 9.5%՝ պատահականության սկզբունքով, ևս 9.5%՝ պարտապանի միջնորդության հիման վրա, 1%՝ պարտատիրոջ միջնորդության հիման վրա: Հարցվածների 22.5% դժվարացան պատասխանել այս հարցին (Տե՛ս **Գծապատկեր 34.**):

Գծապատկեր 34. Մնանկության կառավարիչ նշանակելու առավել նպատակահարմար ընթացակարգը՝ սնանկության կառավարչի անկախության և գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից



Հարցվածները հիմնականում բավարարված են ինչպես սնանկության գործերով կառավարիչների մասնագիտական հմտություններով, այնպես էլ իրենց գործի նկատմամբ վերաբերմունքով: 16.5% դժվարացան պատասխանել այս հարցին (Տե՛ս Գծապատկեր 35.):

Գծապատկեր 35. Մնանկության կառավարչի մասնագիտական հմտություններից և պարտապանի գործի նկատմամբ ունեցած վերաբերմունքից բավարարվածությունը



Մնանկության գործերով կառավարիչների մասնագիտական հմտություններից լիովին բավարարված 43.5% և ավելի շուտ բավարարված 25.5% հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանները՝

- Լավ մասնագետ է, կրթված, հմուտ մասնագետ է, գրագետ, լավ մարդ է, սրտացավ է, պարտաճանաչ, բարեհամբյուր – 46%,
- Իր գործը նորմալ արել է, օրենքին համապատասխան աշխատում է – 19.5%,
- Բոլոր հարցերին տալիս է ստույգ լիարժեք պատասխան – 9.5%,
- ՄԿ-ն աշխատում է ընկերության առողջացման ուղղությամբ – 5%,
- Տրամադրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ծանուցումներն ուղարկել է – 3%,
- Պարտավորության չափը էականորեն կրճատել է – 0.5%:

Մնանկության գործերով կառավարիչների մասնագիտական հմտություններով բոլորովին չբավարարված 10% և ավելի շուտ չբավարարված 4.5% հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանները՝

- Իր շահն էր հետապնդում – 5%,
- Կոռումպացված է, «ծախված է» - 2.5%,
- Տգետ է, գործին չի տիրապետում -2.5%,
- Ինձանից էր ուզում իր տոկոսը – 1.5%,
- Իրենք պաշտպանված են պետության կողմից և կարող են անհիմն հիմնավորումներ բերել - 1.5%,
- Տունը 2 անգամ աճուրդի է դրել առանց պարտապանին տեղեկացնելու, տեղեկություններ գրեթե չէր տալիս - 1.5%,
- Հարկայինի հետ կապ չէր հաստատում, տարբեր գերատեսչությունների հետ տեղեկատվությունը չէր փոխանակում – 0.5%,
- Գույքի գնահատումը ցածր է գնահատել – 0.5%:

Մնանկության գործերով կառավարիչների կողմից գործի նկատմամբ վերաբերմունքով լիովին բավարարված 43.5% և ավելի շուտ բավարարված 25.5% հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանները՝

- Մատչելի բացատրում էր, տեղեկացնում էր գործի ընթացքի մասին – 17%,
- Իր գործը նորմալ արել է, հետևողական լիարժեք արդար աշխատել է, անկողմնակալ է եղել, օրենքով է աշխատել – 32.5%,
- Մարդկային էր, անաչառ, սրտացավ, զուսպ համբերատար - 17%

Մնանկության գործերով կառավարիչների կողմից գործի նկատմամբ վերաբերմունքով բոլորովին չբավարարված 13.5% և ավելի շուտ չբավարարված 5.5% հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանները՝


- Շահագրգռված չէր գույքը պահպանելու – 7.5%,
- Շատ էր ձգձգում – 4.5%,
- «Ամենակոռումպացված, ծախված, ստախոս սնանկի կառավարիչն է» – 4%
- Մնանկության ամենատգետ կառավարիչն է, օրենսդրությունը չգիտի – 3%
- Տեղեկություն չի հայտնել աճուրդի մասին, գույքը վաճառել են առանց պարտապանի իմացության – 2.5%,
- Անցել է հինգ տարի, բայց պարտապանի հաշիվները դեռևս սառեցված են և գործարքներ չի կարողանում անել – 1%
- Թոշակի վրա կալանք էր դրել – 1%
- Նախքան փաստաբանի՝ գործում ներգրավվելը, անտարբեր էր – 0.5%

Հարցված պարտապաններից միայն մեկն է պահանջել վաղաժամկետ դադարեցնել սնանկության կառավարչի լիազորությունները (փոխել սնանկության կառավարչին): Մակայն դատարանը չի բավարարել պարտապանի պահանջը: 99.5% նման պահանջ չեն ներկայացրել:

Հարցվածների մեծամասնությունը՝ 62.8%, վստահ են, որ սնանկության կառավարիչները բացի նախատեսված վարձատրությունից սնանկության գործընթացից ուղղակի կամ անուղղակի շահույթ չեն ունեցել: 21.5% կարծում են, որ չեն ունեցել, 2.5% նման

հնարավորություն չեն բացառում, իսկ 5.5% վստահ են, որ սնանկության կառավարիչն ունեցել է ուղղակի կամ անուղղակի շահույթ (Տե՛ս **Գծապատկեր 36.**):

Գծապատկեր 36. Բացի նախատեսված վարձատրությունից, սնանկության կառավարչի ուղղակի կամ անուղղակի շահույթի հավանականությունը սնանկության գործընթացից՝ ըստ պարտապանների



Քննարկելով սնանկության կառավարիչների բացի նախատեսված վարձատրությունից սնանկության գործընթացից ուղղակի կամ անուղղակի շահույթի դեպքերը՝ հարցվածները բերել են հետևյալ օրինակները.

- Սնանկության կառավարիչը գույքի վաճառքից լրացուցիչ գումար է ստացել – 6 պատասխան (3%)
- Սնանկության կառավարիչը կոռուպցիոն գործարքի մեջ է եղել պարտատիրոջ հետ – 3 պատասխան (1.5%)
- «Արդարադատությունն ու հարկայինը նույն «կլանից» են, ու սնանկության կառավարչի միջոցով մեկը մյուսի հետ գաղտնի համագործակցում են» - 3 պատասխան (1.5%)
- Բանկի կառավարչի հետ սնանկության կառավարիչը գործարք է արել և առանց աճուրդի վաճառել է պարտապանի տունը – 2 պատասխան (1%)
- Սնանկության կառավարիչը պարտապանից գումար/տոկոս է վերցրել – 2 պատասխան (1%)
- Անհիմն տույժ ու տուգանքներ է գրել – 1 պատասխան (0.5%)
- Աճուրդում դրված պարտապանի գույքը սնանկության կառավարիչն է գնել – 1 պատասխան (0.5%)


Սնանկության կառավարիչների մասնագիտական գործառնությունների վերաբերյալ դրական բնույթի դատողությունների հետ համաձայնել են հարցված պարտապանների ավելի քարձր տոկոսը, քան բացասական գնահատականներ պարունակող դատողությունների հետ: Այդպես օրինակ, «Սնանկության կառավարիչը պատշաճ ժամանակ և ուշադրություն է հատկացրել գործին» դատողության հետ համաձայն են հարցվածների 41.5%, իսկ 20.5%՝ ավելի շուտ համաձայն են: «Սնանկության կառավարիչը պատշաճ կերպով իրականացրել է ֆինանսական վիճակի վերլուծությունը՝ չցուցաբերելով ձևական մոտեցում» դատողության հետ համաձայն են հարցվածների 35.5%, իսկ 19%՝ ավելի շուտ համաձայն են: «Սնանկության

կառավարիչը միշտ ընտրել է առավել օպտիմալ ու քիչ ծախսատար լուծումներ՝ նպատակով վնարունակության վերականգնմանը, թեկուզ դրանց արդյունքում ավելի քիչ վարձատրություն է ստացել, քան կարող էր ստանալ» դատողության հետ համաձայնել են հարցվածների 34.5%, իսկ 14%՝ ավելի շուտ համաձայն են:

Ավելի ցածր է գույքի վաճառքի հետ կապված սնանկության կառավարիչների գործունեության դրական դերակատարումը նկարագրող դատողությունների հետ հարցված պարտապանների համաձայնության մակարդակը, սակայն գուգահեռաբար բարձրանում է ոչ թե այդ դատողությունների հետ չհամաձայնող հարցվածների տոկոսը, այլ այն հարցվածների տոկոսը, որոնք դժվարացել են պատասխանել կամ հարցը վերաբերելի չի եղել նրանց գործին: Այդպես. «Մնանկության կառավարիչը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ գույքը պահպանելու ուղղությամբ» դատողության հետ համաձայնել են հարցվածների 25.1%, իսկ 15.1%՝ ավելի շուտ համաձայնել են: «Դուք համաձայն եք եղել սնանկության կառավարչի կողմից իրականացված գույքի գնահատման արդյունքների հետ» դատողության հետ համաձայնել են հարցվածների 25%, իսկ 17.5%՝ ավելի շուտ համաձայնել են: Այս պատկերը վկայում է սնանկության կառավարչի գործունեության թափանցիկության ցածր մակարդակի մասին:


Իսկ սնանկության կառավարչի գործունեությունը բացասական եղանակով նկարագրող դատողությունների հետ համաձայնել է հարցվածների համեմատաբար ցածր տոկոսը: «Մնանկության կառավարիչն ակտիվները հավաքագրելու նպատակով կարող էր կատարել լրացուցիչ գործողություններ, սակայն չի կատարել» դատողության հետ համաձայնել են հարցվածների 6.5%, իսկ 4%՝ ավելի շուտ են համաձայնել: «Մնանկության կառավարիչը արհեստականորեն «ուռնացրել է» իր կամ վարչական ապարատի ծախսերը կամ աշխատողների աշխատավարձերը» դատողության հետ համաձայնել են հարցվածների 5%, իսկ 3.5%՝ ավելի շուտ են համաձայնվել: Եվ վերջապես, «Մնանկության կառավարիչը անհիմն արգելել է կատարել որևէ գործողություն, որը կարող էր դրական ազդեցություն ունենալ պահանջների բավարարման և պարտապանի վնարունակության վերականգնման համար» դատողության հետ համաձայնել են հարցվածների 3%, իսկ 3.5%՝ ավելի շուտ են համաձայնել (Տե՛ս **Գծապատկեր 37.**):

Գծապատկեր 37. Սնանկության կառավարչի գործողությունների վերաբերյալ դատողությունների հետ հարցվածների համաձայնությունը



Հարցվածների 22.5% նշեցին, որ սնանկության վարույթի ընթացքում կառավարիչը պահանջել է նրանցից լրացուցիչ փաստաթղթեր (Տե՛ս **Գծապատկեր 38.**):

Գծապատկեր 38. Սնանկության վարույթի ընթացքում կառավարիչը պահանջել է լրացուցիչ փաստաթղթեր



ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Իսկ եթե հասնենք այն մակարդակին, որ ՄԿ-ների մասնագիտական որակները բավականին բարձր լինեն, ապա կարելի է ՄԿ-ների ընտրությունը կատարել պատահականության սկզբունքով, ինչը հնարավորություն կտա խուսափելու կոռուպցիոն ռիսկերից, շահերի անհավասարակշռությունից և այլն: Բայց, քանի որ այսօր շուկայում ամենատարբեր մասնագիտություններով մարդիկ կարող են հանդես գալ՝ որպես ՄԿ, այդ թվում՝ բանասեր, ապա գործող մեխանիզմն ամենատրոյունավետն է, քան պատահականության սկզբունքով ընտրություն կատարելը կլինի:

Մասնագիտական խմբերին ներկայացվել էին հետազոտության արդյունքները, որտեղ պատկերված էր, թե ըստ հարցվողների ինչպես են նշանակվում սնանկության կառավարիչները և թե ինչպես իրենք կցանկանային, որպեսզի վերջիններս նշանակվեին: Գրեթե բոլոր մասնագիտական խմբերում արձագանքը եղավ այն համատեքստում, որ անձիք նման կերպ են պատասխանել, քանի որ ունեն ընդհանուր համակարգի վերաբերյալ շատ ցածր տեղեկացվածության մակարդակ:

Սնանկության կառավարիչների նշանակման հետ կապված հարցը քննարկվել է մի քանի հարթություններում: Առաջին. որպես սնանկության կառավարիչների անկախության երաշխիք, երկրորդ. որպես պարտապանի և պարտատիրոջ շահերը հավասարապես և անկողմնակալ կերպով ներկայացնող անձ:

Ուշագրավ է, որ առանց բացառության գրեթե բոլոր խմբերում մտահոգություն հնչեց սնանկության կառավարիչների նշանակման վերաբերյալ, բացառությամբ դատախազների և քննիչների, ինչպես նաև ՊԵԿ մասնագետների, որոնք հայտնեցին, որ այն դեպքերում, երբ իրենք են լինում գործով կողմ, ՄԿ թեկնածություն չեն առաջարկում և հարցի լուծումը թողնում են դատարանի հայեցողությանը, իսկ դատարանը դիմում է ԻԿԿ, որտեղ էլ

համապատասխան համակարգչային ծրագրի միջոցով կատարվում է պատահական ընտրություն:

Մնացած բոլոր խմբերում մտահոգություն հայտնեցին այն մասին, որ ԻԿԿ-ում ներդրված համակարգչային պատահական ընտրության համակարգն այդքան էլ պատահական ընտրություն չի իրականացնում և հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ վերջինիս գործունեությանը միջամտում է մարդկային գործոնը՝ այսպիսով ձևավորելով «ցանկալիների» խումբ, ովքեր ստանում են «յուղոտ կտորները»:

Ոչ պակաս մտահոգիչ էր այն հանգամանքը, որ որոշ սնանկության կառավարիչներ համագործակցում են կոնկրետ կառույցների կամ այդ կառույցների կոնկրետ ներկայացուցիչների հետ, և այդ կառույցները սնանկության գործով որպես պարտատեր մտնելով դատարան ներկայացնում են այդ կառավարչի անունը, ով էլ նշանակվելով դատարանի կողմից, բնականաբար, սպասարկում էր տվյալ պարտապանի շահերն ու հետաքրքրությունները:

Այսօր ՄԿ կա, որին ասում են՝ «այսինչ բանկի կառավարիչ»:

Ըստ մասնագետների, այս հանգամանքը օրենքի տեսանկյունից բնավ խնդրահարույց չէ, սակայն իրավակիրառ առումով այն լրջագույն խնդիր է կողմերի հավասար ներկայացվածության առումով: Հետաքրքրական էր, որ այս հարցի մեկ այլ կողմին ևս անդրադարձ եղավ՝ մտահոգություն հայտնելով այն իրավակարգավորման չարաշահման մասին, համաձայն որի կամավոր սնանկության դիմումի դեպքում պարտապանը կարող է առաջարկել իր սնանկության կառավարչին, ինչը, հիմնականում, գործը ձգձգելու նպատակ է հետապնդում:

Կա նաև պարտապանի տարբերակը, երբ կամավոր սնանկության դիմում է լինում, պարտապանն ինքն է ընտրում: Իհարկե՞, դա խնդիրներ հարուցող է, իմ կարծիքով, որովհետև պարտապանները, որպես կանոն, կարող են առաջադրել այն թեկնածուին, որից որ, ի սկզբանե, ակնկալիքներ են ձևավորել, այսինքն՝ նշանակում են կառավարիչ, բայց դու իմ գործը պետք է ձգձգես կամ ավելի դանդաղ տանես: Նման բան չի կարելի ասել պարտատերերի պարագայում, որովհետև պարտատերերն արագ գործընթացով շահագրգիռ կողմ են:

Հարկ է նաև նկատել, որ ըստ մի խումբ մասնագետների ՄԿ-ները կարող են ընտրվել պատահականության սկզբունքով՝ բացառելով կոռուպցիոն ռիսկերը, բայց քանի դեռ ՄԿ-ների մասնագիտական բարձր մակարդակն ապահովված չէ, պարտատերերը ձգտում են ընտրել պրոֆեսիոնալ, վստահելի ՄԿ-ի, իսկ պարտապանն էլ ամեն կերպ փորձում է գործընթացին խոչընդոտել՝ թուլացնելու ՄԿ դիրքերը և գործը տանելու իրենց ցանկալի ուղղությամբ:

Մասնագիտական մի խումբ էլ սույն հարցը դիտարկեց մեկ այլ տեսանկյունից՝ քննարկելով սնանկության կառավարիչների ինքնաբացարկի ինստիտուտի բացակայությունը հատկապես այն դեպքերում, երբ նշանակված կառավարիչը տեսնում է, որ տվյալ գործի վարումն իր համար անհնար է:

Ուշագրավ էր մասնագիտական խմբերից մեկում հնչած կարծիքն առ այն, որ պատահական ընտրության սկզբունքը չի կարող երաշխավորել արդյունավետ գործի կառավարում, քանի որ

ամեն սնանկության կառավարիչ չէ, որ կարող է հանձն առնել բավականին բարդ գործի վարումը:

Մենք այնքան ենք տարվել այդ հասկանալիություն մոլորցրով, որ կարևորն ենք կորցնում: Մենք դեռ ենք ու վիճակահանության մի մարդու ենք վերցնում ՄԿ, ով կարող է լինել ամենաթույլն իր փորձով և գիտելիքներով: Օրինակ, Նաիրիտ գործարանը վերցնենք, այստեղ հանրային պահանջն այն է, որ այս գործարանը աշխատի..., սակայն մենք պատահական ընտրության մի կառավարչի ենք դնում և համոզված չենք, որ այդ մարդը կունենա գործիքակազմ, որպեսզի իրականացնի գործը մինչև վերջ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Նպատակահարմար է սնանկության կառավարիչների արտոնագրումներն իրականացնել ֆինանսական կառույցների մասնակցությամբ հանձնաժողովային կարգով:
- Պատահական ընտրության համակարգը, որը սակայն որևէ հնարավորություն չի տա սուբյեկտիվ ընտրության, նպատակահարմար է, սակայն ՄԿ-ներին պետք է ըստ գործերի բարդության, հմտությունների և այլ չափորոշիչների դասակարգել և ամեն գործի ընտրությունը կատարել համապատասխան խմբերից:
- Հարկավոր է սնանկության կառավարիչների գնահատման համար օբյեկտիվ որոշակի բալային համակարգ ներդնել և ոչ թե ընդհանուր բազայից արվի ՄԿ ընտրությունը, այլ որոշակի գործի հանգամանքներից ելնելով, որոշակի չափանիշներ լինեն, որ առանձնացվեն մի խումբ կառավարիչներ և նրանց միջից պատահականության սկզբունքով և գնահատման հիման վրա ընտրվեն:

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհրաժեշտություն կա բարելավելու ՄԿ-ների մասնագիտական որակները, որովհետև բանկերի պարագայում լինում են խոշոր գործեր, բիզնես գործեր, որոնց կազմակերպման համար կառավարման բարձր մակարդակի հմտություններ են պետք: Այսպես, լինում են իրավիճակներ, երբ միանգամից պետք է կազմակերպվի գույքի վաճառքի գործընթացը, բայց լինում են դեպքեր, երբ բիզնեսը դեռ կառավարման անհրաժեշտություն ունի, համեմայն դեպք ինչ-որ փուլի համար: Այս պարագայում անհրաժեշտ է, որ ՄԿ-ները մենեջմենթի հմտություններ ունենան, որպեսզի կարողանան գոնե այդ ժամանակահատվածում կառավարել՝ չվնասելով ընկերությանը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ պարտապանները բավականին բարձր էին գնահատել սնանկության կառավարիչների մասնագիտական ունակություններն ու բավարարվածության բարձր աստիճան էր արձանագրվել նրանց աշխատանքից, սակայն մասնագիտական խմբերը այդքան էլ համակարծիք չէին հանրային կարծիքի հետ, ասելով, որ բավարարվածությունը հնարավոր է պայմանավորված է նրանով, որ կառավարիչները կարողացել են «ընդհանուր լեզու գտնել» պարտատերերի հետ, սակայն եթե ուշադիր դիտարկենք նրանց մասնագիտական ունակություններն ու հմտությունները, մասնագիտորեն վեր լուծվեն

սնանկության կառավարիչների գործողությունները, ապա հնարավոր կլինի արձանագրել, որ այդ ինստիտուտը կայացած չէ:

Մասնագիտական խմբերում սնանկության կառավարիչների մասնագիտական հմտությունների վերաբերյալ քննարկումները վեր հանեցին հիմնական մի քանի խնդիրներ. առաջինը. գրեթե բոլոր մասնագետները համակարծիք էին, որ սնանկության առավել ավագ սերնդի կառավարիչները ավելի հաճախ են ցուցաբերում պասիվություն, երկրորդ. այն կառավարիչները, ովքեր չունեն իրավաբական կամ տնտեսագիտական գիտելիքներ առավել քիչ արդյունավետ են գործում, երրորդ. հաճախ սնանկության կառավարչի գիտելիքների պակասը հանգեցնում է նրան, որ վերջինս կախվածության մեջ էլինում դատավորից, չորրորդ. որոշակի բնագավառներում սնանկության կառավարիչների հմտությունների բացը հանգեցնում է նրան, որ ինչ-ինչ գործողություններ չեն կատարվում:

Ուշագրավ դիտարկում հնչեց երկու մասնագիտական խմբերում, որի համաձայն սնանկության կառավարիչներն առավել բարձր մասնագիտական պատրաստվածություն են ցուցաբերում այն գործերի ժամանակ, որով ներգրավված են լինում փաստաբաններ, քանի որ նրանց միջև որոշակի մրցակցություն է տեղի ունենում, ինչը հանգեցնում է որակի բարձրացմանը:

Հետաքրքրական է, որ մի քանի խմբերում վերահաստատվել է, որ պարտապաններին փաստացի հայտնաբերելու և տեղեկացնելու, պարտապանների գույքը հայտնաբերելու հարցում սնանկության կառավարիչների գիտելիքներն ու հմտությունները հիմնականում բավարար են, քանի որ, որպես կանոն, պատշաճ մակարդակով կատարում են այդ գործառնությունը: Սակայն խնդիրներ են առաջանում ակտիվների հավաքագրման հետ կապված, օրինակ, եթե գույքը գտնվում է դեբիտորական պարտքերի տակ, ապա այստեղ անհրաժեշտ են մասնագիտական հմտություններ՝ կապված հայցերի ներկայացման, պահանջների ներկայացման և նմանատիպ այլ հարցերում:

Հարկ է նկատել, որ գրեթե բոլորի կողմից առանձնակի շեշտադրվում էր սնանկության կառավարչի իրավական գիտելիքների անհրաժեշտությունն ու պակասը, ինչը սակայն սնանկության կառավարիչների կողմից երբեմն իրենց գործողությունների կամ անգործության համար որպես արդարացում է ծառայում:

... լինում են դեպքեր, որոնք պահանջում են, որ ՄԿ-ն հայցով մտնի դատարան, հետևաբար՝ կարևոր է, որ այդ գործընթացը ճիշտ կազմակերպվի և իրականացվի: Երբեմն դիմում եմ, որ հայցով մտնեն երաշխավորի դեմ, բայց ՄԿ-ն հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ իրավաբան չէ, չի կարող պատրաստել հայց և եթե պահանջվում է նման գործողություն, ապա ՄԿ-ն վարձում է իրավաբան, որի ծախսերը հոգում են կողմերը, քանի որ դա ՄԿ-ն չի ներառում վարչական ծախսերի մեջ՝ փստահ չլինելով, որ երաշխավորից գումար կստացվի և ծախսերը կփոխհատուցվեն: Եթե ՄԿ-ն իրավաբանական կրթություն ունենա, ապա այդ հայցը կարող է ձևակերպել և մեծ խնդիր չի դառնա:

Սակավաթիվ չէին նաև այն մասնագետները, որոնք պնդում էին, որ սնանկության կառավարիչներն ունեն ոչ միայն ընդհանուր իրավական գիտելիքների պակաս, այլ նաև հենց օրենսդրության և իրավական ընթացակարգերի պակաս և հենց այն ոլորտներում, որոնք ուղղակիորեն առնչվում են իրենց գործառնությունների արդյունավետ իրականացմանը:

Եթե առկա է կադաստրի տեղեկատվությունը կամ ուսդիկանության տեղեկատվությունը, ապա գույքը հեշտությամբ հայտնաբերում են, որովհետև հայտնաբերելու բան չկա, հարցումն ուղարկում են, պատասխանն ստանում են և այլն: Իսկ եթե պետք է ավելի խորանան, օրինակ՝ բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի ձեռք բերման, օտարման հետ կապված գործարքները, որն, իրականում, օտարել է իր կնոջ անունով, բայց իրական շահառուն մնացել է պարտապանը: Անձը կատարում է իր տնտեսական գործունեությունը, ամբողջությամբ շարունակում է, ինչն ակնհայտ է բոլորի համար, բայց ՄԿ-ները չեն կարողանում հասնել դրան, հայտնաբերել, այսինքն՝ անձը, անանկ ճանաչվելուց հետո շարունակում է տիրապետել ահռելի մեծ գումարների: Սրանք շատ կարևոր մեխանիզմներ են և ՄԿ-ները պետք է կարողանան հմտորեն գնալ, հասնել այդ մարդու գործարքներին՝ և՛ անվավեր ճանաչելու հիմքով նախկինում կնքված գործարքներին, և՛ գործարքների արդյունքում ստացված եկամուտների հայտարարագրմանը:

Մնանկության կառավարիչների մասնագիտական հմտությունների պակասը, ըստ մի շարք մասնագետների, նաև դրսևորվում է հենց բիզնեսի կառավարման ոլորտում, մասնավորապես երբ խոշոր բիզնես է, որի ճիշտ կառավարումից հնարավոր կիներ ոչ միայն շարունակել տվյալ կազմակերպության գործունեությունը, այլ նաև բավարար հիմքեր ստեղծել վերջինիս արդյունավետ առողջացման համար:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Անհրաժեշտ է, որպեսզի սնանկության կառավարիչներն ունենան տնտեսագիտական գիտելիքներ մասնավորապես ՖԱԾ կազմելու համար: Ոչ պակաս կարևոր է իրավաբանական կամ կառավարման (մենեջմենթ) հմտություններ կամ տվյալ բնագավառում կրթություն ունենալը:
- Հարկավոր է պարբերաբար վերապատրաստումներ անց կացնել՝ խորացնելով ՄԿ-ների հմտությունները ամենախոցելի թեմաների, այն է՝ ՖԱԾ կազմելու, գույքագրման և այլ թեմաներով:
- Եթե սնանկության կառավարիչը ամբողջությամբ պետք է կարգավորի տնտեսագիտության և իրավաբանության ամբողջ հարցերը սնանկության վարույթում, ապա վերջինս պետք է լայն գործիքներ ունենա, ինչը գործնականում հնարավոր է միայն, եթե ընկերությունները նույնպես կառավարում իրականացնեն, որոնք կունենան աուդիտորական, իրավաբանական և այլն ծառայություններ մատուցող բաժիններ:
- Ըստ գործերի բարդության՝ պետք է ունենալ որակավորված մասնագետների տիպաբանում:
- ՄԿ-ները պետք է ունենան որոշակի որակավորման ցուցիչներ, ընդ որում, իրենց էլ է դա պետք, քաի որ եթե ՄԿ-ն չունի խորը ֆինանսական վերլուծություն անելու ունակություն, դրանից ինչպես է բխեցնելու առողջացմանը տանող որոշակի գործընթացները: Հետևաբար, նման ընկերությունների հետ՝ որոշակի գույքային մեծ

ապահովվածություն ունեցող ընկերությունների հետ, տվյալ ՄԿ-ն չպետք է աշխատի և առաջին իսկ գույքագրման արդյունքներից հետո ՄԿ-ի փոփոխության հարցը պետք է տեսանելի լինի:

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի է հավասարեցնել ինստիտուտներին, օրինակ՝ հարկադիր կատարման դեպքում ծախսը կազմում է 5 տոկոս, բայց սնանկության գործընթացում 10-ից է սկսվում՝ չնայած գնալով նվազում է: Եթե կա հարկադիր կատարման ինստիտուտ, որն աշխատում է 5 տոկոսով, ապա հասկանալի չէ, թե ինչու է սնանկության դեպքում սանդղակը 10 տոկոսից սկսվում:

Սույն հարցի քննարկումը մասնագիտական խմբերում հանգեց այն եզրահանգմանը, որ ՄԿ-ների վարձատրությունն ու ծախսերը բավականին բարձր են, որոնք օպտիմիզացման կարիք ունեն: Ավելին, որպես հիմնահարց նշվեց դրանց ձևավորման ոչ թափանցիկ լինելը:

Մասնագետները նաև կարծիք հայտնեցին, որ ՄԿ-ն ունեն աշխատավարձ ու նաև ներկայացնում են վարչական ծախսերի ցանկ, ինչը, ըստ նրանց, օրենքով սահմանված կարգով պետք է որոշակիորեն կրճատվի, սահմանափակվի, քանի որ հաշվարկների արդյունքում բավականին մեծ գումար է ստացվում, որը գնում է պարտատերերի ու պարտապանների միջոցներից:

Միևնույն ժամանակ, կային նաև այնպիսի կարծիքներ, համաձայն որոնց սնանկության կառավարիչների վարձատրության ներկայիս գործող մեխանիզմը մոտիվացնող է: Արտառոց բան չկա այդտեղ: Սա այն դեպքում, երբ կա գույք, կա նաև վարձատրություն: Երբ չկա գույք, գումարի մասին խոսք լինել չի կարող:

Հարկ է սակայն նկատել, որ որոշակի խումբ մասնագետներ էլ պնդում էին, որ ներկայիս վարձատրության համակարգը իրական կարիքներից է կազմված և սահմանված գումարն անգամ չի բավարարում նամակագրությունների, ծանուցումների, հարցումների իրականացման համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ, օրինակ, անհրաժեշտ է իրավաբանական խորհրդատվություն ստանալ կամ դիմել մասնագետին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Վարձատրության արդարացի չափի սահմանման հարցը կարելի է կարգավորել վարձատրության չափերն օրենքով նվազեցնելով և այլ մեխանիզմներ ներդնելով, ինչպես օրինակ. կոնկրետ գրավի առարկա հանդիսացող գույքերից ավելի քիչ տոկոսով եկամուտ ստանան, իսկ այն գույքերը, որոնք իրենք ուղղակի իրենց գործունեության արդյունքում կհայտնաբերեն, կգտնեն ու կկարողանան իրացնել, դրանց համար կարող է վարձատրության այլ չափ սահմանվել:
- Պետք է նվազեցնել վարձատրության տոկոսը ու վարչական ծախսերի համար սահմանել շեմ: Հասկանալի է, որ ՄԿ-ները ծախսեր են կատարում գործողություններ կատարելու համար, սակայն դրանք պետք է սահմանափակվեն, կարգավորվեն՝ բացառելու համար կամայականությունները:
- ՄԿ-ն պետք է վարձատրվի, առաջինը. եթե կարողացել է առողջացնել ընկերության բիզնեսը, երկրորդ. եթե գույք է հայտնաբերել, որի մասին պարտատերը տեղյակ չի եղել, երրորդ՝ կարողացել է ճիշտ կազմակերպել այդ գույքի օտարումը և վաճառքը, որպեսզի և՛ պարտապանը գոհ մնա, և՛ պարտատերը:


ՄԱՆԿԱԴԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ

Հարցվածների պատասխանները դատարանի կողմից արդյունավետ, արդար և պատշաճ ընթացակարգերի կիրառման վերաբերյալ միանշանակ չեն. 23% միանշանակ համաձայն են այն պնդման հետ, որ դատարանն ապահովել է արդյունավետ, արդար և պատշաճ ընթացակարգերի կիրառում, 23.5%՝ ավելի շուտ համաձայն են, 10.5%՝ ավելի շուտ համաձայն չեն, և 15%՝ միանշանակ համաձայն չեն, իսկ 28% դժվարացան պատասխան տալ այս հարցին:

Դատավորների մասնագիտական հմտություններից հարցված պարտապանների բավարարվածության աստիճանը էապես ավելի ցածր է: Գերակշռում է «դժվարանում եմ պատասխանել» պատասխանի տարբերակը՝ 52%: Հարցվածների 17.5% միանշանակ բավարարված են դատավորի մասնագիտական հմտություններից, 14.5%՝ ավելի շուտ բավարարված են, 5.5%՝ ավելի շուտ բավարարված չեն, 10.5%՝ միանշանակ բավարարված չեն (Տե՛ս Գծապատկեր 39.):

Գծապատկեր 39. Սնանկության գործընթացի կառավարման ընթացքում դատարանի արդյունավետության, արդարության և ընթացակարգերի պատշաճ կիրառման գնահատում



Դատավորների մասնագիտական հմտությունները բարձր գնահատած հարցվողները հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանները՝ «խոչընդոտներ, խախտումներ չեն եղել», «անշահախնդիր, օրենքով դատ է վարել» (50 պատասխան՝ 25%): Եվս 3 (1.5%) պարտապան նշել են, որ դատավորները նրանց առաջարկներին ընդառաջել են, պահանջները բավարարել են:

Հարցվածների այն մասը, որոնք բացասական են գնահատել դատավորների մասնագիտական հմտությունները հետևյալ կերպ բացատրեցին իրենց պատասխանը.

- Դատավորներն անարդար են աշխատում, անձնական շահ են հետապնդում, «ծախված են» - 18 պատասխան (9%)
- Դատավորները համագործակցում են բանկերի հետ, բանկերի շահերն են պաշտպանում - 8 պատասխան (4%)

- Ամեն դեպքի առանձնահատկությունները չեն դիտարկում - 5 պատասխան (2.5%)
- Դատավորին ներկայացնում են ոչ լիարժեք փաստաթղթերի փաթեթ – 3 պատասխան (1.5%)
- Հաշվի չի առնվում ներկայացված պահանջի օրինականությունը - 2 պատասխան (1%)
- Ողջամիտ ժամկետները չեն պահպանվել, ձգձգել են - 2 պատասխան (1%)
- Ազատ գույքը գրանցել է որպես գրավ, երաշխավորի գույքը դրել են աճուրդի, իսկ վարկառուին՝ ոչ - 2 պատասխան (1%)
- Երաշխավոր կազմակերպությանը պատասխանատվության չեն կանչել - 1 պատասխան (0.5%)
- Առաջին ատյանի որոշումը բողոքարկվել է վերաքննիչ - 1 պատասխան (0.5%)
- Սպառնալիքով է խոսել պարտապանի հետ՝ «...լսի քեզ ինչ եմ ասում, վատ կլինի քո համար» - 1 պատասխան (0.5%)


Ինչպես երևում է գերակայում են դատավորների կոռումպացվածության մասին վկայող պատասխանները:

Գծապատկեր 40. Դատարանի գործողությունների վերաբերյալ դատողությունների վերաբերյալ պարտապանների համաձայնությունը

Դատարանը անհիմն կերպով արգելել է Ձեզ կատարել որևէ գործողություն, որը, կարող էր դրական ազդեցություն ունենալ պահանջների բավարարման և Ձեր վճարունակության վերականգնման համար:

Դատարանը սնանկության վարույթի ընթացքում անհիմն մերժել է մորատորիումի ընթացքում Ձեր և պարտատիրոջ միատեսակ հանդիպական պարտավորությունների հաշվանցի կատարումը:

Դատարանը սնանկության վարույթի ընթացքում Ձեզ թույլ չի տվել կատարել որևէ գործողություն/ներ, որը խոչընդոտել է Ձեր ընթացիկ բնականոն գործունեությանը:




Բացի այդ, հարցվածների 12% նշել են որ դատարանը սնանկության վարույթի ընթացքում այս կամ այն չափով թույլ չի տվել կատարել որևէ գործողություն/ներ, որը խոչընդոտել է պարտապանի ընթացիկ բնականոն գործունեությանը:

Հարցվածների 2.5% նշել են, որ դատարանը սնանկության վարույթի ընթացքում անհիմն մերժել է մորատորիումի ընթացքում պարտապանի և պարտատիրոջ միատեսակ հանդիպական պարտավորությունների հաշվանցի կատարումը:

Հարցվածների 9.5% նշել են, որ դատարանն անհիմն կերպով արգելել է պարտապանին կատարել որևէ գործողություն, որը, կարող էր դրական ազդեցություն ունենալ պահանջների բավարարման և պարտապանի վճարունակության վերականգնման համար (Տե՛ս Գծապատկեր 40.):

Հարցված պարտապանների 12.5% նշեցին, որ դատարանը կասեցրել էր նրանց գույքը կառավարելու կամ տնօրինելու իրավունքները՝ մինչև լուծարման մասին որոշման ընդունման պահը (Տե՛ս **Գծապատկեր 41.**):

Գծապատկեր 41. Գույքը կառավարելու կամ տնօրինելու պարտապանի իրավունքները կասեցնելու դեպքեր՝ մինչև լուծարման մասին որոշման ընդունման պահը



ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Մասնկության վարույթում 90 տոկոսում 2-ն էլ դժգոհ են՝ և պարտատերը, և պարտապանը: Եվ այս պարագայում նրանց պետք է քաղության նոխսագինտրել՝ նախ դատարան, հետո մասնկության կառավարչին:

Մասնագիտական խմբերը, քննարկելով ձևավորված հանրային կարծիքը, սույն հարցի շուրջ բավականին միանշանակ դիրքորոշում հայտնեցին, որ իրականում նման վերաբերմունք ձևավորվել է քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակի պատճառով, երբ վերջիններս բավարար իրավական գիտելիքներ չունենալով և պատկերացում չունենալով մասնկության վարույթի վերաբերյալ ներկայացնում են միջնորդություններ, որոնց բավարարումն անհնար է դատարանի կողմից, ինչն էլ հանգեցնում է երկուստեք բացասական գնահատականի:

Որոշակի խմբերում վստահություն են հայտնել, որ մասնագիտացված դատարանի ստեղծումը մեծապես կբարելավի տվյալ ոլորտում տիրող իրավիճակը, քանի որ միասնական պրակտիկայի ձևավորումն ու առավել կանխատեսելի դատական պրակտիկայի ստեղծումը ոչ միայն կնպաստի դատարանի հանդեպ հանրային վստահության մակարդակի բարձրացմանը, այլ նաև կբարելավի դատարանի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը: Ավելին, մասնագիտացված դատարանում, ըստ մասնագետների, գործավարությունն առավել մատչելի է դարձել, ինչպես նաև դուրիին է դարձել այնտեղ աշխատելը:

Սակայն սակավաթիվ չէին նաև մտահոգություններն այն մասին, որ դատարանները, հղում կատարելով իրենց ծանրաբեռնվածության վրա, հաճախ տարբեր պատճառներով ձգձգում են գործը, խախտում են որոշակի ժամկետներ: Բայց ընդգծել են, որ այս խնդիրը ոչ բոլոր դատավորներին է վերաբերելի:

Դատավորների աշխատանքի հիմնական խնդիրը դանդաղությունն է, այսինքն՝ կան դատավորներ, որ շատ դանդաղ ու քմահաճորեն են աշխատում, բայց իհարկե կան դատավորներ, որոնց աշխատանքը հիացմունքի է արժանի:

Այնուամենայնիվ, մասնագիտական խմբերը մատնանշել էին այն խնդիրները, որոնք կարող են սնանկության դատարանի դատավորների նկատմամբ դժգոհություն առաջացնել: Առաջին տեղում դատական ակտերի առաքումների ուշացումն է: Ըստ վերջիններիս, լինում են դեպքեր, երբ հետին ամսաթվով (մի քանի ամիս, մեկ տարի ուշացումով) որոշումներ են առաքվում: Այսինքն, ժամկետներն օրենսդրորեն պահվում են, բայց փաստացի հասցեատերը ստանում է ավելի ուշ:

Որոշ դեպքերում ընդգծվել է, որ սնանկության դատարանի որոշ դատավորներ չունեն տվյալ ոլորտում աշխատանքային փորձ, ինչը դատական գործերով կողմերի համար դժվարություններ է առաջացնում ընթացակարգերի հետ կապված: Սակայն այս խնդիրը առավել ցայտուն և խնդրահարույց է դառնում ՀՀ Վերաքննիչ դատարանում, որտեղ մասնագիտացված դատավորներ չկան և գործը քննվում է քաղաքացիական գործեր լսող դատավորների կողմից, ինչի արդյունքում նրանց կողմից հաճախ սխալ են մեկնաբանվում կամ կիրառվում սնանկության մասին օրենքի դրույթները:

Առաջին ատյանում սնանկության գործը քննվում է, բողոքարկվում է Վերաքննիչ դատարանում: Շատ դեպքեր են լինում, երբ Վերաքննիչ դատարանի կողմից բեկանվում է դատական ակտը ու պատճառը լինում է այն, որ դատավորներն օրենքից ու սնանկության գործընթացներից անտեղյակ են, ինչը հանգեցնում է բավականին բացասական հետևանքների:

Մասնագիտական խմբերից մի քանիստում հետաքրքրական դիտարկումներ արեցին այն մասին, որ դատարաններն ավելի շատ թերություններ են ցուցաբերում մեծ և բարդ գործերի ժամանակ: Ավելին, այդ գործերի ժամանակ ՄԿ-ները խորհրդակցում են դատավորների հետ և իրենց գործողությունները կատարում են այդ տրամաբանությամբ՝ անտեսելով, որ իրենք անկախ ինստիտուտ են:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Դատական ակտերի առաքումների ուշացման և հետին թվով դրանք ուղարկելու պրակտիկայի հետ կապված խնդիրները կարգավորելու համար անհրաժեշտ է մշակել պատասխանատվության մեխանիզմներ:
- Անհրաժեշտ է, որ ՀՀ Վերաքննիչ դատարանում էլ սնանկության գործերը քննեն առանձնացված դատավորներ, ովքեր մասնագիտացված են սնանկության մեջ, այսինքն՝ սնանկության գործերը պետք է միշտ մակագրվեն հենց այդ դատավորներին:
- Սնանկության գործով դատավորների քանակը պետք է ավելացվի, աշխատակազմը պետք է լինի հմուտ, նրանք պետք է պարբերաբար անցնեն վերապատրաստումներ:
- Բյուրոկրատիայի նվազեցման նպատակով նպատակահարմար կլինի փաստաթղթաշրջանառությունն իրականացնել էլեկտրոնային տարբերակով:
- Անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակ սահմանել դատարանի կոնկրետ գործողությունների ժամկետները: Դատարանները կարող են օգտվել այդ անորոշությունից ու ոչ հստակությունից, և ցանկացած միջնորդություն, ցանկացած գործ կարող է քննվել շատ ավելի երկար, քան պահանջվում է:

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ


Փաստաբանի ծառայություններից օգտվել են հարցված պարտապանների միայն 29%: Վերջիններս հիմնականում դրական գնահատեցին փաստաբանների գործունեությունը: Այդուհանդերձ, նրանց 5.2% կարծում են, որ փաստաբանը բավարար մասնագիտական գիտելիքներ չի ունեցել սնանկության վարույթի շրջանակներում իրենց շահերը ներկայացնելու համար, ևս 3.4% նշեցին, որ ավելի շուտ չի ունեցել: 1.7% նշեցին, որ փաստաբանը պատշաճ ժամանակ և ուշադրություն չի հատկացրել գործին, ևս 5.2% նշեցին, որ ավելի շուտ չի հատկացրել:

Համեմատաբար բարձր է այն պարտապանների տոկոսը, որոնք համարում են, որ փաստաբանն իրենց վճարունակության վերականգնման հարցում բավարար չափով չի համագործակցել սնանկության կառավարչի հետ. 12.1% միանշանակ այդ կարծիքին են, իսկ 5.2%՝ ավելի շուտ:


25.9% նշեցին, որ փաստաբանը չի բողոքարկել սնանկության կառավարչի և/կամ դատարանի գործողությունների կամ անգործության հետ համաձայն չլինելու դեպքում, 8.6% ընտրեցին «*ավելի շուտ ոչ*» պատասխանի տարբերակը (Տե՛ս **Գծապատկեր 42.**):

Հարցվածների 29.3% նշեցին, որ փաստաբանը չի մասնակցել պարտատերերի ժողովին, 46.6% դեպքերում՝ փաստաբանը մասնակցել է, իսկ հարցվածների 24.1% դժվարացան պատասխանել (Տե՛ս **Գծապատկեր 43.**):

Գծապատկեր 42. Փաստաբանի գործողությունները սնանկության վարույթի ընթացքում



Գծապատկեր 43. Պարտատերերի ժողովներին փաստաթանի մասնակցությունը



ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Մասնագիտական խմբերում քննարկումների արդյունքում սնանկության գործերով փաստաթանների մասնակցության թեման հիմնականում դիտարկվեց երկու տեսանկյուններից. առաջինը. մասնագետները ափսոսանք հայտնեցին, որ սնանկության գործերով անձիք հազվադեպ են դիմում փաստաթաններին՝ իրավական օգնություն ստանալու նպատակով, այնինչ փաստաթանի մասնակցությունը վարույթին մեծապես ազդում է թե՛ վերջինիս որակի բարելավման, թե՛ կոնկրետ անձի շահերի պաշտպանության վրա և երկրորդ. մի խումբ մասնագետներ էլ պնդում էին, որ սնանկության գործերով փաստաթանները հիմնականում անելիք չեն ունենում և գործով ներգավվում են միայն մեկ նպատակով՝ ձգձգել վարույթը, հետաձգել գույքի օտարումը:

Միևնույն ժամանակ, ոչ պակաս կարևոր է այն դիտարկումը, որի համաձայն, անգամ բազմաթիվ փաստաթաններ, ովքեր ներգրավվում են սնանկության վարույթներով ունեն գիտելիքների պակաս: Եվ այդ գիտելիքների պակասի համալրումը պետք է սկսվի ԲՈԻՀ-ական մակարդակում ուսումնական առարկաների դասավանդմամբ, հետբուհական հաստատություններում վերապատրաստման ծրագրերի մշակմամբ:

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ


ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ

Հարցվածների 95.5% նշեցին, որ սնանկության վարույթի ընթացքում նրանց չի առաջարկվել որևէ հարց կարգավորել ոչ ֆորմալ տարբերակով, իսկ 1% հրաժարվեց պատասխանել հարցին: 1.5% նշեցին, որ նրանց առաջարկվել է կաշառք տալ պարտատիրոջ՝ բանկի կառավարիչին, 1.5%-ին՝ առաջարկվել է կաշառք տալ որևէ պետական մարմնի ներկայացուցչին, 0.5%-ին՝ սնանկության կառավարչին: Դատավորին կաշառք տալու առաջարկի մասին չի նշել և ոչ մի հարցվող (Տե՛ս **Գծապատկեր 44.**):


Դատարանի և սնանկության գործի հետ առնչություն ունեցող որևէ անձի կամ կազմակերպության միջև կապի մասին տեղյակ են եղել հարցվածների 5.5%, ևս 2.5% տեղյակ չեն եղել, բայց կասկածներ են ունեցել: Հարցվածների 92% նշեցին, որ տեղյակ չեն եղել որևէ կապի մասին: Նման կապի մասին իրենց տեղյակ լինելու կամ կասկածների մասին հայտնած 16 հարցվողները դատավորի և սնանկության գործի հետ առնչություն ունեցող որևէ անձի կամ կազմակերպության միջև կապի հետևյալ օրինակները բերեցին.

- 5 դեպքում նշվել են դատավորների կոնկրետ անուններ, որոնք «այդ գործին են» – 2.5%,
- Սնանկության գործի հետ կապված որոշակի շահեր ունեցող տարբեր պաշտոնյաների հետ դատարանի կապի մասին նշել են 5 հարցվող – 2.5%,
- Դատավորների և բանկերի/վարկային կազմակերպությունների/հարկայինի միջև գործարքի մասին նշել են 4 հարցվող – 2.5%,
- 4 դեպքում նկարագրվել է դատարան-պարտատեր-սնանկի կառավարիչ կապը – 2% (Տե՛ս **Գծապատկեր 45.**):

Գծապատկեր 44. Սնանկության վարույթի ընթացքում հարցը կարգավորելու համար պարտապանին առաջարկված ոչ ֆորմալ տարբերակները



Գծապատկեր 45. Դատարանի և սնանկության գործի հետ առնչություն ունեցող որևէ անձի կամ կազմակերպության միջև կապի մասին պարտապանի տեղեկացվածությունը




Կոռուպցիոն կապի վերաբերյալ հարցադրմանը հարցվածների 91.5% պատասխանել են, որ որևէ տեղեկություն, կասկած կամ տպավորություն որևէ կոռուպցիոն կապի առկայության վերաբերյալ չունեն, ևս 1% հրաժարվեցին պատասխանել: Մնացած 7.5% կոռուպցիոն կապի հետևյալ օրինակներն են բերել (Տե՛ս **Գծապատկեր 45.**).

- Դատարանի և պարտատիրոջ (հարկային, բանկ, փոխառության պայմանագրի կողմ՝ ֆիզ. անձ) միջև կոռուպցիոն կապի մասին նշել են 5 հարցվող (2.5%)
- «Ես ունեի տեղեկատվություն, որ տվյալ սնանկության կառավարիչը մշտապես «աշխատում է» տվյալ պարտատիրոջ հետ» – 3 դեպք (1.5%)
- «Ես ունեի տեղեկատվություն կառավարչի և որևէ պետական մարմնի ներկայացուցչի միջև ոչ ֆորմալ կապի մասին» – 3 դեպք (1.5%)
- «Ես ունեի տեղեկատվություն, որ տվյալ դատավորը հիմնականում «աշխատում է» տվյալ կառավարչի հետ» – 1 դեպք (0.5%)
- Եվս 2 հոգի տեղեկություն չունեին, բայց տպավորություն ունեին, որ սնանկի գործով կառավարչի գործողություններն ակնհայտ կողմնակալ դրսևորում ունեին (1%)
- Դատարան-պարտատեր -սնանկի կառավարիչ կոռուպցիոն կապը նկարագրել է մեկ հարցվող (0.5%)

Թեև տարբեր հարցվողներ տարբեր օղակների միջև կոռուպցիոն կապերի մասին տեղեկություն են ունեցել, սակայն կարելի է առանձնացնել սնանկության գործերով կոռուպցիոն ռիսկերի շղթայի հիմնական օղակները՝

1. Դատարան
2. Սնանկության գործերով կառավարիչ
3. Պարտատեր, այդ թվում՝ բանկ, վարկային կազմակերպություն, ՊԵԿ, ֆիզիկական անձ
4. Պաշտոնյա անձիք, ովքեր սնանկության տվյալ գործի հետ կապված որոշակի շահեր ունեն:

Գծապատկեր 46. Կոռուպցիոն կապի առկայության վերաբերյալ պարտապանների տեղեկությունները, կասկածները կամ տպավորությունները



ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Մասնագիտական խմբերին ներկայացված հանրային հարցման արդյունքները զարմանալի չէին, քանի որ, ինչպես վերջիններս ասացին, կոռուպցիան փակ շրջան է, որտեղ թե՛ կաշառք տվողը և թե՛ վերցնողը հավասարապես մեղավոր են, և այդ օղակում ոչ տվողն է խոստովանում այդ մասին և ոչ էլ՝ վերցնողը: Սակայն սա միակ պատճառը չէ, թե ինչու այդքան քիչ հարցվող է հայտնել կոռուպցիոն ռիսկերի մասին՝ նրանց մի սովոր գանգվածն էլ տեղեկացված չէ, թե ինչ է կոռուպցիան լայն իմաստով:

Այնուամենայնիվ, մասնագետները հերքելով հարցվածների կարծիքները, փորձում էին ենթադրություն անել, թե անձի մոտ նման տպավորություն ինչի արդյունքում կարող էր ձևավորվել, այլ դեպքերում էլ կիսելով վերոհիշյալ հանրային տեսակետը, տարաբնույթ օրինակներ էին բերում, թե գործնականում տվյալ ոլորտում կոռուպցիան ինչպես է դրսևորվում:

Առանձնակի ուշադրության կենտրոնում պահվեց հարցվածների այն դիտարկումը, որ առկա է կոռուպցիոն եռանկյունի՝ բաղկացած դատավորից, սնանկության կառավարից և բանկից: Այս կապակցությամբ ենթադրություններ հնչեցին, թե քանի որ բանկը առաջարկում է ՄԿ թեկնածու (ինչը սակայն օրենքով նախատեսված ընթացակարգ է) և դատարանն այն ընդունում է, անձի մոտ նման տպավորություն է առաջանում:

Որպես կոռուպցիոն ռիսկ նշվել է այն, որ ՄԿ-ն իր վարույթով գույք է ձեռք բերում, ինչը, սակայն, արգելված է: Բոլոր դեպքերում, մասնագետները նշում էին, որ կոռուպցիոն ռիսկեր ցանկացած վարչարարության մեջ կարող են լինել և կարևորն այն է, թե ինչպես են վերահսկվում այդ կոռուպցիոն ռիսկերը և նվազագույնի հասցվում:

Հետաքրքրական է, որ մասնագետների մի որոշակի խումբ առանց որևէ մանրամասնության կամ դրսևորման օրինակների բավականին միանշանակ պնդում էր, որ կոռուպցիոն կապն առկա է դատարանի և սնանկության կառավարիչների միջև:

Բանկերի ներկայացուցիչները, մերժելով այն հանգամանքը, որ բանկը կարող է կոռուպցիոն եռանկյունում մաս կազմել, պնդում էին, որ դա սնանկության գործընթացում գտնվող կամ արդեն իսկ սնանկացած պարտապանների երևակայության արդյունքն է, քանի որ բանկի նպատակն է ունենալ լավ հաճախորդ, ով եկամուտ կբերի, այլ ոչ թե գրավի իրացումը: Բանկերը երբեմն գույքն ստիպված ձեռք են բերում, քանի որ գինը շատ է նվազում: Եվ այստեղ առկա է նորմատիվային սահամանափակում: Բանկը գույքը ձեռք բերելու պարագայում 6 ամիս անց պետք է դուրս գրի իր կապիտալից, այսինքն՝ բանկը որևէ շահագրգռվածություն չունի այդ դեպքում: Ավելին, բանկի գնելու դեպքում առաջին գնորդը նախկին սեփականատերն է, և օրենսդրությունը որոշակի հնարավորություն է տալիս այն առումով, որ եթե գնումը կատարվում է 6 ամսվա ընթացքում, ապա հնարավոր է գույքը ձեռք բերել այն գնով, որով բանկը գնել է: Ըստ բանկերի ներկայացուցիչների, լինում են նաև դեպքեր, երբ գույքը ձեռք բերված գնից ավելի թանկ է վաճառվում: Ցածր արժեքով գնելն օբյեկտիվորեն է ստացվում, բայց ավելի ձեռնտու է, որ բարձր արժեքով աճուրդում վաճառվի, որպեսզի վարկը մարվի: Բանկը ստիպված գնում է ու ստիպված այլ գնորդ է գտնում:

Որպես կոռուպցիայի դրսևորման մեկ այլ մտահոգիչ տարբերակ մասնագետները հիշատակում էին, որ լինում են դեպքեր, երբ աճուրդի դրված գույքը ձեռք էր բերվում սնանկության կառավարչի մերձավորի կողմից կամ վերջինիս կողմից ուղղորդված անձի կողմից:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՍԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


- Խստացնել վերադասության կարգով վերահսկողությունը:
- Անհրաժեշտ է հստակ մոդել մշակել ու օրենսդրության մեջ համապատասխան կարգավորումներ մտցնել՝ բացառելով կոռուպցիոն մեխանիզմները, շահերի բախման մեխանիզմները, ինչը պահանջում է նաև ՄԿ-ների ու դատավորների մասնագիտական որակների ու հմտությունների զարգացում՝ համապատասխան կրթական ծրագրերի միջոցով:
- Իրավիճակը շտկելու համար պետք է վերլուծել ու հասկանալ, թե սնանկությանը վերաբերող ինչ կոնցեպտուալ հարցեր պետք է քննարկել, մշակել սնանկության գործընթացի հայաստանյան մոդելը՝ հիմք ընդունելով եվրոպական, ամերիկյան, նախկին խորհրդային երկրների փորձը:
- Հակակոռուպցիոն ռազմավարության մեջ նախատեսել արդյունավետ մեխանիզմներ, որոնք կիրառելի կլինեն տվյալ ոլորտի համար՝ այն առավել թափանցիկ դարձնելու նպատակով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ

Սնանկության վարույթի ընթացքում պարտապանների 10% ցանկացել են ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր (այսուհետ՝ ՖԱԾ) և ներկայացրել են, 18% ցանկացել են, սակայն չեն ներկայացրել, 72%՝ չեն ցանկացել ներկայացնել ՖԱԾ⁶: Հատկանշական է, որ այս հարցում պատկերն էական տարբերվում է՝ կախված հարցվողի կարգավիճակից. ֆիզիկական անձանց ավելի բարձր տոկոսը չեն ցանկացել ներկայացնել ՖԱԾ՝ 77.2%, համեմատած իրավաբանական անձանց 63.6%: Միևնույն ժամանակ, իրավաբանական անձանց էապես ավելի բարձր տոկոսն է ներկայացրել ՖԱԾ՝ 16.8%, համեմատած ֆիզիկական անձանց 5.7% (Տե՛ս **Գծապատկեր 47.**):

Գծապատկեր 47. Սնանկության վարույթի ՖԱԾ ներկայացնել ցանկացող ֆիզիկական և իրավաբանական անձիք



Հարցվածների այն մասը, ովքեր չեն ցանկացել ՖԱԾ ներկայացնել, տարբեր կերպ են բացատրել իրենց որոշումը: Հիմնական մասը տեղյակ չի եղել նման իրավունքի մասին՝ 43.8%, 27.8% իրատեսական չեն համարել ֆինանսական առողջացումը, 18.2% ձեռնտու չի համարել ֆինանսական առողջացումը, 9% սկզբունքորեն չեն ներկայացրել ՖԱԾ, 0.7% նշել են, որ դատավորը չի կայացնում որոշում, պարտատերը պետք է համաձայնություն տա, ևս 0.7% նշեցին, որ դա անօրինական է բռնազանձման հայտի դեպքում: Պատասխանները դարձյալ տարբեր են՝ կախված հարցվողի կարգավիճակից. ֆիզիկական անձանց համախմբության մեջ ավելի շատ են ՖԱԾ ներկայացնելու իրավունքի մասին ոչ տեղյակ հարցվողները՝ 52.6%, համեմատած իրավաբանական անձանց 26.5%: Իսկ իրավաբանական անձանց

⁶ Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.037:

համախմբության մեջ էապես բարձր է այն հարցվածների տոկոսը, որը իրատեսական չի համարել ֆինանսական առողջացումը՝ 40.8%, համեմատած ֆիզիկական անձանց 21.1%:

ՖԱԾ չներկայացնելու պատճառները հարցված պարտապանները հիմնականում բացատրել են ժամկետների սղությամբ. 11 հոգին (5.5%) չէին կարող տեղավորվել ՖԱԾ առավելագույն տևողության ժամկետի մեջ, 8 հոգին (4%) չեն հասցրել, քանի որ օրենքը սեղմ վերջնաժամկետ է սահմանում ՖԱԾ ներկայացման համար: 6 հոգին (3%) բացատրել են մասնագիտական գիտելիքների պակասով և աջակցության բացակայությամբ: Եվս 7 հոգին (3.5%) կապել են ՖԱԾ չներկայացնելու փաստը սնանկության գործով կառավարիչների աշխատանքի հետ, որոնցից 4 (2%) նշել են, որ սնանկության կառավարչի կողմից պատշաճ կերպով չեն իրականացվել նրանց ակտիվների գույքագրման և ֆինանսական վիճակի վերլուծության աշխատանքները, իսկ 3 հոգին (1.5%) նշել են, որ սնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված վերջնաժամկետի դրությամբ ավարտված չեն եղել համապատասխան աշխատանքները: 3 հոգի (1.5%) նշել են, որ պարտատերն է դեմ եղել, 2 հոգի (1%) նշել են, որ պարտատերն ու սնանկության գործով կառավարիչն են դեմ եղել: Եվս 2 հոգի (1%) հարցման պահին նշեցին, որ պատրաստվում են մի քանի օրից ներկայացնել ՖԱԾ (Տե՛ս Աղյուսակ 9.):

Աղյուսակ 9. ՖԱԾ չներկայացնելու պատճառները


ՖԱԾ չներկայացնելու պատճառը	Քանակ	Տոկոս (ՖԱԾ չներկայացածների թվից)
Քանի որ ֆինանսական առողջացման ծրագիրն ունի առավելագույն տևողության ժամկետ, որի մեջ ես չեի կարող տեղավորվել	11	30.6%
Չեմ հասցրել, քանի որ օրենքը սեղմ վերջնաժամկետ է սահմանում ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման համար	8	22.2%
Բավարար մասնագիտական գիտելիքներ չեմ ունեցել ֆինանսական առողջացման ծրագրի կազմելու համար և որևէ մեկից որևէ աջակցություն չեմ ստացել այդ հարցում	6	16.7%
Սնանկության կառավարչի կողմից պատշաճ կերպով չեն իրականացվել իմ ակտիվների գույքագրման և իմ ֆինանսական վիճակի վերլուծության աշխատանքները	4	11.1%
Սնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված վերջնաժամկետի դրությամբ ավարտված չեն եղել իմ ակտիվների գույքագրման և իմ ֆինանսական վիճակի վերլուծության աշխատանքները	3	8.3%
Պարտատերը՝ բանկը, դեմ է եղել	3	8.3%
Պարտատերն ու ՄԿ-ն թույլ չեն տվել, որ ներկայացնեմ	2	5.6%
Մի քանի օրից եմ պատրաստվում ներկայացնել	2	5.6%

Սնանկության գործընթացի տարբեր դերակատարների ազդեցությունը ՖԱԾ ներկայացման ցանկության կամ դրա ներկայացման գործընթացի վրա գնահատելիս՝ հարցված պարտապաններից և ոչ ոք չի նշել, որ դերակատարներից որևէ մեկը համոզել է նրան չներկայացնել առողջացման ծրագիր: Ընդհակառակը՝ հարցվածների մեծամասնությունը նշել են, որ սնանկության կառավարիչները, փաստաբանները և անգամ պարտապանները հակված են եղել պարտապանի ֆինանսական առողջացմանը: Այլ է իրավիճակը ապահովված պարտատերերի պարագայում. 6 պարտապան նշել են, որ նրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն խոչընդոտել են ՖԱԾ ներկայացմանը, ևս 2 հոգի նշել են, որ ապահովված պարտատերերն այնպիսի վարքագիծ են դրսևորել, որի արդյունքում անհիմաստ էր առողջացման ուղղությամբ աշխատելը:

Դատարանների դերակատարումը միանշանակ չի գնահատվել. թեև 8 հոգի նշել են, որ դատարանները հակված են եղել ֆինանսական առողջացմանը, այնուամենայնիվ, 4 հոգի նշել է, որ դատարանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խոչընդոտել է ՖԱԾ ներկայացմանը, իսկ 2 հոգի նշել են, որ դատարանը դրսևորել է այնպիսի վարքագիծ, որի արդյունքում անհիմաստ էր առողջացման ուղղությամբ աշխատելը: Փաստաբանների ՖԱԾ ներկայացման վրա բացասական ազդեցության վերաբերյալ պատասխաններ չեն հնչել:

Արդյունքում՝ ներկայացված 20 առողջացման ծրագրերից հաստատվել են միայն 7-ը՝ 35% (Տե՛ս **Գծապատկեր 48.**):

Գծապատկեր 48. Ներկայացված ՖԱԾ հաստատումները



13 (65%) ՖԱԾ-երի չհաստատման պատճառը հիմնականում դատարանի կողմից այն ոչ իրատեսական համարելն է՝ 7 դեպք: 3 դեպքում ապահովված պարտապանը համաձայնություն չի տվել, ևս մեկ դեպքում՝ և՛ դատարանը, և՛ սնանկության կառավարիչը, և՛ պարտապանը ՖԱԾ-ը իրատեսական չեն համարել: Եվս մեկ դեպքում առաջին ատյանի դատարանը թողել է առանց քննության, վերադասներն էլ պաշտպանել են այն (Տե՛ս **Աղյուսակ 10.**):

Աղյուսակ 10. Ներկայացված ՖԱԾ չհաստատվելու պատճառները

	Ընդամենը	
	Քանակ	Տոկոս
Այն իրատեսական չէր համարվել դատարանի կողմից	7	53.8%

Դրան համաձայնություն չէր տվել այն ապահովված պարտատերը, որի պահանջի դիմաց գրավադրված գույքի օգտագործումն անհրաժեշտ էր առողջացման ծրագրի իրականացման համար	3	23.1%
ՄԿ-ն, դատարանն ու պարտատերը այն իրատեսական չեն համարել	1	7.7%
Առաջին ատյանի դատարանը թողել է առանց քննության, վերադասներն էլ պաշտպանել են այն	1	7.7%
Դժ. պատ.	1	7.7%
Ընդամենը	13	100.0%

Ներկայացրած 7 ՖԱԾ-երից մեկը վաղաժամկետ դադարեցվել է, քանի որ պարտապանը չի կարողացել վճարում կատարել, իսկ պարտապանը չի բանակցել շահագրգիռ անձի հետ, որպեսզի նրան տրվի «երկրորդ հնարավորություն», քանի որ գումար չի ունեցել:

ՖԱԾ ներկայացման և բնականոն շարունակության համար նոր ներդրումների ներգրավման անհրաժեշտության դեպքում հիմնականում ջանք են գործադրում պարտապանները, չնայած պարտապանների վարքը շատ տարբեր է. յոթից 3 հոգին գտել են ներդրող, 1 արել է իրենից կախված ամեն ինչ, սակայն չի կարողացել գտնել ներդրող, 2՝ ոչինչ չեն արել, իսկ մեկը անգամ խոչընդոտել է գործընթացին:

Փաստաբաններից մեկը նույնպես գտել է ներդրող, բայց մնացած 3՝ ոչինչ չեն արել այդ ուղղությամբ:

Յոթ սնանկության կառավարիչներից 5-ը ոչինչ չեն արել, ևս մեկը արել է որոշ գործողություններ, որոնք, սակայն, բավարար չեն եղել ներդրող գտնելու համար:

Պարտապանները, ինչպես նաև ապահովված պարտապանները հիմնականում ոչինչ չեն արել ներդրող գտնելու ուղղությամբ:

Շահագրգրված ներդրող գտնվել է յոթ ներկայացված ՖԱԾ-երից միայն 5 դեպքում՝ 71.4%, և այդ 5 դեպքում էլ կատարել են ներդրումներ:

ԸՍՏ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

«...թույլ տնտեսության արդյունքում առողջացումների տոկոսը շատ ցածր է լինում, անկախ նրանից, թե ինչ մեծության կազմակերպության մասին է խոսքը գնում: Հայաստանում տնտեսությունը թույլ է, շուկա չկա, որպեսզի անձին նորից «գցեն» այդ շուկայի մեջ: Մյուս կողմից՝ առողջանալու փորձեր էլ չեն արվում»:

Խոսելով ֆինանսական առողջացման ծրագրերի մասին, մասնագիտական խմբերը բավականին միակարծիք էին և ամենևին էլ զարմացած չէին ստացված տվյալներից, այլ մտահոգված էին ստեղծված իրավիճակով, քանի որ խոսելով սնանկության գործընթացի մասին, նրանք նախևառաջ քննարկում էին ֆինանսական առողջացման ծրագրերի ներկայացման սակավության և դրանց արդյունավետ իրականացման գրեթե անհնարինության հարցը:

Մասնագիտական մի խմբում տեսակետ հնչեց, որ իրականում ՄԿ-ի գործունեությունը չպետք է միտված լինի ֆիզիկական անձին կամ ընկերությանը լուծարման տանելուն, այլ նրա ֆունկցիան պետք է ուղղված լինի ակտիվների հավաքագրմանը ու դրանց ճիշտ կառավարման լուծումներ առաջարկելուն: Այնինչ, ՄԿ-ն վաճառող չպետք է լինի, այլ վերականգնող: Սակայն գործնականում ՄԿ-ների համար ավելի հեշտ է գույքը վաճառել ու դրա դիմաց ստանալ իրենց վարձավճարը, քանի կազմել ՖԱԾ:

Ըստ մասնագետների, ՖԱԾ-երի սակավաթվության համար մի շարք պատճառներ գոյություն ունեն՝ սկսած երկրի ընդհանուր տնտեսական վիճակից, տնտեսական ցածր ակտիվությունից, ներդրումային գրավչության մակարդակի ոչ բարձր լինելուց, ներդրումների դինամիկայից, օրենսդրական թերի կարգավորումներից, մասնավորապես՝ ժամկետների մասով մինչև ՄԿ-ների մասնագիտական հմտությունների պակասն ու հոգեբանությունը, քանի որ, ըստ որոշ մասնագետների, վերջիններիս մեծամասնությունը գույք վաճառելու խնդիր է իր առջև դնում, այլ ոչ թե սնանկության գործընթացում գտնվողին առողջացնելու, տնտեսությունը կազմակերպելու: Նշվել է նաև, որ հիմնական պատճառներից մեկը գրավով ապահովված պահանջատերն է, քանի որ օրենքը հնարավորություն չի տալիս գրավով ապահովված պահանջատիրոջ գույքը առողջացման ընթացքում օգտագործելու, դա նվազեցնում է ՖԱԾ տոկոսը:

Հետաքրքիր է, որ բավականին տարածված էր այն տեսակետը, որ առողջացման ծրագրերի հաստատումը ցանկալի չէ պարտատիրոջ համար, քանի որ վերջինս իր պարտքն այդ պահին է ցանկանում հետ ստանալ, այլ ոչ թե սպասել տարիներ շարունակ, ուստի՝ նա անում է ամեն հնարավորն ու անհնարինը՝ ՖԱԾ չհաստատման համար, այնինչ պետությունն այս բնագավառում պետք է միջամտի՝ առաջին հերթին բիզնես միջավայրի ապահովման նպատակով:

Մենք առողջացման ծրագրերի հետ կապված խնդիր ունենք: Մարդիկ գալիս ու ասում են՝ մենք ուզում ենք առողջանալ, բանկն ասում է՝ ինձ ձեր առողջացումը չի հետաքրքրում, ես այդ գույքը տանում եմ: Պետք է առաջնային աշխատանքը պետությունը կատարի, ...:

Կարևոր է դիտարկել, որ ըստ մասնագետների, որպես կանոն սնանկության փուլում գտնվող կազմակերպություններն արդեն իսկ ֆինանսապես, տեխնիկապես և ռեսուրսների մասով լիովին սպառված են լինում՝ զրկված լինելով հետագայում վերականգնվելու կամ վերադասավորվելու որևէ հնարավորությունից:

Ցածր տոկոսի պատճառը հիմնականում պայմանավորված է նրանով, որ պարտապանները ֆինանսապես կործանված են լինում և տեսանելի չեն առողջացման որոշ միտումներ: Այնպես չէ, որ պարտապանը շատ գույք ունի և ֆինանսները չի կարողացել ճիշտ կառավարել, և նրա ակտիվներն այսուհետ ճիշտ կառավարելու դեպքում կարելի է արդյունքների հասնել: Այսինքն, պարտապանի միջոցներն ու հնարավորությունները լիովին սպառված են լինում:

Ուշագրավ է, որ ըստ որոշ կարծիքների, առողջացում չի լինում, որովհետև առողջացող ընկերության կողմից ներկայացվող ծրագիրը չափազանց ցածր որակ է ունենում, երբեմն էլ ֆանտաստիկայի ժանրից բաներ են ներառում, քանի որ ծրագիրը չունի լուրջ վերլուծական հիմք: Երբեմն ներկայացնում են լավ ցանկությունների վերաբերյալ մի գրություն սնանկ ճանաչված ընկերությունների վերականգնման համար, այնինչ անհրաժեշտ է ներկայացնել նոր ներդրումների մասին տեղեկատվություն: Եթե չի լինում այդ ներդրումը, չի լինում 3-րդ անձը, ով պատրաստ է գումար ներդնել այդ բիզնեսի առողջացման համար, ապա շատ փոքր է հավանականությունը, որ այդ ընկերությունը կառողջանա:

Բնականաբար, այս հարցի քննարկման կարևոր հիմնասյուներից մեկն էլ այն հանգամանքն էր, որ իրատեսական և արդյունավետ ՖԱԾ կազմելու համար անհրաժեշտ են լուրջ վերլուծություններ և նեղ մասնագիտական գիտելիքներ, որոնց սնանկության կառավարիչների բացարձակ մեծամասնությունը չի տիրապետում, իսկ այդպիսի ծրագրեր կազմելու գործում առնվազն անհրաժեշտ է ոլորտի գիտականների ակտիվ ներգրավվածությունը, այլապես ոչ իրատեսական և ձևական կազմված առողջացման ծրագրերի ներկայացումը հետապնդում է միայն մեկ նպատակ, այն է՝ ժամանակի ձգձգում:

Միևնույն ժամանակ, քննարկման արդյունքում վեր հանվեց նաև օրենսդրական հակասության հարցը՝ «Սնանկության մասին» օրենքի 60-րդ և 62-րդ հոդվածների միջև, ինչի արդյունքում ֆինանսական առողջացման ծրագրի կազմումն ու իրականացումն անիրատեսական է դառնում:

... 62-րդ հոդվածով ասում է, որ չապահովված պարտատիրոջ համար ֆինանսական առողջացման ծրագիրը դնում են ժողովում քննարկման: Անգամ իդեալական ֆինանսական առողջացման ծրագրին դեմ է քվեարկվում: Սնանկության գործը քննող դատարանը պարտավոր է մերժել ֆինանսական առողջացման ծրագիրը: ... ապահովված պարտատերեր ըստ էության քվեարկելու իրավունք չունի, բայց գրավի առարկա գույքը պետք է օգտագործվի ֆինանսական առողջացման ծրագրի համար, որի համար նրան պիտի հարցնեն: Այսինքն, մի կողմից ասում է քվեարկելու իրավունք չունի, բայց այս գույքը պարտապանը պիտի վերցնի առողջանալու համար, կամ մի մասը օտարի ըստ 61 հոդվածի, մի մասը պահի և այլն, պիտի թույլտվություն վերցնեն: Հակասություն է, արտուրդ:

Մեկ այլ հակասություն էլ կապված է ժամկետների հետ, մասնավորապես՝ օրենքում ասվում է, որ առողջացման ծրագիրը պետք է ներկայացնել մինչև պարտատերերի առաջին ժողովի կայացումը: Եթե պարտատերերի վերջնական ցուցակը հաստատած չեն ունենում, օրենքով պարտատերերի առաջին ժողովը նշանակվում է դատարանի որոշմամբ: Այսինքն, այդ կետը արդեն շրջանցվում է: Այս պարագայում, բնականաբար, այդ ժամկետը պետք է հետաձգել, քանի որ առաջին ժողովը տեղի չի ունեցել: Գործնականում եղել է դեպք, երբ եղել է հաստատված ֆինանսական առողջացման ծրագիր, որը վերաքննիչ դատարանը բեկանել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներկայացվեր մինչև դատարանի կողմից հաստատված պարտատերերի առաջին ժողովի կայացումը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


- Անհրաժեշտ է ներ դնել մեխանիզմներ, որպեսզի այն դեպքերում, երբ կա գրավ կամ ապահովված իրավունք, ու եթե բանկը ցանկանում է արտադատական կարգով բռնագնձել, ապա մյուս պարտատերը, պարտապանը կամ ՄԿ-ն կարող են արգելք դնել որոշակի գույքի վրա՝ հիմնավորելով, որ ՖԱԾ-ում այդ գույքը անհրաժեշտ է լինելու, սակայն միաժամանակ այլ պաշտպանության միջոցներ ձեռնարկելով: Օրինակ, գույքի դիմաց ամսական որոշակի գումար վճարելով, ինչի արդյունքում գույքի շահագործումը կշարունակվի՝ հնարավորություն ստեղծելով տվյալ կազմակերպության առողջացման համար:
- Տվյալ ոլորտի բարելավման համար ՄԿ-ների մասնագիտական հմտությունների զարգացման անհրաժեշտություն կա, որովհետև նրանք պետք է ունենան տնտեսագիտական, իրավաբանական, ֆինանսական գիտելիքներ, կառավարչական հմտություններ:
- Օրենսդրական մակարդակում սահմանել ակտիվների նվազագույն շեմ, որից ավելին չի կարող սպառվել կամ օգտագործվել, երբ առկա է իրավաբանական կամ ֆիզիկական անձի սնանկության վտանգը:
- Պետք է սնանկության վարույթում վարկ վերցնելու հնարավորություն ունենալ պարտապանները:
- ՄԿ-ների ինստիտուտը պետք է ուժեղացնել բիզնես-գիտելիքների առումով:
- Բանկերի քաղաքականությունը պետք է փոխվի՝ ոչ թե պետք է ելնեն այն կանխավարկածից, որ անձը սնանկության փուլի է հասել, ապա նա ավարտված է, այլ պետք է նրան հնարավորություն ընձեռնվի, և պետությունը պետք է կրի այդ բեռն իր վրա:
- Պետք է ներդնել ռիսկերի ապահովագրման ինստիտուտը: Եթե բանկն իր ռիսկը ապահովագրի ապահովագրական ընկերությունում, ի վերջո գալու է մի տեղ, որ ոչ մեկ առանց ռիսկի չի դիմի այդ քայլին, այսինքն՝ բանկերը տրամադրվում են վարկ, չեն մտածելու, որ այդ վարկի վերադարձը երաշխավորված չէ: Սա նաև կնպաստի առողջացումների քանակի ավելացմանը:

ԱՃՈՒՐԴ. ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԸՍՏ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ

Աճուրդ իրականացվել է ուսումնասիրված 200 գործերից 75 դեպքում՝ 37.5% (Տե՛ս Գծապատկեր 49.):


Գծապատկեր 49. Աճուրդների իրականացման հաճախականությունը



Մեղիանային բաշխման համաձայն՝ հարցվածները համարում են, որ սնանկության կառավարիչներն արդար ձևով են կատարել աճուրդները: Հարցված պարտապանների 13.3% համարում են, որ աճուրդն արդար չէր, ևս 5.3%՝ որ ավելի շուտ արդար չէր:

Հարցված պարտապանների մեծամասնությունը նշեցին, որ նրանց համար հասկանալի էր աճուրդի վարման ընթացքում սնանկության կառավարչի ձեռնարկած մեթոդաբանությունը: Այդուհանդերձ, 16% համար այն միանշանակ անհասկանալի էր, 6.7%՝ ավելի շուտ անհասկանալի (Տե՛ս Գծապատկեր 50.):

Գծապատկեր 50. Աճուրդի ժամանակ սնանկության կառավարչի գործողությունների գնահատում



Հարցվածների հիմնական զանգվածը համարում են, որ աճուրդից սնանկության կառավարիչները չեն շահել: Հարցվածների միայն 10.7% են նշել, որ սնանկության կառավարիչները միանշանակ շահել են աճուրդային գործընթացներից, իսկ 1.3%՝ որ ավելի շուտ շահել են:

Բոլոր այն հարցվածները, որոնք համարում են, որ սնանկության կառավարիչը շահել է աճուրդի գործընթացից, նշեցին, որ շահել է գումարի տեսքով: «Գույքի տեսքով» և ««Լավություն» արեց ինչ-որ մեկին» պատասխանի տարբերակները հարցված պարտապաններից չնշեց և ոչ մեկը:

ԸՍՏ ՈՒՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ

Հարցման արդյունքները շատ բնականոն ընդունվեցին հարցվածների կողմից, վերահաստատելով, որ աճուրդների կազմակերպման և իրականացման գործընթացում առկա են ընդհանուր առմամբ մի քանի հետևյալ խնդիրները. գույքի գնահատման նպատակով գնահատողի աշխատանքին խոչընդոտելու հարցը, միակ կացարանի աճուրդի հանման հարցը, աճուրդների կազմակերպման մասին տեղեկատվության հանրայնորեն հասանելի լինելու հարցը, աճուրդի դրված գույքի չվճարվելու հետևանքով վերջինիս գնի իջեցման հարցը:

Գույքի գնահատման նպատակով գնահատողի աշխատանքին խոչընդոտելը դրսևորվում է նրանով, որ սեփականատերը հնարավորություն չի ընձեռում, օրինակ, մուտք գործել բնակարան՝ այն գնահատելու նպատակով: Նման իրավիճակներում միջամտում է դատական ակտերի հարկադիր կատարման մարմինը, սակայն այս դեպքերում բարդանում է ընթացակարգը:

Միակ կացարանի հարցը ամենից հաճախ քննարկվող հարցն էր, որի վերաբերյալ մասնագետները համակարծիք չէին առ այն, թե արդյոք օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում օտարելու միակ կացարանը և ինչ գնահատման չափանիշներ են կիրառվում այս հարցի վերաբերելի նրբությունների դիտարկման ժամանակ:

Բուռն քննարկման հարց դարձավ այն տեսակետը, թե արդյոք սնանկության կառավարիչները բավարար թափանցիկ ու հանրության համար տեսանելի մեխանիզմով են կազմակերպում աճուրդները, թե այնուամենայնիվ առկա են մեխանիզմներ, որոնց շնորհիվ հնարավոր է կանխել մեծաթիվ մարդկանց հոսքը դեպի աճուրդի անցկացման վայր:

Մեկ այլ հիմնաքարային թեմաներից է աճուրդների ընթացքում գնորդի ի հայտ չգալու պարագայում գույքի արժեքի նվազեցումը: Մտահոգիչ էր մասնագետների համար, որ բացակայում է նվազագույն շեմ, որից ցածր չի կարող զին սահմանվել աճուրդի ժամանակ գույքի օտարման համար:

Մեկ այլ բուռն քննարկման թեմա էր այն հարցը, թե արդյոք անհրաժեշտություն կա աճուրդները էլեկտրոնային կարգով՝ կայքէջի միջոցով կազմակերպելու մեջ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


- Սահմանել նվազագույն շեմ, որից պակաս չի կարող նվազել աճուրդի դրված գույքի արժեքը:
- Ստեղծել աճուրդների կազմակերպման համար էլեկտրոնային հարթակ:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հետազոտության ընթացքում հարցվել են 47 կին (23.5%) և 153 տղամարդ (76.5%): Ընդ որում կանանց տոկոսն ավելի բարձր է ֆիզիկական անձանց համախմբության մեջ՝ 28.5%, համեմատած իրավաբանական անձանց՝ 15.6% հետ:

Ուսումնասիրված կազմակերպությունների աշխատակիցների 51.7% իգական սեռի ներկայացուցիչներ էին: Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ ուսումնասիրված կազմակերպությունների 70.1% ղեկավար մարմնում ոչ մի կին չկար, 20.8%՝ մեկ կին կար, 6.5%՝ երկու կին, իսկ 1.3%՝ երեք կին: Իսկ բոլոր ղեկավար պաշտոններում տղամարդկանց ներկայացվածությունը շատ ավելի բարձր է: Կանանց և տղամարդկանց քանակը հավասար է միայն գլխավոր հաշվապահի պաշտոնում (Տե՛ս **Գծապատկեր 51.**):

Գծապատկեր 51. Ուսումնասիրված կազմակերպությունների տարբեր պաշտոններում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը:




Տարբեր սեռերի հարցվողների պատասխանների համեմատությունը թույլ է տալիս դիտարկել սնանկության գործընթացում կանանց և տղամարդկանց վարքի որոշակի տարբերությունները: Մասնավորապես՝ սնանկության վարույթի ընթացքում կանայք ավելի հաճախ են օգտվել փաստաբանի ծառայություններից՝ 36.2%, քան տղամարդիկ՝ 26.8% (Տե՛ս **Գծապատկեր 52.**): Կանանց ավելի փոքր տոկոսը տեղյակ չեն եղել կետանցած պարտավորությունների առկայության մասին՝ 14.9%, համեմատած տղամարդկանց 30.1% հետ (Տե՛ս **Գծապատկեր 53.**)⁷: Համապատասխանաբար ավելի բարձր էր այն կանանց


⁷ Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.821:

տոկոսը, ում համար սնանկությունը կանխատեսելի էր՝ 40.4%, համեմատած տղամարդկանց 25.5% (Տե՛ս **Գծապատկեր 54.**):


Գծապատկեր 52. Փաստաբանների ծառայություններից կանանց և տղամարդկանց օգտվելու հաճախականությունը



Գծապատկեր 53. Կենտանցված պարտավորությունների առկայության մասին կանանց և տղամարդկանց տեղեկացվածությունը



Գծապատկեր 54. Սնանկության կանխատեսելիությունը կանանց և տղամարդկանց համար




Կանանց համեմատաբար ավելի բարձր տոկոսն են ճանաչվել սնանկ ոչ թե կոնկրետ պարտավորության հիման վրա, այլ՝ սեփական դիմումի համաձայն՝ 23.4%, համեմատած նույն հիմքով սնանկ ճանաչված տղամարդկանց 3.9% հետ⁸:

Սնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում դատական կամ արտադատական կարգով փորձել են համաձայնության գալ պարտատիրոջ հետ (հաշտության համաձայնություն, պարտատիրոջ կողմից սնանկ ճանաչելու մասին դիմումը ետ վերցնել և այլն) կանանց 25.5%, համեմատած տղամարդկանց 37.9% հետ (Տե՛ս **Գծապատկեր 55.**):

⁸ Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.005:


Գծապատկեր 55. Մնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում դատական կամ արտադատական կարգով պարտատիրոջ հետ համաձայնության գալու փորձերը (պատասխանների բաշխումն ըստ հարցվածների սեռի)



Տղամարդկանց 4.7% նշել են, որ սնանկության վարույթի ընթացքում նրանց առաջարկվել է որևէ հարց կարգավորել ոչ ֆորմալ տարբերակով: Կանանցից և ոչ որ նման պատասխան չի տվել:

Կանանց բավարարվածության մակարդակը սնանկության կառավարչի մասնագիտական հմտություններով և իրենց գործի նկատմամբ վերաբերմունքով համեմատաբար ավելի բարձր է (համապատասխանաբար 57.4% և 61.7%) տղամարդկանց բավարարվածության մակարդակից (համապատասխանաբար 39.2% և 35.9%)⁹: Փաստաբանների մասնագիտական գիտելիքների վերաբերյալ կանանց կարծիքը դարձյալ ավելի բարձր է, քան տղամարդկանց կարծիքը (Տե՛ս **Գծապատկեր 56.**)¹⁰:

Գծապատկեր 56. Փաստաբանը մասնագիտական գիտելիքներ ունեցե՞լ է սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի շահերը ներկայացնելու համար




Եվ ընդհակառակը՝ տղամարդկանց բավարարվածության մակարդակը դատավորի մասնագիտական հմտություններից ավելի բարձր է, քան կանանց (Տե՛ս **Գծապատկեր 57.**)¹¹:

⁹ Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.577:

¹⁰ Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.426:

¹¹ Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.176:

Գծապատկեր 57. Դատավորի մասնագիտական հմտություններից կանանց և տղամարդկանց բավարարվածության մակարդակը



Եվ վերջապես, ՖԱԾ ներկայացրել են 18 տղամարդ (հարցված տղամարդկանց 11.8%) և 2 կին (հարցված կանանց 4.3%)¹²: Հաստատված 7 ծրագրերից 6-ը ներկայացրել են տղամարդիկ, 1-ը՝ կին:

¹² Փոփոխականների միջև կապի Pearson Chi-Square գործակիցը կազմել է 0.176:

ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ

Սնանկության գործընթացով անցնելու փորձ ունեցող պարտապանները փորձեցին վերլուծել քաղաք դասերը և պատասխանել, թե ինչպես կգործեին, եթե նախապես իմանային, որ սնանկության վարույթի ավարտից հետո նրանց համար օրենքով վրա են հասնելու որոշակի բացասական հետևանքներ: Հնչած պատասխանները վերաբերել են ինչպես սեփական բիզնես ռազմավարության վերանայմանը, օրենքների ու ընթացակարգերի բարելավմանը, այնպես էլ՝ վարկերի, օրենքի և սնանկության ընթացակարգերի վերաբերյալ նրանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, գործընկերների ընտրությանը ու պարտատերերի հետ բանակցելուն:

Աղյուսակ 11. Պարտապանների դատողություններն այն մասին՝ թե ինչպես կվարվեին, եթե նախապես իմանային, որ սնանկության վարույթի ավարտից հետո օրենքով վրա են հասնելու որոշակի բացասական հետևանքներ

Պատասխաններ	Տոկոս
Վարկային պայմանագրերի կետերի հանդեպ առավել ուշադիր կլինեի, պարտավորությունները ժամանակին կատարելու հարցում	29.6
Որոշակի գործարքների ուղղակի չէի գնա, կզգուշանայի	16.0
Ավելի լավ կծանոթանայի օրենսդրական կարգավորումներին	10.3
Ավելի բժախնդրորեն կընտրեի գործընկերներին	6.9
Կազմակերպության կառավարմանը ավելի մեծ ուշադրություն կդարձնեի	4.8
Իմ անունով ոչ մեկի համար ոչինչ չէի վերցնի, վարկ չէի վերցնի, իմ գույքը չէի տա գրավադրման ուրիշի անունով	4.2
Կվարձեի լավ իրավաբանական խումբ կամ իրավախորհրդատու	3.6
Տվյալ բիզնեսի ոլորտն ավելի լավ կուսումնասիրեի՝ կհետևի մրցակիցներիս	3.0
Առավել մեծ ուշադրություն կդարձնեի աշխատակիցների հավաքագրման, վերապատրաստման հարցերին	2.4
Կբանակցեի յուրաքանչյուր առանձին պարտատիրոջ հետ՝ հնարավորինս պարտավորությունների կատարման մասին	1.5
Բիզնես չէի անի Հայաստանում	1.2
Կվարձեի լավ հաշվապահ, ֆինանսիստ	.6
Օգտակար ծանոթություններ ձեռք կբերեի	.6
Անուղղորդ անցկացման կարգը կառաջարկեի վերանայել	.6
Կազմակերպությունում պարբերաբար ներքին աուդիտ կիրականացնեի	.3
Օրենքում փոփոխություններ կառաջարկեի, որ չհակասեր քաղաքացիական օրենսդրությանը	.3
Արտադրական կոոպերատիվը կդարձնեի ՍՊԸ	.3
Որ իմանայի երկրում իրավիճակ կփոխվեր, կայաքարեի, մինչև 2018 թվականի մայիս	.3

Ավելի շուտ կդիմելի սնանկացման	.3
Միևնույնն է ոչինչ չէի նախաձեռնի	8.5
Դժ. պատ.	4.2
Ընդամենը պատասխաններ	100.0

Ամենահաճախը հնչել է «վարկային պայմանագրերի կետերի հանդեպ առավել ուշադիր կլինեի, պարտավորությունները ժամանակին կատարելու հարցում» պատասխանի տարբերակը՝ 20.2%: Երկրորդ ամենահաճախ հանդիպող պատասխանն է՝ «որոշակի գործարքների ուղղակի չէի գնա, կգգուշանայի»՝ 16%: Եվ երրորդը՝ «ավելի լավ կծանոթանայի օրենսդրական կարգավորումներին» պատասխանը՝ 10.3%: Հարցվածների միայն 8.5% նշեցին, որ միևնույնն է ոչինչ չէին նախաձեռնի (Տե՛ս Աղյուսակ 11.):

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Թիվ 1

Բոլոր օրենքների հոդվածները վկայակոչված են համապատասխան իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Սնանկության գործը տիպային է: Սույն դատական գործի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ֆիզիկական անձը, դիմելով կամավոր սնանկության՝ փորձում է խուսափել ստանձնած պարտավորությունները կատարելուց: Սույն դատական գործերը բնորոշ են այն անհատներին, ովքեր ծառայություններ են մատուցում կանոնավոր ուղևորափոխադրման բնագավառում: Միանշանակ պնդել, որ այն տիպային է, բարդ է, քանի որ անձը սնանկ չի ճանաչվել դատարանի վճռով:

Սնանկության վարույթի պատճառները.

Սնանկության վարույթի տնտեսական պատճառների մասին հնարավոր չէ եզրահանգում կատարել՝ համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով: Ինչ վերաբերում է սնանկ ճանաչվելու «դատավարական» պատճառներին, ապա հարկ է նշել, որ անձը սնանկ չի ճանաչվել:

Թեև սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը ֆորմալ առումով համապատասխանել է օրենքի պահանջներին, սակայն այդ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը բավարար և անվիճելի հիմք չէին հանդիսանում պարտապանին սնանկ ճանաչելու համար: Այսպես.

1) որպես կետանցված պարտավորության առկայության և դրա չափի վերաբերյալ ապացույց՝ դիմումատու-պարտապանը ներկայացրել է բանկի կողմից տրված տեղեկանքները,

2) որպես կետանցված պարտավորության հիմնավորում դիմումատու-պարտապանը ներկայացրել է ստացական՝ փոխառությամբ գումար վերցնելու վերաբերյալ: Դիմումատու-պարտապանի կողմից չի ներկայացվել տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք պարտատերը պահանջել է փոխառությամբ վերցրած գումարը: Ավելին, դատական գործերի նյութերում բացակայում է նաև փոխատուի կողմից ներկայացված նախապահանջը կամ սույն պարտավորությունը չկատարելու որևէ հիմնավորում,

3) դիմումատու-պարտապանի կողմից չեն ներկայացվել բանկից հետ կնքված վարկային պայմանագրերը:

Դիմումատու պարտապանի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, պարտատերերից միայն բանկն է տեղեկատվություն տրամադրել պարտապանի պարտավորության վերաբերյալ, իսկ փոխատու անձը որևէ տեղեկատվություն չի տրամադրել:

Ընթացակարգային հարցեր.

2017 թվականի սեպտեմբերի 25-ին սնանկության մասին դիմումը դատարանը ընդունել է վարույթ: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2.1. մասի բ) ենթակետի համաձայն. «Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում դատարանը

որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակում է՝ կառավոր սնանկության դիմումով հարուցված գործի դեպքում՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված թեկնածուին: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն է ներկայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում»: Գործի նյութերից պարզ չէր, թե երբ է դատարանը սնանկության դիմումը վարույթ ընդունելուց հետո ուղարկել սնանկության կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն, քանի որ որևէ փոստային հավաստում առկա չէր գործում կազմակերպությանը ուղարկելու վերաբերյալ: 2017 թվականի հոկտեմբերի 12-ի վիճակահանության արդյունքներով ընտրվել է սնանկության գործերով կառավարիչ և նույն օրը կազմակերպությունը ծանուցել է դատարանին վիճակահանության արդյունքների մասին: Սնանկության վարույթին մասնակիցները բոլորն էլ ծանուցված են եղել դատական նիստի ժամի և վայրի մասին, սակայն պարտատերերը չեն ներկայացել նիստին:

Սնանկության վարույթը սկսվել է 2017թ. սեպտեմբերի 25-ին և ավարտվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկեր.

Որևէ կոռուպցիոն ռիսկ չի հայտնաբերվել՝ հաշվի առնելով այն, որ դիմումատու-պարտապանը սնանկ չի ճանաչվել:

Ֆինանսական առողջացման ծրագիր.

Տվյալ սնանկության գործով դիմումատու-պարտապանի ֆինանսական առողջացման հարց չի քննարկվել և, հետևաբար, ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել:

Գործով դատավորի գործողությունների գնահատում՝ օբյեկտիվության, անկողմնակալության տեսանկյուններից.

Թեև սույն սնանկության վարույթի ընթացքում պարտապանը սնանկ չի ճանաչվել, սակայն դատարանը գործողություններ չի ձեռնարկել կառավարչի կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ՝ հաշվի առնելով այն, որ սնանկության գործերով կառավարիչը իր գործունեությունը ծավալում է դատարանի հսկողության ներքո, ինչին մանրամասն կանդիդատությանը հաջորդ մասում:

Սնանկության կառավարչի գործողությունների գնահատում.

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն. «Սնանկության ժամանակավոր կառավարիչը մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահին իրականացնում է սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի «ե», «զ» և «ժա.1» կետերով նախատեսված լիազորությունները»: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «ե», «զ» և «ժա.1» կետերը սահմանում են.

«Սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը

ե) կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար.

զ) վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում.

ժա1) օրենքով սահմանված կարգով դիմում է շարժական գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները գրանցելու համար»:

Մինչդեռ սույն դատական գործի նյութերում առկա չէր տեղեկատվություն սնանկության գործերով կառավարչի կողմից պարտապանին պատկանող գույքի պահպանության, գույքագրման վերաբերյալ, պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության, սնանկության պատճառների, ինչպես նաև ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեության վերաբերյալ, ավելին՝ բացակայում էր տեղեկատվությունը շարժական գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելու վերաբերյալ՝ հաշվի առնելով այն, որ պարտապանի սեփականության ներքո առկա էր ավտոմեքենա:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրառման առանձնահատկություններ, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել. Մատնանշվել են վերևի ենթավերնագրերում: Որևէ լրացուցիչ էական հանգամանք առկա չէ:

Գործում առկա այլ առանձնահատկություններ.

Այլ առանձնահատկությունները բացակայում են:

Ուշադրության արժանի կետեր.

- սնանկության կառավարիչների ԻԿԿ-ում կատարված վիճակահանությանը միայն մեկ սնանկության կառավարիչ է մասնակցել,
- սնանկության գործերով կառավարիչը ուսումնասիրության առարկա չի դարձրել ֆիզիկական անձի հետ կնքված փոխառության պայմանագիրը,
- Իրավական արդյունավետ միջոցների բացակայության պայմաններում ապահովված իրավունք ունեցող պարտատերերը, որպես կանոն, չեն մասնակցում սնանկության հարցը քննարկվող դատական նիստերին՝ հաշվի առնելով այն, որ ապահովված իրավունքը ունի նախապատվության իրավունք:

Թիվ 2

Բոլոր օրենքների հոդվածները վկայակոչված են համապատասխան իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Սնանկության գործը տիպային չէ: Իրավաբանական անձը սնանկության վտանգի վերաբերյալ դիմում է ներկայացրել դատարան: Եվ դիմումի հետ միաժամանակ իրավաբանական անձը ներկայացրել է ֆինանսական առողջացման ծրագիր: Սույն ծրագրի

համաձայն, իրավաբանական անձը վերաֆինանսավորման համար դիմել է այլ առևտրային բանկ, իսկ վերջինս էլ այն բավարարել է: Իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ պարտապանը դիմում է ֆինանսական կազմակերպություններին՝ պարտքի վերաֆինանսավորման նպատակով:

Սնանկության վտանգի վարույթի պատճառները.

Սնանկության վտանգի վարույթի տնտեսական պատճառների մասին հնարավոր չէ եզրահանգում կատարել՝ համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով: Սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը ընդունվել է վարույթ դատարանի կողմից: Դիմումատու-պարտապանը դատարան է ներկայացրել բանկի հետ կնքված վարկային պայմանագրերը, նշել է կետանցված պարտավորության չափը, նոր բանկի համաձայնությունը՝ պարտքի վերաֆինանսավորում կատարելու համար: Պարտատեր բանկը դատարան է ներկայացրել հիմնավորում առ այն, որ պարտապանի կողմից կան կետանցված պարտավորություններ:

Ընթացակարգային հարցեր.

2016 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը ընդունել է վարույթ: 21.11.2016 թվականին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարել է, և նշանակվել է սնանկության գործերով կառավարիչ: 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է վճիռ՝ սնանկության վտանգի վերաբերյալ վարույթը ավարտելու մասին:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկեր.

Որևէ կոռուպցիոն ռիսկ չի հայտնաբերվել՝ հաշվի առնելով այն, որ դիմումատու-պարտապանը սնանկ չի ճանաչվել:

Ֆինանսական առողջացման ծրագիր.

Սնանկության վտանգի վարույթի շրջանակներում ներկայացվել է ֆինանսական առողջացման ծրագիր, ինչը հաստատվել է դատարանի կողմից: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածով սահմանվում են ֆինանսական առողջացման ծրագրի պարտադիր պայմանները: Սույն հոդվածի լույսի ներքո, հարկ է նշել, որ ֆինանսական առողջացման ծրագիրը չի ներառում հետևյալ դրույթները.

ա) ապահովված, չապահովված և այլ խմբերի պարտատերերի նկատմամբ պարտավորությունների մարման ժամանակացույցը, նրանց պահանջների դիմաց վճարումների կատարման կարգը, այդ թվում՝ պահանջների բավարարման կարգը պարտապանին պատկանող անշարժ և պետական գրանցման ենթակա այլ գույքով.

բ) պարտապանին պարտավորություններից ազատելու, դրանք հետաձգելու կամ վերաձևակերպելու կարգը և չափերը.

գ) պարտապանի վնասումնակությունը վերականգնելու համար սույն օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների բովանդակությունը և իրականացման կարգն ու ժամկետները, դրանց իրականացման արդյունքում պարտապանի գործունեությունը շարունակելիս պարտատերերի պահանջների բավարարման հնարավորությունների ավելացման հիմնավորումները, պարտապանին պատկանող գույքի փանառքի դեպքում՝ փանառվող գույքի կազմը:

Գործով դատավորի գործողությունների գնահատում՝ օբյեկտիվության, անկողմնակալության տեսանկյուններից.

Դատարանը գործողություններ չի ձեռնարկել կառավարչի կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ՝ հաշվի առնելով այն, որ սնանկության գործերով կառավարիչն իր գործունեությունը ծավալում է դատարանի հսկողության ներքո, ինչին մանրամասն կանոնադրամանք հաջորդ մասում:

Սնանկության կառավարչի գործողությունների գնահատում.

Սնանկության վտանգի մասին իրավակարգավորումները նախատեսվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքում ՀՕ-105-Ն օրենքով փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով: Ըստ օրենքի նախագծի հիմնավորման՝ սնանկության վտանգը նախատեսվելու համար հիմք են հանդիսացել ՄԱԿ-ի միջազգային առևտրի հանձնաժողովի կողմից սահմանված ուղեցույցը, ինչպես նաև հաշվի առնելով եվրոպական երկրների փորձը՝ Ֆրանսիա, Ավստրիա և այլն: Սնանկության վտանգի հիմնական նպատակն է կանխել ֆիզիկական կամ իրավաբանական անձի սնանկ ճանաչվելու գործընթացը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 15.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատարանը պարտապանի կողմից ներկայացված սնանկության վտանգի դիմումի քննությունն իրականացնում է սույն օրենքով նախատեսված՝ սնանկության վարույթի կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով»:

Օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ կետի համաձայն. «Դատարանի սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը՝

2) կառավարչին պարտավորեցնում է ոչ ուշ, քան սնանկության վտանգի դիմումը բավարարելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու պահից հինգ օրվա ընթացքում պարտապանի սնանկության վտանգի դիմումի բավարարման մասին տեղեկություններ հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ պարտապանի հաշվին, և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում»: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ սնանկության վտանգի վարույթի վրա տարածվում են սնանկության վարույթին վերաբերող կանոնները, եթե օրենքի գլուխ 2.1.-ով այլ կանոններ սահմանված չեն: 2016 թվականի նոյեմբերի 21-ին կայացված վճիռը օրինական ուժի մեջ է մտել անմիջականորեն հրապարակման պահից և ինտերնետով հրապարակային ծանուցումների մասին կայքի ուսումնասիրության արդյունքում որևէ տեղեկատվություն առկա չէր պարտապանի վերաբերյալ:

Համաձայն օրենքի 15.7-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի՝ սույն օրենքով նախատեսված պայմաններից բացի, սնանկության վտանգի վարույթում ներկայացվող պարտապանի

Ֆինանսական առողջացման ծրագիրը պետք է ներառի նաև՝ կառավարչի լիազորությունները: Սույն դրույթը արձանագրվել է նաև դատարանի վճռում, սակայն թե ինչ լիազորությունների մասին է խոսքը, այդպես էլ պարզ չի և՛ դատարանի վճռում, և՛ բանկի հետ համաձայնագրում:

Հաշվի առնելով այն, որ սնանկության վտանգի վարույթի վրա տարածվում են նաև սնանկության վարույթի համար սահմանված նորմ-կանոնները, ապա հարկ է նշել, որ օրենքի համաձայն, սնանկության գործերով կառավարիչը պարտավոր է վերլուծել պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում: Այնինչ, սույն գործի վարույթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կառավարիչը չի իրականացրել իր պարտավորությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրառման առանձնահատկություններ, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել.

Մատնանշվել են վերևի ենթավերնագրերում: Որևէ լրացուցիչ էական հանգամանք առկա չէ:

Գործում առկա այլ առանձնահատկություններ.

Այլ առանձնահատկությունները բացակայում են:

Ուշադրության արժանի կետեր.

- Սնանկության վտանգի մասին դիմում է ներկայացվել դատարան պարտապանի կողմից ֆինանսական պարտավորությունների վերաֆինանսավորման համար, սույն գործողության իրականացումը հնարավոր էր առանց դատարան դիմելու.
- Վերաֆինանսավորում իրականացնող կազմակերպության պաշտոնական նամակը դիտարկվել է որպես ֆինանսական առողջացման ծրագիր.
- Սնանկության գործերով կառավարչի կողմից ֆինանսական վիճակի վերլուծության չկատարումը, ավելին՝ բանկի նամակը որպես ֆինանսական առողջացման ծրագիր դատարան ներկայացնելը:

Թիվ 3

Բոլոր օրենքների հոդվածները վկայակոչված են համապատասխան իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Սնանկության գործը միանշանակ տիպային է: Այն կարելի է բնութագրել որպես պրակտիկայում հաճախ հանդիպող «դատարկ» սնանկության գործ: Այսինքն, պարտապանի որևէ գույք չի հայտնաբերվել, ինչի արդյունքում պարտատերերն իրենց պահանջների որևէ բավարարում չեն ստացել: Մյուս կողմից, պարտապանը սնանկ է ճանաչվել պարզեցված ընթացակարգով՝ որպես «բացակայող» պարտապան (այս ընթացակարգը ամրագրված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածով): Պարտապանը փաստացի չի ստացել

որևէ ծանուցում, որևէ եղանակով չի մասնակցել վարույթին: Նմանատիպ գործերը պրակտիկայում ևս հաճախ հանդիպող են:

Մնանկության վարույթի պատճառները.

Մնանկության վարույթի տնտեսական պատճառների մասին հնարավոր չէ եզրահանգում կատարել՝ համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով: Ինչ վերաբերում է սնանկ ճանաչվելու «դատավարական» պատճառներին, ապա կարելի է պնդել, որ պարտապանը սնանկ է ճանաչվել **նախ և առաջ փաստացի չձանուցվելու և ըստ այդմ գործին չներգրավվելու «պատճառով»:** Որպես սնանկ ճանաչվելու **2-րդ «դատավարական» պատճառ՝ կարելի է նշել դատավորի անփութությունը:**

Պարտատիրոջ կողմից պատշաճ կերպով չի հիմնավորվել կետանցված պարտավորության առկայությունը, հիմքը և դրա չափը: Թեև սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը ֆորմալ առումով համապատասխանել է օրենքի պահանջներին, սակայն այդ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը բավարար և անվիճելի հիմք չէին հանդիսանում պարտապանին սնանկ ճանաչելու համար: Այսպես.

- 1) որպես կետանցված պարտավորության առկայության և դրա չափի վերաբերյալ ապացույց՝ դիմումատու-պարտատիրոջ կողմից ներկայացվել է իր իսկ կողմից կազմված հաշվապահական տեղեկանք, որը չէր կարող բավարար հիմք հանդիսանալ պարտապանին սնանկ ճանաչելու համար,
- 2) որպես կետանցված պարտավորության առկայության և դրա չափի վերաբերյալ ապացույց՝ դիմումատու-պարտատիրոջ կողմից ներկայացվել են փաստաթղթեր և գրություններ, որոնք վերաբերում են ոչ թե պարտապանին, այլ՝ երրորդ անձանց (որոնց կապը պարտապանի հետ առնվազն չի երևում գործի նյութերից),
- 3) որպես կետանցված պարտավորության առկայության և դրա չափի վերաբերյալ ապացույց՝ դիմումատու-պարտատիրոջ կողմից ներկայացվել են փաստաթղթեր, որոնք թեև վերաբերում են պարտապանին, սակայն դրանցից չի կարելի միանշանակ հետևություն անել կետանցված պարտքի չափի (չվճարված պարտքի մնացորդի) մասին,
- 4) էական փաստաթղթերից մեկը ներկայացվել է անգլերենով՝ առանց հայերեն թարգմանության,
- 5) որպես կետանցված պարտավորության ծագման հիմք՝ դիմումատու-պարտատիրոջ կողմից վկայակոչվել է ցպահանջ փոխառության պայմանագիրը (գրավոր փոխառության պայմանագիր կողմերի միջև առկա չի եղել, իսկ պայմանագրի կնքման փաստը դիմումատու-պարտատերը փորձել է ապացուցել այլ գրավոր փաստաթղթերով): Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասի՝ ցպահանջ փոխառությունը համարվում է կետանցված՝ փոխատուի կողմից փոխառության գումարի վերադարձման պահանջը ներկայացվելու պահից 30 օր հետո: Տվյալ դեպքում թեև դիմումատու-պարտատերը դատարանին ներկայացրել է իր կողմից պարտապանին ուղարկված նախապահանջը՝ փոխառության գումարը վերադարձնելու մասին, սակայն **դատարանին չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ տվյալ նախապահանջը ստացվել է** պարտապանի կողմից: Այսինքն, դիմումատու-պարտատիրոջ դիմումի իրավական հիմքերի շրջանակներում, առկա չեն եղել բավարար փաստական հիմքեր, որոնք կարող էին միանշանակ վկայել պարտապանի կետանցի մասին:

Դատարանը պատշաճ կերպով չի ստուգել պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի առկայությունը: Սա պայմանավորված է, հավանաբար, այն հանգամանքով, որ պարտապանը ի հայտ չի եկել և երբևէ չի վիճարկել իր սնանկությունը: Արդյունքում, դատարանը ցուցաբերել է ձևական մոտեցում՝ սնանկ ճանաչելով պարտապանին և վճռում ընդամենը ամրագրելով, որ «առկա է գրավոր գործարքի վրա հիմնված պարտավորություն, որը պատշաճ կերպով մարված չէ»: Դատարանը սեփական ուսումնասիրություն չի կատարել և չի փորձել անգամ պարզել, թե ի վերջո, ինչից է բխել դիմումի հիմքում դրված պարտավորությունը, արդյոք դա վերաբերյալ կան բավարար ապացույցներ և այլն:

Սա բավականին տարածված արատավոր պրակտիկա է, երբ դատարանները, պարտապանի առարկության բացակայության պայմաններում, մանրակրկիտ չեն ուսումնասիրում դիմումի հիմնավորումները և ղեկավարվում են դիմումատու-պարտատիրոջ հայտնած տեղեկությունների իսկության կանխավարկածով:

Այսպիսով, եթե պարտապանն ի հայտ գար և առարկեր իրեն սնանկ ճանաչելու մասին դիմումի դեմ, և եթե դատավորը բավարար ուշադրությամբ ստուգեր ներկայացված դիմումի հիմքերը, ապա պարտապանն ամենայն հավանականությամբ սնանկ չէր ճանաչվի:

Պետք է նշել, որ ամեն դեպքում դիմումատու-պարտատերը սնանկության վարույթը չի օգտագործել որպես պարտապանին ճնշելու և «հանկարծակիի բերելու» գործիք: Պարտատերը պարտապանի ենթադրյալ կետանցի պահից սկսած՝ սպասել է բավականին երկար ժամանակ՝ նախքան սնանկ ճանաչելու պահանջով դատարան դիմելը (մոտ երկու տարի): Ավելին, դիմումատուն (պարտատերը) առնվազն փորձել է պարտապանին նախապես տեղեկացնել իր ունեցած պարտքի մասին՝ ուղարկելով նախապահանջ:

Պետք է նշել նաև հետևյալը՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենը ներկայացնելու անհնարինությունը պետք է հիմնավորվի դիմողի կողմից:

Տվյալ դեպքում դիմումատու-պարտատերը փաստաթղթերի մեծամասնությունը ներկայացրել է հասարակ (պատշաճ չվավերացված) պատճենների տեսքով, սակայն այս հանգամանքը որևէ կերպ հաշվի չի առնվել դատարանի կողմից: Սա թեև հանդիսացել է օրենքի խախտում, սակայն ընդհանուր առմամբ ողջամիտ մոտեցում է, քանի որ ներկայումս օրենսդիրն աստիճանաբար հրաժարվում է դատարան ներկայացվող պատճենների պատշաճ վավերացման անվերապահ պահանջից:

Ընթացակարգային հարցեր.

Պարտապանը չի ստացել որևէ ծանուցում (այդ թվում՝ դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը): Դատարանը, ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածով, հայտարարել է պարտապան իրավաբանական անձի գույքի, փաստաթղթերի և տնօրենի հետախուզում: Սնանկության գործի վարույթը կասեցվել է հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը (պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ):

Դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա հարուցվել է կատարողական վարույթ, սակայն կատարողական գործողությունների արդյունքում անհնարին է եղել պարտապան իրավաբանական անձի գույքի և փաստաթղթերի, ինչպես նաև՝ իրավաբանական անձի տնօրենի հայտնաբերումը: Կատարողական վարույթի ավարտից հետո սնանկության գործի վարույթը, սնանկության կառավարչի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ, վերսկսվել է:

Սնանկության գործի վարույթը վերսկսելուց հետո դատարանը ևս մեկ անգամ փորձել է ծանուցել պարտապանին («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով): Պարտապանն այս ծանուցումը ևս չի ստացել: Արդյունքում դատարանը պարտապանին սնանկ է ճանաչել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ որպես «բացակայող պարտապան»:

Սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի դեմ պահանջներ են ներկայացրել դիմումատու-պարտատերը և ՊԵԿ-ը: Երկու պարտատերերն էլ ներգրավվել են պահանջների նախնական և վերջնական ցուցակներում:

Պարտատերերի առաջին ժողովն օրենքով սահմանված կարգով հրավիրվել և կայացել է: Որևէ շահագրգիռ անձի կողմից պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել: Ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով սնանկության կառավարիչը դատարանին միջնորդել է որոշում կայացնել պարտապան իրավաբանական անձի լուծարման վարույթ սկսելու մասին:

Դատարանը բավարարել է կառավարչի միջնորդությունը և կայացրել է որոշում՝ պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին: Պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին հայտարարությունն օրենքով սահմանված կարգով հրապարակվել է:

Մեկ այլ որոշմամբ դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը, կասեցրել է գույքը կառավարելու և տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները:

Որոշ ժամանակ անց, պարտապանի սնանկության կառավարիչը դատարանին միջնորդել է ավարտել սնանկության գործը՝ դատարանին ներկայացնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածով սահմանված վերջնական հաշվետվությունը: Պարտատերերը ևս կողմ են եղել սնանկության գործի ավարտին, քանի որ մինչև սնանկության կառավարչի կողմից համապատասխան միջնորդության ներկայացումը, սնանկության գործի ավարտի հարցը քննարկվել և հավանության էր արժանացել պարտատերերի ժողովի կողմից:

Դատարանը սնանկության գործն ավարտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով (սնանկության վարույթի ցանկացած փուլում դատավորը ... վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին, եթե ... պարտապանը չունի որևէ գույք): Դատարանի վճռով պարտապանը լուծարվել է:

Ընդհանուր առմամբ սնանկության վարույթը սկսվել է 2013թ. դեկտեմբեր ամսին և ավարտվել է 2016թ. մարտ ամսին: Սնանկության վարույթի արդյունքում որևէ գրանցված պարտատեր որևէ բավարարում չի ստացել:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկեր.

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դիմումատու-պարտատերն իր կողմից ընտրված ժամանակավոր կառավարչի հետ մշտական համագործակցության հարաբերություն չի ունեցել: Տվյալ պարտատիրոջ դիմումներով հարուցվել են մի շարք այլ սնանկության վարույթներ, որոնցով սնանկության ժամանակավոր կառավարիչներ են նշանակվել այլ անձիք: Այսինքն, դիմումատու-պարտատերն իր դիմումներով հարուցված յուրաքանչյուր սնանկության գործով նախընտրել է աշխատել տարբեր սնանկության կառավարիչների հետ:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ դիմումատու-պարտատերը հենց ինքն էլ նախկինում սնանկ ճանաչված ընկերություն է, որի անունից հանդես է եկել և պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում է ներկայացրել դիմումատու-պարտատիրոջ սնանկության կառավարիչը:

Թեև սա ինքնին կոռուպցիոն ռիսկ չէ, սակայն բնական է, որ դիմումատուի ներկայացուցիչ սնանկության կառավարիչը կարող էր հեշտությամբ նախապես պայմանավորվածություն ձեռք բերել իրեն ցանկալի մեկ այլ սնանկության կառավարչի հետ և հետագայում դատարանին առաջարկել նրա թեկնածությունը՝ որպես պարտապան ընկերության սնանկության ժամանակավոր կառավարիչ:

Խիստ էական է նաև հետևյալը. դատարանը սնանկության կառավարիչների ԻԿԿ-ին ուղարկել է պահանջագիր՝ առաջարկելով ներկայացնել պարտապանի սնանկության կառավարչի թեկնածություն: **Դատարանի կողմից ուղարկված պահանջագրի հիման վրա ԻԿԿ-ում տեղի է ունեցել վիճակահանություն, որին մասնակցել է միայն մեկ կառավարիչ: Դա հենց այն անձն էր, ով դիմումատուի առաջարկով և դատարանի որոշմամբ նշանակվել էր որպես սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ: Բնական է, որ վիճակահանությունը «հաղթել է» դրա միակ մասնակիցը (ժամանակավոր կառավարիչը), ով վիճակահանության հիման վրա նշանակվել է որպես սնանկության կառավարիչ: Ավելին, այդ անձը ստորագրել է վիճակահանության արդյունքների արձանագրությունը՝ որպես հանձնաժողովի նախագահող (հանձնաժողովը բաղկացած է եղել երեք անդամից):**

Սա պրակտիկայում լայն տարածում ունեցող մեխանիզմ է. սնանկության կառավարիչների ներքին պայմանավորվածության համաձայն (որը, որպես կանոն, չի խախտվում)՝ սնանկության կառավարիչ նշանակվելու «վիճակահանությանը» մասնակցում է միայն այն անձը, ով հանդիսանում է **տվյալ սնանկության գործով պարտապանի ժամանակավոր կառավարիչը**: Քանի որ «վիճակահանությանը» մասնակցում է միայն 1 մասնակից, ուստի հենց նա էլ դառնում է հաղթող և նշանակվում է որպես **տվյալ սնանկության գործով պարտապանի սնանկության կառավարիչ**:

Ֆինանսական առողջացման ծրագիր.

Տվյալ սնանկության գործով պարտապանի ֆինանսական առողջացման հարց չի քննարկվել և, հետևաբար, ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել:

Գործով դատավորի գործողությունների գնահատում՝ օբյեկտիվության, անկողմնակալության տեսանկյուններից. Ինչպես արդեն նշվեց, դատարանը պատշաճ ուսումնասիրության առարկա չի դարձրել պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի առկայությունը: Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորությունն առաջին հայացքից

անվիճելի չէ (ավելին՝ բավականին վիճելի է), սակայն դա չի խանգարել դատարանին՝ պարտապանին սնանկ ճանաչելու հարցում:

Միևնույն ժամանակ, սա ոչ թե սուբյեկտիվության կամ կողմնակալության հետևանք է, այլ՝ անփութության և գործի փաստական հանգամանքները մանրամասն ուսումնասիրելու մոտիվացիայի բացակայության: Դատավորի գործողությունների հիմքում դրված տրամաբանությունը կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ **«Եթե պարտապանին չի հետաքրքրում իր սնանկության հարցը, ինչո՞ւ պետք է դատավորը պարտապանի փոխարեն չարչարվի և խնդիրներ ստեղծի պարտատիրոջ համար»:**

Այլ դրվագներով դատավորի օբյեկտիվությունը դժվար է գնահատել, քանի որ գործով առկա չեն եղել «վեճային» և խնդրահարույց իրավիճակներ, պարտապանի կողմից չի դրսևորվել որևէ ակտիվություն, պարտատերերը միմյանց կամ սնանկության կառավարչի դեմ որևէ կերպ «չեն պայքարել»: Ամբողջ սնանկության գործն ընթացել է փոխհամաձայնեցված եղանակով (բացի պարտապանից, որն այդպես էլ չի հայտնաբերվել): Նման պայմաններում դժվար է գնահատել դատավորի օբյեկտիվությունը, հատկապես երբ սուբյեկտիվիզմ դրսևորելու հնարավորություն և առիթ տվյալ գործով չի եղել:

Սնանկության կառավարչի գործողությունների գնահատում .

Սնանկության կառավարիչը չի կատարել պարտապանի ակտիվների/դեբիտորական պարտքերի հավաքագրում (այդ թվում՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված հայցերի հարուցում), քանի որ հնարավոր չի եղել գտնել պարտապանի հաշվապահական կամ այլ փաստաթղթեր: Փաստաթղթերի բացակայության պայմաններում կառավարիչը չէր կարող պատկերացում ունենալ սնանկ ճանաչված պարտապանի դեբիտորական պարտքերի և հավաքագրման ենթակա այլ ակտիվների մասին: «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված մարմիններից ստացված տեղեկատվության համաձայն՝ պարտապանը չունի որևէ գույք, իսկ վերջին հինգ տարվա ընթացքում պարտապանի կողմից չէր կատարվել որևէ անշարժ գույքի օտարում:

Սնանկության կառավարիչն ամեն դեպքում փորձել է կատարել պարտապանի գույքի գույքագրում, սակայն պարտապան ընկերության իրավաբանական հասցեում գույքագրման ենթակա որևէ գույք չի հայտնաբերվել:

Քանի որ պարտապանի որևէ գույք չի հայտնաբերվել, ուստի բնականաբար սնանկության կառավարչի կողմից չէր կարող իրականացվել գույքի գնահատում:

Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետում: Սնանկության կառավարիչը, սակայն, այս փաստաթղթի նկատմամբ ցուցաբերել է ձևական մոտեցում: Այսպես.

- 1) Սնանկության պատճառների և կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության մասով, կառավարչի կողմից ընդամենը նշվել է, որ «չեն հայտնաբերվել կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշներ»:
- 2) Դատական ծախսերի փոխհատուցման և սնանկության կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասով, փաստաթղթում անդրադարձ չկա:

3) Պարտապան ընկերության վճարունակության վերականգնման հնարավորությունների մասով, փաստաթղթում կրկին անդրադարձ չկա:

4) Պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքագրման հնարավորության մասով կառավարիչը նշել է, որ նման հնարավորություն չկա, քանի որ պարտապանի փաստաթղթերը բացակայում են:

5) Պարտապանի կնքած վիճարկելի գործարքների մասով կառավարիչը եզրահանգում չի կատարել՝ կրկին հղում անելով պարտապան ընկերության փաստաթղթերի բացակայությանը:

Ամեն դեպքում սնանկության կառավարիչն իր ֆինանսական վերլուծության վերջում նշել է, որ այն չի կարող համարվել արժանահավատ վերլուծություն՝ պարտապան ընկերության փաստաթղթերի բացակայության պատճառով:

Պետք է նշել, որ իհարկե, սնանկության կառավարիչն օբյեկտիվորեն չէր կարող կազմել ամբողջական և արժանահավատ ֆինանսական վերլուծություն, քանի որ պարտապան ընկերության ֆինանսական և այլ փաստաթղթերը բացակայում էին: Միևնույն ժամանակ, սնանկության կառավարիչը կարող էր դատարանին միջնորդել, որպեսզի վերջինս երկարաձգի ֆինանսական վերլուծության ներկայացման ժամկետը: Սնանկության կառավարչի կողմից նման միջնորդություն չի եղել, իսկ վերլուծությունը կատարվել է գուտ ձևականորեն: **Սա նշանակում է, որ սնանկության կառավարիչն ի սկզբանե ունեցել է համոզմունք առ այն, որ պարտապան ընկերության ֆինանսական, հաշվապահական և այլ փաստաթղթերը երբևէ չեն էլ գտնվելու: Եթե կառավարիչը նման համոզմունք չունենար, ապա նա կփորձեր գոնե որոշ ժամանակ սպասել այդ փաստաթղթերի գտնվելուն՝ պարբերաբար միջնորդելով երկարաձգել ֆինանսական վերլուծության ներկայացման ժամկետը:**

Սնանկության մասին օրենքի կիրառման առանձնահատկություններ, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել.

Մատնանշվել են վերոհիշյալ ենթավերնագրերում: Որևէ լրացուցիչ էական հանգամանք առկա չէ:

Գործում առկա այլ առանձնահատկություններ.

Ինչպես նշվեց, պարտապան ընկերությունը չի ծանուցվել սնանկության վարույթի ընթացքի մասին: Թեև դատարանը պարտավոր չէր, սակայն առնվազն հնարավորություն ուներ ծանուցումներն ուղարկելու նաև պարտապան ընկերության մասնակցի և պարտապան ընկերության տնօրենի հասցեներով (այդ հասցեները գործում առկա էին):

Իհարկե, նշված հասցեներով ծանուցում չուղարկելով, դատարանն օրենք չի խախտել, սակայն ակնհայտ է, որ դատարանը առանձնապես շահագրգռված էլ չի եղել պարտապանին փաստացի հայտնաբերելու հարցում: Եթե դատարանն իրապես շահագրգռված լիներ պարտապանին հայտնաբերելու հարցում, ապա գոնե կփորձեր ծանուցումներն ուղարկել նաև պարտապան ընկերության մասնակցին և տնօրենին: Հնարավոր է, որ դա որևէ իրական օգուտ չտար՝ պարտապան ընկերությանը փաստացի հայտնաբերելու հարցում, սակայն պետք է արձանագրել, որ դատարանն անգամ չի էլ փորձել:

Ավելին, պարտապան ընկերությունն ուներ իրավաբանական հասցե, որտեղ փաստացի չէր գտնվում: Սնանկության կառավարիչն առնվազն կարող էր փորձել պարզել, թե ով է պարտապան ընկերության իրավաբանական հասցեի սեփականատերը և արդյոք տարածքի սեփականատերը ներկայումս որևէ տեղեկություն ունի պարտապան ընկերության վերաբերյալ: Սակայն այս միջոցառումը սնանկության կառավարչի կողմից չի ձեռնարկվել:

Ընդ որում, վերը նշվածն էական է նաև այն տեսանկյունից, որ, պարտապան ընկերության որևէ «հետք» հայտնաբերվելու դեպքում, կարող էին հայտնաբերվել նաև նրա ֆինանսա-հաշվապահական փաստաթղթերը, որի արդյունքում սնանկության վարույթը կարող էր ունենալ բոլորովին այլ ընթացք: Այսինքն, պետք է արձանագրել, որ սնանկության կառավարիչը չի ցուցաբերել բավարար ջանասիրություն՝ պարտապան ընկերության ֆինանսա-հաշվապահական և այլ փաստաթղթերը հայտնաբերելու հարցում:

Ինչպես արդեն նշվեց, սնանկության վարույթն ընթացել է բավականին պասիվ կերպով: Դատարանի պասիվությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ գործով երբևէ տեղի չի ունեցել հակադիր շահերի ռեալ բախում (ամեն ինչ կատարվել է բոլոր շահագրգիռ կողմերի փոխադարձ համաձայնությամբ): Կառավարչի պասիվությունը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ պարտապան ընկերությունը չի ունեցել որևէ գույք (համենայն դեպս՝ նախնական միջոցառումների ձեռնարկման արդյունքում որևէ գույք չի հայտնաբերվել): Ըստ այդմ՝ կառավարիչն արագորեն եզրահանգել է, որ գործ ունի «դատարակ» ընկերության հետ և կորցրել է իր հետաքրքրությունը գործի նկատմամբ, չի փորձել «մարած» վիճակից «կենդանացնել» այն: **Սակայն նման պասիվությունը և վարույթի «փոխհամաձայնեցվածությունը» կարող է բացատրվել նաև այլ հանգամանքով: Դիմումատու-պարտատեր ընկերության իրավաբանական հասցեն համարյա համընկնում է պարտապան ընկերության իրավաբանական հասցեի հետ: Առանց բացահայտելու կոնկրետ հասցեները՝ նշենք, որ դիմումատու-պարտատեր ընկերության հասցեն էր՝ ք. Երևան, X փողոց, թիվ Y, իսկ պարտապան ընկերության հասցեն էր՝ ք. Երևան, X փողոց, թիվ Y/1: Կարելի է ենթադրել, որ երկու ընկերությունները ինչ-որ եղանակով (առնվազն փաստացի) փոխկապակցված են եղել:**

Իհարկե, դիմումատու-պարտատերը պարտապանի դեմ սնանկության դիմում ներկայացնելու պահին ինքն էլ սնանկ էր և ուներ սնանկության կառավարիչ (որը գործում էր բոլորովին այլ հասցեում), սակայն չի կարելի բացառել այն տարբերակը, որ սնանկության վարույթը նախապես փոխհամաձայնեցված է եղել, և հենց դրանով է պայմանավորված եղել թե՛ պարտապան ընկերության ի հայտ չգալը, թե՛ մնացած դատավարական սուբյեկտների պասիվությունը:

Ուշադրության արժանի կետեր.

- պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը միանշանակ չեն եղել, իսկ դատարանը պատշաճ կերպով չի ստուգել և քննարկել այդ հիմքերի առկայությունը,
- սնանկության վարույթի արդյունքում որևէ պարտատեր որևէ բավարարում չի ստացել,
- սնանկության կառավարիչների ԻԿԿ-ում կատարված վիճակահանությանը միայն մեկ սնանկության կառավարիչ է մասնակցել,

- քանի որ հնարավոր չի եղել գտնել պարտապանի հաշվապահական և այլ փաստաթղթերը, սնանկության կառավարիչը չի կատարել (պատշաճ չի կատարել) օրենքով սահմանված մի շարք գործողություններ,
- դատարանը, թեև օրենքով պարտավոր չէր, սակայն ցանկության դեպքում կարող էր ձեռնարկել լրացուցիչ միջոցներ՝ պարտապանին հայտնաբերելու և նրան ծանուցելու ուղղությամբ:

Թիվ 4

Բոլոր օրենքների հոդվածները վկայակոչված են համապատասխան իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Սնանկության գործը միանշանակ տիպային է: Այն կարելի է բնութագրել որպես պրակտիկայում հաճախ հանդիպող դեպք, երբ պարտապանը փաստացի առողջանում է՝ առանց ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման և հաստատման: Մյուս կողմից, տվյալ գործն այն իրավիճակի «դասական» օրինակ է, երբ բոլոր շահագրգիռ անձիք (դատարան, պարտատերեր, պարտապան, սնանկության կառավարիչ) սերտորեն համագործակցում են և սնանկության գործը հասցնում են «դրական», բոլորի համար շահավետ ավարտի՝ փոխադարձ «լուռ համաձայնությամբ» խախտելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի որոշ նորմեր:

Սնանկության վարույթի պատճառները.

Սնանկության վարույթի տնտեսական պատճառ են հանդիսացել պարտապան իրավաբանական անձի մոտ ծագած անկանխատեսելի ֆինանսական դժվարությունները (ինչի մասին նշել է հենց պարտապանը):

Սնանկության վարույթի «ընթացակարգային» կամ դատավարական պատճառներ առկա չեն: Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն առերևույթ առկա են եղել: Ավելին, պարտապանը թեև մասնակի առարկել է իրեն սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորության չափի դեմ, սակայն անգամ այդ առարկության առկայության պայմաններում, պարտավորության չառարկված մասը ավելի քան բավարար էր պարտապանին սնանկ ճանաչելու համար:

Պետք է նաև նշել, որ դիմումատու-պարտատերը պարտապանի կետանցի պահից սկսած՝ սպասել է մոտ հինգ ամիս: Սակայն սնանկության գործի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ դիմումատու-պարտատերն ամենայն հավանականությամբ չի փորձել դիմումը ներկայացնելուց առաջ համաձայնության գալ պարտապանի հետ: Սնանկության գործի ընթացքը ցույց է տալիս, որ նախնական բանակցություններ առկա եղած լինելու դեպքում, սնանկության վարույթ սկսելու անհրաժեշտություն չէր ծագի:

Ընթացակարգային հարցեր.

Պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվել է 2017թ. ապրիլին: Նույն օրը սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարանի կողմից ընդունվել է

վարույթ: Դիմումատու-պարտատերը սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածությունն չի առաջարկել: Դատարանն օրենքով սահմանված կարգով դիմել է սնանկության կառավարիչների ԻԿԿ-ին՝ խնդրելով առաջարկել սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածություն: Սնանկության կառավարիչների ԻԿԿ-ում կատարված վիճակահանությանը մասնակցել է 25 սնանկության կառավարիչ: Տեղի ունեցած վիճակահանության արդյունքում սնանկության կառավարիչների ԻԿԿ-ն դատարանին առաջարկել է սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածություն, որը հետագայում հաստատվել է դատարանի որոշմամբ:

Պարտապանը ստացել է սնանկության դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը և ներկայացրել է ձևական առարկություն, որում նշել է, որ տվյալ պահին իր մոտ առկա են ֆինանսական խնդիրներ, և ինքը բանակցում է պարտատիրոջ հետ: Առարկության մեջ նաև նշվել է, որ առարկությանը կից ներկայացվում են պարտապանին սնանկ չճանաչելու մասին լրացուցիչ հիմնավորումներ, սակայն գործում նման հիմնավորումները բացակայում էին:

Դատարանը հաշվի չի առել ներկայացված առարկությունները՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռում նշելով, որ «օրենքով սահմանված ժամկետում պարտապանի կողմից առարկություններ չեն ներկայացվել»: Պարտապանը սնանկ է ճանաչվել 2017թ. մայիսին: 2017թ. մայիսին կայացված որոշմամբ դատարանը նշանակել է պարտատերերի առաջին ժողով (2017թ. հուլիսին) և, «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, պարտապանի սնանկության կառավարիչ է նշանակել ժամանակավոր կառավարչին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ շահագրգիռ անձիք չեն առարկել նրա թեկնածության դեմ և չեն ներկայացրել այլ թեկնածություններ: Սնանկության կառավարիչը www.azdarar.am կայքում տեղադրել է պարտապանին սնանկ ճանաչելու, սնանկության կառավարիչ նշանակելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին հայտարարությունը:

Պարտապանը բողոքարկել է իրեն սնանկ ճանաչելու մասին վճիռը, սակայն կարճ ժամանակ անց ետ է վերցրել իր ներկայացրած վերաքննիչ բողոքը: Հիմք ընդունելով պարտապանի դիմումը՝ վերաքննիչ բողոքը ետ վերցնելու մասին, վերաքննիչ դատարանը վերադարձրել է պարտապանի վերաքննիչ բողոքը:

Դատարանը «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական մարմինների ուղարկել է համապատասխան ծանուցումներ և հարցումներ՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Ստացված տեղեկատվության համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանին սեփականության իրավունքով պատկանում էին մի քանի միավոր անշարժ գույք և մի քանի տրանսպորտային միջոց:

2017թ. հունիսին պարտապանի բաժնետերեր իր հաշվին մարել է պարտատիրոջ պահանջը, վճարել է դատական ծախսերը և սնանկության կառավարչի վարձատրությունը: Վերոգրյալի հիման վրա պարտապանի բաժնետերեր խնդրել է ավարտել սնանկության գործը: Նույն ամսվա ընթացքում սնանկության կառավարիչը միջնորդել է ավարտել սնանկության գործի քննությունը: Կառավարչի դիմումի ներկայացման պահից երեք օր անց դատարանը վճիռ է կայացրել սնանկության գործն ավարտելու մասին:

Սնանկության գործն ավարտվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով (սնանկության գործի ցանկացած փուլում գործը կարող է ավարտվել, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են, այդ թվում՝ բաժնետերերի

կողմից պարտապանի պարտավորությունների կատարման համար սնանկության հատուկ հաշվին դրամական միջոցներ անհատույց փոխանցելու միջոցով): Դատարանի վճռով պարտապանը համարվել է ֆինանսապես առողջացած:

Այսպիսով, սնանկության վարույթը սկսվել է 2017թ. ապրիլի սկզբներին և ավարտվել է նույն տարվա հունիսի վերջին: Ամբողջ սնանկության վարույթը տևել է մոտ երեք ամիս:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկեր.

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ողջ սնանկության վարույթը, ինչ-որ պահից սկսած, ընթացել է ամբողջությամբ փոխհամաձայնեցված: Բոլոր շահագրգիռ սուբյեկտները գործել են համաձայնեցված կարգով:

Գործի նյութերում առկա են նաև որոշակի կասկածելի դրվագներ: **Օրինակ, 2017թ. մայիսի վերջին (երբ պարտապանն արդեն սնանկ էր ճանաչվել) պարտապանը ներկայացրել է դիմում, որով խնդրել է չքննարկել իր առարկությունները՝ իրեն սնանկ ճանաչելու դիմումի դեմ:** Մինչդեռ, նման դիմումի անհրաժեշտություն չկար, քանի որ այդ առարկություններն այսպես թե այնպես օրենքով սահմանված ժամկետում չէին ներկայացվել և հաշվի չէին առնվել դատարանի կողմից: Հավանաբար, սա արվել է դատարանի ուղղորդմամբ՝ վարույթը «մաքրելու» և հետագայում խնդիրներից խուսափելու նպատակով: **Ավելին, նույն օրը պարտապանը դատարանին ներկայացրել է մեկ այլ դիմում՝ դատական նիստը և իրեն սնանկ ճանաչելու հարցի քննարկումը հետաձգելու վերաբերյալ:** Նման դիմումի նպատակն առնվազն անհասկանալի է, քանի որ, ինչպես արդեն նշվեց, պարտապանն այդ պահի դրությամբ արդեն սնանկ էր ճանաչվել (պարտապանին սնանկ ճանաչելու հարցն արդեն քննարկված և լուծված էր):

Պարտապանի և պարտատիրոջ փոխհամաձայնեցված գործելու մեկ այլ դրվագ. 2017թ. հունիսին պարտապանի բաժնետերը մասնակի առարկել է պարտատիրոջ պարտավորության չափի դեմ, իսկ պարտավորության չառարկված մասը պատրաստակամություն է հայտնել մարելու իր միջոցներով: Նույն օրը պարտատերը դատարանին ներկայացրել է դիմում, որով համապատասխանաբար նվազեցրել է պահանջի չափը: Կրկին նույն օրը պարտապանի բաժնետերը ներկայացրել է մեկ այլ դիմում, որով հայտնել է, որ ինքն իր հաշվին ամբողջությամբ մարել է պարտապանի պարտքը, վճարել է դատական ծախսերը և կառավարչի վարձատրությունը: Ըստ այդմ, պարտապանի բաժնետերը խնդրել է ավարտել սնանկության գործը:

Երեք օր անց պարտապանի սնանկության կառավարիչը ներկայացրել է միջանկյալ բաշխման ծրագիր: Հաջորդ օրը և՛ պարտապանը, և՛ պարտատերը հայտնել են, որ չեն առարկում միջանկյալ բաշխման ծրագրի դեմ: Երկուսն էլ խնդրել են սնանկության գործը ավարտել: Այնուհետև, նույն օրը պարտապանի սնանկության կառավարիչը ներկայացրել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերջնական հաշվետվությունը և խնդրել է գործի վարույթն ավարտել: Ինչպես արդեն նշվեց, երեք օր անց դատարանը վճիռ է կայացրել սնանկության գործն ավարտելու մասին:

Ընդ որում, պարտապանի և պարտատիրոջ կողմից ներկայացված բոլոր դատավարական փաստաթղթերը միմյանց բավականին նման են: Դրանք գրված են նույն տառատեսակով, տառաչափով, ձևով և ոճով: Ակնհայտ է, որ դրանք կազմվել են նույն անձի կողմից: Ավելին, և՛ պարտապանը, և՛ պարտատերը իրենց կողմից ներկայացված

դատավարական փաստաթղթերում մշտապես սխալ են նշել պարտապանին սնանկ ճանաչելու օրը: Ծահագրգիռ սուբյեկտների փոխհամաձայնեցված գործողությունների առկայությունը բխում է ինչպես վերը նշվածից, այնպես էլ այն հանգամանքից, որ և՛ դատարանը, և՛ սնանկության կառավարիչը բավականին օպերատիվ կերպով արձագանքել են պարտապանի և պարտատիրոջ դիմումներին: Նման օպերատիվությունը սովորաբար բնորոշ չէ սնանկության գործերին: Ակնհայտ է, որ բոլոր կողմերն ունեցել են գործն արագ ավարտելու նպատակ:

Ավելին, սնանկության վարույթն ավարտվելուց հետո (2017թ. հուլիսին) ՊԵԿ-ը պահանջ է ներկայացրել սնանկ ճանաչված պարտապանի դեմ: Ակնհայտ է, որ նման դիմումը տվյալ սնանկության գործի շրջանակներում չէր կարող ունենալ որևէ իրավական հետևանք (քանի որ գործն ավարտված էր): Սակայն մեկ շաբաթ անց սնանկության կառավարիչը դատարանին ներկայացրել է ապացույցներ առ այն, որ պարտապանի հարկային պարտավորությունները մարվել են: Կարելի է ենթադրել, որ դատավորը դիմումի մասին տեղեկացրել է պարտապանին և «հորդորել է» մարել հարկային պարտավորությունները՝ վարույթը «մաքրելու» և խնդիրներից խուսափելու նպատակով:

Ֆինանսական առողջացման ծրագիր.

Տվյալ սնանկության գործով պարտապանի ֆինանսական առողջացման հարց չի քննարկվել և, հետևաբար, ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել: Այդուհանդերձ, պարտապանը փաստացի ֆինանսապես առողջացել է՝ առանց առողջացման ծրագրի:

Կարելի է ենթադրել, որ պարտապանի բաժնետերը, չափազանց բարդ համարելով ֆինանսական առողջացման ճանապարհը, նախընտրել է պարտապանի պարտքը մարել իր անձնական միջոցներով, ինչի հետևանքով էլ պարտապանը ֆինանսապես առողջացել է և շարունակել է իր գործունեությունը:

Գործով դատավորի գործողությունների գնահատում՝ օբյեկտիվության, անկողմնակալության տեսանկյուններից.

Ուսումնասիրված սնանկության գործով թույլ են տրվել մի շարք իրավանորմերի խախտումներ, որոնց մասին կխոսվի հետագայում:

Այդուհանդերձ, բացի վերը նշված «փոխհամաձայնեցվածության» հարցից, դատավորի օբյեկտիվությունը և անկողմնակալությունը կասկածի տակ դնող այլ հանգամանքներ առկա չեն:

Սնանկության կառավարչի գործողությունների գնահատում.

Սնանկության կառավարչի վարձատրությունը հաշվարկվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Սնանկության վարույթը տևել է բավականին կարճ: Նման կարճ ժամկետի ընթացքում սնանկության կառավարիչը օբյեկտիվորեն չէր կարող սկսել պարտապանի ակտիվների հավաքագրման և նրա անունից համապատասխան հայցերի հարուցման գործընթաց: Քանի

որ պարտապանի պարտքը մարվել է կարճ ժամանակահատվածում, ուստի կառավարիչը նման գործընթաց սկսելու անհրաժեշտություն չի տեսել:

Օրենքով սահմանված ժամկետում սնանկության կառավարչի կողմից չի իրականացվել պարտապանին պատկանող գույքի գույքագրում: Պետք է նշել, որ օրենքով սահմանված ժամկետի ավարտի պահին կառավարչի համար կարող էր ակնհայտ լինել, որ դրա անհրաժեշտությունը չկա: Նույն տրամաբանությամբ սնանկության կառավարչի կողմից չի իրականացվել նաև պարտապանին պատկանող գույքի գնահատում:

Օրենքով սահմանված ժամկետում սնանկության կառավարչի կողմից չի կատարվել պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն: Պետք է նշել, որ օրենքով սահմանված ժամկետի ավարտի պահին կառավարչի համար կարող էր ակնհայտ լինել, որ դրա անհրաժեշտությունը չկա:

Նախքան դատարանի կողմից նշանակված պարտատերերի առաջին ժողովի կայացման օրը, սնանկության գործի վարույթն արդեն ավարտված էր, ուստի կառավարիչը պարտատերերի ժողովի գումարման կապակցությամբ որևէ քայլ չի ձեռնարկել:

Սնանկության կառավարիչը չի կազմել պարտապանի դեմ ներկայացված պահանջների նախնական ցուցակ (այս կապակցությամբ ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի հետագայում):

Ինչպես նշվեց, պարտապանի բաժնետերեր մարել է պարտապանի պարտքը: Պարտապանի բաժնետիրոջ կողմից կատարված վճարումը սնանկության կառավարիչը «բաշխել» է միջանկյալ բաշխման ծրագրով: Մինչդեռ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 80-րդ հոդվածներից հետևում է, որ միջանկյալ բաշխման ծրագիրը կազմվում է այն դեպքում, երբ դատարանի կողմից կայացվում է պարտապանի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին որոշում, և դրա հիման վրա վաճառվում է վերջինիս գույքը (ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել): Սակայն պետք է նշել, որ սնանկության կառավարիչը նման կերպ է վարվել օրենքի բացի հետևանքով («Սնանկության մասին» ՀՀ օրենքը հստակ չի սահմանում, թե տվյալ գործով ստեղծված իրավիճակում ինչ այլ մեխանիզմով պետք է բաշխվեին ստացված միջոցները):

Պետք է նաև նշել, որ կառավարչի կողմից ներկայացված վերջնական հաշվետվությունը, թեև ըստ էության որևէ խնդիր չի առաջացրել և չի խախտել որևէ անձի իրավունքները, սակայն առերևույթ, ձևական առումով չի համապատասխանել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Սնանկության մասին օրենքի կիրառման առանձնահատկություններ, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել.

Պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը ձևական չափանիշներով չի համապատասխանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին (մինչդեռ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այն պետք է համապատասխաներ ՀՀ ԶԴՕ-ի պահանջներին): Սակայն դատարանը ուշադրություն չի դարձրել դիմումի ձևական թերություններին, վարույթ է ընդունել այն և բավարարել է:

Բացի այդ, տվյալ իրավահարաբերության ծագման պահին գործող «Սնանկության մասին» ՀՀ օրենքի խմբագրությունը սահմանում էր (և ներկայումս էլ սահմանում է) երկու

այլընտրանքային տարբերակ՝ այն դեպքի համար, երբ պարտապանը օրենքով սահմանված ժամկետում չի առարկում իրեն սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումի դեմ:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հարկադրված սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, դատավորը նշանակում է դատական նիստ, որին հրավիրվում են պարտապանը և դիմումում նշված պարտատերերը:

Ընդ որում, այս իրավանորմի կիրառումը որևէ կերպ կախված չէ այն հանգամանքից, թե արդյո՞ք պարտապանը վիճարկում է իր սնանկությունը, թե չի վիճարկում:

Իսկ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ եթե դատարանի որոշումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում պարտապանը գրավոր չի վիճարկում իր սնանկությունը, ապա 16-րդ օրը դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանն անվճարունակ է կամ առկա են օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերը: Միաժամանակ, նույն հոդվածը սահմանում է, որ եթե պարտապանը գրավոր վիճարկում է իր սնանկությունը, ապա հրավիրվում է դատական նիստ:

Այսպիսով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքը սահմանում է երկու միմյանց հակասող կարգավորում: Առաջին կարգավորումը սահմանում է, որ հարկադրված սնանկության դիմումը վարույթ ընդունելու դեպքում դատարանը պետք է նշանակի դատական նիստ (առանց արժևորելու պարտապանի կողմից առարկություններ կայացնելու կամ չներկայացնելու հանգամանքը): Երկրորդ կարգավորումը սահմանում է, որ օրենքով սահմանված ժամկետում պարտապանի կողմից առարկություն չներկայացվելու դեպքում դատարանը պարտապանին սնանկ ճանաչելու հարցը լուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Իսկ դատական նիստ հրավիրվում է այն դեպքում, երբ պարտապանն առարկում է դիմումի դեմ: Տվյալ դեպքում դատավորը գործել է երկրորդ կարգավորման համաձայն:

Գործում առկա այլ առանձնահատկություններ.

Ըստ էության, սույն գործով պարտապանի դեմ առկա է եղել երկու պահանջ: Առաջին պահանջը դիմումատու-պարտատիրոջին էր, ով պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո օրենքով սահմանված կարգով պահանջ չի ներկայացրել պարտապանի դեմ (թեև «Սնանկության մասին» ՀՀ օրենքը որևէ բացառություն չի նախատեսում դիմումատու-պարտատիրոջ համար և նրան չի ազատում այլ պարտատերերի հետ հավասար հիմունքներով պահանջ ներկայացնելու պարտականությունից): Երկրորդ պահանջը ՊԵԿ-ինն էր, ով պահանջը ներկայացրել է սնանկության գործն ավարտվելուց հետո:

Ըստ այդմ, **սնանկության կառավարչի կողմից սույն գործով չի կազմվել պարտատերերի պահանջների նախնական ցուցակը, իսկ դատարանի կողմից չի հաստատվել պահանջների վերջնական ցուցակը:**

Ուշադրության արժանի կետեր.

- պարտապանը փաստացի «Ֆինանսապես առողջացել է»՝ առանց ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման և հաստատման,

- եթե պարտատերը նախապես բանակցեր պարտապանի հետ, ապա սնանկության վարույթ սկսելու անհրաժեշտություն, ամենայն հավանականությամբ, չէր ծագի,
- սնանկության վարույթի բոլոր շահագրգիռ սուբյեկտները, ինչ-որ պահից սկսած, գործել են ամբողջությամբ փոխհամաձայնեցված,
- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի մի շարք իրավանորմեր խախտվել են բոլոր սուբյեկտների «լուռ» համաձայնությամբ,
- սնանկության կառավարչի կողմից սույն գործով չի կազմվել պահանջների նախնական ցուցակ, իսկ դատարանի կողմից էլ չի հաստատվել պահանջների վերջնական ցուցակ:

Թիվ 5

Բոլոր օրենքների հոդվածները վկայակոչված են համապատասխան իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Սնանկության գործը միանշանակ տիպային է: Այն դասվում է պրակտիկայում հանդիպող կամավոր սնանկության այն գործերին, որոնք պարտապանի կողմից ուղղված են պարտավորություններից ազատվելուն: Նման գործերին հատուկ՝ պարտապանի որևէ գույք չի հայտնաբերվել, ինչի արդյունքում պարտատերերը իրենց պահանջների որևէ բավարարում չեն ստացել՝ բացառությամբ գրավով ապահովված պարտատիրոջ, ով միջնորդել է կիրառել գրավի առարկայի արտադատական բռնագանձում:

Սնանկության վարույթի պատճառները.

Սնանկության վարույթի տնտեսական պատճառների մասին որևէ տեղեկություն դատական գործում չկա, ուստի որևէ եզրահանգում կատարել հնարավոր չէ: Պարտապանի կողմից ներկայացված դիմումում որպես սնանկության «ընթացակարգային» կամ դատավարական պատճառ նշվել է օրինական ուժի մեջ մտած՝ գումարի բռնագանձման վերաբերյալ դատական ակտը: Նշված դատական ակտի հիմքում դիմումատու-պարտապանի և հայցվորի միջև առկա փոխառության հարաբերություններն են: Նշված դատական ակտով պարտատեր ֆիզիկական անձի պահանջի իրավունքը պարտապանի նկատմամբ, առանց հաշվեգրման ենթակա տոկոսների, գերազանցում է մեկ միլիոն ՀՀ դրամը: Նշված գործով տրվել է կատարողական թերթ, սակայն հաշվի առնելով, որ կատարողական վարույթի ընթացքում պարտապանի անունով որևէ գույք չի հայտնաբերվել, պարտապանի գույքը բավարար չէ պահանջները բավարարելու համար, ԴԱՀԿ ծառայությունը կասեցրել է կատարողական վարույթը՝ պարտապանին կամ պարտատիրոջը առաջարկելով սնանկության հայց ներկայացնել դատարան:

Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն առերևույթ առկա են եղել:

Ընթացակարգային հարցեր.

Պարտապանը ԴԱՀԿ կողմից կատարողական վարույթը կասեցնելուց հետո դատարան է ներկայացրել իրեն սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը՝ բացի սնանկ ճանաչելու պահանջի հիմքում դրված և վերը նշված պարտավորությունից՝ նշելով ևս երկու պարտապանի վերաբերյալ տվյալներ, որոնցից մեկը բանկ է (հետագայում պարտատերերի ցանկում այն կանվանվի Բանկ), մյուսը՝ վարկային կազմակերպություն (հետագայում պարտատերերի ցանկում այն կանվանվի Վարկային կազմակերպություն 3): Պարտապանը դիմումով առաջարկել է նաև սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածություն՝ դիմումին կից ներկայացնելով վերջինիս անձնագրի և վկայականի պատճենը (այս հարցին կանդիդատառնանք հետագայում):

Դատարանը **դիմումի ներկայացման երկրորդ օրը միայն** կայացրել է դիմումը վարույթ ընդունելու և սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշում: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարիչ է նշանակել պարտապանի կողմից առաջարկված անձին՝ դատական ակտի հիմնավորումների մեջ անդրադառնալով հարկադիր սնանկության դեպքում ժամանակավոր կառավարիչ նշանակելու կարգին: Այնինչ, Օրենքի 13-րդ հոդվածի 2.1. կետի համաձայն կամավոր սնանկության դեպքում դատարանը սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակում է կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված թեկնածուին: Նույն օրը ժամանակավոր կառավարչին է ուղարկվել դատարանի որոշումն ու դիմումին կից փաստաթղթերի պատճենները:

Դատարանը որոշումը ուղարկել է օրենքով սահմանված բոլոր մարմիններին, այդ թվում՝ պարտապանի կողմից նշված պարտատերերին, **որը օրենքի ուղղակի պահանջ չէ:**

Դատարանը, դիմումը վարույթ ընդունելուց հետո եռօրյա ժակետի խախտումով պարտապանին վճռով ճանաչել է սնանկ՝ արգելանք դնելով վերջինիս գույքի վրա՝ բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի կարող բռնագանձում տարածվել: Դատարանը որոշումը կրկին ուղարկել է պարտապանի կողմից ներկայացված պարտատերերին՝ թեև օրենքով ուղղակի պահանջ չկա:

Պարտապանի կողմից որոշումն ստանալու պահից երրորդ օրը դատարանը կայացրել է սնանկության կառավարիչ նշանակելու մասին որոշում: Ընդ որում, օրենքի 22-րդ հոդվածի 2.1. կետի համաձայն՝ եթե պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պարտապանը և գործին որպես դիմող մասնակցած պարտատերը ժամանակավոր կառավարչին տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակելու դեմ առարկություն չեն ներկայացնում, ապա դատարանը կարող է որոշում կայացնել տվյալ սնանկության գործով ժամանակավոր կառավարչին կառավարիչ նշանակելու մասին: Այսինքն, օրենքը նշում է որոշման կայացման, և ոչ թե այն մասնակիցների կողմից ստանալու պահը:

Կառավարիչ նշանակելու նույն օրը դատարանը օրենքով սահմանված կարգով կայացրել է պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին որոշում:

Որոշումները կրկին ուղարկվել են իրավասու բոլոր մարմիններին, պարտապանի կողմից նշված բոլոր պարտատերերին (պարտատերերի մասով օրենքի ուղղակի պահանջի բացակայություն) և կառավարչին: Կառավարչին տրվել է նաև հայտարարության տեքստը ու կատարողական թերթ՝ պարտապանին պարտավորեցնելով օրենքի 12-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը ներկայացնել կառավարչին: Կառավարիչն օրենքով

սահմանված 5-օրյա ժամկետում հայտարարությունը տեղադրել է ազդարարում և տպագիր մամուլում: Սույն դատական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կառավարիչը, օրենքով ուղղակի պահանջի բացակայության պայմաններում, ազդարարում տեղադրաման ենթակա բոլոր հայտարարությունները միաժամանակ տեղադրել է նաև տպագիր մամուլում, ինչը ոչ բոլոր գործերով հանդիպող երևույթ է:

Պահանջների ներկայացում

1. Պարտատեր վարկային կազմակերպություն 1՝ օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում ներկայացրել է գումարային պահանջ, ինչպես նաև միջնորդություն գրավի առարկան (ոսկի) արտադատական կարգով իրացնելու վերաբերյալ:

2. Պարտատեր վարկային կազմակերպություն 2՝ օրենքով սահմանված ժամկետում ներկայացվել է դրամային պահանջ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ վկայակոչված երկու պահանջների հիմքում ընկած վարկային պայմանագրերը պարտապանի կողմից կնքվել են սնանկության հիմքում դրված վճռի կատարողական թերթը պարտատիրոջ կողմից ԴԱՀԿ ներկայացնելուց հետո՝ պարտապանի կողմից սնանկության դիմումը դատարան ներկայացնելուն նախորդող կարճ ժամանակահատվածում՝ մոտավորապես մեկ և երեք ամիս առաջ:

3. Բանկ՝ պահանջը ներկայացրել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ: Պահանջի հիմքը՝ պարտապանի կողմից դատարան դիմելուց օրեր առաջ կնքված վարկային պայմանագիր՝ թանկարժեք բջջային հեռախոս ձեռք բերելու համար: Պահանջի ներկայացման պահին պարտքը կազմել է վարկի գումարի մոտ կեսը: Ընդ որում, նշված Բանկ պարտատիրոջ տվյալները դիմումը ներկայացնելու պահին Պարտապանը ներկայացրել է և գործում առկա են ծանուցումներ, որոնցով Դատարանը գործի ողջ ընթացքի վերաբերյալ Բանկին ծանուցել է:

4-րդ և 5-րդ պահանջների ներկայացումը, որոնց կանդրադառնանք ավելի ուշ, կրկին եղել է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ:

- Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման բոլոր դատավարական հիմքերը պահպանվել են:

- Օրենքով սահմանված ժամկետում կառավարիչը կազմել է պարտատերերի նախնական ցուցակ և ուղարկել կողմերին, հրապարակել ազդարարում ու տպագիր մամուլում: Օրենքով սահմանված ժամկետում առարկություններ չստանալուց հետո **դատարանը որոշմամբ հաստատել է պահանջների վերջնական ցուցակը (առանց 3-5-րդ պահանջների, քանի որ դրանք ներկայացվել են ավելի ուշ): Որոշումն անմիջապես ուղարկվել է բոլոր կողմերին:**

Դատարանի որոշմամբ սահմանված ամսաթվին կայացել է պարտատերերի առաջին ժողովը, որով նշվել է, որ առողջացման ծրագիր չի ներկայացվել, պարտապանի կողմից առողջացման մտադրություն չի հայտնվել: Կազմվել է պարտատերերի պահանջների գրանցամատյան, որում ներառվել են երեք պարտատերերը:

- Սնանկության կառավարչի կողմից կայացված որոշմամբ պարտատերերի ցուցակում առկա է եղել սխալ՝ վարկային կազմակերպության պահանջը եղել է ապահովված, սակայն նշվել է չապահովված, որը դատարանը մեխանիկորեն, առանց ստուգման հաստատել է: Նշվածը հաշվի առնելով՝ դատարանը կայացրել է վրիպակն

ուղղելու մասին որոշում՝ Վարկային կազմակերպություն 1-ի պահանջը գրանցելով որպես ապահովված:

- Որոշումն անմիջապես ուղարկվել է բոլոր մասնակիցներին:

Վրիպակն ուղղելու մասին որոշման կայացման օրը դատարանն անդրադարձել է Վարկային կազմակերպություն 1-ի՝ դեռևս պահանջի հետ միասին ներկայացված միջնորդությանը՝ թույլ տալով արտադատական կարգով իրացնել գրավադրված գույքը:

Որոշման կայացման հաջորդ օրը փաթեթը ուղարկվել է կառավարչին, ով նույն օրը այն հրապարակել է ազդարարով, տպագիր մամուլով ու ուղարկել պարտապանին: Նշված որոշման արդյունքում հետագայում կառավարիչը Վարկային կազմակերպություն 1-ին հանել է պարտատերերի ցուցակից:

- Այսպիսով, դատարանը նշված միջնորդության քննարկման մասով խախտել է Օրենքի 39.1-39.2 հոդվածներով սահմանված ժամկետները: Պարտատերն ի սկզբանե չպետք է ընդգրկվեր պարտատերերի վերջնական ցուցակում, եթե առկա էր գույքի արտադատական բռնագանձման որոշում: Սակայն ավելի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ դատարանը մեխանիկորեն հաստատել է կառավարչի կողմից ներկայացված ցուցակը՝ առանց ստուգելու վերջինիս հիմնավորվածությունը:

Կառավարչի միջնորդությամբ դատարանը կայացրել է պարտապանի գույքի հետախուզում հայտարարելու մասին որոշում, որով ԴԱՀԿ ծառայությանը պարտավորեցվել է գույք և ակտիվներ հայտնաբերելու դեպքում տեղեկացնել կառավարչին, ինչպես նաև գույքը և ակտիվները հանձնել կառավարչի տնօրինությանը, տրվել է կատարողական թերթ: Մինչ կատարողական վարույթի ավարտը կառավարիչը դատարանին է ներկայացրել հաշվետվություն պարտապանի գույքային դրության և իր կողմից ձեռնարկված բոլոր գործողությունների մասին: Ըստ հաշվետվության՝ պարտապանի անունով գույք կամ այլ միջոցներ չեն հայտնաբերվել: Հաշվետվությանը հաջորդել է ԴԱՀԿ՝ կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը պարտապանի գույք կամ դրամական միջոցներ չհայտնաբերվելու հիմքով:

Կառավարչի կողմից հրավիրվել է պարտատերերի ժողով՝ կառավարչի կատարած աշխատանքի քննարկման համար, որի արձանագրությունը դատական գործում առկա չէ:

Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ դատարան է մուտքագրվել 4-րդ պարտատիրոջ պահանջ, պարտատեր՝ Ֆիզիկական անձ: Հիմքը՝ ցպահանջ փոխառություն: Դատարանը գրավոր տեղեկացրել է դիմումատուին պահանջը դատավարական սխալներով ներկայացված լինելու մասին, դիմումն ուղղումներով կրկին ներկայացվել է, որն ուղարկվել է կառավարչին, վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով հրապարակվել է ազդարարով և տպագիր մամուլով: Կառավարիչը կազմել է պարտատերերի պահանջների նոր գրանցամատյան, որից դուրս է մնացել Վարկային կազմակերպություն 1-ը և որպես ստորադաս չապահովված Բանկի հետ միասին ավելացել է Ֆիզիկական անձը:

Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ դատարան է մուտքագրվել 5-րդ պարտատիրոջ՝ Վարկային կազմակերպություն 3-ի պահանջը: Պահանջի հիմքը՝ վարկային պայմանագիր՝ կնքված պարտապանի կողմից դատարան դիմելուն նախորդող երրորդ ամսում: Պահանջն ուղարկվել է կառավարչին, ներառվել պարտատերերի պահանջների նոր գրանցամատյան, որն էլ կրկին հրապարակվել է ազդարարով և տպագիր մամուլով:

Վերը նշված պահանջների ամփոփմամբ կառավարչի կողմից դատարան է մուտքագրվել նոր հաշվետվությունը, կազմվել է պարտատերերի պահանջների նոր գրանցամատյան: Կառավարիչը հրավիրել է պարտատերերի ժողով, որը չի կայացել, քանի որ ոչ ոք չի ներկայացել: Դատական գործում առկա չէ ժողովի չկայանալու մասին որևէ արձանագրություն: Փաստը պարզ է դառնում միայն վերաքննիչ բողոքի վերաբերյալ կառավարչի կողմից ներկայացված առարկություններից:

Դատարան է մուտքագրվել կառավարչի վերջնական հաշվետվությունը և պարտապանի գույքի բացակայության հիմքով ավարտի միջնորդություն: Այն ուղարկվել է նաև բոլոր մասնակիցներին:

Դատարանին են ներկայացվել նաև իրավասու մարմիններից կառավարչի կողմից գործի քննության սկզբում ստացված պատասխանները՝ պարտապանի գույքի, ակտիվների, պարտապանի կողմից կատարված գործարքների բացակայության վերաբերյալ:

Միջնորդության քննության արդյունքում դատարանը կայացրել է վճիռ՝ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու և կառավարչի լիազորությունները դադարած համարվելու վերաբերյալ:

Դատարանի վճիռն ուղարկվել է ինչպես մասնակիցներին, կառավարչին, այնպես էլ իրավասու պետական մարմիններին:

Դատական ակտի դեմ Վարկային կազմակերպություն 3-ը ներկայացրել է վերաքննիչ բողոք: Բողոք բերող անձի պահանջը մյուս պահանջների համեմատ ամենամեծն էր: Բողոքի հիմքեր.

Առաջին՝ բոլոր բանկերից չկան պատասխաններ հաշիվների առկայության/բացակայության մասին: Միայն 2 բանկ է պատասխանել, ընդ որում, Յունիբանկից կա պատասխան, որ առկա է հաշիվ: Հանգամանքը դուրս է մնացել ուսումնասիրությունից:

Երկրորդ՝ պարտապանն ունի կայուն աշխատավարձ, որի մասով բռնագանձում չի արվել, անգամ մասնակի:

Երրորդ, կառավարիչը նշանակվել է օրենքի խախտմամբ, պարտապանը իրավունք չունի առաջարկել իր ժամանակավոր կառավարչին, որն էլ հետագայում դարձել է կառավարիչ:

Բողոքը վերադարձվել է պետական տուրքի անդորրագրի և պարտատերերին ուղարկելը հիմնավորող ապացույցների բացակայության հիմքով:

Կրկին ներկայացվել է սահմանված ժամկետում շտկված բողոք, որն ընդունվել է վարույթ:

Պարտապանի և կառավարչի կողմից ներկայացվել են առարկություններ:

Դատարանը կայացրել է բողոքը գրավոր ընթացակարգով քննելու մասին որոշում, քննության արդյունքում դատարանը կայացրել է բողոքը մերժելու մասին որոշում:

Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում այն փաստն է, որ բողոքում նշված հանգամանքների մասին բողոքաբերը առաջին ատյանի դատարանում չի նշել՝ զրկված չլինելով դատավարական հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել սնանկության կառավարչի նշանակման կարգի վերաբերյալ բողոք բերող անձի փաստարկներին:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկեր.

Ուշադրության է արժանի սնանկության ժամանակավոր կառավարչի, ապա նաև կառավարչի նշանակումը: Կամավոր սնանկության վարույթի տարբերություններից մեկը հարկադիրից սնանկության ժամանակավոր կառավարչի նշանակման մեջ է: Կամավոր սնանկության դեպքում պարտապանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն առաջարկելու դատավարական հնարավորություն չունի, իսկ դատարանի համար օրենսդրական նորմը միանշանակ է՝ *Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով՝ ԻԿԿ կողմից: Գործով պարտապանի կողմից դատարանին առաջարկվել է սնանկության գործերով ժամանակավոր կառավարչի անունը և ներկայացվել են կառավարչի անձնագրի և վկայականի պատճենները: Ավելին, պարտապանի կողմից ներկայացվել են փաստաթղթեր (վկայականի, անձնագրի պատճեններ), որոնք վերջինիս մոտ կարող էին հայտնվել կառավարչի կողմից հանձնվելու միջոցով: Նշվածից հստակ կարելի է ենթադրություն կատարել, որ կամավոր սնանկության դիմումի ներկայացումը կատարվել է սնանկության կառավարչի խորհրդով ու ուղղորդմամբ:*

Պարտապանի՝ դատարան դիմելուց առաջ վարկային պայմանագրերի կնքումն ու սպառողական վարկով նոր՝ թանկարժեք բջջային հեռախոսի ձեռքբերումը նույնպես վկայում է այն մասին, որ պարտապանը ստացել է մասնագիտացված խորհրդատվություն, հստակ պատկերացրել է սնանկության վարույթի առանձնահատկություններն ու գիտակցել է, որ կարող է խուսափել վարկային պարտավորությունների կատարումից:

Վերը նշված փաստարկի «օգտին է խոսում» նաև այն հանգամանքը, որ պարտատիրոջ կողմից դատարանին ներկայացված դիմումում առկա են որոշակի մանր վրիպակներ, որոնք կարելի է թույլ տալ, եթե աշխատել նախկինում նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող մեկ այլ գործով դիմումի վրա: Օրինակ՝ սխալ է գրված սնանկության հիմքում դրվող դատական ակտի կայացման ամսաթիվը, սակայն ճիշտ է գործի համարը: Նույնն է իրավիճակը կատարողական թերթի տրամադրման ամսաթվի դեպքում: Դիմումում հնարավորինս քիչ են նկարագրական, փաստական մասերը և հստակ պահպանված են ձևական կողմերը, օրենսդրական ակտերին հղումները, դիմումն ավարտվում է պարտապանի գույքային դրության վերաբերյալ հաշվետվություն հիշեցնող մասնագիտական ձևակերպումներով:

Ուշադրության արժանի մյուս փաստը դատարանի կողմից սնանկության կառավարչի ներկայացրած փաստաթղթերին ու միջնորդություններին «հավաստիության կանխավարկածով» վերաբերվելն է, սնանկության դիմումների ոչ պատշաճ ուսումնասիրությունը: Այսպես, 1-ին պարտատիրոջ կողմից պահանջի գրանցման դիմումի հետ միասին ներկայացվել է գրավադրված գույքի արտադատական բռնագանձման միջնորդություն, որը Դատարանի կողմից սահմանված ժամկետներում չի քննվել: Դատարանի նման վարքագիծը, հետագա վարքագծի ուսումնասիրության համատեքստում, ստեղծում է անփութության տպավորություն և ոչ թե դիտավորության: Սակայն դատարանի նման վարքագծին նախորդել է սնանկության կառավարչի «սխալը», երբ պարտատիրոջ պահանջի՝ գրավով ապահովված լինելու հանգամանքը պարտատերերի ցուցակը կազմելիս կառավարչի կողմից անտեսվել է, իսկ դատարանի կողմից՝ մեխանիկորեն հաստատվել: Նշված հանգամանքները խոսում են դատարանի և կառավարչի միջև առկա վստահության

մասին, որի արդյունքում կառավարչի անփութությունը կամ դիտավորությունը, չստուգվելով դատարանի կողմից, մեխանիկորեն հանգեցնում է դատական սխալի: Ավելին, դատարանի կողմից պահանջի ներկայացման ժամանակ չի կատարվում պարտատիրոջ պահանջի մանրակրկիտ ուսումնասիրություն, ինչը Դատարանին հնարավորություն կտար «նկատել» պահանջն ապահովված լինելու հանգամանքն ու գույքի արտադատական բռնագանձում կատարելու վերաբերյալ միջնորդությունը, որը ներկայացված է ոչ թե առանձին փաստաթղթի ձևով, այլ ներառված է պահանջի տեքստի մեջ:

Հաջորդ կարևոր ռիսկը պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության բացակայությունն է, որը ոչ միայն Օրենքի 58-րդ հոդվածի պահանջի խախտում է, այլև վկայում է որոշ փաստերի վրա «ուշադրություն սևեռելու» օրենքով սահմանված պարտականությունից խուսափելու մասին: Օրենքի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում, կառավարիչը դատարան է ներկայացնում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը, որը պետք է պարունակի տեղեկություններ՝

ա) սնանկության պատճառների մասին, այդ թվում՝ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության մասին.

բ) դատական ծախսերի փոխհատուցման և կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասին.

գ) պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների մասին.

դ) պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքագրման հնարավորության մասին.

ե) պարտապանի կնքած վիճարկելի գործարքների մասին:

• Նման վերլուծության կարևորությունն իրականում մեծ է, այն պաշտոնապես կարող է «փաստաթղթավորել» մի շարք հանգամանքներ, որոնք թեև ակնհայտ առկա են, դատարանն ու կառավարիչը «աչք են փակում»: Սույն գործի պարագայում ակնհայտ է, որ պարտապանը, ունենալով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված վճարային պարտավորություն, և փաստացի կարողանալով ստանալ վարկ (նշված հանգամանքը համակարգի ճիշտ գործելու դեպքում պետք է բացառվեր) ու կատարել մարումներ, ունենալով կայուն աշխատավարձ (տեղեկությունը գործում առկա է ու հայտնի է եղել կառավարչին և դատավարության մյուս մասնակիցներին) մի քանի ամսվա ընթացքում ստացել է վարկային գումարներ, վարկով ձեռք է բերել մոտ 400,000 ՀՀ դրամ արժողությամբ հեռախոս, այնուհետև, խորհրդակցելով ու «պայմանավորվելով» սնանկության կառավարչի հետ, դիմել է դատարան՝ փորձելով «մաքել» իր վճարային պարտավորությունները: Նշված վարքագիծն իր մեջ կարող է պարունակել նաև քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, որին սահմանված կարգով ուշադրություն չի հատկացվել:

Որոշակիորեն ուշադրության է արժանի այն երկու պարտատերերի վարքագիծը, որոնց վերաբերյալ տեղեկությունները պարտապանն ի սկզբանե ներկայացրել է դատարանին, իսկ վերջինս սնանկության վարույթի սկզբից բոլոր ծանուցումներն ու որոշումները, չունենալով նման պարտավորություն, ուղարկել է պարտատերերին: Ստացվում է, սնանկության առաջին օրից ներգրավված լինելով գործին, այդուհանդերձ իրենց պահանջները ներկայացրել են ժամկետի խախտումով: Հաշվի առնելով, որ երկու պարտատերերն էլ, ըստ կանխավարկածի, պետք է լինեն պրոֆեսիոնալ, կամ նշվածը

պատահականություն է, կամ պարտատերերի ու պարտապանի միջև առկա է այլ պայմանավորվածություն, որը գործում առկա փաստերի համատեքստում պարզելի նարավոր չէ: Նշված փաստը հատկապես հետաքրքրաշարժ է նշված պարտատերերից մեկի հետագա վարքագծի համատեքստում, քանի որ վերջինս, ում պահանջն ամենամեծն է, վերաքննիչ բողոքի հիմքում վկայակոչել է դատավարական ու նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնց մասին առաջին ատյանի դատարանում չի խոսել՝ թեև ձևական իմաստով նրա դատավարական իրավունքները սահմանափակված չեն եղել: Այսպիսով, վարկային կազմակերպություն 3-ը, սնանկության վարույթի հենց սկզբից տեղեկացված լինելով վարույթի մասին, պահանջը ներկայացրել է ժամկետի խախտումով, գործի ընթացքում չի մասնակցել որևէ գործընթացի, չի մասնակցել պարտատերերի ժողովին, սակայն հետագայում ներկայացրել է վերաքննիչ բողոք: Վարկային կազմակերպության վարքագիծը կամ խոսում է ակնհայտ ոչ պրոֆեսիոնալիզմի մասին, կամ առկա է այլ հանգամանք, որը հաշվի առնելով, վարկային կազմակերպությունը դիտավորությամբ դրսևորել է անփութություն:

Ֆինանսական առողջացման ծրագիր

Տվյալ սնանկության գործով պարտապանի ֆինանսական առողջացման հարց չի քննարկվել, պարտապանը դիմումով նշել է, որ թեև ցանկություն ունի առողջանալու, սակայն որևէ հնարավորություն չունի: Ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել:

Գործով դատավորի գործողությունների գնահատում՝ օբյեկտիվության, անկողմնակալության տեսանկյուններից.

Վերևում նկարագրվել են դատավարական նորմերի մի շարք խախտումներ, որոնց մի մասը, կարծում ենք, ունեն օբյեկտիվ պատճառներ (կանդիդատանք ստորև), մյուսները պայմանավորված են սնանկության կառավարչի հետ դատարանի «համագործակցությամբ ու վստահությամբ», որին վերը անդրադարձել ենք:

Սնանկության կառավարչի գործողությունների գնահատում.

Սնանկության կառավարչի վարձատրությունը հաշվարկվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Սնանկության վարույթը տևել է բավականին կարճ: Կառավարչի կողմից օրենքով սահմանված պարբերականությամբ կազմվել և դատարանին են ներկայացվել հաշվետվություններ, պահպանվել են օրենքով սահմանված ընթացակարգային պահանջները՝ բացառությամբ վերը նշված խախտումների, որոնց թվում՝ չի իրականացվել պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն, չի իրականացվել պարտապանին պատկանող գույքի գույքագրմանն ուղղված գործողություններ:

Գործում առկա է եղել Յունիբանկի կողմից ներկայացված տեղեկություն, որ պարտապանի անունով բանկում առկա է հաշիվ՝ առանց նշումի հաշվին դրամական միջոցների առկայության կամ բացակայության վերաբերյալ: Գործում բացակայում է լրացուցիչ փաստաթուղթ, որից պարզ կլինի, թե ինչ միջոցներ են ձեռք առնվել նշված հաշվի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ճշտելու համար:

Սնանկության մասին օրենքի կիրառման առանձնահատկություններ, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել.

Դատարանը կամավոր սնանկության դիմումի ներկայացման երկրորդ օրն է միայն կայացրել դիմումը վարույթ ընդունելու և սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակելու մասին որոշում: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը դիմումը վարույթ է ընդունում այն ստանալու օրը: Այս և Օրենքով սահմանված դատավարական որոշ ժամկետներ Դատարանի կողմից խախտվում են ինչը, գուցե պայմանավորված է սահմանված ժամկետների և դրանց ընթացքում դատարանի կողմից կատարման ենթակա գործողությունների ոչ համաչափությամբ: Նույնն է իրավիճակը նաև կառավարչի ընտրության ժամանակ: Այսպես, Օրենքի 22-րդ հոդվածի 2.1. կետի համաձայն՝ եթե պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պարտապանը և գործին որպես դիմող մասնակցած պարտատերը ժամանակավոր կառավարչին տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակելու դեմ առարկություն չեն ներկայացնում, ապա դատարանը կարող է որոշում կայացնել տվյալ սնանկության գործով ժամանակավոր կառավարչին կառավարիչ նշանակելու մասին: Այսինքն, օրենքը նշում է որոշման կայացման, և ոչ թե այն մասնակիցների կողմից ստանալու պահը: Այնինչ, պարտատերերը օբյեկտիվորեն չեն կարող առարկել, քանի դեռ չեն տեղեկացվել սնանկ ճանաչելու վճռի մասին: Նշված դեպքում Դատարանը, խախտելով օրենքի ուղղակի պահանջը, ապահովում է դատավարության մասնակիցների իրավունքների իրացման օբյեկտիվ հնարավորությունը:

Օրենքի կիրառման մյուս առանձնահատկությունը վերաբերում է ապահովված պահանջով պարտատիրոջ կողմից գույքի արտադատական բռնագանձում իրականացնելուն: Գույքի արտադատական բռնագանձում իրականացնելու դատարանի թույլտվությունից հետո գործում բացակայում են տեղեկություններ, թե գույքը բռնագանձման պահին որքան է գնահատվել, պարտքը մարվելուց հետո մնացորդային գումար մնացել է, թե ոչ: Գույքի՝ վարկի գումարը գերազանցելու դեպքում, ստացվում է, դրամական միջոցների տարբերությունը կարող է վերադարձված լինել պարտապանին: Նշված փաստերի բացակայության պատճառներից մեկը օրենքով սահմանված մեխանիզմների բացակայությունն է, քանի որ պարտատիրոջ կողմից գույքի իրացման թույլտվություն ստանալուց հետո օրենքի ուղղակի կիրառության հետևանքով ոչ միայն համապատասխան պարտատերն է դուրս գալիս պարտատերերի ցանկից, այլև վերջինիս կողմից իրացվող գույքն է դուրս գալիս կառավարչի և մյուս պարտատերերի «հսկողությունից»: Այնուամենայնիվ, կառավարչի կողմից պատշաճ գույքագրում իրականացվելու դեպքում, կարծում ենք, ընդհանուր կարգավորումների շրջանակում, վերջինս իրավասու է պարտատիրոջից պահանջել ու ստանալ լրացուցիչ տեղեկություններ գույքի իրացման և մնացորդային գումարի վերաբերյալ, որը չի կատարվել:

Օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է. «Ֆիզիկական անձի սնանկության մասին տեղեկությունների հրապարակումն իրականացնում է տվյալ ֆիզիկական անձը, եթե սնանկ ճանաչելու դիմումը ներկայացրել է ինքը»: Սույն գործի շրջանակներում տեղեկությունների հրապարակումն ամբողջությամբ իրականացվել է սնանկության կառավարչի կողմից: Նշվածը պրակտիկայում հանդիպող երևույթ է, որը գուցե պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավարության ոչ պրոֆեսիոնալ մասնակցի

համար նման պարտավորության սահմանումն իրատեսական չէ և պրակտիկայում կարող է հանգեցնել դժվարությունների:

Գործում առկա այլ առանձնահատկություններ.

Ուշադրության արժանի հանգամանք՝ ՔԿԱԳ մարմինը կառավարչին չի տրամադրել տեղեկատվություն պարտապանի ամուսնական դրության վերաբերյալ՝ հղում կատարելով օրենսդրական այն հիմքին, որ կառավարիչը նման տեղեկություններ ստանալու իրավասություն ունեցող սուբյեկտների մեջ չկա: Կարծում ենք, կառավարիչը ՔԿԱԳ-ից նման տեղեկատվության ստացման իրավունք պետք է ունենա, եթե ՔԿԱԳ է ներկայացնում սնանկության գործի և իր՝ որպես այդ գործով սնանկության կառավարիչ նշանակված լինելու վերաբերյալ հիմնավորումներ:

Գործում առկա ուշադրության արժանի մյուս բոլոր առանձնահատկությունները վերը նկարագրվել են:

Ուշադրության արժանի կետեր.

- սնանկության վարույթի արդյունքում որևէ պարտատեր որևէ բավարարում չի ստացել, բացառությամբ գրավով ապահովվածի, ով կիրառել է բռնագանձման արտադատական կարգ,
- սնանկության դիմումը վարույթ է ընդունվել, պարտապանը վճռով սնանկ է ճանաչվել օրենքով սահմանված դատավարական ժամկետների խախտումներով,
- սնանկության ժամանակավոր կառավարչի ընտրության ժամանակ դատարանի կողմից կիրառվել է հարկադիր սնանկության կարգը, ոչ թե կամավոր՝ ժամանակավոր կառավարիչ նշանակելով պարտապանի կողմից առաջարկված թեկնածուին,
- դատարանը վարույթի ողջ ընթացքում ծանուցել է ոչ միայն օրենքով սահմանված սուբյեկտներին, այլև այդ պահին իրեն հայտնի բոլոր հնարավոր շահարգիչ կողմերին (ապագա պարտատերերին),
- քանի որ հնարավոր չի եղել գտնել պարտապանի հաշվապահական և այլ փաստաթղթերը, սնանկության կառավարիչը չի կատարել (պատշաճ չի կատարել) օրենքով սահմանված մի շարք գործողություններ,
- կառավարչի կողմից պարտատերերի ցուցակում կատարված սխալը վերահաստատվել է նաև դատարանի կողմից՝ հանգեցնելով դատական սխալի,
- չի կատարվել պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծություն,
- ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել:

Թիվ 6

Բոլոր օրենքների հոդվածները վկայակոչված են համապատասխան իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ:

Սնանկության գործը միանշանակ տիպային է: Այն կարելի է բնութագրել որպես պրակտիկայում հաճախ հանդիպող «դատարկ» սնանկության գործ: Այսինքն՝ պարտապանի որևէ գույք չի հայտնաբերվել, ինչի արդյունքում պարտատերերը իրենց պահանջների որևէ բավարարում չեն ստացել: Մյուս կողմից, պարտապանը սնանկ է ճանաչվել պարզեցված ընթացակարգով՝ որպես «բացակայող» պարտապան (այս ընթացակարգը ամրագրված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածով): Պարտապանը փաստացի չի ստացել որևէ ծանուցում, որևէ եղանակով չի մասնակցել վարույթին: Նմանատիպ գործերը պրակտիկայում հաճախ հանդիպող են:

Սնանկության վարույթի պատճառները.

Սնանկության վարույթի տնտեսական խորքային պատճառների մասին եզրահանգում կատարելը դժվար է՝ գործում նման տեղեկությունների բացակայության պատճառով: Ընթացակարգային իմաստով ընկերության սնանկության պատճառ է հանդիսացել պարտապան իրավաբանական անձի մոտ հարկային մարմինների կողմից կատարված բյուջեի ստուգումը, որի արդյունքում կազմված ստուգման ակտով ընկերությանն առաջադրվել է հարկային պարտավորություն: Գործում առկա դատավճռով հաստատված փաստերից կարելի է եզրահանգում կատարել, որ ընկերության կողմից առանձնապես խոշոր չափերի հարկը թաքցվել է ուղղակի դիտավորությամբ, փաստացի, ընկերության գործունեության մի մասն իրականացվել է սև հաշվապահությամբ:

Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը թեև առերևույթ առկա են, պարտավորության չափն ավելի քան մեծ է պարտապանին սնանկ ճանաչելու համար, սակայն սնանկության դիմումի հիմքում դրված փաստերը ցույց են տալիս, որ դիմումի դեմ առարկելու հիմքեր կարող էին լինել: Այսպես, թեև սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը ֆորմալ առումով համապատասխանել է օրենքի պահանջներին, սակայն այդ դիմումին կից ներկայացված փաստաթղթերը բավարար և անվիճելի հիմք չէին հանդիսանում պարտապանին սնանկ ճանաչելու համար: Այսպես.

- 1) դիմումի հիմքում դրվել է դիմելուց ավելի քան 5 տարի առաջ կազմված և անբողոքարկելի դարձած ստուգման ակտը: Դիմումատուի կողմից ներկայացված հաշվարկում ներառվել է ոչ միայն ակտով սահմանված հարկային պարտավորությունը, այլև դրա նկատմամբ մինչև դիմումի ներկայացման պահը հարկային մարմնի կողմից շարունակաբար հաշվարկված տոկոսները, տույժերը: Հաշվարկի հիմքում դրվել են հարկային մարմնի կողմից կազմված տեղեկանքները:
- 2) պարտատիրոջ կողմից դիմումին կից ներկայացվել է դատավճիռ, որով պարտապան իրավաբանական անձի տնօրենը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով և նույն դատավճռով դատարանը վճռել է վերջինից բռնագանձել չվճարված հարկի գումարը, դրա նկատմամբ հաշվարկված տույժերն ու տուգանքները: Ստացվում է, դիմումի հիմքում դրված վճարային պարտավորությունը արդեն իսկ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ենթակա է բռնագանձման պարտապան ընկերության տնօրենից:

Դատարանը պատշաճ կերպով չի ստուգել պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերի առկայությունն ու դրանց անվիճելի լինելու հանգամանքը: Սա պայմանավորված է հավանաբար նաև այն հանգամանքով որ պարտապանը ի հայտ չի եկել և երբևէ չի վիճարկել

իր սնանկությունը: Ավելին, հաշվի առնելով գործում առկա փաստերը, պատշաճ ծանուցվելու դեպքում անգամ պարտապանը որևէ շահագրգռվածություն չէր էլ ունենալու ներգրավվելու գործին, ընկերության սնանկ ճանաչվելն ու լուծարվելը նաև «ձեռնտու էր» պարտապանին: Արդյունքում, դատարանը ցուցաբերել է ձևական մոտեցում՝ սնանկ ճանաչելով պարտապանին:

Սա բավականին տարածված արատավոր պրակտիկա է, երբ դատարանները, պարտապանի առարկության բացակայության պայմաններում, մանրակրկիտ չեն ուսումնասիրում դիմումի հիմնավորումները և ղեկավարվում են դիմումատու-պարտատիրոջ հայտնած տեղեկությունների իսկության կանխավարկածով:

Այսպիսով, եթե պարտապանն ի հայտ գար և առարկեր իրեն սնանկ ճանաչելու մասին դիմումի դեմ, և եթե դատավորը բավարար ուշադրությամբ ստուգեր ներկայացված դիմումի հիմքերը, ապա, հավանական է, որ պարտապան ընկերությունը ներկայացված հիմքերով ու հիմնավորումներով սնանկ չէր ճանաչվի, բացի այդ, կբարձրացվեին օրենքի կիրառելության հետ կապված մի շարք հարցեր: Տպավորություն է, որ նշված գործը պրատիկայում հանդիպող այն դեպքերից է, երբ սնանկության վարույթն օգտագործվել է որպես «սանիտարական մաքրում»՝ մեծ հարկային պարտավորություններով ծանրաբեռնված ու վճարման որևէ միջոց կամ գույք չունեցող ընկերությունը լուծարելու համար:

Ընթացակարգային հարցեր.

Պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ է ընդունվել այն ստանալու հաջորդ օրը, ինչը օրենքի ուղղակի պահանջի խախտում է: Ի դեպ, ժամկետի նման խախտումներ դատավարական պրակտիկայում հաճախ են հանդիպում, ինչը կարող է ունենալ նաև օբյեկտիվ հիմքեր:

Դիմումատու-պարտատիրը սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածություն չի առաջարկել: Դատարանն օրենքով սահմանված կարգով դիմել է սնանկության կառավարիչների ԻԿԿ-ին՝ խնդրելով առաջարկել սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածություն: Սնանկության կառավարիչների ԻԿԿ-ում կատարված վիճակահանությանը մասնակցել է 36 սնանկության կառավարիչ: Տեղի ունեցած վիճակահանության արդյունքում սնանկության կառավարիչների ԻԿԿ-ն դատարանին առաջարկել է սնանկության ժամանակավոր կառավարչի թեկնածություն, որը հետագայում հաստատվել է դատարանի որոշմամբ:

Պարտապանը չի ստացել որևէ ծանուցում (այդ թվում՝ դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը): Դատարանը, ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածով, հայտարարել է պարտապան իրավաբանական անձի գույքի, փաստաթղթերի և տնօրենի հետախուզում: Սնանկության գործի վարույթը կասեցվել է հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը (պատասխանողը գտնվում է հետախուզման մեջ): Դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա հարուցվել է կատարողական վարույթ, սակայն կատարողական գործողությունների արդյունքում անհնարին է եղել պարտապան իրավաբանական անձի գույքի և փաստաթղթերի, ինչպես նաև՝ իրավաբանական անձի տնօրենի հայտնաբերումը: Կատարողական վարույթի ավարտից

հետո սնանկության գործի վարույթը, սնանկության կառավարչի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ, վերսկսվել է:

Սնանկության գործի վարույթը վերսկսելուց հետո դատարանը ևս մեկ անգամ փորձել է ծանուցել պարտապանին («Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով): Պարտապանն այս ծանուցումը ևս չի ստացել: Արդյունքում, դատարանը պարտապանին սնանկ է ճանաչել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 103-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ որպես «քաղաքացիական պարտապան»:

Վճռի կայացումից հետո նույն օրը դատարանը կրկին դիմել է ԻԿԿ-ին՝ խնդրելով ներկայացնել կառավարչի թեկնածուի տվյալները և միաժամանակ նշելով, թե ով է տվյալ գործով եղել ժամանակավոր կառավարիչը: **Դատարանի կողմից ուղարկված պահանջագրի հիման վրա ԻԿԿ-ում տեղի է ունեցել վիճակահանություն, որին մասնակցել է միայն մեկ կառավարիչ: Դա հենց այն անձն էր, ով նախկինում վիճակահանությամբ ընտրվել ու դատարանի որոշմամբ նշանակվել էր որպես սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ: Բնական է, որ վիճակահանությունը «հաղթել է» դրա միակ մասնակիցը (ժամանակավոր կառավարիչը), ով վիճակահանության հիման վրա նշանակվել է որպես սնանկության կառավարիչ:**

Սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի կայացումից և սնանկության կառավարչի տվյալները ԻԿԿ-ից ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում դատարանը նշանակել է պարտատերերի առաջին ժողով, սնանկության կառավարիչ: Գործում առկա է կառավարչի գրությունը, ըստ որի՝ պարտապանին սնանկ ճանաչելու, սնանկության կառավարիչ նշանակելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին հայտարարությունը www.azdarar.am կայքում տեխնիկական խնդիրների պատճառով չի տեղադրվել, սակայն հրապարակվել է տպագիր մամուլում: Հատկանշական է, որ օրենքով նշված հայտարարությունը պետք է փակցվի դատարանի շենքում և հրապարակվի www.azdarar.am կայքում: Օրենքով այլընտրանք նախատեսված չէ: Եթե իրականում ինտերնետային կայքում հրապարակման հետ կապված եղել են տեխնիկական խնդիրներ, ապա կառավարչի կողմից որպես երաշխիք տպագիր մամուլի միջոցով հայտարարության հրապարակումը ողջունելի է:

Սնանկության վարույթի շրջանակներում պարտապանի դեմ պահանջ է ներկայացրել միայն դիմումատու-պարտատերը՝ Ֆինանսների նախարարությունը: Ընդ որում, պահանջում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների հաշվարկը պարտապանին սնանկ ճանաչելու վճռի ամսաթվից հետո շարունակվում է, ինչը որևէ կերպ չի արժանացել ոչ դատարանի, ոչ սնանկության կառավարչի արձագանքին:

Կառավարիչը դատարանին է ներկայացրել ֆինանսական վիճակի վերլուծություն, կազմել է պարտատերերի պահանջների նախնական ցուցակ, այն սահմանված կարգով հրապարակել, ապա, օրենքով սահմանված ժամկետում չստանալով առարկություններ, դատարանին է ներկայացրել միջնորդություն՝ այն հաստատելու վերաբերյալ: Դատարանի կողմից կայացված որոշմամբ հաստատվել է պարտատերերի վերջնական ցուցակը:

Պարտատերերի առաջին ժողովն օրենքով սահմանված կարգով հրավիրվել և կայացել է: Պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել: Ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ սնանկության կառավարիչը

դատարանին միջնորդել է որոշում կայացնել պարտապան իրավաբանական անձի լուծարման վարույթ սկսելու մասին:

Դատարանը բավարարել է կառավարչի միջնորդությունը և կայացրել է որոշում՝ պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին: Պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին հայտարարությունն օրենքով սահմանված կարգով հրապարակվել է:

Մեկ այլ որոշմամբ դատարանը, հիմք ընդունելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը, կասեցրել է գույքը կառավարելու և տնօրինելու՝ պարտապանի բոլոր իրավունքները:

Որոշ ժամանակ անց, պարտապանի սնանկության կառավարիչը դատարանին միջնորդել է ավարտել սնանկության գործը՝ դատարանին ներկայացնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածով սահմանված վերջնական հաշվետվությունը, որում նշել է նաև, որ Սնանկության մասին ՀՀ օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարիչը գործն ավարտելու իր մտադրության վերաբերյալ ծանուցում է ուղարկել միակ պարտատիրոջը և սահմանված ժամկետում առարկություններ չի ստացել:

Դատարանը սնանկության գործն ավարտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով (սնանկության վարույթի ցանկացած փուլում դատավորը ... վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին, եթե ... պարտապանը չունի որևէ գույք): Դատարանի վճռով պարտապանը լուծարվել է:

Ընդհանուր առմամբ, սնանկության վարույթը սկսվել է 2014թ. վերջին եռամսյակին և ավարտվել է 2017թ. սկզբին: Սնանկության վարույթի արդյունքում գրանցված միակ պարտատերը որևէ բավարարում չի ստացել:

Դատական գործում առկա է տեղեկանք, համաձայն որի՝ ընկերության լուծարումը ռեգիստրի կողմից գրանցվել է վճռի կայացումից երեք ամիս անց: Միևնույն տեղեկանքով նշված է, որ լուծարման վերաբերյալ տեղեկանքը դատարան ներկայացնելու համար դատարանի աշխատակազմը բազմիցս դիմել է կառավարչին:

Հնարավոր կոռուպցիոն ռիսկեր.

Ժամանակավոր կառավարչի և կառավարչի ընտրության հարցում դիմումատուին առերևույթ որևէ մասնակցություն չի ունեցել, դրսևորել է պասիվ վարքագիծ՝ ընտրությունը թողնելով ԻԿԿ-ին: Սակայն, ինչպես վերը նշվել էր, ԻԿԿ-ի կողմից սնանկության կառավարչի ընտրության իրականացման ժամանակ վիճակահանությանը մասնակցել է միայն մեկ թեկնածու՝ տվյալ գործով ժամանակավոր կառավարիչը: Սա պրակտիկայում լայն տարածում ունեցող մեխանիզմ է. սնանկության կառավարիչների ներքին պայմանավորվածության համաձայն (որը, որպես կանոն, չի խախտվում)՝ սնանկության կառավարիչ նշանակվելու «վիճակահանությանը» մասնակցում է միայն այն անձը, ով հանդիսանում է տվյալ սնանկության գործով պարտապանի ժամանակավոր կառավարիչը: Քանի որ «վիճակահանությանը» մասնակցում է միայն 1 մասնակից, ուստի, հենց նա էլ դառնում է հաղթող և նշանակվում է որպես տվյալ սնանկության գործով պարտապանի սնանկության կառավարիչ: Հատկանշական է նաև այն, որ նշված ներքին պայմանավորվածության մի օղակն էլ դատարանն է, քանի որ կառավարչի տվյալներ ուղարկելու վերաբերյալ իր պահանջագրում, կարծես գործընթացը հեշտացնելու համար, դատարանը նշել է գործով ժամանակավոր կառավարչի անունը:

Ֆինանսական առողջացման ծրագիր.

Տվյալ սնանկության գործով պարտապանի ֆինանսական առողջացման հարց չի քննարկվել և, հետևաբար, ֆինանսական առողջացման ծրագիր չի ներկայացվել:

Գործով դատավորի գործողությունների գնահատում՝ օբյեկտիվության, անկողմնակալության տեսանկյուններից.

Ինչպես արդեն վերը նշվել է, դատարանը պատշաճ ուսումնասիրության առարկա չի դարձրել պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը, չի քննարկել այն հանգամանքը, որ միևնույն վճարային պարտավորության վերաբերյալ ուժի մեջ մտած մեկ այլ դատական ակտ է առկա, որով այդ պարտավորությունը դրված է ոչ թե պարտապանի, այլ պարտապան իրավաբանական անձի տնօրենի վրա: Ավելին, դատարանը պատշաճ քննարկման առարկա չի դարձրել պահանջի ներկայացման ժամանակ միակ պարտատիրոջ կատարած հաշվարկը և «չի նկատել», որ դրանում տույժերի, տոկոսների հաշվարկը շարունակվել է նաև սնանկ ճանաչելու վերաբերյալ վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Փաստը որևէ արձագանք չի ստացել նաև կառավարչի գործողություններում: Նշվածը, կարծում ենք, գործի փաստական հանգամանքները մանրամասն ուսումնասիրելու մոտիվացիայի բացակայության արդյունք է, քանի որ նմանատիպ գործերով չկա «վերահսկողություն» պարտապանի և պարտատերերի կողմից, չկա ռիսկ, որ դատարանի գործողությունները կրողորքարկվեն մասնակիցների կողմից:

Այլ դրվագներով դատավորի օբյեկտիվությունը դժվար է գնահատել, քանի որ գործով առկա չեն «վեճային» և խնդրահարույց իրավիճակներ, պարտապանն առհասարակ ներգրավված չի եղել վարույթին և չկա վերջինիս հետագա ներգրավվման մոտիվացիա, կառավարիչը և պարտատերը չեն դրսևորել որևէ ակտիվություն, պարտատերը սնանկության կառավարչի կամ դատարանի գործողությունների դեմ որևէ կերպ «չի պայքարել»: Ամբողջ սնանկության գործն ընթացել է փոխհամաձայնեցված եղանակով (բացի պարտապանից, որն այդպես էլ չի հայտնաբերվել): Նման պայմաններում դժվար է գնահատել դատավորի օբյեկտիվությունը, հատկապես, երբ սուբյեկտիվիզմ դրսևորելու հնարավորություն և առիթ տվյալ գործով չի եղել:

Սնանկության կառավարչի գործողությունների գնահատում.

Սնանկության կառավարիչը չի կատարել պարտապանի ակտիվների/դեբիտորական պարտքերի հավաքագրում (այդ թվում՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով սահմանված հայցերի հարուցում), քանի որ հնարավոր չի եղել գտնել պարտապանի հաշվապահական կամ այլ փաստաթղթերը: Փաստաթղթերի բացակայության պայմաններում կառավարիչը չէր կարող պատկերացում ունենալ սնանկ ճանաչված պարտապանի դեբիտորական պարտքերի և հավաքագրման ենթակա այլ ակտիվների մասին: «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված մարմիններից ստացված տեղեկատվության համաձայն՝ պարտապանը չուներ որևէ գույք, իսկ վերջին հինգ տարվա ընթացքում պարտապանի կողմից չէր կատարվել որևէ անշարժ գույքի օտարում:

Սնանկության կառավարիչն ամեն դեպքում փորձել է կատարել պարտապանի գույքի գույքագրում, սակայն պարտապան ընկերության իրավաբանական հասցեում գույքագրման ենթակա որևէ գույք չի հայտնաբերվել:

Քանի որ պարտապանի որևէ գույք չի հայտնաբերվել, ուստի, բնականաբար, սնանկության կառավարիչի կողմից չէր կարող իրականացվել գույքի գնահատում: Կառավարիչի կողմից կազմվել է գույքագրման ակտ, որում նշվել է, որ գույք չի հայտնաբերվել:

Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետում: Սնանկության կառավարիչը, սակայն, այս փաստաթղթի նկատմամբ ցուցաբերել է ձևական մոտեցում: Այսպես.

- 1) Սնանկության պատճառների մեջ նշվել է հարկային պարտավորությունների չկատարումը, սակայն որևէ անդրադարձ կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների հայտնաբերմանը կամ բացակայությանը չի կատարվել,
- 2) չկա անդրադարձ դատական ծախսերի փոխհատուցման և սնանկության կառավարիչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելուն,
- 3) Պարտապան ընկերության վճարունակության վերականգնման հնարավորությունների մասով նշվել է, որ վճարունակության վերականգնման հեռանկարներ այս պահին չկան,
- 4) Պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքագրման և վիճարկելի գործարքների առկայության մասով կառավարիչը նշել է, որ չունի դեբիտորական պարտքեր, չկան վիճարկելի կնքված գործարքներ, այս պահին պարտապանը չունի բավարար միջոցներ պահանջները բավարարելու համար:

Միևնույն ժամանակ, կառավարիչը նշել է, որ ձեռնարկված գործողությունների արդյունքում պարտապանին պատկանող գույք չի հայտնաբերվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառավարիչը այդպես էլ չի ունեցել պարտապանի որևէ փաստաթուղթ, նման կատեգորիկ եզրահանգումներ կատարելը խոսում է այն մասին, որ գործել է դրանց բացակայության կանխակալ մոտեցմամբ: Թեև նշված պայմաններում ամբողջական և արժանահավատ ֆինանսական վերլուծություն օբյեկտիվորեն հնարավոր չէր կազմել, սակայն, որևէ ուշադրության չի արժանացել այն հանգամանքը, որ գործում առկա է տեղեկատվություն, որ միևնույն փաստերի (պարտապանի կողմից հարկերը չվճարելու) փաստով քննվել է քրեական գործ և տրամաբանական է, որ ընկերության վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կարող են առգրավված լինել այդ գործի շրջանակներում ու այդ պահին գտնվելին դատական գործում (քրեական): Ուստի, կարծում ենք, սնանկության կառավարիչը չի ցուցաբերել բավարար ջանասիրություն՝ պարտապան ընկերության ֆինանսահաշվապահական և այլ փաստաթղթերը հայտնաբերելու հարցում:

Սնանկության մասին օրենքի կիրառման առանձնահատկություններ, որոնց վրա հարկավոր է ուշադրություն դարձնել.

Տվյալ գործի շրջանակներում վերը նշվածից բացի այլ նկատառումներ չկան:

Գործում առկա այլ առանձնահատկություններ.

Գործի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պարտապան ընկերության գրանցման հասցեն համընկնում է հիմնադիր-տնօրենի հասցեի հետ,

պարտապան իրավաբանական անձի հիմնադիր-տնօրենը դիմումատուի պահանջի հիմքում ընկած վճարային պարտավորությունները չկատարելու համար դատապարտվել է ազատազրկման, որից հետո, ըստ գործում առկա տեղեկությունների, փոխել է բնակության վայրը (բոլոր ծրարները վերադարձել են «տեղափոխվել է», «վաճառել է» և նման այլ գրառումներով): Թե՛ դատարանը, թե՛ սնանկության կառավարիչը, հետևելով օրենքի տառին, բովանդակային իմաստով չեն ձեռնարկել որևէ միջոց պարտապանին հայտնաբերելու համար, որի օրինակ կարող էր լինել ոստիկանությունից ստացվող տեղեկատվությունը՝ տնօրենի հաշվառման նոր հասցեի վերաբերյալ: Նման պասիվության, կառավարչի և դատարանի անտարբերության հիմնական պատճառը, գործի «փուլ» լինելն է և վարույթի մասնակիցների համոզվածությունը, որ սնանկ ճանաչված ընկերության լուծարումից բացի տվյալ գործն այլ նպատակ չի կարող հետապնդել:

Ուշադրության արժանի կետեր.

- պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերը միանշանակ չեն եղել, իսկ դատարանը պատշաճ կերպով չի ստուգել և քննարկել այդ հիմքերի առկայությունը,
- սնանկության վարույթի արդյունքում պարտատերը որևէ բավարարում չի ստացել,
- սնանկության դիմումը դատարանի կողմից վարույթ է ընդունվել դատավարական ժամկետի խախտմամբ՝ ներկայացնելու հաջորդ օրը,
- սնանկության կառավարիչների ԻԿԿ-ում կատարված վիճակահանությանը միայն մեկ սնանկության կառավարիչ է մասնակցել,
- քանի որ հնարավոր չի եղել գտնել պարտապանի հաշվապահական և այլ փաստաթղթերը, սնանկության կառավարիչը չի կատարել (պատշաճ չի կատարել) օրենքով սահմանված մի շարք գործողություններ,
- դատարանը, թեև օրենքով պարտավոր չէր, սակայն ցանկության դեպքում կարող էր ձեռնարկել լրացուցիչ միջոցներ՝ պարտապանին հայտնաբերելու և նրան ծանուցելու ուղղությամբ,
- թեև ֆինանսական վիճակի վերլուծություն առկա է, այն կատարվել է ձևական պահանջը բավարարելու համար,
- ֆինանսական առողջացման ծրագիր չի քննարկվել:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԸՆՏՐԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Ուսումնասիրության շրջանակներում առաջադրված նպատակին ու խնդիրներին համապատասխան ընտրվել են հետազոտության հետևյալ մեթոդները.

- **Ընտրանքային կիսաձևայնացված հարցում** պարտապանների հետ,
- **Ֆոկուս-խմբային քննարկումներ** սնանկության ոլորտին առնչվող մի շարք թիրախային խմբերի հետ,
- **Խորին հարցազրույցներ** ոլորտի փորձագետների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ:
- **Դատական գործերի ուսումնասիրություն:**

Ընտրված մեթոդները հնարավորություն տվեցին հավաքագրել սնանկության համակարգի և գործընթացի վերաբերյալ ինչպես քանակական, այնպես էլ որակական տեղեկատվություն: Որակական և քանակական տեղեկատվության ամփոփումը մի կողմից ապահովեց սնանկության դեպքերի կվանտիֆիկացիա, հնարավորություն տվեց բացահայտելու առկա օրինաչափությունները, իսկ մյուս կողմից թույլ տվեց բացատրել դրանց պատճառահետևանքային կապերը՝ հիմնվելով որակական մեկնաբանությունների և օրինակների վրա: Հավաքագրված ինֆորմացիան հնարավորություն տվեց մշակելու իրատեսական առաջարկություններ ոլորտի կատարելագործման ուղղությամբ:

Կիսաձևայնացված հարցազրույցների ընտրանքը

Դեմ առ դեմ կիսաձևայնացված հարցազրույցներն իրականացվել են սնանկ ճանաչված (այդ թվում՝ ավարտված սնանկության գործերով) կամ սնանկացման գործընթացում գտնվող սուբյեկտների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ: Դատական գործերի ընտրությունն իրականացվել է բազմաստիճան շերտավորված ընտրանքի մեթոդաբանությամբ: Շերտավորման հատկանիշ հանդիսացել են սնանկության դատարանները և մարզերը:

Հետազոտության գլխավոր համախմբություն է հանդիսացել 2016–2018թթ.¹³ առկա դատական գործերի ցանկը, որը կազմել է ընդամենը **7387 դատական գործ**: Ընտրանքային համախմբության ծավալն որոշվել է պատահական չկրկնվող ընտրանքի հետևյալ բանաձևով.

$$n = \frac{k_{\alpha}^2 \sigma_{\max}^2 N}{\Delta^2 N + k_{\alpha}^2 \sigma_{\max}^2}$$

¹³ Նշված ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2016 թվականին էական լրամշակման ենթարկվեց «Սնանկության մասին» ՀՀ օրենքը, մասնավորապես 2016թ. հունիսի 17-ին վերոնշյալ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով նախատեսվեց սնանկության վտանգի վարույթը, կարգավորվեց ապահովված իրավունքի առարկայի իրացման, ապահովված պահանջի չափը հաստատելու մասին դիմումի քննության կարգը, ինչն ըստ էության պետք է հանգեցներ սնանկությանը վերաբերող գործերի ծավալի փոփոխմանը:

Որտեղ՝

$N = 8483$ - գլխավոր համախմբության ծավալը

$K_{\alpha} = 1,96$ - վստահելիության գործակիցը

$\Delta = 0,05$ - 5% - սահմանային սխալի մեծությունը

$\sigma_{\max}^2 = 0,25$ - միջին քառակուսային շեղումը

Արդյունքում ստացվել է $n=365$, այսինքն ընտրանքային համախմբությունը պետք է ներառեր 365 դատական գործ: Նշված համախմբությունից իրականացվել է մեխանիկական ընտրանք, սահմանված քայլի համապատասխան, որտեղ քայլը կազմել է $K = N/n = 20$: Սնանկության բոլոր դատարաններում 2016-2018թթ.¹⁴ սնանկության գործերի ցանկերից ընտրվել է յուրաքանչյուր 20-րդ դատական գործը: Պատահական ընտրանքի այս մոտեցումը ապահովեց ընտրանքի և տվյալների ներկայացուցչականությունը ըստ ՀՀ մարզերի և դատարանների:

Ընդհանուր առմամբ նախատեսվում էր իրականացնել 365 հարցազրույց: Սակայն տրամադրած գործերի ցանկում դեպքերի մեծամասնությամբ բացակայում էին այնպիսի տվյալներ, որոնք թույլ կտային գտնել պարտապանին՝ հարցազրույց անցկացնելու համար: Տրամադրված սնանկության գործերի ցանկում ընտրանքի 20 քայլով գործերը վեր են հանվել 7 շրջանով, ինչի արդյունքում հնարավոր եղավ ձեռք բերել 204 պարտապանի կոնտակտային տվյալներ և: Վերջինս կազմում է նախատեսված ընտրանքային համախմբության 55%, ինչը և թույլ տվեց պահպանել նախատեսված վստահելիության միջակայքը $\pm 5\%$ շրջանակներում:

Այսպիսով՝ ընտրանքային համախմբության մեջ ընդգրկվել են Երևանի 125 բնակիչ հարցվածների 62.5% և մարզերի 75 բնակիչ՝ 37.5% (Տե՛ս Աղյուսակ 1.):

Աղյուսակ 1. Հարցվածների բաշխվածությունն ըստ ՀՀ տարածաշրջանների

	Ընդամենը	
	Քանակ	Տոկոս
Երևան	125	62.5
Ծիրակ	14	7.0
Արարատ և Վայոց Ձոր	13	6.5
Կոտայք	12	6.0
Լոռի	10	5.0
Արմավիր	8	4.0
Սյունիք	6	3.0
Արագածոտն	5	2.5
Գեղարքունիք	4	2.0
Տավուշ	3	1.5

¹⁴ Ընտրանքում ընդգրկվել են 2018 թվականի առաջին կիսամյակի սնանկության գործերը:

Ընդամենը	200	100.0
----------	-----	-------

Տվյալների վերլուծությունը կատարվել է SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, հաշվարկվել են հաճախականություններ, փոխկապվածություններ, կատարվել է խաչաձև և գործոնային վերլուծություն:

Ֆոկուս-խմբային քննարկումների քննարանքը

Ֆոկուս-խմբերի նպատակն էր ստուգել կիսաձևայնացված հարցման արդյունքում ստացված տվյալները, հավելել դրանք բովանդակային օրինակներով և բացահայտել պատճառահետևանքային կապերը: Ֆոկուս-խմբերն իրականացվել են ոլորտում ներգրավված մասնագետների տարբեր խմբերի հետ: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվել են 6-10 մասնակիցներ:

Ֆոկուս-խմբերն իրականացվել են հետևյալ թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ՝

1. Սնանկության կառավարիչների հետ -երկու ֆոկուս-խումբ
 - Մեկ խմբում ընդգրկվել են առավել շատ և առավել քիչ սնանկության գործեր վարող սնանկության կառավարիչները,
 - Մյուս խմբում ընդգրկվել են սնանկության այն կառավարիչները, որոնց անուններն առավել հաճախ էին հիշատակվում պարտապանների հետ հարցումների ժամանակ, ինչպես նաև ամենաերկար աշխատանքային փորձ ունեցող սնանկության կառավարիչները:
2. Սնանկության գործեր վարող (վարած) դատավորների հետ մեկ ֆոկուս-խումբ
 - Մեկ խմբում ընդգրկվել են այն դատավորները, ովքեր այժմ չեն հանդիսանում Սնանկության դատարանի դատավորներ, սակայն նախկինում լսել են սնանկության գործեր, և նրանց անուններն առավել հաճախ են հիշատակվել պարտապանների հետ հարցումների ժամանակ, ինչպես նաև այն դատավորները, ովքեր նախկինում ամենից շատ (քանի որ հիմնվելով կրկնվող պրակտիկայի վրա նրանք կարողանում են ներկայացնել օրինաչափություններ) և ամենից քիչ (քանի որ եզակի գործեր ուսումնասիրելով հաճախակի կատարում են այնպիսի շեշտադրումներ, որոնք առկա են օրենսդրության մեջ, իսկ փորձառուները դրանք յուրովի մեկնաբանելով կամ կիրառելով արդեն իսկ դատում են շարքային իրավիճակների կարգին) սնանկության գործերն էին լսում:
3. Փաստաբանների հետ մեկ ֆոկուս-խումբ
 - Այս խմբում ընդգրկվել են այն 9 փաստաբանները, ովքեր առաջինն էին արձագանքել նշված քննարկմանը մասնակցելու մասին փաստաբանների ցանցում տարածված հայտարարությանը:
4. Դատախազների և քննիչների հետ մեկ ֆոկուս-խումբ
 - Այս խմբում ընդգրկվել են 4-ական դատախազ և քննիչ, ովքեր ամենից շատ գործերն են ունեցել իրենց վարույթներում կեղծ սնանկության հատկանիշներով:

5. Վերաքննիչ դատարանի դատավորների հետ մեկ ֆոկլուս-խումբ
6. Գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ երկու ֆոկլուս-խումբ
 - Մեկ խմբում ընդգրկվել են առավել հաճախ սնանկացման գործընթացում հայտնվող գործարար ոլորտներում գործող բիզնեսների ներկայացուցիչները,
 - Մյուս խմբում ընդգրկվել են սնանկացման գործընթացում համեմատաբար հազվադեպ հայտնվող գործարար ոլորտներում գործող բիզնեսների ներկայացուցիչները:

Ընդհանուր առմամբ իրականացվել է 8 ֆոկլուս-խումբ:

Խորին հարցազրույցների ընտրանքը

Իրականացվել է 10 խորին հարցազրույց սնանկության վերաբերյալ դատական գործընթացների դատավորների հետ, որոնք մեկնաբանել են հետազոտության ընթացքում ստացված քանակական տվյալները, տրամադրել են տեղեկատվություն դատական պրակտիկաների, օրինաչափությունների, փաստերի և խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև առկա խնդիրների հնարավոր լուծումների վերաբերյալ կարծիք հայտնել:

11 խորին հարցազրույցներ իրականացվել են նաև ոլորտը ներկայացնող այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների և փորձագետների հետ, որոնցից յուրաքանչյուրը սնանկության համակարգը և առկա ընթացակարգերը դիտարկել է իր մասնագիտական տեսանկյունից և մեկնաբանել է հետազոտության ընթացքում վերհանած օրինաչափությունները: Հարցազրույցներն իրականացվել են հետևյալ շահագրգիռ հաստատությունների այն ներկայացուցիչների հետ, ում աշխատանքային պարտականություններն ուղղակիորեն առնչվում են սնանկության գործընթացների հետ, բացառությամբ բանկերի, որոնց ընտրությունը կապված է եղել հիմնականում այն հանգամանքով, թե հարցված պարտապանները որ բանկերն են առավելապես հաճախ մատնանշել, որոնց հետ կնքված վարկային պարտավորություններից բխող պարտավորությունների չկատարումը հանգեցրել է սնանկության գործընթացի սկսելուն:

- ՀՀ Արդարադատության նախարարություն
- ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
- ՀՀ Կենտրոնական բանկ
- ՊԵԿ
- Առևտրային հինգ բանկեր
- Վերաքննիչ դատարան
- Վճռաբեկ դատարան
- «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակառավարվող կազմակերպություն (ԻԿԿ)

Իրականացված հարցազրույցները հնարավորություն տվեցին հասնելու տեղեկատվության հագեցման շեմին և ապահովել հավաքագրված որակական ինֆորմացիայի հուսալիությունն ու հավաստիությունը:

Քանակական հետազոտության գործիքակազմը

Քանակական հարցումների համար օգտագործվել է փակ տիպի հարցաթերթը, որը կցվում է սույն մեթոդաբանությանը որպես հավելված 1:

Մինչև սոցիոլոգիական հարցաթերթիկի կազմումը, նույնականացվել են այն խնդիրները, համակարգի գործունեության այն ոլորտները, որոնց վերաբերյալ ակնկալվել է ստանալ հանրության կարծիքը: Այս նպատակով ձևավորվել է ծրագրի աշխատանքային խումբ, որը ներառում է ոլորտին առնչվող տարբեր բնագավառների մասնագետների, ովքեր իրականացրել են աշխատանքային քննարկումներ և առանձնացվել են ոլորտները, ենթաոլորտները, խնդիրները, ենթախնդիրները, որոնց հիման վրա կառուցվել են հարցերը: Առաջին փուլում կազմվել է այն ոլորտների ցանկը, որոնք հետազոտվելու են, ապա դուրս են բերվել այդ ոլորտների բաղադրիչները, իսկ հետո վերջիններիս ցուցիչները և հարցերը, որոնք բխում են ներպետական օրենսդրությունից կամ պրակտիկայից:

Կազմված պլանը փոխանցվել է սոցիոլոգիական կազմակերպության, որը ներկայացված հարցերը վերամշակել է սոցիոլոգիական կանոնների և պահանջների պահպանմամբ, ապահովելով հանրամատչելի հարցաթերթիկ:

Արդյունքների ամփոփման արդյունավետության և ցանկալի հարցերի շրջանակում խնդիրը քննարկելու նպատակով կիրառվել է փակ տիպի հարցաթերթ, որտեղ ներառված են հարցապնդումներ ըստ ոլորտների խմբավորված և իրենց պատասխանների տարբերակներով: Բնականաբար, կան նաև մի քանի բաց հարցեր, որոնց պատասխանները, հարցվողը ոչ թե ընտրում է հնարավոր պատասխանների շարքից, այլ ինքն է առաջարկում, սակայն ոչ մեծ թվով: Որպես պատասխանի տարբերակ առաջարկվող ձևակերպումները հնարավորինս չեզոք և ոչ ուղղորդող են, որպեսզի ապահովվի հարցվողի սեփական և անկախ դիրքորոշումը:

Հարցաթերթը բաղկացած է 3 հիմնական մասերից՝ ներածական հարցեր, ապա հիմնական հարցեր և վերջում՝ ընթացակարգերի և դերակատարների գործունեության վերաբերյալ ընդհանուր գնահատման աղյուսակներ:

Իրականացվել է անանուն հարցում՝ այդ մասին նախապես տեղեկացնելով հարցվողին ու ձեռնպահ մնալով նրան նույնականացնող տվյալների ճշտումից:

Ֆոկուս խմբային քննարկումների գործիքակազմը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային հարցման ժամանակ առավել մեծ թվով հարցեր են շոշափվում և մեծ ծավալի տեղեկատվություն է հավաքագրվում, անհնարին է դառնում բոլոր հարցերը ներկայացնել ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներին, սակայն առավել հակասական կամ առավել կարևոր (կարևորության ընտրությունը կատարվում է մասնագետների կողմից՝ պայմանավորված հետազոտության նպատակներով ու խնդիրներով) խնդիրները կամ դրանց ընդհանրացումները՝ ընդհանուր թվով ոչ ավելի քան 10-12 հարցադրումներ և դրանց վերաբերյալ հավաքագրված հանրային կարծիքի արդյունքները ներկայացվել են ֆոկուս խմբի մասնակիցներին՝ հայցելով նրանց դիտարկումները, դիրքորոշումներն ու փաստարկները վերջիններիս վերաբերյալ:

Առանցքային է, որ ֆոկլուս խմբային քննարկումների ժամանակ նպատակ է հետապնդվել ոչ միայն հաստատել կամ հերքել հանրային կարծիքի արդյունքում դուրս բերված խնդիրները, այլ բերել մասնագիտական փաստարկներ ու տեսակետներ, թե հանրության շրջանում ինչու է ձևավորվել այս կամ այն կարծիքը, կարծրատիպը կամ պատկերացումը յուրաքանչյուր առանձին հարցի վերաբերյալ և ինչ կարելի անել ստեղծված իրավիճակի բարելավման համար: Ֆոկլուս խմբային քննարկման համար մշակվել է բաց հարցաշար, որին կցվել են հասարակական կարծիքը ներկայացնող սոցիոլոգիական հետազոտության արդյունքներն ամփոփող և քննարկվող հարցերին վերաբերելի գծապատկերներ: Բաց հարցաշարը ենթադրում է, որ մասնակիցներն ազատ շարադրել են իրենց տեսակետները և ոչ թե ընտրել են որևէ հնարավոր պատասխան: Ֆոկլուս խմբի մասնակիցների թիվը պետք է լիներ 6-ից 10-ը, ընդհանուր տևողությունը՝ 45-90 րոպե, հարցերի քանակը՝ ոչ ավել, քան 12, որոնցից 1-2-ը մուտքային, 7-8-ը՝ հիմնական/բովանդակային և 1-2-ն ամփոփիչ:

Մասնագիտական ֆոկլուս խմբային հարցում իրականացնելու համար օգտագործվել է ձևակույտի մեթոդը (Դելֆիի մեթոդը), ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացրել է բացահայտված խնդրի պատճառն իր կարծիքով: Այնուհետև, մյուս մասնակիցները հայտնել են իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Այս մոտեցումը մշակված է որպես խմբային հաղորդակցության մեթոդ, որը հնարավորություն է ընձեռում համաձայնության հանգել խմբի ներսում կոնկրետ հարցի շուրջ:

Հարցագրույցների անհրաժեշտ քանակը համարվում է լրացված՝ հաշվի առնելով երկու կարևոր հանգամանք.

1. երբ ստացված տեղեկատվությունը կրկնվում է կամ նոր տեղեկություններ չեն ստացվում,
2. երբ նոր հարցվողների վերաբերյալ տվյալներ չեն ստացվում կամ կրկնվում են նույն անձանց վերաբերյալ տեղեկությունները:

Ֆոկլուս խմբային քննարկումը վարել է ծրագրի փորձագետը, ով տեղյակ է հանրային կարծիքի ուսումնասիրության ընդհանուր արդյունքներին, հարցման իրականացման նպատակներին, անհրաժեշտության դեպքում կարող է մեկնաբանել, թե տվյալ հարցապնդման ներքո ինչ է ի նկատի ունեցվել և այլն: Մակայն այստեղ հարկավոր է առանձնակի ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ֆոկլուս խմբի մոդերատորը որևէ կերպ չի ներկայացրել իր սեփական/մասնագիտական դիրքորոշումը, կողմնակալությունը և մնացել է կատարյալ չեզոք դիրքում:

Խորին հարցագրույցների գործիքակազմը

Խորին հարցագրույցները անց են կացվել բաց հարցերից կազմված հարցաշարով, որը բաղկացած է 2 մասից: Հարցի առաջին մասում հարցվողին հարց է ուղղվել՝ նրա կարծիքը որոշակի հարցի վերաբերյալ ստանալու համար, ինչից հետո նրան ներկայացվել են տվյալ հարցի վերաբերյալ հանրային կարծիքի արդյունքները և առաջարկվել է մեկնաբանել հասարակության շրջանում ձևավորված այս կամ այն կարծիքը: Հարցերի քանակի հստակ սահմանափակումներ չկան: Հիմնականում բոլոր հարցերի մեջ ներառված է «փսկ ինչպես կարելի է շտկել/բարելավել իրավիճակը» հարցապնդումը, ինչը վեր է հանում նաև մասնագետների համար ընդունելի լուծումների տարբերակները:

Քանակական և որակական արդյունքների համադրությունը

Նշված հետազոտության արդյունքների հավաքագրումն իրականացվել է փուլերով: Քանակական տվյալների հավաքագրման արդյունքների ամփոփումը ևս իրականացվել է այն նույն սոցիոլոգիական կազմակերպության կողմից, որն իրականացրել է հարցումները՝ համագործակցելով հետազոտության իրավաբանների խմբի հետ: Առաջին փուլում հանրային կարծիքի ուսումնասիրության համար դաշտային աշխատանքի իրականացմանը զուգահեռ հավաքագրվել են ստացված տվյալները, որոնք ներ են մուծվել SPSS ծրագրի մեջ և դուրս բերվել միաչափ աղյուսակներ: Մշակվել են բոլոր պատասխանները և յուրաքանչյուրի համար ձևավորվել է առանձին աղյուսակ: Այնուհետև, մասնագետների կողմից կազմվել է այն հարցերի կամ ցուցիչների ցանկերը, որոնց համադրությամբ կազմվել են երկչափ տվյալներ, օրինակ՝ մեկ համեմատական աղյուսակում ներկայացվել են, թե ըստ հարցվածների ով է գործնականում նշանակում սնանկության կառավարչին և ցանկալի է, որ ով նշանակի նրան:

Կազմված համեմատական աղյուսակները հնարավորություն են տալիս հենց մի շարք հարցերի մեջ տեսնել բազմաթիվ պատասխաններ: Հանրային կարծիքի վերաբերյալ աղյուսակներն ուղեկցվել են մասնագիտական մեկնաբանություններով, որտեղ բացատրվում է, թե տվյալ պատասխանն իրենով ինչ համեմատականների մեջ կարելի է դիտարկել, կամ համադրվում է մեկ այլ աղյուսակի պատասխանների հետ՝ ընդգծելով հասարակական կարծիքի հետևողական ու տրամաբանական լինելը:

Հաճախ հնարավոր է, որ հասարակական կարծիքի վերաբերյալ հավաքագրված տվյալները ձևավորված լինեն զգացողական մակարդակի վրա: Միայն առաջին փուլի արդյունքների ամբողջական ամփոփումից հետո սկսվել է երկրորդ փուլը՝ որակական տվյալների հավաքագրման գործընթացը, որն իր մեջ ներառում է ֆոկլուս խմբային քննարկումները և խորին հարցազրույցները: Քանակական տվյալներից առանձնացնելով նպատակային հարցեր և կազմելով անհրաժեշտ հարցաշարեր, իրականացվել է որակական տվյալների հավաքագրումը, որի արդյունքների ամփոփումն առավել բովանդակային բնույթ է կրում: Արդյունքների ներկայացման համար արժեքավոր են ինչպես առավել մեծ տարածում գտնող կարծիքները, այնպես էլ՝ առանձին կամ մասնավոր դիրքորոշումները:

Հաշվետվության մեջ համեմատական է անց կացվել հասարակական կարծիքի և մասնագիտական դիրքորոշումների միջև՝ ներկայացնելով, որ, օրինակ, որևէ հարցի շուրջ հասարակության տեսակետը մասնակի կամ լիարժեքորեն հերքվում կամ հաստատվում է մասնագետների կողմից, ովքեր իրենց կարծիքի հիմնավորման համար բերել են համապատասխան փաստարկներ, որոնք ընդհանրացված ներկայացվում են որպես համեմատության (համադրության կամ հակադրության) վերլուծություն:

Հաշվետվությունը նաև պարունակում է եզրահանգումների և առաջարկությունների ենթաբաժիններ, որտեղ արտացոլված են ինչպես հարցվածների տեսակետները, այնպես էլ ծրագրի իրավաբանական թիմի առաջարկությունները՝ հիմնված միջազգային լավագույն փորձի և ներպետական առանձնահատկությունների վրա:

Դատական գործերի ուսումնասիրություն

Որակյալ ուսումնասիրությունների համար գործերի ընտրության ժամանակ պահպանվել է մի քանի կանոն՝

1. Ընտրվել են այն գործերը, որոնք ավարտվել են հետազոտության իրականացման համար ընտրված ժամանակահատվածում,

2. Ընտրվել են առավել տարածված՝ տիպային համարվող փաստական հանգամանքներ ունեցող գործեր,

3. Գործերի որոնումն իրականացվել է www.datalex.am կայքով ընտրության ժամանակ կիրառելով պատահականության սկզբունքը:

Ընտրված գործերի փաստաթղթային ուսումնասիրության համար նյութերը ստանալու նպատակով փորձագետների կողմից միասնական դիմում է ներկայացվել Դատական դեպարտամենտի ղեկավարին, վերջինիս համապատասխան գրությունների հիման վրա ընտրված բոլոր դատական գործերի նյութերի պատճենները տրամադրվել են փորձագետներին:

Գործերի ընտրությունը կատարվել է այնպես, որպեսզի՝

- ներառվեն կամավոր և հարկադրված սնանկության գործեր
- վերաբերեն պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց
- առնվազն մեկ գործը վերաբերի կին պարտապանի
- բոլոր գործերի արդյունքում պարտապանը սնանկ ճանաչված չլինի
- առնվազն մեկ գործ վերաբերի սնանկության վտանգին,
- առնվազն մեկ գործ քննված լինի պարզեցված ընթացակարգով՝ պարտապանի բացակայությամբ:

Գործերի ուսումնասիրությունն իրականացվել է անանուն՝ որպեսզի հնարավոր լինի առավելագույնս պահպանել ուսումնասիրության անաչառությունը: Ուստի, գործերի անհատականացումից խուսափելու համար թաքցված են ոչ միայն կողմերի վերաբերյալ տվյալները, այլև գործերի ժամանակագրությունը:

Փորձագետների կողմից կատարվել է դատական գործերի ամբողջական փաստաթղթային հետազոտություն, որի արդյունքում կազմված եզրակացությունները պարունակում են անդրադարձ գործի ընդհանուր նկարագրին, սնանկության վարույթի պատճառներին, հանդիպած ընթացակարգային խնդիրներին, հնարավոր կոռուպցիոն ռիսկերին, առողջացման ծրագրի առկայության հարցին, սնանկության կառավարչի և դատավորի գործողությունների գնահատմանը, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի կիրառման այն առանձնահատկություններին, որոնք տվյալ գործով արժանի են ուշադրության: Բոլոր փորձագետների կողմից եզրակացությունների վերջում նշվել են փորձագետի կողմից կարևորվող ուշադրության արժանի կետերը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ


Կիսաստանդարտացված դեմ առ դեմ հարցազրույցներ իրականացվել են 2016-2018թթ. ընթացքում սնանկացած կամ սնանկության գործընթացում գտնվող 200 բիզնեսների ներկայացուցիչների հետ, որից 123-ը ֆիզիկական անձիք են, իսկ 77-ը՝ իրավաբանական անձիք: Հարցումների 62.5% (125 հարցվող) իրականացվել է Երևանում, իսկ 37.5% (75 հարցվող)՝ ՀՀ 10 մարզերում (Տե՛ս Աղյուսակ 2.):

Աղյուսակ 2. Հարցված ֆիզիկական և իրավաբանական անձանց բաշխումն ըստ Երևանի և մարզերի

Վայր	Հարցմանը մասնակցած պարտապանների քանակը		
	Ընդամենը	որից՝ ֆիզիկական անձ	որից՝ իրավաբանական անձ
Երևան	125	72	53
Մարզեր	75	51	24
Ընդամենը	200	123	77

Հարցվածների 23.5% իգական սեռի ներկայացուցիչներ են, 76.5%՝ արական: Ընդ որում կանանց տոկոսը համեմատաբար ավելի բարձր է ֆիզիկական անձանց համախմբության մեջ՝ 28.5%, համեմատած իրավաբանական անձանց՝ 15.6% հետ (Տե՛ս Գծապատկեր 1.):

Գծապատկեր 1. Հարցվածների գենդերային բաշխումն ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց համախմբությունների



Հարցվածների մեծամասնությունը 36-65 տարիքային խմբերի ներկայացուցիչներ են (Տե՛ս Աղյուսակ 3.):

Աղյուսակ 3. Հարցվածների բաշխումն ըստ տարիքային խմբերի

Տարիքը	Տոկոս
18-25 տարեկան	0.5
26-35 տարեկան	14.5
36-45 տարեկան	27.5

46-55 տարեկան	28.5
56-65 տարեկան	25.0
66 տարեկան և բարձր	4.0
Ընդամենը	100.0

Հարցվածների մեծամասնությունը բարձրագույն կրթություն ունեն՝ 58.3%, 17.5%՝ միջին մասնագիտական կրթություն ունեն, ևս 17.5%՝ միջնակարգ, իսկ 6.5% ունեն երկու բարձրագույն կրթություն կամ ավարտել են ասպիրանտուրան (Տե՛ս Աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Հարցվածների բաշխումն ըստ կրթության

Կրթությունը	Տոկոս
Միջնակարգ	17.5
Միջին մասնագիտական	17.5
Բարձրագույն	58.5
2 բարձրագույն/ասպիրանտուրա	6.5
Ընդամենը	100.0

Հարցվածների 71.8% կազմակերպության սեփականատերերն էին կամ հիմնադիրները, 20%՝ գործադիր տնօրենները, 8.2%՝ այլ պաշտոններ զբաղեցնող մարդիկ, այդ թվում՝ խորհրդի անդամներ, իրավաբաններ և հաշվապահներ (Տե՛ս Աղյուսակ 5.):

Աղյուսակ 5. Հարցվածների բաշխումն ըստ սնանկ ճանաչված կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնի/դիրքի

Պաշտոն	Տոկոս
Սեփականատեր, հիմնադիր	71.7
Գործադիր տնօրեն	20.0
Խորհրդի անդամ	1.2
Տնօրենների խորհրդի նախագահ	1.2
Իրավաբան	2.4
Հաշվապահ	3.5
Ընդամենը	100.0

Ֆիզիկական անձանց 80.5% մինչև սնանկ ճանաչվելը ունեցել են հիմնական, կայուն եկամտի աղբյուր: Իսկ նրանց միջին ամսական եկամուտն ըստ մեղիանային բաշխման կազմում էր 250-500 հազար ՀՀԴ:


Ուսումնասիրված գործերի 17% դեռ ընթացքի մեջ են, 83% արդեն ճանաչվել են սնանկ:

Ուսումնասիրված իրավաբանական անձանց գործերի վերաբերյալ տվյալները


Հարցված իրավաբանական անձանց 58.4% սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ էին (ՍՊԸ), 27.3%՝ անհատ ձեռնարկատեր (ԱԶ), իսկ բաց բաժնետիրական ընկերությունները, կոոպերատիվները և փակ բաժնետիրական ընկերությունները կազմել են համապատասխանաբար՝ 6.5%, 5.2% և 2.6% (Տե՛ս Գծապատկեր 2.):

Կազմակերպությունների հիմնական մասը՝ 52%, ունեցել են 1-5 աշխատակից (Տե՛ս **Գծապատկեր 3.**):

Գծապատկեր 2. Իրավաբանական անձանց պետ. ռեգիստրում գրանցված ձևը




Գծապատկեր 3. Կազմակերպության աշխատակիցների ընդհանուր թիվը



Ուսումնասիրված կազմակերպությունների 36.4% հետազոտության տվյալների համաձայն սնանկության գործընթացին նախորդող տարում ունեցել են մինչև 20 մլն ՀՀԴ շրջանառություն: 10.4%՝ 20 000 001 - 58 000 000 ՀՀԴ, 3.9%՝ 58 000 001 - 115 000 000 ՀՀԴ, 5.2%՝ 115 000 001 - 500 000 000 ՀՀԴ, 9.1%՝ 500 մլն ՀՀԴ-ից ավել: Եվս 5.2% նշել են, որ սնանկության գործընթացին նախորդող տարում կազմակերպության շրջանառությունը կազմել է 0 ՀՀԴ (Տե՛ս **Գծապատկեր 4.**):

Գծապատկեր 4. Ուսումնասիրված կազմակերպությունների շրջանառությունը սնանկության գործընթացին նախորդող տարում



Ուսումնասիրված կազմակերպություններում տարբեր մարմիններ էին ընդունում ռազմավարական որոշումներ, ստորագրում հիմնական փաստաթղթեր: Ամենահաճախ նշվել են սեփականատերերը՝ որպես ռազմավարական որոշումներ ընդունող և հիմնական փաստաթղթեր ստորագրող մարմին՝ 88.3%, էապես ավելի հազվադեպ նշվել է գործադիր տնօրենը՝ 32.1% (Տե՛ս Աղյուսակ 6.):


Աղյուսակ 6. Ուսումնասիրված կազմակերպությունում ռազմավարական որոշումներ ընդունող, հիմնական փաստաթղթեր ստորագրող մարմինները

Պաշտոն	Այո	Ոչ	Ընդամենը
Սեփականատերեր	88.3%	11.7%	100%
Գործադիր տնօրենը	31.2%	68.8%	100%
Տնօրենների խորհուրդը	9.1%	90.9%	100%
Մասնակիցների/բաժնետերերի ընդհանուր ժողովը	5.2%	94.8%	100%
Անդամների ընդհանուր ժողովը	2.6%	97.4%	100%

Սնանկության արդյունքում ֆիզիկական անձանց կարգավիճակի փոփոխությունը


Սնանկության գործընթացը ակնհայտ բացասական հետևանքներ է թողնում պարտապանների սոցիալական կարգավիճակի վրա: Հետազոտության արդյունքների համաձայն սնանկության արդյունքում հարցված ֆիզիկական անձանց համախմբության մեջ էապես կրճատվել է զբաղվածների տոկոսը՝ 30.2%-ով, միաժամանակ, էապես աճել է գործազուրկների տոկոսը (21.2%-ով), ինչպես նաև թոշակառուների և տնային տնտեսուհիների տոկոսը՝ համապատասխանաբար 8.1%-ով և 0.8%-ով (Տե՛ս Գծապատկեր 5.):

Գծապատկեր 5. Ֆիզիկական անձանց զբաղվածությունը մինչև սնանկ ճանաչվելը և այսօր



Բնականաբար, սնանկությունից հետո ավելացել է այն մարդկանց տոկոսը, որոնք ոչ մի ոլորտում գործունեություն չեն ծավալում՝ դառնալով 44.7%, և նվազել է սպասարկման, առևտրի, արտադրության, պետական կամ տեղական կառավարման, գյուղատնտեսության և ֆինանսաբանկայի ոլորտներում գործունեություն ծավալող ֆիզիկական անձանց տոկոսը: Հետաքրքրական է, որ շինարարության, բարձր տեխնոլոգիաների, առողջապահության, մշակույթի և անվտանգության ոլորտներում գործունեություն ծավալող ֆիզիկական անձանց տոկոսը չի փոխվել, իսկ կրթության ոլորտում գործունեություն ծավալող ֆիզիկական անձանց տոկոսն անգամ ավելացել է (Տե՛ս **Գծապատկեր 6.**):


Գծապատկեր 6. Ֆիզիկական անձանց գործունեության ոլորտը մինչև սնանկ ճանաչվելը և այսօր



Պատկերն ավելի բացասական է իրավաբանական անձանց պարագայում: Եթե ֆիզիկական անձանց 44.7% այլևս գործունեություն չեն ծավալում, ապա սնանկության սուբյեկտ դարձած իրավաբանական անձանց 67.5% չեն շարունակում գործունեությունը: Հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված իրավաբանական անձիք մինչև սնանկ ճանաչվելը գործունեություն էին ծավալում հիմնականում արտադրության, սպասարկման, առևտրի և

շինարարության ոլորտներում: Էապես ավելի փոքր տոկոսը գործունեություն էր ծավալում գյուղատնտեսության, առողջապահության և կրթության ոլորտներում (Տե՛ս **Գծապատկեր 7.**):


Գծապատկեր 7. Իրավաբանական անձանց գործունեության ոլորտը մինչև սնանկ ճանաչվելը և այսօր



Այս պատկերը վկայում է ոչ միայն առանձին անհատների կյանքում բացասական փոփոխությունների մասին, այլև տնտեսական դաշտում սնանկության գործընթացի արդյունքում զբաղված աշխատուժի և տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատման մասին:

Սնանկացումը բացասաբար է անդրադառնում ոչ միայն պարտապանների տնտեսական կարգավիճակի վրա, այլ նաև՝ ընտանեկան. եթե մինչև սնանկ ճանաչվելը ամուսնացած էին հարցվածների 81.3%, ապա սնանկությունից հետո՝ 74.8%, ավելացել է ամուսնալուծվածների և այրիացածների տոկոսը (Տե՛ս **Գծապատկեր 8.**):

Գծապատկեր 8. Ֆիզիկական անձանց ընտանեկան կարգավիճակը մինչև սնանկանալը և այսօր



ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Հետազոտություն	Սույն ծրագրի շրջանակներում սնանկության ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ հավաքագրված և վերլուծված քանակական և որակական տվյալներ
մոնիթորինգ, մշտադիտարկում	Որոշակի վիճակի կամ պայմանի ապահովման վիճակի վերահսկողության, որակի գնահատման նպատակով դիտարկում
քանակական տվյալ	Հասարակական կարծիքի պատասխանների մաթեմատիկական համադրում
որակական տվյալ	Մասնագիտական կարծիքի ուսումնասիրության արդյունքներ
հանրային կարծիքի ուսումնասիրություն	Սոցիոլոգիական հարցումների միջոցով սնանկության գործընթացում գտնվող կամ արդեն իսկ սնանկացած իրավաբանական և ֆիզիկական անձանցից հավաքագրված տեղեկություն
խորքային հարցազրույց	Ոլորտի մասնագետների հետ իրականացված ինքնազնահատում և ֆոկլուս խմբային քննարկումներ
ֆոկլուս-խմբային քննարկում	Մասնագետների փոքր խմբի հետ (5-9 մարդ) առանձնացված հարցերի շուրջ մասնագիտական քննարկում՝ վերջիններիս կարծիքների ու դիտարկումների հավաքագրման նպատակով
բաց հարց	Հարց, որը չի նախատեսում պատասխանների տարբերակներ, և հարցվողն ուղղակիորեն շարադրում է իր մտքերը
փակ հարց	Հարց, որն ունի պատասխանի տարբերակներ, և հարցվողն ընտրում է որպես պատասխան իրեն առաջարկված տարբերակներից առավել նախընտրելին
հարցվող	Անձ, ով պատասխանում է հարցազրուցավարի հարցերին
հարցազրուցավար	Անձ, ով հարցաշարով մշակված հարցերն ուղղում է հարցվողին և նրանից ստացված պատասխանները գրանցում հարցաթերթում
SPSS համակարգ	Համակարգչային հատուկ ծրագիր, որի մեջ մուտքագրելով սոցիոլոգիական տվյալները, իրականացվում է վերջինիս մշակում
շահառու	Անձ, ով առնչություն ունի տվյալ հաստատության հետ

դաշտային աշխատանք	Բուն հարցումների իրականացման փուլ
գործիքակազմ	Այն փաստաթղթերի ամբողջականությունը, որոնց միջոցով իրականացվում է հետազոտությունը, մասնավորապես հարցաշարեր, մեթոդաբանություն, ուղեցույցեր և այլն
միաչափ աղյուսակ	Հարցումների արդյունքների ամփոփման այնպիսի աղյուսակ, որը պատկերում են միայն մեկ հարցի քանական պատասխան
երկչափ տվյալ	Հարցումների արդյունքների ամփոփման այնպիսի աղյուսակ, որը համադրում է մի քանի հարցերի պատասխաններ
անանուն հարցում	Հարցում, որի ժամանակ հարցվողի անձը չի հրապարակվում
ընտրանք	Հարցման համար առանձնացված թիրախային խումբ
ՄԿ	Սնանկության կառավարիչ
ԻԿԿ	Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպություն
ՖԱԾ	Ֆինանսական առողջացման ծրագիր

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՐԱԿԱԿԱՆ և ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԸ

Հարցաթերթ № _____

Բարև Ձեզ, իմ անունն է _____: Ես ներկայացնում եմ «**SPRIN GROUP**» հետազոտական ընկերությունը: Մենք անց ենք կացնում սոցիոլոգիական հետազոտություն՝ ուղղված սնանկության երևույթի և դրա հետ կապված գործընթացների ուսումնասիրմանը: Այն Ձեզից կպահանջի ընդամենը 15-20 րոպե: Նշեմ նաև, որ հարցումն անանուն է, և բոլոր պատասխանները օգտագործվելու են ընդհանրական տեսքով:

Q1. Ասացեք խնդրեմ, սնանկության գործընթացը Ձեզ վերաբերում էր որպես՝

1. Ֆիզիկական անձի (Անցնել Q2-ին)
2. Իրավաբանական անձի (Անցնել Q2.3-ին)

99. Դժվարանում եմ պատասխանել

ՄԻՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ ՄԱՍԻՆ

Q2. Ասացեք, խնդրեմ, ի՞նչ գործունեությամբ էիք զբաղվում մինչև սնանկ ճանաչվելը:

Մինչ սնանկ ճանաչվելը	Այսօր
1. Աշխատում էի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպությունում	1. Աշխատում եմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպությունում
2. Աշխատում էի մասնավոր կազմակերպությունում	2. Աշխատում եմ մասնավոր կազմակերպությունում
3. Աշխատում էի ՀԿ-ում	• 3. Աշխատում եմ ՀԿ-ում
4. Անհատ ձեռնարկատեր էի/ ինքնազբաղված էի	4. Անհատ ձեռնարկատեր եմ/ ինքնազբաղված եմ
5. Տնային տնտեսուհի	5. Տնային տնտեսուհի
6. Գործազուրկ	6. Գործազուրկ
7. Թոշակառու	7. Թոշակառու
8. Այլ _____	8. Այլ _____
• 99. Դժվարանում եմ պատասխանել	99. Դժվարանում եմ պատասխանել

Q2.1 Ասացեք, խնդրեմ, մինչ սնանկ ճանաչվելը ունեի՞ք արդյոք եկամտի հիմնական, կայուն աղբյուր և, եթե այո, ապա ամսական հաշվարկով մոտավորապես որքան գումար էր կազմում Ձեր եկամուտը: ՀԱՐՑԸ ՏԱԼ ՄԻԱՅՆ ՓԻՉԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆ

1. Այո, նշեք գումարի չափը (ՀՀ դրամով) _____
2. Ոչ
- 99. Դժվ. պատ.

Q2.2. Նշեք խնդրեմ, Ձեր ընտանեկան կարգավիճակը մինչ սնանկանալը և այսօր:
ՀԱՐՑԸ ՏԱԼ ՄԻԱՅՆ ՓԻՉԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆ

Մինչև սնանկ ճանաչվելը	Այսօր
1. Ամուրի/չամուսնացած	1. Ամուրի/չամուսնացած
2. Ամուսնացած	2. Ամուսնացած
3. Ամուսնալուծված	3. Ամուսնալուծված
4. Այրի	4. Այրի

5. Այլ _____	5. Այլ _____
--------------	--------------

Q2.3 Ո՞ր ոլորտում էիք ծավալում Ձեր գործունեությունը մինչ սնանկ ճանաչվելը և ո՞ր ոլորտում եք աշխատում հիմա: ՀԱՐՑԸ ՏԱԼ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

Ոլորտը	Մինչև սնանկ ճանաչվելը	Այսօր
1. Առողջապահություն	1.	1.
2. Արտադրություն	2.	2.
3. Առևտուր	3.	3.
4. Կրթություն, գիտություն	4.	4.
5. Պետական կառավարում	5.	5.
6. Դատաիրավական համակարգ, արդարադատություն	6.	6.
7. Պաշտպանություն/անվտանգություն/ուստիկանություն	7.	7.
8. Շինարարություն	8.	8.
9. Բանկեր/ֆինանսներ/վարկեր/ապահովագրություն	9.	9.
10. Բարձր տեխնոլոգիաներ	10.	10.
11. Սպասարկում	11.	11.
12. Մշակույթ	12.	12.
13. Գյուղատնտեսություն	13.	13.
14. Չի գործում, գործունեություն չի ծավալում	14.	14.
15. Այլ _____	15.	15.

Q3. Նշեք, խնդրեմ, հնարավորինս ստույգ ժամկետը, երբ սկսվեց սնանկության գործընթացը:

1. ամիս _____

2. թվական _____

Q4. Ասացեք խնդրեմ, Դուք կամ Ձեր կազմակերպությունը արդեն ճանաչվե՞լ եք/է սնանկ և, եթե այո, նշեք հնարավորինս ստույգ ժամանակահատվածը, երբ դա տեղի ունեցավ:

1. Այո, ժամկետը _____

2. Ոչ, դեռ ընթացքի մեջ է

Q5. Նշեք, խնդրեմ, սնանկ ճանաչված կազմակերպության անվանումը: Q5-ից – Q14 ՀԱՐՑԵՐԸ ՏԱԼ ՄԻԱՅՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

Q6. Ինչպիսի՞ կազմակերպատիրավական ձև ունեիք (նշել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված ձևը):

1. Անհատ ձեռնարկատեր
2. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
3. Փակ բաժնետիրական ընկերություն
4. Բաց բաժնետիրական ընկերություն
5. Կոոպերատիվ
6. Հասարակական կազմակերպություն

7. Այլ _____

99. Դժվ. պատ.

Q7. Ասացեք, խնդրեմ, որքա՞ն էր սնանկ ճանաչված կազմակերպության աշխատակիցների ընդհանուր թիվը: _____

Q8. Նշեք խնդրեմ, քանի՞ կին էր աշխատում սնանկ ճանաչված կազմակերպությունում ընդհանուր առմամբ՝ հաշվի առնելով բոլոր դիրքերը/հաստիքները:

Q9. Ասացեք, խնդրեմ, սնանկ ճանաչված կազմակերպությունում ո՞ր մարմինն էր ընդունում ռազմավարական որոշումներ, ստորագրում հիմնական փաստաթղթեր:

ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

1. Մասնակիցների/բաժնետերերի ընդհանուր ժողովը
 2. Անդամների ընդհանուր ժողովը
 3. Վարչությունը
 4. Սեփականատերը
 5. Գործադիր տնօրենը
 6. Տնօրենների խորհուրդը
 7. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q10. Նշեք, խնդրեմ, քանի՞ կին կար սնանկ ճանաչված կազմակերպության ղեկավար մարմնում: ____

Q11. Նշեք, խնդրեմ, Ձեր կազմակերպությունում մինչ սնանկ ճանաչվելը ստորև նշված պաշտոնները ո՞ր սեռի ներկայացուցիչներ էին զբաղեցնում:

Պաշտոն	Կին	Տղամարդ	Նման հաստիք չկա	Դժվ. պատ.
1. Սեփականատեր	1	2	3	4
2. Գործադիր տնօրեն	1	2	3	4
3. Տնօրենի տեղակալ	1	2	3	4
4. Գլխավոր հաշվապահ	1	2	3	4
5. Գլխավոր իրավաբան	1	2	3	4
6. Տնօրենների խորհրդի նախագահ	1	2	3	4
7. Այլ _____	1	2	3	4

Q12 Ասացեք, խնդրեմ, Դուք անձամբ ի՞նչ պաշտոն/դիրք եք զբաղեցրել սնանկ ճանաչված կազմակերպությունում: ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

1. Սեփականատեր, հիմնադիր, համասեփականատեր, համահիմնադիր
2. Գործադիր տնօրեն
3. Խորհրդի անդամ

4. Տնօրենների խորհրդի նախագահ
5. Վարչության անդամ
6. Իրավաբան
7. Հաշվապահ
8. Այլ _____
- 99 Դժվ. պատ.

Q13. Որքա՞ն էր կազմում կազմակերպության շրջանառությունը սնանկության գործընթացին նախորդող տարում:

1. Մինչև 20 000 000 դրամ
2. 20 000 001 - 58 000 000 դրամ
3. 58 000 001 - 115 000 000 դրամ
4. 115 000 001 - 500 000 000 դրամ
5. 500 000 000-ից բարձր դրամ
- 99 Դժվ. պատ.

ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

ՀԱՐՑԵՐԸ ՎԵՐԱԲԵՐԵՐԼԻ ԵՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

Q14. Ասացե՛ք, խնդրեմ, մինչև Ձեզ վերաբերող սնանկության գործի սկիզբը՝ Դուք որքանո՞վ էիք տեղյակ սնանկության գործընթացի մասին և ինչպե՞ս կգնահատեք Ձեր տեղեկացվածության մակարդակն այսօր:

Մինչև սնանկ ճանաչվելը	Այսօր
1. Լիովին տեղեկացված էի	1. Լիովին տեղեկացված եմ
2. Ավելի շուտ տեղեկացված էի	2. Ավելի շուտ տեղեկացված եմ
3. Ավելի շուտ տեղեկացված չէի	3. Ավելի շուտ տեղեկացված չեմ
4. Բացարձակ տեղեկացված չէի	4. Բացարձակ տեղեկացված չեմ
5. Այլ _____	5. Այլ _____

Q15. Նշե՛ք խնդրեմ, սնանկության վարույթի վերաբերյալ տեղեկատվության Ձեր հիմնական աղբյուրները՝ մինչ Ձեզ վերաբերող սնանկության վարույթի սկիզբը:

ՄԻՆԶԵՎ 3 ՊԱՏԱՍԽԱՆ: ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է:

1. Հեռուստատեսություն
2. Տպագիր մամուլ
3. Ռադիո
4. Գրքեր/գեղարվեստական և մասնագիտական գրականություն
5. Կինոնկարներ, մասնագիտացված հաղորդումներ
6. Էլեկտրոնային տեղեկատվական կայքեր
7. Սոցիալական ցանցեր
8. Էլեկտրոնային օրենսդրական շտեմարաններ
9. Իրավաբան գործընկերներ/աշխատակիցներ

10. Անձնական փորձ
 11. Սեփական նախաձեռնությամբ օրենքը կարդալը
 12. Ընկերների, բարեկամների, ծանոթների փորձ
 13. Ընկերների, բարեկամների, ծանոթների խոսակցություններ, ասեկոսեներ,
 14. Այլ_____
- 98.Տեղեկատվություն չեմ ունեցել 99. Դժվ. պատ.

Q16. Նշեք, խնդրեմ, բոլոր այն աղբյուրները, որտեղից ստանում էիք Ձեր գործով սնանկության վարույթին վերաբերող տեղեկատվությունը և դասակարգեք այդ աղբյուրներն՝ ըստ կարևորության:

ՆՇԵԼ ԲՈՒՈՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԵԼ ԴՐԱՆՔ ԸՍՏ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ (1-ինը՝ ամենակարևորն է)

• Տեղեկատվության աղբյուրներ	Կարևորություն
1. datalex.am, acts.court.am կայքերը	
2. ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքը՝ azdarar.am	
3. Նամակագրություն, ծանուցումներ դատական մարմնից՝ էլեկտրոնային տարբերակով	
4. Նամակագրություն, ծանուցումներ դատական մարմնից՝ թղթային տարբերակով	
5. Սնանկության գործով կառավարիչն անձամբ՝ բանավոր	
6. Նամակագրություն, ծանուցումներ սնանկության գործով կառավարչից՝ էլեկտրոնային տարբերակով	
7. Նամակագրություն, ծանուցումներ սնանկության գործով կառավարչից՝ թղթային տարբերակով	
8. Սնանկության գործով փաստաթան	
9. Իրավաբան գործընկերներ/աշխատակիցներ	
10. Ընկերներ, բարեկամներ, ծանոթներ	
11. Այլ_____	
99. Դժվ. պատ.	

Q17. Ձեր կարծիքով, որքանո՞վ է Ձեզ առնչվող վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը Ձեր համար՝

Հատկանիշներ	Լիովին այո	Ավելի շուտ այո	Ավելի շուտ ոչ	Բացարձակ ոչ	Դժվ.պատ.
1. Օպերատիվ/ժամանակին	1	2	3	4	99
2. Հավաստի/օբյեկտիվ	1	2	3	4	99
3. Հասանելի	1	2	3	4	99

4. Մատչելի/հասկանալի	1	2	3	4	99
5. Օգտակար/պիտանի	1	2	3	4	99
6. Մանրամասն	1	2	3	4	99

Q18. Ձեր կարծիքով, եթե առանձին-առանձին 5 բալանոց սանդղակով (որտեղ 5-ն ամենաբարձրն է) գնահատեք նշված աղբյուրների կողմից տրամադրված տեղեկատվությունը, որքանո՞վ է այն Ձեզ համար՝

Տեղեկատվական աղբյուրներ	Օպերատիվ ժամանակին	Հավաստի օբյեկտիվ	Հասանելի	Մատչելի հասկանալի	Օգտակար պիտանի	Մանրա-մասն	Զեմ օգտվել	Դ.Պ.
1. ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայք (datalex.am, acts.court.am)	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	98	99
2. Մնանկության գործով կառավարիչ	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	98	99
3. Մնանկության գործով փաստաբան	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	98	99
4. Մնանկության գործով դատավոր/ աշխատակազմ	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	98	99
5. www.azdarar.am	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	98	99
6. Այլ _____	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5	98	99

Q19. Գնահատեք, խնդրեմ, որքանո՞վ էր արդյունավետ հետևյալ օղակների համագործակցությունը Ձեր հետ՝ փաստաթղթերի հասանելիությունն ապահովելու առումով:

Հատկանիշներ	Լիովին արդյունավետ	Ավելի շուտ արդյունավետ	Ավելի շուտ անարդյունավետ	Բացարձակ անարդյունավետ	Զեմ օգտվել	Դ.Պ.
1. Մնանկության գործով կառավարիչ	1	2	3	4	98	99
2. Մնանկության գործով փաստաբան	1	2	3	4	98	99
3. Մնանկության գործով դատավոր/ աշխատակազմ	1	2	3	4	98	99
4. Այլ _____	1	2	3	4	98	99

Q20. Գնահատեք, խնդրեմ, որքանո՞վ էին արդյունավետ գործում (ժամանակին թարմացվում, լրացվում, հետադարձ կապ ապահովում) հետևյալ էլեկտրոնային ռեսուրսները:

Հատկանիշներ	Լիովին արդյունավետ	Ավելի շուտ արդյունավետ	Ավելի շուտ անարդյունավետ	Բացարձակ անարդյունավետ	Երբեք չեմ օգտվել	Գ.Պ.
1. datalex.am	1	2	3	4	5	99
2. court.am	1	2	3	4	5	99
3. azdarar.am	1	2	3	4	5	99
4. snank.am	1	2	3	4	5	99
5. Այլ _____	1	2	3	4	5	99

Q21. Ի՞նչ եք կարծում, եթե ստեղծված լինեի հատուկ էլեկտրոնային հարթակ (օրինակ՝ e-Bankruptcy.am), որտեղ հասանելի կլինեին Ձեր սնանկության գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և որոշումները, արդյո՞ք այն Ձեզ՝

Հատկանիշներ	Միանշանակ այո	Ավելի շուտ այո	Ավելի շուտ ոչ	Բացարձակ ոչ	Գծվ. պատ.
1. Կօգնեի լինել ավելի օպերատիվ, խնայել ժամանակը	1	2	3	4	99
2. Կօգնեի խուսափել որոշ դժվարություններից	1	2	3	4	99
3. Կհեշտացներ գործընթացը, ազատելով հավելյալ քաշքշուկից	1	2	3	4	99
4. Կբարդացներ ամեն բան, քանի որ չունեմ էլեկտրոնային հարթակներից օգտվելու փորձ	1	2	3	4	99
5. Սկզբունքորեն չեմ օգտագործում տեղեկատվության էլեկտրոնային աղբյուրները	1	2	3	4	99
6. Այլ _____	1	2	3	4	99

Q21.1 Ասացեք, խնդրեմ, ունեի՞ք/ունե՞ք արդյոք գործող՝

1. էլեկտրոնային ստորագրություն	1. այո	2. ոչ	3. այս պահին չի գործում	4. տեղյակ չեմ
2. ԷԿԵՆԳ կազմակերպության կողմից տրամադրված նույնականացման քարտ	1. այո	2. ոչ	3. այս պահին չի գործում	4. տեղյակ չեմ

Q21.2 Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք պատրաստ գործի ընթացքի մասին ընդունել էլեկտրոնային հաղորդումներ էլեկտրոնային փոստով (e-mail) կամ E-citizen պաշտոնական ծանուցման համակարգով:

1. Գերադասում եմ ստանալ էլ.փոստով
2. Գերադասում եմ ստանալ E-citizen պաշտոնական ծանուցման համակարգով

3. Գերադասում եմ ստանալ և՛ էլեկտրոնային փոստով, և՛ E-citizen պաշտոնական ծանուցման համակարգով
 4. Գերադասում եմ թղթային ծանուցումներ Հայփոստի կողմից պատվիրված նամակով
 5. Գերադասում եմ ստանալ էլեկտրոնային ծանուցումները թղթային ծանուցումների հետ միասին
99. Դժվ. պատ.

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Q22. Ասացեք, խնդրեմ, Դուք սնանկության վարույթից խուսափելու նպատակով և պարտատիրոջ պահանջը բավարարելու համար պատրաստ կլինեի՞ք որևէ մեխանիզմով աշխատել տվյալ պարտատիրոջ հսկողության տակ՝ մինչև պարտքի մարումը:

1. Այո, ցանկացած մեխանիզմով
 2. Այո, եթե դա լիներ ողջամիտ մեխանիզմ
 3. Միանշանակ ոչ
99. Դժվ. պատ.

Q23. Քանի՞ օր է տևել Ձեր պարտավորությունների կետանցը՝ նախքան պարտատիրոջ կողմից սնանկության մասին դիմում ներկայացվելու պահը:

1. 60 օր
 2. 61-90 օր
 3. 91-180 օր
 4. 181-ից ավելի
99. Դժվ. պատ.

Q24. Ասացեք, խնդրեմ, տեղյա՞կ եք եղել արդյոք Ձեր կետանցված պարտավորությունների առկայության մասին, և, եթե ոչ, ապա ո՞րն էր պատճառը:

1. Տեղյակ եմ եղել
 2. Տեղյակ չեմ եղել, քանի որ անձամբ չեմ վերահսկել գործերն ու տեղեկացված չեմ եղել դրանց ընթացքի մասին
 3. Տեղյակ չեմ եղել, քանի որ որոշումներ կայացնող մարմինը դա գաղտնի է պահել ինձնից
 4. Տեղյակ չեմ եղել, քանի որ կազմակերպության փաստաթղթերում արտահայտված չի եղել իրական վիճակը
 5. Տեղյակ չեմ եղել, քանի որ գիտելիքս ու փորձը չեն բավարարել հասկանալու համար
 6. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q25. Արդյո՞ք Ձեզ համար Ձեր սնանկությունը կանխատեսելի կամ սպասելի է եղել:

1. Այո, _____ քանի _____ որ _____
2. Չեմ բացառել՝ պայմանավորելով որոշ հնարավոր ռիսկերով նշել

•

3. Եղել է լիովին անապասելի, քանի որ

99. Դժվ. պատ.

Q26. Ասացեք խնդրեմ, Ձեր սնանկության գործընթացի վրա ազդե՞լ են, արդյոք, հետևյալ գործոնները և որքանո՞վ՝

Հատկանիշներ	Միանշանակ այո	Ավելի շուտ այո	Ավելի շուտ ոչ	Բացարձա կ ոչ	Դ.Պ .
1. Մասնակիցների (բաժնետերերի) կողմից դիտավորությամբ կայացված սխալ որոշումները	1	2	3	4	99
2. Մասնակիցների (բաժնետերերի) կողմից անփութությամբ կայացված սխալ որոշումներ	1	2	3	4	99
3. Կազմակերպությունում գործադիր մարմնի անփութությունը	1	2	3	4	99
4. Կազմակերպությունում գործադիր մարմնի դիտավորությունը	1	2	3	4	99
5. Կազմակերպությունում որոշումներ կայացնող այլ անձի (անձանց) անփութությունը	1	2	3	4	99
6. Կազմակերպությունում որոշումներ կայացնող այլ անձի (անձանց) դիտավորությունը	1	2	3	4	99
7. Գործող օրենսդրությունը	1	2	3	4	99
8. Համապատասխան ոչ ֆորմալ կապերի բացակայությունը	1	2	3	4	99
9. Ոչ ֆորմալ (կոռուպցիա/կաշառք) գործարքի չգնալը	1	2	3	4	99
10. Այլ _____	1	2	3	4	99
—					

Q26.1 Գնահատեք, խնդրեմ, սնանկության համակարգում առկա խնդիրներից յուրաքանչյուրի ազդեցությունը:

Խնդիրներ	Չափազանց է ազդում	Ավելի շուտ ազդում է	Ավելի շուտ չի ազդում	Բացարձակ չի ազդում	Դ.Պ.
1. Վատ օրենսդրություն	1	2	3	4	99
2. Հեղինակազրկված և ոչ թափանցիկ սնանկության համակարգ	1	2	3	4	99
3. Սնանկացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության բացակայություն/սակավություն	1	2	3	4	99
4. Օրենսդրության և պրակտիկայի միջև հակասություն	1	2	3	4	99
5. Այլ _____	1	2	3	4	99

Q26.2 Ասացեք, խնդրեմ, արդյո՞ք Դուք տեսնում եք սնանկության ոլորտի օրենսդրության բարելավման անհրաժեշտություն:

1. Այո, դա անհրաժեշտ է և հնարավոր
2. Այո, դա անհրաժեշտ է, սակայն հնարավոր չէ անել
3. Դա անհրաժեշտ չէ, բայց հնարավոր է
4. Դա ոչ անհրաժեշտ է, ոչ էլ հնարավոր է անել
5. Դիրքորոշում չունեմ
- 99. Դժվ. պատ.

Q27. Նշեք, խնդրեմ, Դուք փաստացի ստացե՞լ էիք սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը:

1. Այո
2. Ոչ
99. Դժվ. պատ.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐ

Q28. Ասացեք, խնդրեմ, ինչի՞ց է ծագել Ձեր սնանկ ճանաչելու հիմքում դրված պարտավորությունը:

1. Պայմանագիր (Անցնել Q28.1-ին)
2. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտ (Անցնել Q29-ին)
3. Ճանաչվել եմ սնանկ ոչ թե կոնկրետ պարտավորության հիման վրա, այլ՝ սեփական դիմումի համաձայն (Անցնել Q28.2-ին և Q28.3-ին)
4. Պետական մարմնի կողմից կայացված վարչական ակտ(օր.՝ հարկային, տուգանք և այլն) նշել _____ (Անցնել Q29-ին)
5. Այլ _____

Q28.1 Եթե հիմքը պայմանագիրն էր, ապա ի՞նչ տեսակի պայմանագիր էր:

1. Վարկային
2. Փոխառության
3. Ծառայությունների մատուցման
4. Առուվաճառքի/մատակարարման
5. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q28.2 Ասացեք, խնդրեմ, ի՞նչ նպատակ էիք հետապնդում՝ սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելիս:

1. Ազատվել պարտավորություններից
2. Գործարար հեղինակության պահպանումը՝ օրենսդրորեն թափանցիկ գործընթացին դիմելու միջոցով
3. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q28.3 Հետադարձ հայացք նետելով Ձեր կողմից կամավոր սնանկության դիմումի ներկայացման գործընթացին՝ ինչպե՞ս կգնահատեիք այն:

1. Դա ճիշտ որոշում էր

2. Դա սխալ որոշում էր
3. Ավելի լավ կլիներ, եթե պարտավորությունը դիմեին իմ սնանկության գործընթացի համար
4. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q29. Ասացեք, խնդրեմ, ի՞նչ չափի պարտավորություն է դրված եղել Ձեզ (կամ կազմակերպությանը) սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում:

1. մինչև 1.000.000 դրամ
2. 1.000.001 – 3.000.000 դրամ
3. 3.000.001 – 5.000.000 դրամ
4. 5.000.001 – 10.000.000 դրամ
5. 10.000.001 – 20.000.000 դրամ
6. 20.000.001 դրամ և ավելի
7. Դեռ վճիռ չկա
- 99. Դժվ. պատ.

Q30. Ասացեք, խնդրեմ, սնանկ ճանաչվելու պահին Դուք ունեցե՞լ եք եկամուտ ապահովող որևէ ակտիվ:

1. Ունեցել եմ եկամուտ ապահովող ակտիվ և օգտագործել եմ այն
2. Ունեցել եմ եկամուտ ապահովող ակտիվ, օգտագործել եմ այն, սակայն այն բավարար չէր
3. Ունեցել եմ եկամուտ ապահովող ակտիվ, սակայն չեմ օգտագործել այն, նշել պատճառը _____
4. Ոչ չեմ ունեցել (Անցնել Q32-ին)
- 99 Դժվ. պատ.

Q31. Եթե ունեցել եք, ապա, ասացեք խնդրեմ, սնանկ ճանաչվելու պահին ի՞նչ արժեքի ակտիվներ եք ունեցել:

1. Ակտիվները գերազանցում էին սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափը
2. Ակտիվները հավասար էին սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափին
3. Ակտիվները պակաս էին, քան սնանկ ճանաչելու մասին վճռի հիմքում դրված պարտավորության չափը
99. Դժվ. պատ.

Q32.Արդյո՞ք փորձել եք «վերակառուցել» Ձեր պարտքը:

1. Այո, փորձել եմ՝ դիմել եմ բանկ/վարկային կազմակերպություն՝ վարկի վերավարկավորման համար
2. Այո, փորձել եմ՝ բանակցել եմ պայմանագրային պարտավորությունների չափի վերանայման նպատակով

3. Այո, փորձել եմ բանակցել եմ գումարային պարտավորությունների կատարման ժամանակացույցի վերանայման համար
4. Ոչ, չեմ փորձել «վերակառուցել» պարտքը
5. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q32.1 Ասացեք, խնդրեմ, արդյո՞ք սնանկության գործընթացի ընթացքում հնարավորություն եք ունեցել պահպանել/շարունակել ընկերության կենսունակության համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման ընթացիկ պայմանագրերը:

1. Այո
2. Ոչ
3. Չեմ ունեցել
4. Այլ _____ 99.
- Դժվ. պատ.

Q32.2 Արդյո՞ք սնանկության գործընթացում հնարավորություն եք ունեցել, ներառյալ կառավարչի կամ դատարանի միջոցով, դադարեցնել այն ընթացիկ գործարքները, որոնց կատարումը պահանջել է ավելի մեծ ծախս, քան դրա դիմաց ստացված օգուտը, երբ կողմերը ամբողջությամբ չեն կատարել իրենց պարտականությունները:

1. Այո
2. Ոչ
3. Չեմ ունեցել
99. Դժվ. պատ.

Q32.3 Ասացեք, խնդրեմ, արդյո՞ք հնարավորություն եք ունեցել ստանալ ֆինանսական առողջացման պլանի մաս չհանդիսացող նոր վարկ՝ սնանկության գործընթացում բիզնեսի ընթացիկ կարիքները հոգալու համար՝ մինչև ֆինանսական առողջացման պլանի հաստատումը:

1. Դիմել եմ և ստացել եմ
2. Դիմել եմ, չեմ ստացել
3. Չեմ դիմել
99. Դժվ. պատ.

Q33. Ասացեք, խնդրեմ, արդյո՞ք սնանկ ճանաչվելու հարցի քննության փուլում կամ սնանկության վարույթում փորձել եք դատական կամ արտադատական կարգով համաձայնության գալ պարտատիրոջ հետ (հաշտության համաձայնություն, պարտատիրոջ կողմից սնանկ ճանաչվելու մասին դիմումի ետ վերցնել և այլն):

1. Այո
2. Ոչ (Անցնել Q34-ին)
3. Այլ _____
99. Դժվ. պատ.

Q33.1 Եթե այո, ապա կասե՞ք՝ ինչպե՞ս է Ձեր այդ քայլին արձագանքել պարտատերը:

1. Դիմել եմ մինչև սնանկության վարույթի սկիզբը, բայց պարտատերը մերժել է
2. Դիմել եմ դատական փուլում, բայց պարտատերը մերժել է
3. Եկել եմ նախնական համաձայնության պարտատիրոջ հետ, որը, սակայն, հետագայում խախտվել է
4. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q34. Ասացեք խնդրեմ, արդյո՞ք պարտատերը երբևէ պահանջել է տրամադրել անօրինական վճարում կամ ձեռք բերել սնանկության վարույթի մասով անօրինական պայմանավորվածություն:

1. Այո
2. Ոչ (Անցնել Q35-ին)
- 99. Դժվ. պատ.

Q34.1 Եթե այո, ապա որքա՞ն _____

Q34.2 Եթե այո, ապա ո՞ւմ հետ _____

Q35. Ձեր կարծիքով, ունեցե՞լ է, արդյոք, սնանկության կառավարիչը ուղղակի կամ անուղղակի շահույթ Ձեր սնանկության գործընթացից՝ բացի նախատեսված վարձատրությունից:

1. Այո, վստահաբար ունեցել է
2. Այո, հնարավոր է
3. Չեմ կարծում, որ ունեցել է (Անցնել Q36.1-ին)
4. Վստահաբար չի ունեցել (Անցնել Q36.1-ին)
- 99. Դժվ. պատ.

Q36. Եթե այո, խնդրում ենք տրամադրել մանրամասներ:

Q36.1 Ասացեք, խնդրեմ, սնանկության գործընթացի սկզբին ինչքա՞ն էր կազմում կազմակերպության ընդհանուր պարտավորությունը բոլոր պարտատերերի հանդեպ (ՀՀ դրամ):

_____ 98. Հրաժարվում եմ պատասխանից
99. Դժվ. Պատ.

Q36.2 Ասացեք, խնդրեմ, ինչքա՞ն էին գնահատվել կազմակերպության ընդհանուր ակտիվները (ՀՀ դրամ):

_____ 98. Հրաժարվում եմ պատասխանից
99. Դժվ. Պատ.

Q36.3 Ասացեք, խնդրեմ, սնանկության ամբողջ գործընթացում ինչքա՞ն գումար է ուղղվել ընդհանուր պարտավորությունների մարմանը (ՀՀ դրամ):

_____ 98. Հրաժարվում եմ պատասխանից
99. Դժվ. Պատ.

Q36.4 Ասացեք, խնդրեմ, սնանկության գործընթացի ավարտին ինչքա՞ն գումար է մնացել բաժնետերերի միջև՝ այն բաշխելու համար (ՀՀ դրամ):

98. Հրաժարվում եմ պատասխանից

99. Դժվ. Պատ.

Q37. Պատահե՞լ է, արդյոք, որ Ձեր հետ կապ հաստատեն որևէ այլ հաստատությունից (բացի դատարանն ու սնանկության կառավարիչը) և սնանկության գործընթացի վերաբերյալ Ձեր տեսակետներն ու գնահատականները հարցնեն սնանկության գործընթացի որևէ փուլում:

1. Այո, եղել է
 2. Ոչ, չի եղել (Անցնել Q38-ին)
- 99. Դժվ. պատ.

Q37.1 Եթե այո, խնդրում ենք, նշել այդ հաստատության անվանումը: ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Այն մարմինը, որին ներկայացրել էի բողոք _____
2. ԻԿԿ
3. Արդարադատության նախարարություն
4. ԲԴԽ/Դատական դեպարտամենտ
5. ՉԼՄ
6. Այլ _____

Q38. Արդյո՞ք սնանկության վարույթի ընթացքում Ձեզ առաջարկվել է որևէ հարց կարգավորել ոչ ֆորմալ տարբերակով:

1. Կաշառք տալ դատավորին
2. Կաշառք տալ կառավարչին
3. Կաշառք տալ պետական որևէ մարմնի ներկայացուցչին
4. Ոչ, չի առաջարկվել
5. Հրաժարվում եմ պատասխանել
6. Այլ _____

Q39. Տեղյա՞կ եք, արդյոք, դատարանի և սնանկության գործի հետ առնչություն ունեցող որևէ անձի կամ կազմակերպության միջև կապի մասին:

1. Այո
2. Ոչ (Անցնել Q40-ին)
3. Ոչ, բայց կան կասկածներ

Q39.1 Եթե տեղյակ եք կամ ունեք կասկածներ, խնդրում ենք նշել՝ ի՞նչ կապ է եղել:

Q40. Արդյո՞ք Դուք ունեցել եք որևէ տեղեկություն, կասկած կամ տպավորություն որևէ կոռուպցիոն կապի առկայության վերաբերյալ:

1. Այո, ես ունեի տեղեկատվություն այն մասին, որ տվյալ սնանկության կառավարիչը մշտապես «աշխատում է» տվյալ պարտատիրոջ հետ
 2. Այո, ես ունեի տեղեկատվություն, որ այդ դատավորը հիմնականում «աշխատում է» տվյալ կառավարչի հետ
 3. Այո, ես ունեի տեղեկատվություն կառավարչի և որևէ պետական մարմնի ներկայացուցչի միջև ոչ ֆորմալ կապի մասին
 4. Ես չունեի տեղեկություն, բայց տպավորությունս էր, որ կառավարչի գործողություններն ակնհայտ կողմնակալ դրսևորում ունեին
 5. Ես չունեի ոչ մի նման տեղեկություն կամ պատկերացում
 6. Հրաժարվում եմ պատասխանել
 7. Այլ _____
99. Դժվ. պատ.

Q41. Ասացեք, խնդրեմ, արդյո՞ք Ձեզ հայտնի էին այլ մարմիններ, որտեղ կարող էիք դիմել Ձեր գործով՝ աջակցություն ստանալու կամ բողոքներ ներկայացնելու համար:

1. Այո, հայտնի էին, սակայն չեմ դիմել
 2. Այո, հայտնի էին, դիմել եմ և ստացել եմ աջակցություն
 3. Այո, հայտնի էին, դիմել եմ, սակայն չեմ ստացել աջակցություն
 4. Ոչ, հայտնի չէին (Անցնել Q42-ին)
- 99.Դժվ. պատ.

Q41.1 Եթե հայտնի էին, խնդրում եմ, նշեք հաստատության անվանումը: ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. ՀՀ նախագահ
2. ՀՀ վարչապետ
3. ՀՀ ԱԺ պատգամավոր
4. ՀՀ գլխավոր դատախազ/դատախազ
5. Մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսմեն)
6. Իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ
7. ԻԿԿ
8. Արդարադատության նախարարություն
9. Այլ _____

Q42. Արդյո՞ք Դուք որևէ հիմքով դատարանից պահանջել եք վաղաժամկետ դադարեցնել սնանկության կառավարչի լիազորությունները (փոխել սնանկության կառավարչին):

1. Այո, նշել հիմքը _____
2. Ոչ (Անցնել Q43-ին)

Q42.1 Եթե այո, ապա ինչպե՞ս է վարվել դատարանը:

1. Դատարանը բավարարել է իմ պահանջը և դիմել է «Սնանկության կառավարիչների» ԻԿԿ՝ կառավարչի փոփոխության համար
 2. Դատարանը չի բավարարել իմ պահանջը
 3. Այլ _____
99. Դժվ. պատ.

Q43. Արդյո՞ք դիմել եք դատարան սնանկության վարույթի կասեցման համար:

1. Այո, նշել հիմքը _____
2. Ոչ (Անցնել Q44-ին)

Q43.1 Եթե այո, ապա ինչպե՞ս է վարվել դատարանը:

1. Դատարանը բավարարել է իմ միջնորդությունը և սնանկության վարույթը կասեցրել է
 2. Դատարանը բավարարել է մասամբ և սնանկության վարույթը կասեցվել է որոշակի մասով
 3. Դատարանը մերժել է իմ միջնորդությունը
 4. Այլ _____
99. Դժվ. պատ.

Q44. Ի՞նչ ընթացակարգով է նշանակվել սնանկության կառավարիչը:

1. Դատարանի կողմից՝ իր հայեցողությամբ
 2. Պարտապանի միջնորդության հիման վրա
 3. Պարտատիրոջ միջնորդության հիման վրա
 4. Պատահականության սկզբունքով
 5. Կողմերի միջև բանակցությունների արդյունքում
 6. ԻԿԿ կողմից՝ իր հայեցողությամբ
 7. Այլ _____
99. Դժվ. պատ.

Q45. Սնանկության կառավարչի անկախության և գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից ո՞րն է, ըստ Ձեզ, սնանկության կառավարիչ նշանակելու առավել նպատակահարմար ընթացակարգը:

1. Դատարանի կողմից՝ իր հայեցողությամբ
 2. Պարտապանի միջնորդության հիման վրա
 3. Պարտատիրոջ միջնորդության հիման վրա
 4. Պատահականության սկզբունքով
 5. Կողմերի միջև բանակցությունների արդյունքում
 6. ԻԿԿ կողմից՝ իր հայեցողությամբ
 7. Այլ~ _____
- 99. Դժվ. պատ.

Q46. Որքանո՞վ եք բավարարված Ձեր գործով սնանկության կառավարչի մասնագիտական հմտություններից:

1. Լիովին բավարարված եմ
2. Ավելի շուտ բավարարված եմ

3. Ավելի շուտ բավարարված չեմ
4. Բոլորովին բավարարված չեմ
- 99. Դժվ. պատ.

Q47. Բացատրեք Ձեր պատասխանը:

Q48. Որքանով եք բավարարված Ձեր գործով սնանկության կառավարչի՝ Ձեր գործի նկատմամբ ունեցած վերաբերմունքից:

1. Լիովին բավարարված եմ
2. Ավելի շուտ բավարարված եմ
3. Ավելի շուտ բավարարված չեմ
4. Բոլորովին բավարարված չեմ
- 99. Դժվ. պատ.

Q49. Բացատրեք Ձեր պատասխանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Q50. Արդյո՞ք Ձեր սնանկության վարույթի ընթացքում ցանկացել եք ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր:

1. Այո, ցանկացել եմ (Անցնել Q51-ին)
2. Ցանկացել, սակայն չեմ ներկայացրել (Անցնել Q51-ին)
3. Ոչ, չեմ ցանկացել (Անցնել Q50.1-ին)

Q50.1 Եթե Դուք սնանկության վարույթի ընթացքում չեք ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, ապա ո՞րն էր պատճառը, ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳՐԱՆՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՆՑՆԵԼ Q62-ԻՆ

1. Տեղյակ չեմ եղել նման իրավունքի մասին և ինձ որևէ մեկը չի տեղեկացրել
2. Ինձ համար ձեռնտու չեմ համարել ֆինանսական առողջացումը
3. Իրատեսական չեմ համարել ֆինանսական առողջացումը
4. Սկզբունքորեն չեմ ցանկացել ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր
5. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q51. Եթե ցանկացել եք ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր, ապա արդյո՞ք այն ներկայացրել եք:

1. Այո, ներկայացրել եմ (Անցնել Q52-ին)
2. Ոչ, չեմ ներկայացրել (Անցնել Q51.1-ին)
- 99. Դժվ. պատ.

Q51.1 Եթե չեք ներկայացրել ֆինանսական առողջացման ծրագիր, ապա ո՞րն էր պատճառը: ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՆՑՆԵԼ Q62-ԻՆ

1. Չեմ հասցրել, քանի որ օրենքը սեղմ վերջնաժամկետ է սահմանում ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման համար

2. Քանի որ ֆինանսական առողջացման ծրագիրն ունի առավելագույն տևողության ժամկետ, որի մեջ ես չեի կարող տեղավորվել
3. Բավարար մասնագիտական գիտելիքներ չեմ ունեցել ֆինանսական առողջացման ծրագիր կազմելու համար և որևէ մեկից որևէ աջակցություն չեմ ստացել այդ հարցում
4. Մնանկության կառավարչի կողմից օրենքով սահմանված վերջնաժամկետի դրությամբ ավարտված չեն եղել իմ ակտիվների գույքագրման և իմ ֆինանսական վիճակի վերլուծության աշխատանքները
5. Մնանկության կառավարչի կողմից պատշաճ կերպով չեն իրականացվել իմ ակտիվների գույքագրման և իմ ֆինանսական վիճակի վերլուծության աշխատանքները
6. Այլ_____
 - 99. Դժվ. պատ.

Q52. Ասացեք, խնդրեմ, ըստ Ձեզ, ինչպե՞ս են նշված սուբյեկտներն ազդել Ձեր կողմից ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման ցանկության կամ դրա ներկայացման գործընթացի վրա:

	Հակված է եղել իմ ֆինանսական առողջացմանը	Ինձ համոզել է չներկայացնել առողջացման ծրագիր	Դրսևորել է այնպիսի վարքագիծ, որի արդյունքում անհմաստ եմ համարել առողջացման ուղղությամբ աշխատելը	Ուղղակիորեն կամ անուղղակիորեն խոչընդոտել է ինձ	Չի ազդել
1.Դատարան	1	2	3	4	5
2.Մնանկության կառավարիչ	1	2	3	4	5
3.Փաստաբան	1	2	3	4	5
4.Պարտատեր/եր	1	2	3	4	5
5.Ապահովված պարտատեր/եր	1	2	3	4	5

Q53. Եթե ներկայացվել է ֆինանսական առողջացման ծրագիր, ապա արդյո՞ք այն հաստատվել է:

1. Այո (Անցնել Q54-ին)
2. Ոչ
 - 99. Դժվ. պատ.

Q 53.1 Եթե ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը չի հաստատվել, ապա ի՞նչն էր պատճառը:

1. Այն չէր համապատասխանել օրենքի պահանջներին
2. Այն իրատեսական չէր համարվել դատարանի կողմից
3. Դրան համաձայնություն չէր տվել այն ապահովված պարտատերը, որի պահանջի դիմաց գրավադրված գույքի օգտագործումն անհրաժեշտ էր առողջացման ծրագրի իրականացման համար

4. Ծրագիրը չի ընդունվել ժողովի քվեարկության արդյունքում

5. Այլ _____

- 99. Դժվ. պատ.

Q54. Ինչպե՞ս են նշված սուբյեկտներն իրենց դրսևորել ներկայացված ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման հարցը քննարկելու ժամանակ: ԵԹԵ Q53-ՈԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է «2.ՈՉ», ԱՊԱ ԱՅՍ ՀԱՐՑԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՆՑՆԵԼ Q62-ԻՆ

	Անտաբեր վերաբերմունք	Հակված են եղել առողջացման ծրագրի հաստատմանը	Հակված չեն եղել առողջացման ծրագրի հաստատմանը, սակայն չեն խոչընդոտել	Խոչընդոտել են ծրագրի հաստատմանը	Չեն մասնակցել	Վերաբերելի չէ	Դ.Պ.
1.Դատարան	1	2	3	4	5	98	99
2.Մնանկության կառավարիչ	1	2	3	4	5	98	99
3.Պարտատեր/եր	1	2	3	4	5	98	99
4.Ապահովված պարտատեր/եր	1	2	3	4	5	98	99

Q55. Արդյո՞ք ներկայացված ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է:

1. Այո, դադարեցվել է օրենքով սահմանված հիմքով
2. Այո, դադարեցվել է օրենքի խախտմամբ
3. Այո, դադարեցվել է, քանի որ դատարանն իրատեսական չի համարել դրա շարունակումը
4. Այո, դադարեցվել է այնպիսի հիմքով, որն օրենքով սահմանված է, սակայն խիստ ձևական է
5. Այո, _____ դադարեցվել է _____ այլ _____ պատճառով _____ (նշել)

6. Ոչ _____ (Անցնել Q56-ին)

7. Այլ _____

- 99. Դժվ. պատ.

Q55.1 Եթե ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է, ապա նախքան դադարեցումը փորձե՞լ եք բանակցել շահագրգիռ անձի հետ, որպեսզի Ձեզ տրվի «երկրորդ հնարավորություն»:

1. Այո, փորձել եմ
 2. Ոչ, չեմ փորձել, նշել պատճառը _____
 3. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q56. Նշեք, ինդրեմ, 1-4 բալանոց սանդղակով ստորև բերված սուբյեկտների դերակատարումն ու ներգրավվածությունը առողջացման ծրագրի ներկայացման և դրա վաղաժամկետ դադարեցման հարցում (1 – եթե դերակատարում չկա, 4- եթե դերակատարումը բարձր է)

	Առողջացման ծրագրի ներկայացում	Առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ միջնորդության ներկայացում	Դ.Պ.
1. Պարտապան	1 2 3 4	1 2 3 4	99
2. Մնանկության կառավարիչ	1 2 3 4	1 2 3 4	99
3. Պարտատեր/եր	1 2 3 4	1 2 3 4	99
4. Ապահովված պարտատեր/եր	1 2 3 4	1 2 3 4	99

Q57. Եթե առողջացման ծրագրի ներկայացման կամ դրա բնականոն շարունակության համար Ձեզ անհրաժեշտ է եղել նոր ներդրումների ներգրավում, ապա ինչպե՞ս են իրենց դրսևորել նշված անձիք:

	Գտել է ներդրող	Արել է իրենից կախված ամեն ինչ, սակայն չի կարողացել գտնել ներդրող	Արել է որոշ գործողություններ, որոնք բավարար չեն եղել ներդրող գտնելու համար	Ոչինչ չի արել	Խոչընդոտել է պրոցեսին	Վերա- բերելի չէ	Դ.Պ.
1. Պարտապան	1	2	3	4	5	98	99
2. Պարտապանի փաստաբան	1	2	3	4	5	98	99
3. Մնանկության կառավարիչ	1	2	3	4	5	98	99
4. Պարտատեր/եր	1	2	3	4	5	98	99
5. Ապահովված պարտատեր/եր	1	2	3	4	5	98	99

Q58. Արդյո՞ք գտնվել է շահագրգռված ներդրողը:

1. Այո
 2. Ոչ, նշել պատճառը _____
 3. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

(Անցնել

Q59. Կատարվե՞լ են, արդյոք, համապատասխան ներդրումները:

1. Այո
 2. Ոչ, նշել պատճառը _____
 3. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q60. Նշեք ստորև նշված իրավիճակներից ո՞րն է առկա եղել Ձեր սնանկության գործում: ՆՇԵԼ ԲՈԼՈՐ ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

1. Դուք և բոլոր պարտատերերը համատեղ ցանկացել եք ներկայացնել առողջացման ծրագիր, սակայն ծրագիրը դատարանի կողմից չի հաստատվել, քանի որ դատաւորությունը գերազանցել է օրենքով սահմանված առավելագույն ժամկետը
 2. Պարտատեր(եր)ը հավանություն չի (չեն) տվել առողջացման ծրագրին, քանի որ համաձայնության չեք եկել այն հարցում, թե ով պետք է կրի այդ ծրագրի իրագործման արդյունքում սնանկության կառավարչին հասանելիք վարձատրության «բեռը»
 3. Առողջացման ծրագրի ներկայացման և հաստատման խոչընդոտներն այնքան լուրջ են եղել, որ Դուք շրջանցել եք «Սնանկության մասին» ՀՀ օրենքի պահանջները և ոչ օրինական մեխանիզմներով և ներքին համաձայնություններով սնանկության վարույթից դուրս փաստացի բավարարել եք Ձեր պարտատերերի կամ նրանց մի մասի պահանջները
 4. Սրանցից ոչ մեկը (Անցնել Q62-ին)
 5. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q61. Եթե որևէ պարտատեր խոչընդոտել է առողջացման ծրագրի ներկայացման, հաստատման կամ իրականացման պրոցեսին (այդ թվում՝ առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվել է նրա միջնորդությամբ), ապա նման պարտատերը՝

1. Ընդհանրապես չի ստացել իր պահանջի բավարարում
 2. Ստացել է իր պահանջի ամբողջական բավարարում
 3. Ստացել է իր պահանջի մասնակի բավարարում (ավելի քիչ, քան կստանար առողջացման ծրագրի իրագործման դեպքում)
 4. Ստացել է իր պահանջի մասնակի բավարարում (ավելի շատ, քան նա կստանար առողջացման ծրագրի իրագործման դեպքում)
 5. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q62. Ասացեք, խնդրեմ, արդյոք Ձեր գործով իրականացվել է աճուրդ :

1. Այո
 2. Ոչ (Անցնել Q67-ին)
 3. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

Q63. Ձեր կարծիքով, արդյո՞ք արդար կերպով է սնանկության կառավարիչը իրականացրել աճուրդի գործընթացը:

1. Միանշանակ այո
 2. Ավելի շուտ այո
 3. Ավելի շուտ ոչ
 4. Միանշանակ ոչ
- 99. Դժվ. պատ.

Q64. Ձեզ հասկանալի՞ էր աճուրդի վարման ընթացքում սնանկության կառավարչի ձեռնարկած մեթոդաբանությունը:

1. Միանշանակ այո

2. Ավելի շուտ այո
3. Ավելի շուտ ոչ
4. Միանշանակ ոչ
- 99. Դժվ. պատ.

Q65. Ձեր կարծիքով, սնանկության կառավարիչը շահե՞ց անուրդային գործընթացից:

1. Միանշանակ այո
2. Ավելի շուտ այո
3. Ավելի շուտ ոչ (Անցնել Q67-ին)
4. Միանշանակ ոչ (Անցնել Q67-ին)
- 99. Դժվ. պատ.

Q 66. Եթե այո, ապա ինչպե՞ս շահեց:

1. Գումարի տեսքով
2. Գույքի տեսքով
3. «Լավություն» արեց ինչ-որ մեկին
4. Այլ _____
- 99. Դժվ. պատ.

ՄԱՆԿԱՌԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ԴԱՏԱՐԱՆԻ, ՓԱՍՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Q67. Ձեր կարծիքով, գործընթացի կառավարման ընթացքում դատարանն ապահովե՞լ է արդյունավետ, արդար և պատշաճ ընթացակարգերի կիրառում:

1. Միանշանակ այո
2. Ավելի շուտ այո
3. Ավելի շուտ ոչ
4. Միանշանակ ոչ
- 99. Դժվ. պատ.

Q68. Որքանո՞վ եք բավարարված դատավորի մասնագիտական հմտություններից:

1. Լիովին բավարարված եմ
2. Ավելի շուտ բավարարված եմ
3. Ավելի շուտ բավարարված չեմ
4. Բոլորովին բավարարված չեմ
- 99. Դժվ. պատ.

Q69. Բացառեք Ձեր պատասխանը:

